

Lucy J

212

1881

2 0 0 0

165  
212

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

## ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ

ԸՍՑ ՉՈՐԻՑ ԱԻՑՏԱՐԱՆՉԱՑ

Հանդերձ կարևոր բացատրութեամբ և Պաղեստինու աշխարհացուցիւ

Ի ՀԱՅՐԱԳԵՑՈՒԹԵԱՆ Տ. Տ. ԳԻՆՈՐԳԵՆՑ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԱՀԱՆԱՑ ՊՕՊՈՎԵԱՆՑ

Կրճտ-սոյոյ Լազարեան Ճեմարանի



ԽՈՍԿՂԱ

Ի Տպարանի Ե. Գուրգենյանի  
1881



225  
9-84



**ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳԻՈՅ**

**ՔԱԶՄԵՐԱԽՏ**

**ՀՕՐ ԻՄՈՅ**

**ՏԷՐ ՅԱԿՈՒ ՔԱՀԱՆԱՅԻ**

**ՅՈՐԴԻԱԿԱՆ ՇՆՈՐՀԱՊԱՐՏ ՄՐՏԷ**

Յ. Ք. Պ.

(4035 1809 / 39950)

ՀՐԱՄԱՆՈՒ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԻՇԻԱՆՈՒԹԵԱՆ

28-211  
(20194-60)

112-2001

Дозволено цензурою. Москва, Феврали 18 дня 1881 года.

Типография бывш. А. В. Кудрявцевой, Мясницкая домъ Сытова.

## ՆԵՐՇՆՈՒԹԻՒՆ

Հրէական ազգի քաղաքական և կրօնական վիճակը  
Յիսուսի Վրիստոսի ժամանակին<sup>1)</sup>:

Յիսուսի Վրիստոսի ծնունդից վաթսուներջորս տարի յառաջ Հրէաստանին տիրեցին Հռովմայեցիք: Մակաբայեցւոց ցեղին միայն քահանայապետական իշխանութիւն տալով, Հրէաստանի ներքին կառավարութիւնը նորա յանձնեցին իւրեանց կուսակալներին: Այս կուսակալներից առաջինն էր Նդովմայեցի Մաթիպատրոսը, որին յաջորդեց նորա որդին՝ Հերովդէս: Սա Հռովմայեցւոց ծերակուտից ստացաւ Հրէաստանի թագաւորի պատուանունը և իւր երկարատև կառավարութիւնը նշանաւոր կացուց միայն բազմատեսակ անիրաւութիւններով. բնաջինջ արեց իշխանական ցեղը Մակաբայեցւոց, իւր փառասիրութեամբ և շուայութեամբ մեծ թշուառութիւն պատճառեց Հրէաստանին և ներս բերեց շատ հեթանոսական սովորութիւններ: Հերովդէսի մեռանելուց յետոյ, Հռովմայեցւոց Օգոստոս կայսրը բաժանեց Հրէից թագաւորութիւնը նորա երեք որդւոց մէջ: Վոցանից առաջինին՝ Արքեղայոսին տուաւ ազգապետի պատուանուն և յանձնեց նորան Հրէաստանի, Սամարիայի և Նդովի կառավարութիւնը, երկրորդին՝ Հերովդէս Մեթիպասին տուաւ Ղալիլիան և Պերէան, երրորդին՝ Փիլիպպոսին — Տրաքոնացւոց, Խաուրացւոց ու Բասանու կողմերը:

Արքեղայոս, տասն տարի կառավարելով Հրէաստանը, իւր

<sup>1)</sup> Այս հասարակ գիտելիքը քաղուածօրէն հանած է Բուգա-կովի դասագրքից: (Св. Ист. Нов. Заб.)

խատարոյ և անգութ ընթացքի համար, Օգոստոսի հրամանով, արտուրուեցաւ Վաղղիա և նորա նահանգները, Ասորիքի հետ միացած, շոտմանցեացոց դաւաւ կոչուեցաւ: Արքեղայտից յետոյ նորա երկիրների կառավարութիւնը շոտմանցեցիք յանձնեցին դատաւորների, որք Ասորուց երկրի աւագ հիւպատոսի իշխանութեան ներքոյ էին և ապրում էին Պաղեստինու Աեսարիա քաղաքում: Այս դատաւորների պաշտօնն էր ա. Խաղաղութիւնը պահել, բ. շարկերը ժողովել, գ. Վայսեր տեղ դատաստան տեսնել: շանդիսաւոր տօներին Աեսարիայից գալիս էին նոքա Արուսաղէմ որ ժողովրդի մէջ անկարգութիւններ չծագեն: Այս դատաւորների իշխանութեան ներքոյ շրէայք անտանելի ներութիւններ էին կրում, մանաւանդ Պիղատոսի օրերով, որ հինգերորդ դատաւորն էր (28—37 թ. Վ.Վ.). որովհետեւ սա, անարգելով նոցա կրօնը, շատ դաւնացրեց նոցա սիրար: Բայց և ինքն չմնաց անպատիժ. ըստ որում, երբ նորա անիրաւութեանց շտին անցաւ, մանաւանդ երբ նա Յիսուս Վրիստոն անիրաւ դատաստանով մահուան դատապարտեց, շոտմանցեացոց ծերակոյտը պատասխանատուութեան համար շոտման պահանջեց նորան. և Պիղատոս, չկարողանալով այնտեղ արդարացնել իւր սնծը, զրկուեցաւ իշխանութենից և արտուրուեցաւ Վաղղիա:

Արօնական ինդիքների քննութիւնը պատկանումէր այն ժամանակ Արուսաղէմի ծերակուտին (Մինեդրիոնին), որ ունէր 72 անգամ, որոց նախագահ էր քահանայապետը: Մակարայեցոց օրերում, ծերակոյտն էր զլխաւոր դատարանը ոչ թէ միայն կրօնական, այլև քաղաքական գործերի համար: շերովդէս մեծը և նորա յաջորդները հետզհետէ հանեցին նորա ձեռից քաղաքական իշխանութիւնը և թողին միայն կրօնականը: Այս դատարանը կարող էր քննել հաւատքին պատկանեալ գործեր, պատժել յանցաւորները, այլև ի մահ դատապարտել միայն յաւաքուց ստանալով շոտմանցեացոց դատաւորի հաւանութիւնը: Բայ ի ծերակուտից, իւրա-

քանչիւր քաղաքում կային ստորին դատարաններ, եօթն անգամներից բաղկացած, ուր քննում և վճռում էին միայն թեթև գործեր:

Բաբելոնեան գերութենից վերադարձած շրէայքը ամուր և հաստատուն էին մնացած իւրեանց կրօնքի վերայ. բայց դժբաղդաբար սակաւ ունէին նոքա բանադէտ և հանձարաւոր առաջնորդներ: Փարիսեցիք, որ համարվումէին ժողովրդի դատարակիչք, իւրեանց բոլոր ոյժը և զօրութիւնը ամփոփած էին այն բանի մէջ միայն, որ հաստատուն պահեն հայրենական աւանդութիւնները. իսկ Սադուկեցիք ուսուցանումէին յատկապէս թէ պիտոյ էր լցուցանել օրէնքի բառացի իմաստը: Մոքա ոչ թէ միայն չկամէին հասու լինել օրէնքի էական խորհրդին, այլև շատ անգամ մեկնումէին նորանց դէպի հակառակ կողմը: Ուստի, թէպէտ ժողովուրդը հաւատարմութեամբ պահպանումէր Մովսիսական օրէնքը, սակայն նորա մէջ իսկապէս օրէնքի հասկացող մարդիկ և հոգւով ու ճշմարտութեամբ Աստուած պաշտողներ շատ սակաւ կային: Եւ այս պատճառով սխալ և թիւր կարծիքներ յառաջացան շրէից մէջ գալոց Մեսիայի մասին. շատերը սպասում էին Մեսիային, ոչ թէ Նորանով իւրեանց մեղքերից փրկուելու համար և մոլորութիւններից ազատուելու և յաւիտենական կեանք ժառանգելու, այլ իւրեանց աշխարհատէր սրտին համեմատ մեկնելով մարգարէից գուշակութիւնքը, կարծեցին որ Փրկչի թագաւորութիւնը պիտոյ է աշխարհական թագաւորութիւն լինի, որ պէտք է ազատէ Խարայէլը շոտմանցեացոց բռնութեան լծից և իւր զէնքի զօրութեամբ աշխարհիս թագաւորութիւնները նուաճէ և շրէից թագաւորութիւնը փառաւորութեան վերջին ծայրը հասուցանէ: Ահա, այսպիսի մոլորութեամբ կուրացած, չընդունեցին շրէայք յայտնեալ Մեսիան, ուստի և յաւիտենաւ մերժուեցան Աստուծոյ երեսից:

ՀԱՄԱՐՈՑ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՉՈՐՍ ԵՒՆՏԵՐԸՆԻՉՆԵՐԻ ՎԵՐՆՅ

Նոր կտակարանի պատմութիւնը բովանդակուած իւր մէջ քանրեօթը գիրք: Եւաջին չորս գիրքը, որ մի բառով ասուանք «ԵՒՆՏԵՐԸՆ», բուն աղբիւրն են մեր այս ձեռնարկութեան. ուստի և կարևոր ենք համարում դոցա մասին տալ համառօտ տեղեկութիւն.

ԵՒՆՏԵՐԸՆ ԸՍՏ ԻՄՏԹԷՍՈՒ

1. Մատթէոս Առաքեալը և Եւետարանիչը իւր Եւետարանը գրեց Քրիստոսի համբարձմանէն ութ տարի անցած (41 թ. Վ.), ըստ խնդրոյ եկեղեցւոյն Արուսաղէմի, Աբրահայից լեզուաւ: Կամենալով հասկացնել հաւատացեալ շրջանի թէ Յիսուս Քրիստոսն էր ճշմարիտ Մեսիան, իւր Եւետարանը սկսաւ Նորա ըստ մարմնոյ ազգաբանութենից և հաստատեց թէ ինչպէս հին ուխտի բոլոր մարգարէութիւնքը Մեսիայի համար Նորա վերայ կատարուեցան:

ԵՒՆՏԵՐԸՆ ԸՍՏ ԻՄԱՐԿՈՍԻ

2. Մարկոս Եւետարանիչը աշակերտ էր Սրբոյն Պետրոսի և ընթացակից Պողոսի: Ըստ խնդրոյ եկեղեցւոյն Հռովմայ և հրամանաւ Ս. Պետրոսի գրեց իւր Եւետարանը, Աղէքսանդրիա քաղաքում, Ազիպտացւոց լեզուաւ, Քրիստոսի համբարձմանէն տասնըհինգ տարի յետոյ (48 թ. Վ.): Եյս Եւետարանի մէջ ցոյց տուաւ նա թէ Յիսուս Քրիստոս Տէր է և թագաւոր ամենայն աշխարհի և հետևաբար նկարագրեց Նորա նշաններն ու մահուան վերայ ցուցած յաղթանակը:


ԵՒՆՏԵՐԸՆ ԸՍՏ ԼՈՒԿԱՍՈՒ

3. Ղուկաս Եւետարանիչը էր Անտիոքացի՝ բժիշկ և պատկերահասն, որ գնաց Արուսաղէմ և տեսանելով Յիսուսի սքանչելագործութիւնքը հաւատաց և միացաւ աշակերտաց հետ, եօթանասնից թուում: Իսկ յետոյ ուղեկից և գործակից եղաւ սրբոյն Պողոսի և սորա յորդորանքով իւր Եւետարանը գրեց Անտիոք քաղաքում, Եսորոց լեզուաւ, Քրիստոսի համբարձմանէն տասնրեօթը տարի անցած (50 թ. Վ.) և

ընծայեց մի թէնփիրոս անուն հաւատացեալի: Ղուկաս Եւետարանիչը, լինելով ճարտար գրիչ, գեղեցիկ կարգաբանութեամբ մանրամասնօրէն պատմեց, Օպարիայ քահանայութենից սկիզբն առնելով, Մեսիայի Փրկիչ լինելն և Նորա գլխութիւնն ու ողորմութիւնն առ մարդկան ազգը և նորա փրկութեան համար զոհուիլն:

ԵՒՆՏԵՐԸՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

4. Յովհաննէս Առաքեալը ու Եւետարանիչը, Յակոբոս մեծի եղբայրը, իւր Եւետարանը գրեց, ըստ խնդրոյ Ազիպտոսաց փոքր Ասիոյ, Ափետոս քաղաքում, Յունաց լեզուաւ 97 թ. Վ.: Հերքելու համար ժամանակակից հերետիկոսների մոլորութիւնքը, յատկապէս նկարագրեց այն գործերը և վարդապետութիւնքը Յիսուսի Քրիստոսի, ուր բացայայտ երևուած Նորա Եստուածութիւնը. և այս պատճառով կոչեցաւ նա Եստուածաբան Առաքեալ:



ԾՆՈՒՆԴ Ե ԸՆԾԱՅՈՒՄՆ Ս. ԵՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Երբ որ հին աշխարհի բոլոր կրօնքը արդէն կորուսած էին իւրեանց կշիռը և խորհուրդը և մարդկութիւնը օր աւուր սպասուածք բարոյական փոփոխութեան, մի վերանորոգող Մեսիայի, Հրէաստանի մէջ երևեցաւ մի անարատ անձն, որ, իբրև սուրբ և պատուական անօթ ընտրութեան, սահմանել էր Նախախնամութիւնը մայր դառնալու աշխարհակեցոյց Մեսիային: Եյդ անձն էր սուրբ կոյն Մարիամ՝ դուստր Յովակիմայ և Ըննայի, Գաւթի արքայական ցեղից:

Որովհետև անզաւակութիւնն մեծ նախատինք էր համարուած Հրէից մէջ, և Մարիամ սուրբ Ղուսի ծնողքը անզաւակ էին, այս պատճառով ջերմեռանդօրէն աղօթումէին առ Եստուած բառնալ նոցանից այդ նախատինքը. ուխտ դրին որ, եթէ իւրեանց աղօթքը լսելի լինին Եստուծոյ, ծնեալ մանուկը ընծայեն տաճարին ի սպասաւորութիւն: Արկիւղած ծնողների աղօթքը լսելի եղան. ծնաւ նոցա մի դուստր, որ կոչեցաւ Մարիամ<sup>1)</sup>

<sup>1)</sup> Սուրբ Եստուածածնի ծնունդն Հայաստանեայց սուրբ եկեղեցին անփոփոխ տօնումէ Սեպտեմբերի 8-ին:

Ինչպէս հաւասար է կացուցանում մեզ հին աւանդութիւնը, Մարիամ երեք տարեկան էր, երբ ծնողքը սարան նորան տաճար և թողին այնտեղ սպասաւորելու համար: Աստուծոյ նուիրած կուսանքը դաստիարակութեան տաճարում և բնակումէն առանձին օթեանների մէջ: Համաձայն օրինաց Աստուծոյ, քահանայապետը ընդունում էր և օրհնում էր ընծայուածքը առհասարակ տաճարի դրան մօտ. բայց երբ բերին Մարիամը, քահանայապետը, աստուածային ազդեցութեամբ, զիրկը առաւ մանուկը և տարաւ նորան ի «սրբութիւն սրբոց», ուր ինքն տարին միանգամ միայն կարող էր մտանել: <sup>1)</sup>

Դաստիարակութեամբ Աստուծոյ տաճարի մօտ, Մարիամ Ս. կոյսը անդադար պարսպած էր աղօթքով և սուրբ դրբի ընթերցանութեամբ. — այսպէս նորա սիրտը սուրբ և անփորձ էր պահուած ամենայն արատաւոր խորհրդից: Եւ այս սրբութիւնը և անարատութիւնը չէր շարժում նորա մէջ ոչինչ դատապարտելի ամբարտաւանութիւն, այլ սորա հակառակ, լինելով հեզ և խոնարհ, խելամուտ էր նա իւր անարժանութեանը Աստուծոյ առաջ և անհամբեր սրտով փափարում էր սեսանել իւր Փրկիչը: Մինչ տաճարումն էր նա, ուխտ էր դրել յաւիտեան կոյս մնալ. իսկ երբ տասնըջորս տարին լրացաւ, տաճարի քահանայքը ըստ սովորութեան կամելին նորան ամուսնացնել <sup>2)</sup>, նա յայանեց իւր ուխտը և քացան նորան ամուսնացնել նորան իւր ազգական ծերունի Յովսէփի հանայք նշանեցին նորան իւր ազգական ծերունի Յովսէփին Մարիամ հետ. և մի և նոյն ժամանակ յայանեցին Յովսէփին Մարիամ Ս. կուսի ուխտադրութիւնը: Յովսէփ, թէպէտ Վաւրիթ արքայի ցեղին էր, բայց աղքատ լինելով ձարում էր իւր ապրուստը հիւսնութեամբ Վաւրիթայի Վազարէթ քաղաքում: Մարիամ Ս. կոյսը սեղափոխուեցաւ Յովսէփի աղքատի բնակարանը և օգնական էր նորան իւր ձեռքի աշխատութեամբ:

<sup>1)</sup> Ընծայումն սուրբ Աստուածածնի ի տաճարն Հայաստանեայց սուրբ եկեղեցին անփոփոխ տօնումէ Նոյեմբերի 21-ին:  
<sup>2)</sup> Ըստ այլոց կարծեաց ծնողքը առին նորան տաճարից և նշանեցին Ս. Յովսէփի հետ:

ՊԵՏՄՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ԿՏԵԿԵՐԵՆԻ

§ 1. Օւքարիա, Եղիսաբեթ և Պաբրիէլ հրեշտակը:

(ԼՈՒԿ. Ե. 5-26.)

Հերովդեսի թագաւորութեան օրերով, Հրէաստանի լեռնային կողմերում բնակում էր մի բարեպաշտ քահանայ՝ Օւքարիա անուն, իւր կնոջ Եղիսաբեթի հետ միասին: Աղքատ երկուքն ևս արդար և անարատ էին Աստուծոյ առաջ և արժանաւոր Վորա ողորմութեանը: Թէպէտ և խաղաղ ու անխռով անցուցել էին նոքա իւրեանց օրերը և արդէն ծերացած հասակով սակայն մի վեշտ տանջում էր նոքա սիրտը. — ամուսնակիցքը անգաւակ էին մնացած:

Միանգամ երբ Օւքարիա, Երուսաղեմի տաճարի Սրբութիւնը մտանելով, խուսկ էր մատուցանում Աստուծոյ, յանկարծ սեղանի աջակողմում երևեցաւ նորան Աստուծոյ հրեշտակը: Սարսափ եկաւ Օւքարիայի վերայ, բայց հրեշտակը քաջալերեց նորան և ասաց. «մի երկնչիր, Օւքարիա, աղօթք քո լսելն եղին Աստուծոյ. քո Եղիսաբեթ կինը կը ծնանի քեզ որդի և կանուանես նորան Յովհաննէս. նա կը լինի քեզ ցնծութեան պատճառ և շատերը նորա ծննդեան վերայ կ'ուրախանան. նա կը լինի մեծ Աստուծոյ առաջ և զեռևս իւր մօր արգանդի մէջ կը լցուի Հոգւով սրբով. կը գայ Աստուծոյ առաջ և հոգւով և զօրութեամբ Եղիայի, որպէս զի մատուցանէ նորան պատրաստ ժողովուրդ»: Օւքարիա,

միա դնելով իւր ծերութեանը և տարակուսելով այդ անօրինակ աւետեաց կատարման վերայ, ասաց. «Ինչո՞վ կարող եմ հաւաստի լինել թէ Աստուած պարգևելու է ինձ զաւակ, որովհետև իմ և կնոջս տարիքը արդէն անցած են. » Եւս եմ Գաբրիէլ, պատասխանեց հրեշտակը, որ կանգնուեմ Աստուծոյ առաջև և ուղարկուած եմ աւետել քեզ այդ ուրախութիւնը. որովհետև տարակուսեցար դու, պատանձուած մնաս մինչև այն օրը, երբ կը կատարուի իմ պատգամը: « Էրեշտակը աներևութացաւ և Չաքարիա մնաց համբ: Ժողովուրդը վարագուրից դուրս կանգնած սպասուեկը և զարմացած էր իւր քահանայի յետ մնալու վերայ: Աւերջագէս ելաւ Չաքարիա և նշաններով հասկացրեց նոցա իւր յետ մնալու պատճառը. և նոքա հասկացան որ նա տեսիլ էր տեսած:

**§ 2. Աւետումն Սրբոյ Կուսին:**  
(ԳՈՒԿ. Ա. 26—56. ՄԱՏԹ. Ա. 18—25.)

Չաքարիա քահանայի աւետիք ստանալուց յետոյ, արդէն հինգ ամիս անցած, Գաբրիէլ հրեշտակապետը, Աստուծոյ հրամանով, եկաւ Գալիլեայի Նազարէթ քաղաքը առ Մարիամ սուրբ կոյսը և ողջունեց այսպէս. «ուրախացիր, բերկրեալդ՝ Տէր ընդ քեզ է:»<sup>1)</sup> Մարիամ կոյսը շփոթուեցաւ այս տարօրինակ երևութի վերայ, բայց հրեշտակը քաջալերեց նորան, ասելով. «մի՛ երկնչիր, Մարիամ, վասն զի դու շնորհ գտար առաջի Աստուծոյ և ահա կը յղանաս, կը ծնանիս որդի և կ'անուանես նորան Յիսուս (Փրկիչ): Նա

<sup>1)</sup> Էին աւանդութիւնը ասուեմք թէ՛ հրեշտակապետի երևելու ժամանակ, Մարիամ սուրբ կոյսը կարգուեկը Աստուծոյ մարգարէութիւնը և, երբ հասաւ նա այն տեղը, ուր գրած էր. «Ահա կոյսը կը յղանայ, կը ծնանի որդի և կ'անուանեն նորան Լամիակոյսը կը յղանայ, կը ծնանի որդի և կ'անուանեն նորան Լամիակոյսը» (Աստուած մեզ հետ), ընկաւ մտածմունքի մէջ. և երանի էր տալիս այն կուսին, որ լինելու էր մայր Աստուծոյ:

կը լինի մեծ և Որդի Բարձրելոյ կը կոչուի»: Մարիամը, որովհետև ուխտ էր դրել յաւիտեան կոյս մնալ, հարցրեց հրեշտակից. «Ինչպէս կարելի է այդ, երբ ես այդ չգիտեմ»: Էրեշտակը պատասխանեց. «Չողին սուրբ կը գայ քո մէջ. և Բարձրելոյն զօրութիւնը հովանի կը լինի քեզ, որովհետև նա, որ քեզանից պիտի ծնանի, սուրբ է և Աստուծոյ Որդի կը կոչուի: Ահա քո ազգական Լազիսաբեթը, որ ամուլ էր, արդէն վեցերորդ ամիսն է, որ յղացած է. չկայ անկարելի բան Աստուծոյ համար»: Մարիամ սուրբ կոյսը, չկարողանալով հասկանալ այն զերազանց պատուի մեծութիւնը, որ Աստուած պատրաստել էր նորան, խօսեց լի խոնարհութեամբ. «Ահաւասիկ Տիրոջ աղախինն եմ. թող լինի այնպէս, ինչպէս ասացիր»: Էրեշտակը հեռացաւ նորանից. — և Որդին Աստուած՝ Վրիստոս Տէրն մեր, նոյն հրաշալի վայրկենին, մարմին առաւ անարատ սուրբ Կուսի ամենամաքուր արգանդի մէջ<sup>1)</sup>:

Մարիամ կոյսը, ընդունելով հրեշտակից այս ուրախալի աւետիքը, գնաց այցելութիւն իւր ազգական Լազիսաբեթին: Այն ինչ լսեց սա Մարիամի ողջոյնը, խաղաց մանուկը նորա որովայնի մէջ. և ինքն Լազիսաբեթ, շողով սրբով լցուած, օրհնեց Մարիամը և անուանեց նորան «Մայր Տեառն»: Սուրբ կոյսը երեք ամիս մնաց Լազիսաբեթի մօտ և ապա դարձաւ տուն:

Աւետեաց խորհուրդը աստուածային ազդեցութեամբ յայտնի եղաւ և Յովսէփին: — Էրեշտակը տեսիլքով երևեցաւ նորան և ասաց. «Յովսէփ, որդի Գաւթի, մի՛ վախենար ընդունել քո Մարիամ կինը, որովհետև նորա յղութիւնը շողին սուրբիցն է. նա կը ծնանի որդի և կ'անուանես նորան Յիսուս:

<sup>1)</sup> Էրեշտակապետի «Աւետումն սրբոյ Կուսին» շայտատանեաց սուրբ եկեղեցին ամուսնեմ անփոփոխ Ապրիլի 7-ին:

§ 3. Ծնունդ Յովհաննու Մկրտչի:

(ՂՈՒԿ. Ա. 57—80.)

Որպէս ասած էր Գաբրիէլ Տրեշտակապետը՝ Աղիաբեթը ծնաւ որդի: Այս լսելով նորա ազգականները և բարեկամները ժողովուեցան Չաքարիայի տուն, և ի սրտէ ուրախակից լինելով փառք էին տալիս Աստուծոյ, որ արժանացուցել էր նորանց Իւր ողորմութեանը: Մովսիսական օրէնքով ութերորդ օրին թրիատեցին մանուկը և կամենումէին անուն տալ նորան: Ազգականները խորհուրդ առնելով պատշաճ էին տեսնում անուննել մանուկը, իւր հօր անունով, Չաքարիա: Բայց Աղիաբեթ հաւան էր դորան, այլ ասումէր. «Յովհաննէս պիտի կոչուի դա»: Ամենեքեան զարմացան նորա օտարոտի ցանկութեան վերայ, որովհետև նոցա ազգականների մէջ ոչ ոք չիւր այդպիսի անունով: Ակնարկեցին Չաքարիային որ նա յայտնէ իւր կամքը. և նա վեր կալաւ տախտակ և գրեց նորա վերայ «Յովհաննէս է անուն դորա»: «Նոյն ժամայն նորա համբ լեզուն բացուեցաւ և նա զովաբանական երգով յայտնեց թէ ով պիտի լինի Յովհաննէսը. «Դու, ասաց, կը կոչու իս մարգարէ Բարձրեղոյն. յաւաքնութաց (կարապետ) կը լինիս Աստուծոյ և կը պատրաստես Նորա ճանապարհը»: Այս հրաշալի ծննդեան համբաւը շուտով տարածուեցաւ բոլոր Հրէաստանի լեռնակողմը և ամենեքեան զարմացած ասումէին միմեանց. «Ի՞նչ պիտի լինի այդ մանուկը, որովհետև Աստուծոյ ձեռքը նորա հետն է»:

Յովհաննէսը աճումէր և զօրանումէր հոգևով և բնակումէր անապատում մինչև երեկը Խորայել ժողովուրդին:

§ 4. Ծնունդ Յիսուսի Քրիստոսի:

(ՂՈՒԿ. Բ. 1—21.)

Ահա մօտեցել էր Փրկչի աշխարհ գալու ժամանակը. Միքիէ մարգարէի զուշակութեամբ, Նա պէտք է ծնանէր Ինթղեհէմում, ուր ծնած էր Գաւթիթ արքայն. բայց Մարիամ

կոյսը բնակումէր այն միջոցին Ինթղեհէմից հեռի Նապարեթ քաղաքում: Մակայն Նախախնամութիւնը այնպէս էր անօրինել, որ Մարիամ կոյսը ստիպուեցաւ զնալ Ինթղեհէմ: Հռովմայեցոց Օգոստոս Այսրը հրաման էր հանել աշխարհագիր առնել Հրէաստանին. այս պատճառով իւրաքանչիւր հրէայ պարտական էր վերադառնալ այն քաղաքը, ուր ծնած էին նորա նախնիքը և գրել տալ իւր անունը: Յովսէփը և Մարիամը, որք Գաւթի արքայական տանից էին, կատարելով կայսերական հրամանը, զնացին Ինթղեհէմ, որ կոչվումէր «քաղաք Գաւթի»: Երբ հասան այն տեղ, ժողովուրդի խուռն բազմութեան պատճառով իջևանելու տեղ չգտան, վասն որո հարկադրուած էին բնակել քաղաքի շրջակայքում, մի այրի (գոգաւոր տեղ քարավիի) մէջ, ուր սովորաբար հովիւները անձրևի երեսից պատսպարումէին իւրեանց ոչխարները: Գիշերը վերայ հասաւ. եղանակը սարդ էր, ուստի և հովիւները մնացել էին դաշտում և անհանգիստ չէին առնում վաստակած ճանապարհորդները: Նոյն իսկ գիշերին պատահեցաւ մի պանչելի անցք—Վերանորոգողն տիեզերքի, Փրկիչն աշխարհի, Որդին Աստուծոյ մարմին առած յայտնեցաւ մարդկութեան մէջ. Մարիամ Ս. Այսրը ծնաւ իւր անդրանիկ որդին, պատեց նորան խանձարուքով և դրեց մսուրի մէջ:

Ինթղեհէմի հովիւները, որոց այրի մէջ ծնած էր մի նոր արքայ—աշխարհի Փրկիչը, աւաջկնքն էին, որ արժանացան լսել նորա ծննդեան ուրախարար համբաւը: Նոյն Ինքն Աստուած յայտնեց նոցա այս մեծ և պանչելի խորհուրդը. կէս գիշերին տեսան նոքա երկնային լուսով պատած հրեշտակն Աստուծոյ և ահաբեկուեցան. բայց հրեշտակը քաջալերեց նորանց և ասաց. «Մի երկնչեք, ես աւետումեմ ձեզ մեծ ուրախութիւն, որ պիտոյ է լինի և բոլոր ժողովուրդի համար. այսօր Գաւթի քաղաքում ծնաւ Փրկիչ, որ է Օծեալ Տէր (Մեսիա, Քրիստոս): Եւ այս լինի ձեզ նշանակ. կը գտանէք մի մանուկ խանձարուքով պատած և մսուրի մէջ դրած»:

Երբ աւարանց հրեշտակը իւր խօսքը, երևեցան դասք հրեշտակների, որք օրհնումէին Աստուած և երգումէին. «Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»: Հրեշտակները վերացան երկինք և հովիւնները, խորհուրդ ի մէջ առնելով, որոշեցին դիմել դէպ ի Բեթղեհէմ և տեսանել թէ ի՞նչ է պատահել այն տեղ, որ Աստուած հրաշքով յայտնել էր նոցա: Հրեշտակը ասել էր նոցա թէ կը գտանէք մանուկը մնուրի մէջ. նոքա դիտէին թէ մնուրները ոչխարների համար գտանվումէին միայն այրերի մէջ, քաղաքի մօտ, ուստի և ուղղակի գնացին այնտեղ, ուր և գտան մի այրի մէջ խանձարուքով պատած նորածին մանուկը, երկրպագեցին նորան և պատմեցին Յիսուսին ու Մարիամին իւրեանց լսած ու տեսածը. և ապա վերադառնալով ասուն հռչակեցին ամենայն տեղ այս հրաշալի իրողութիւնը:

Աւթերորդ օրը ՚բստ օրինաց թրիատեցին մանուկը և կոչեցին նորան Յիսուս (Փրկիչ):

**ՏԵՄ** Մոգերի դաւուստը արևելքից և ընծայաբերութիւնը իւրեքը նորածին աստուածեղէն մանուկին:

(ՄԱՏԹ. Բ. 1—12.)

Յիսուսի ծննդեան համբաւը դեռևս մի քանի անձինք միայն լսած էին և ուրախացած. բայց թագաւորը, քահանայապետքը և դպիրքը, որք Ս. Գրքին քաջ տեղեակ էին, և այլ շատերը տակաւին չգիտէին: Տէր Աստուած զարմանալի կերպով և նոցա ևս յայտնեց, ցոյց տալով միանգամայն որ Իւր Միածին Որդին առ հասարակ Հրեից և հեթանոսաց փրկութեան համար եկած էր աշխարհ: Աստուածեղէն մանուկը դեռ Բեթղեհէմումն էր, երբ Արուստղեմի մէջ երեւեցան երեք մոգ (աստեղագէտք)<sup>1)</sup>, որ յայտնի էին բոլոր Ա-

<sup>1)</sup> Բստ հին ականգութեան այս երեք մոգերի անունքն էին Մելգոն, Գասպար և Բաղդասար:

միայի մէջ իւրեանց խմաստութեամբ և հարստութեամբ: Մոքա եկած էին արևելքի հեռաւոր կողմերից և հարցանումէին թէ՛ «նու է Հրեից նորածին թագաւորը, որովհետև մեք տեսանք նորա աստղը մեր աշխարհում և եկած ենք երկրպագութիւն մատուցանել նորան»: Այս լուրը մեծ խռովութիւն ձգեց Արուստղեմի մէջ և Հրեաստանի Հերովդէս թագաւորը մեծ երկիւղը մէջ ընկաւ, մի գուցէ նորածին թագաւորը յափշտակէր նորանից իւր արքայական թագը: Աւստի ժողովեց իւր մօտ Հրեից բոլոր քահանայապետքը և դպիրքը և, հարց ու փորձ առնելով նոցանից, տեղեկացաւ թէ Մեսիան պիտոյ է ծնանի Հրեաստանի Բեթղեհէմ քաղաքում, ինչպէս յառաջուց գուշակած էր Միքիէ մարգարէն: Այնուհետև Հերովդէսը ծածուկ կոչեց իւր մօտ երեք մոգերը և ստուգեց նոցանից այն նշանաւոր աստղը երևելու ժամանակը: Արձակելով նորանց դէպ ի Բեթղեհէմ, ասաց նոցա. «գնացէք, ստուգեցէք մանուկի մասին, և երբ որ կը գտանէք նորան, իմաց տուէք ինձ որ և ես գամ և երկրպագեմ նորան»: Բայց Հերովդեսի սրտում յղացած էր մի չար և վատթար խորհուրդ. որպէս զև չկորուսանէր իւր արքայական թագը, նա մտադիր էր սպանել աստուածեղէն մանուկը:

Մոգերը ճանապարհ ընկան դէպի Բեթղեհէմ. նոյն աստղը, որ տեսած էին արևելքում, առաջնորդեց նոցա և դադարեցաւ, հասնելով այնտեղ, ուր գտանվումէր Յիսուս մանուկը: Անպատմելի ուրախութեամբ ներս մտան նոքա և գտան Յիսուս մանուկը Իւր Մօր հետ միասին, խոնարհութեամբ երկրպագեցին Աստուածորդւոյն, բաց արին իւրեանց գանձերը և մատուցին նորան ոսկի՝ կնդրուկ և զմուռս<sup>1)</sup>: Այնուհետև տեսլեան մէջ հրաման ստացան մոգերը չվերա-

<sup>1)</sup> խորհրդաւոր էին մոգերի բերած ընծաները. ոսկին՝ նուիրեցին Յիսուսին իբրև թագաւորի, կնդրուկը՝ իբրև Աստուծոյ, և զմուռը՝ իբրև մարդոյ, որ մեռանելու էր աշխարհի փրկութեան համար:

գառնալ առ Հերովդէս, վասն որոյ նորա մի այլ ճանապարհով գնացին իւրեանց աշխարհը:

§ 6. Տեառնընդառաջ. Սիմէոն ծերունի:

(ՂՈՒԿ. Բ. 21—40)

Մովսիսական օրէնքով Խարայեւացիք պարտական էին իւրեանց արու անդրանիկ զաւակները ծննդեան քառասներորդ օրին նուիրել Աստուծոյ <sup>1)</sup>: Այս օրէնքը կատարվում էր այսպէս. մայրը, առնելով իւր մանուկը, զալիս էր տաճարը և այնտեղ, իբրև փրկանք իւր մանուկի համար, զոհ էր մատուցանում Աստուծոյ մի տարևոր գառն. իսկ աղքատ մարդիկ, որ չունէին կարողութիւն գառն բերելու, զոհումէին երկու տասրակ կամ երկու աղաւնու ձագեր:

Երբ Յիսուս քառասներեայ եղաւ, Յովսէփ և Մարիամ, երկու աղանի առած իւրեանց հետ, տարան նորան Երուսաղեմի տաճարը որ ընծայեն Աստուծոյ: Այն ժամանակ Երուսաղեմի մէջ գտանվում էր մի արդար և երկիւղած մարդ, Սիմէոն անուն, որ վաղուց հրաման էր ստացել Հոգին սուրբից մահ չտեսանել, մինչև որ տեսանէ Տիրոջ Օծեալը: Ազդեցութեամբ Հոգւոյն սրբոյ եկաւ նա տաճար, առաւ իւր զիրկը աստուածային մանուկը և ասաց. «Տէր, այժմ արձակիր ինձ, քո ծառայող, ըստ քո բանի, զէպի հանգիստ խաղաղութեան. վասն զի տեսան իմ աչքերս քո փրկութիւնը՝ որ պատրաստեցիր բոլոր ժողովուրդների առաջև, այն լոյսը, որ պիտի յայտնուէր հիթանոսներին և փառքը՝ Խարայելի ժողովուրդին»: Յովսէփը և Տիրամայրը զարմացած էին ծերունու խօսքերի վերայ: Այնուհետև Սիմէոն օրհնեց նորանց, ասելով Մարիամին այս մարգարէական խօսքերը. «Ահա սա (մանուկը) կը լինի Խարայելի մէջ շատերի գրորման և կանդնման պատճառ. և քո սրտի մէջ ևս սուր կ'անցանէ»:

<sup>1)</sup> Եւբ ժդ, 12. Ղ. ևտ. ժբ, 6—8.

Այն տեղ էր և Աննա մարգարէ այրի կինը, մօտ ութսուն և չորսամեայ հասակում: Սա, իւր ամուսնու մահուց յետոյ, նուիրել էր իւր անձը Աստուծոյ սպասուորութեան. երբէք չհեռանալով տաճարից, զիշեր ու ցերեկ պահքով և աղօթքով պաշտում էր Տէրը: Երբ տեսաւ Աստուածորդին, փառք տուաւ Աստուծոյ և սկսաւ խօսել Յիսուսի վերայ այն մարդերի հետ, որ սպասումէին Երուսաղեմի փրկութեանը <sup>1)</sup>:

§ 7. Փախուստ Ղգիպոսս:

(ՄԵՏԹ. Բ. 13—23.)

Հերովդէսը, տեսանելով որ մոգերը չդարձան Բեթղեհէմից առ ինքը, և մի այլ ճանապարհով դուրս են գնացած իւր սահմանից, սաստիկ բարկացաւ և հրաման արձակեց կոտորել Բեթղեհէմի և նորա բոլոր սահմանների մէջ մանր տղայքը, մինչև երկու տարեկան, ի հարկէ կարծելով թէ Յիսուս ևս նոցա հետ մեռանելու էր: Բայց Աստուած Իւր Օծեալը փրկեց այդ վտանգից: Յառաջագոյն արդէն Աստուծոյ հրեշտակը տեսնան մէջ երևեցաւ Յովսէփին և, յայտնելով նորան Հերովդէսի չար խորհուրդը, հրամայեց առնուլ Յիսուս մանուկը և նորա մայրը և փախչել Եգիպտոս: Յովսէփը կատարեց ինչ որ Աստուած հրամայել էր նորան. և երբ զիշերով հեռացել էին նորա Բեթղեհէմից, իսկոյն կատարուեցաւ թագաւորի անողորմ հրամանը: Նորա ուղարկած դահիճները անխնայ կոտորեցին տասներորս հազար անմեղ մանուկներ Բեթղեհէմի մէջ <sup>2)</sup>:

Հերովդէսը, լուցանելով իւր արիւնտա խորհուրդը, շուտով հիւանդացաւ ծանր ախտով և, յետ երկարատև չարաս-

<sup>1)</sup> Յիսուսի Քրիստոսի քառասներեայ ընծայումն ի տաճարն Հայաստանեայց Ս. Եկեղեցին կատարումէ անտիփոխ Փետրվարի 14-ին:

<sup>2)</sup> Այսպէս կատարուեցաւ Երեմիայի մարգարէութիւնը, որ

չար տանջանքի, մեռաւ: Վորա մահուց յետոյ, Աստուծոյ հրեշտակը դարձեալ տեսիլքի մէջ երևեցաւ Յովսէփին և հրամայեց վերադառնալ իւր հայրենիքը: Յովսէփը Յիսուսի և Վորա մօր Մարիամի հետ Ագիպտոսից դարձաւ շրջապատան: (Ուխ. բ. 1.): Բայց երբ լսեց թէ շերտիզեաի որդի՝ խստասիրտ Աբքեղայոսը թագաւորել էր շրջապատանին, երկիւղ կրեց այնտեղ մնալու, վասն որոյ վերստին իւր տունը հաստատեց Վալիլիայի Վազարէթ քաղաքում, որ շերտիզէս Անթիպասի իշխանութեան ներքոյ էր:

§ 8. Երկու ասանամեայ Յիսուսը տաճարի մէջ:  
(ՂՈՒԿ. Բ. 41-52.)

Ագիպտոսից վերադառնալուց մինչև իւր մկրտութիւնը Յիսուս ապրումէր Ս. Յովսէփի տան մէջ, Վազարէթ քաղաքում: Վա աճումէր ու զօրանումէր լն՝ իմաստութեամբ և Աստուծոյ շնորհքը Վորա վերայ էին:

Յիսուսի ծնողքը սովորութիւն ունէին ամենայն տարի երթալ Արուսաղէմ, Չատիկի տօնը կատարելու: Երբ Յիսուսը երկու ասանամեայ էր, նորան ևս ծնողքը առան իւրեանց հետ և գնացին Արուսաղէմ: Տօնի օրերը կատարելուց յետոյ, ամենեքեան յետ դարձան տուն, բայց Յիսուս մնաց Արուսաղէմում: Յովսէփ և Մարիամ կարծումէին թէ իւրեանց մտնուելը ուղեկիցների հետ էր. և երբ մի օրի ճանապարհ անցած էին, սկսան որոնել նորան իւրեանց զբայցիների և ծախօթների մէջ, բայց չգտան և մեծ անհանգստութեամբ վերադարձան Արուսաղէմ, որոնելու նորան:

ասումէր. «Չայն լսուեցաւ շաւից, լաց ու աղաղակի, շաքէլը լաց էր լինում իւր որդիների համար, որովհետև չկային նոքա»: շաքէլ ասելով հասկանալի է Յակոբ նահապետի կինը, որոյ գերեզմանը մօտ էր Բեթղեհէմին: շաւից քաղաք էր, տասնըջորս մղոն հեռու Բեթղեհէմից:


Երեք օրից յետոյ գտան նորան տաճարի մէջ, նստած վարդապետների հետ, որոց լսումէր Վա և հարցանումէր այնպիսի իմաստութեամբ որ լսողները ամենեքեան զարմանումէին Վորա իմաստութեան և պատասխանիքի վերայ: Երբ տեսաւ Վորան Մարիամ Ս. Այսը՝ ասաց, «Ո՛րդեակ, այդ ի՞նչ գործ գործեցիր դու մեր հետ. ահա՛ քո հայրը և ես տառապանքի մէջ որոնումէինք քեզ»: Յիսուս պատասխանեց նոցա, «ընդէր որոնումէիք ինձ. միթէ չգիտէիք որ ինձ պարտ էր լինել իմ շօրս տանը»: Բայց ծնողքը չհասկացան այդ բանի խորհուրդը: Յիսուս գնաց նոցա հետ միասին Վազարէթ և միշտ հնազանդ էր նոցա. Վա զարգանումէր իմաստութեամբ և հասակով, շնորհ գտանելով Աստուծոյ և մարդկան առաջը:

§ 9. Քարոզութիւնք Յովհաննու Մկրտչի.  
Մկրտութիւն Յիսուսի:  
(ՄԱՏԹ. Գ. 1-17. ՄԱՐԿ. Ա. 1-11. ՂՈՒԿ. Գ. 1-18.)

Մինչդեռ Յովհաննէսը բնակումէր անապատի մէջ ճղնաւորական կեանքով և պատրաստումէր իւր անձը արժանապէս կատարելու այն պաշտօնը, որ սահմանած էր նորան ի վերուստ, հասանումէր արդէն և ժամանակը երբ Յիսուս, իբրև աստուածեղէն վարդապետ, իւր աւետարանական քարոզութեամբ, պիտի սկսանէր լլուցանել մարդկային ազգի փրկութեան գործը:

շուրջմայեցուց կայսեր՝ Տիրերիոսի թագաւորութեան տանն և հինգերորդ տարում, Չաքարիայի որդի Յովհաննէսին հրաման հասաւ աստուածակոյս կողմից, նոյն իսկ անապատում, գնալ Յորդանանի կողմը և քարոզել ժողովրդին մկրտութիւն և ապաշխարութիւն, մեղքի թողութեան համար, որով և պատրաստէր նոցա արժանապէս ընդունելու Մեսիան: շամարեա թէ հինգհարիւր տարի էր անցել որ ոչ մի մարդարէ յայտնուած էր:

1009 05663 39950 (2019760) (4035)



212-2001

լուեցաւ մարգարէական ձայնը Յովհաննէսի, մեծ քաղմու-  
թիւն ժողովողի Երուսաղեմից և բոլոր Հրէաստանից գնու-  
մէին Յորդանանի եզերքը, նորաքարոզութիւնքը լսելու: «Ա-  
պաշխարեցէք, ասում էր Յովհաննէսը, որովհետև մօտեցել է  
Աստուծոյ թագաւորութիւնը»: Եւ ապաշխարողներին, որ  
խոստովանումէին իւրեանց մեղքը, մկրտումէր նա Յորդանան  
գետի մէջ:

Այս միջոցում և Յիսուս Գալիլեայի Նազարէթ քաղա-  
քից եկաւ Յորդանան և հասարակ ժողովողեան հետ մկրտու-  
թիւն էր խնդրում Յովհաննէսից: Սա, անարժան համարե-  
լով իւր անձը այդ պատուին, ասաց. «Ինձ պիտոյ է Վեգա-  
նից մկրտուիլ, դ՞նու ես առիտ գալիս»: «Թոյլ տուր այժմ, պա-  
տասխանեց Յիսուս, որովհետև այսպէս վայել է մեզ կատա-  
րել ամենայն արդարութիւն». ապա թոյլ տուաւ Յովհան-  
նէսը, և Յիսուս մկրտուեցաւ Յորդանան գետի մէջ: Երբ Նա  
դուրս եկաւ ջրից և կանգնեց աղօթքի, երկինքը բացուեցաւ,  
Հոգին սուրբ աղանակերպ իջաւ Նորա վերայ և երկնքից  
ձայն լուեցաւ, որ ասումէր. «Գա է Արդի Իմ սիրելի, ընդ  
որ հաճեցայ»:

Յիսուս Վրիստոս սկսաւ իւր սուրբ և նուիրական պաշ-  
տօնը, երբ լրացած էին նորա հասակի երեսուն տարիքը:

§ 10. Յիսուսի փորձութիւնը անապատում:  
(ՄԱՏՔ. Դ. 1—11. ԳՈՒԿ. Դ. 1—13.)

Մկրտութենից յետոյ, Հոգւոյն սրբոյ ազդեցութեամբ,  
վարուեցաւ Յիսուս դէպ ի անապատ, ուր քառասուն օր փոր-  
ձուեցաւ սատանայից. և այդ քառասուն օրը ոչինչ կերած ու  
խմած չէր: Այնուհետև մարդկային բնութեամբ քաղցեցաւ.  
և մօտենալով Նորան փորձիչ սատանան, ասաց. «Եթէ դու  
Աստուծոյ Արդի ես, ասա որ այս քարերը հաց դառնան»: «Պատասխանեց նորան Յիսուս, ասելով. «Գրած է Սուրբ գրքի

մէջ, թէ մարդս ո՛չ հացով միայն կենդանի է, այլ ամենայն  
բանով Աստուծոյ». (Երկ. օր. ր. 3.): Յետոյ փորձիչը հա-  
նեց Նորան մի բարձր սարի գլուխ, ցոյց տուաւ նորան աշ-  
խարհի բոլոր թագաւորութիւնքը, և ասաց նորան. «Վեզ  
կրտամ այս ամենայն իշխանութիւնը և փառքը, որ ինձ են  
տուած, որ և ես կարող եմ շնորհել ում կամիմ. եթէ դու,  
խոնարհելով, երկրպագես ինձ, քեզ կը լինի այդ բոլորը»: «Պատասխանեց Յիսուս, ասելով. «Գրած է. երկրպագիր մի-  
այն Աստուծոյ և պաշտիր Նորան միայն»: Այնուհետև սա-  
տանան տարաւ նորան Երուսաղէմ և կացուց տաճարի աշ-  
տարակի վերայ և ասաց. «Եթէ դու Աստուծոյ Արդի ես,  
վայր ձգիր քեզ այս տեղից, որովհետև Ս. գրքի մէջ գրած կայ,  
թէ Աստուած պատուիրել է հրեշտակներին պահել քեզ, և  
բարձրացնել իւրեանց ձեռների վերայ, որ դու ոտքդ չզարկես  
քարի». (Սաղմ. դ. 11—12.): «Պատասխանեց Յիսուս. Գրած  
է. «մի համարձակուիր փորձելք Տէր Աստուածը». (Երկ.  
օր. 4. 16.): Ապա հեռացաւ փորձիչը Յիսուսից և հրեշ-  
տակները եկան և սպասաւորումէին Նորան:

§ 11. Յովհաննէսը Մկրտչի վկայութիւնը Յի-  
սուսի Վրիստոսի մասին:  
(ՅՈՒՀ. Ա. 19—34.)

Երբ որ Յիսուս Վրիստոս անապատում էր, Յովհաննէս  
Մկրտիչը Յորդանանի եզերքում քարոզելով ժողովողին, «մը-  
կրտութիւն ապաշխարութեան ի թողութիւն մեղաց», յար-  
դարումէր Մեսիայի ճանապարհը: Նորա բարի վաղքը, սիրտ  
շարժող քարոզութիւնքը այնպիսի խոր տպաւորութիւն ազ-  
դեցին Հրէից վերայ որ շատերը կարծումէին թէ նա է Մե-  
սիան: Այդ կարծիքը ստուգելու համար, երբ Հրէից ծե-  
րակցոյրը Երուսաղեմից ուղարկեց իւր քահանայքը և Ղև-  
տացիքը հարցանել Յովհաննէսից թէ դու ո՞վ ես, Յովհաննէս

պատասխանեց նոցա. „ես Մեսիան չեմ, այլ Նորս կարս-  
պեան (յառաջընթաց, ճանապարհ բացողն) եմ. ինչպէս և  
գրած է իմ մասին Նսայի մարգարէն. „Չայն բարբառոյ յա-  
նապատի, պատրաստ արարէք զճանապարհ Տեառն“. (Նս.  
խ. 3.)<sup>1)</sup> „Ապա ընդէր մկրտումես դու, եթէ Մեսիան չես“,  
հարցրին նոքա: „Նս մկրտումեմ ձեզ ջրով, (որ պարզապէս  
ապաշխարութեան արտաքին մի նշան է), պատասխանեց Յով-  
հաննէսը, բայց կայ մինը ձեր մէջ, որ դուք չէք ճանաչում.  
Նա գալիս է իմ ետեւից և ես արժանի չեմ Նորս կոչելիների  
կապերը արձակել. Նա կը մկրտէ ձեզ շողով սրբով և հրով“:

Միւս օրը Յովհաննէսը տեսանելով Յիսուսը, որ գալիս  
էր առ ինքը, ասաց. „ահա գառն Աստուծոյ, որ վեր է առել  
իւր վերայ աշխարհի մեղքը. Սա է՝ որոյ մասին ես ասում  
էի թէ իմ ետեւից գալիս է մինը, որ ինձանից յառաջ էր: Նս  
չգիտէի Նորան, բայց Նա, որ ուղարկեց ինձ ջրով մկրտելու,  
ասաց ինձ՝ „որոյ վերայ կը տեսանես շողին իջանելով և դա-  
դադարելով, Նա է, որ կը մկրտէ շողով սրբով. և ես տե-  
սայ և վկայեցի թէ Սա է Որդին Աստուծոյ“:

§ 12. Յիսուսի առաջին աշակերտները:

(ՅՈՒՀ. Ա. 35—51.)

Միւս օրին վաղ առաւօտուն Յովհաննէս Մկրտիչը կանգ-  
նած էր Յորդանան գետի եզերքում իւր երկու աշակերտնե-  
րով: Երբ տեսաւ Յիսուսը, ասաց նոցա. „ահա գառն Աս-  
տուծոյ“: Աշակերտները, լսելով իւրեանց վարդապետի վկա-  
յութիւնը Մեսիայի մասին, գնացին Յիսուսի հետեւից: Սո-  
ցանից մինը Ննդրէասն էր: Յիսուսը, տեսանելով նորանց,  
ասաց. „ի՞նչ կամիր“: Նորս պատասխանեցին. „Վարդա-

<sup>1)</sup> Այսինքն՝ ես իբրև մարդ քարոզելով անապատի մէջ յոր-  
դորումեմ ամենքին նորոգել իւրեանց սրտերը, որպէս զե Աս-  
տուծոյ բնակութեան համար արժանաւոր օթեան լինին:

պետ՝ ուր էօթեանդ“: „Նիկէք և տեսէք“. ասաց Յիսուս:  
Գնացին նոքա Յիսուսի հետ և այն օրը անցուցին Նորս մօտ:  
Յետոյ Ննդրէասը հանդիպումէ իւր եղբօր Սիմոնին և  
ասումէ նորան. „գտանք մէք Մեսիան“: Սիմոնը ցանկացաւ  
տեսանել Փրկիչը և Ննդրէասի հետ միասին գնաց Նորս մօտ:  
Երբ Յիսուս տեսաւ նորան՝ ասաց. „դու ես Սիմոն՝ Յօնա-  
նի որդին. դու կը կոչուիս Աեփաս, որ թարգմանի Պետրոս“  
(Վ էմ): Միւս օրին, Գալիլիա գնալու ժամանակ, ճանա-  
պարհին տեսաւ Յիսուս Փիլիպոսը, որ Բեթսայիցա քաղա-  
քից էր, և ասաց նորան. „եկ իմ հետեւից“. Փիլիպոսը հե-  
տեւեց Նորան: Սա փոքր ինչ ժամանակից յետոյ գտանումէ  
իւր բարեկամ՝ Նաթանայէլը և ասումէ նորան. „գտել ենք  
Մեսիան, որոյ մասին գրած էին Մովսէսը և մարգարէքը, նա  
Յիսուսն է՝ Յովսեփի որդին, Նազարէթ քաղաքից“: „Միթէ  
կարելի՞ է Նազարէթից մի բարի բան յուսալ“, հարցրեց Նա-  
թանայէլը: Պատասխանեց Փիլիպոս. „եկ և կը տեսանես“:  
Յիսուս, տեսանելով Նաթանայէլը, ասաց. „Ահա արդարև  
Խորայեւացի, որոց մէջ չկայ նենդութիւն“: Այս խօսքը զար-  
մանք բերեց Նաթանայէլ վերայ, որ և հարցրեց Յիսուսից.  
„ուստի՞ ճանաչումես ինձ“: Պատասխանեց Յիսուս. „Տա-  
կաւին Փիլիպոսը չէր կոչել քեզ, ես տեսայ քեզ, մինչ դու  
թղնուռ տակն էիր“: Ոչ որ չհասկացաւ այս խօսքը բաց ի  
Նաթանայէլից, որ հիացած Յիսուսի ամենազէտ լինելու վե-  
րայ, բացազանչեց. „Վարդապետ, դու ես Որդի Աստուծոյ,  
դու ես թագաւորն Խորայելի“: Յիսուս ասաց նորան. „դու  
հաւատումես այն պատճառով, որ ասացի՝ թէ տեսայ քեզ  
թղնուռ տակ, բայց դեռ առաւել մեծամեծ բաներ կը տե-  
սանես<sup>1)</sup>“:

<sup>1)</sup> Այս Նաթանայէլն է, որ յետոյ Բարթողիմէոս կոչուե-  
ցաւ և եղաւ առաքեալ շայտանեայց:

§ 13. **Պալեկիայի Անա քաղաքի հարսանիքը:**  
(ՅՈՒՀ. Բ. 1—11.)

Յիսուս Վրիստոս, ընդունելով Վաթանայէլը իւր աշակերտների կարգը, գնաց Պալեկիա: Անա քաղաքի մէջ այն ժամանակ հարսանիք էր, ուր և հրաւիրուեցաւ Յիսուս իւր աշակերտների հետ միասին. այն տեղ էր և Տիրամայր Արքային: Հարսանիքի հացկերութեան միջոցին պակասեց գինին: Ասաց մայրը Յիսուսին. «գինու պակասութիւն կայ» և կոչնականք կամին ուրախ լինել: Թէպէտ Յիսուս պատասխանեց թէ նորա ժամանակը տակաւին հասած չէ, այնու ամենայնիւ Մարիամ Ս. կոչը հաւատարի էր որ իւր Արդին մի աս. տուածեղէն հրաշագործութեամբ կարող էր լցուցանել այդ պակասութիւնը, վասն որոյ և ասաց սպասաւորներին որ կատարեն ինչ որ պատուիրելու էր նոցա Յիսուսը: Այն տեղ կային վեց հաս իճեայ թակոյկ ջրի, հրէից մէջ սովորական մաքրութեան համար. Յիսուս Վրիստոս հրամայեց ջրով լցուցանել այդ թակոյկները մինչև բերանը և ապա առնուլ և տանել տաճարապետին: Այրբ որ տաճարապետը ճաշակեց ջուրը գինի դարձած, զարմացաւ և չգիտէր, ուստի է այդ ազնիւ գինին. ապա երեսը դարձուցանելով դէպի փեսան, խօսեց տաճարապետը. «Ամենայն մարդ հիւրերին յառաջագոյն մատուցանումէ անոյշ գինի, իսկ երբ լիացած էին նոքա, այնուհետև վատ գինին. բայց դու անոյշ գինիդ պահեցիր մինչև այժմ»: Այս Անա քաղաքի մէջ արած հրաշագործութիւնը սկիզբն էր նշանների, որով Յիսուս յայտնեց իւր աստուածային փառքը և Վորա աշակերտները հաւատացին իւրեանց աստուածեղէն Վարդապետի ի վերուստ կոչմանը<sup>1)</sup>:

<sup>1)</sup> Ս. Յովսէփ Աստուածահօր անունը յիշուած չէ ոչ այս հարսանեաց մէջ և ոչ ևս սորանից յետոյ: Հասարակաց կարծիքով գեռևս Վրիստոս չէր սկսել իւր քարոզութիւնը նա արդէն մեռած էր:

**ՅԻՍՈՒՍԻ ՎՐԻՍՏՈՍԻ ՎԵՐՈՒՊՈՒԹԵԱՆ ԵՌԵՂՅԻՆ ՏՄԵՆ.**

§ 14. **Յիսուս տաճարից արաքսուակ վաճառականները:**  
(ՅՈՒՀ. Բ. 12—21.)

Պալեկիացոց Անա քաղաքից Յիսուս, իւր մօր և աշակերտների հետ միասին, գնաց Ափառնառում քաղաքը, և մի քանի օր յետոյ ճանապարհ ընկաւ դէպ ի Արուսաղէմ, որովհետև Չատկի տօնը մօտեցած էր արդէն: Այրբ մտաւ Վա Արուսաղէմի տաճարը, այս նուիրական տեղում գտաւ մի անարժան տեսարան. տաճարի (հեթանոսաց) սրահի մէջ արջառներ (եղն ու կով), ոչխարներ և աղաւնիք էին վաճառում, իբրև զոհեղի անասունք. լոմայափոխները նստած այն տեղ վաստակումէին արծաթ, առնելով և տարով: Այս սրբապղծութիւնը շարժեց Յիսուսի արդարացի բարկութիւնը. Վա շինեց չուանեայ խարազան և ծեծելով դուրս հանեց տաճարից այդ վատթար մարդիկը, ոչխարները և արջառները, ցրուեց հատավաճառների արծաթը և կործանեց նոցա սեղանները. և ապա ասաց աղաւնեվաճառներին. «Էռացրէք այդ բաները այս տեղից և իմ էօր տունը մի շինէք վաճառատուն»: Տեսանելով Յիսուսի այսպիսի իշխանաբար վարմունքը տաճարի մէջ, ամբարհաւած և չարամիտ շրէայքը զայրացան սաստկապէս և ասացին Վորան. «Ի՞նչ նշան կարող ես Վու ցուցանել մեզ, որ ունէիր իշխանութիւն այդպէս վարուելու»: Պատասխանեց Յիսուս. «Քակեցէք այդ տաճարը, և ես երեք օրի մէջ վերստին կը կանգնեմ դորան»: շրէայք, Յիսուսի պատասխանը նիւթական կերպով հասկանալով, ասացին. «Քառասուն և վեց տարուան մէջ շինուած է այս տաճարը, և դու երեք օրի մէջ կամին կանգնել դորան»:

բայց, տաճար ասելով Յիսուս ակնարկումէր դէպի իւր մարմնի տաճարը, որ բնակարան էր Նորա Աստուածութեանը: Այս պատասխանը Յիսուսի ունէր այդ խորհուրդը. երբ որ դուք կը մեռուցանէք իմ մարմինը, ես երեք օրից յետոյ յարութիւն կ'առնում: այն ժամանակ կը ճանաչէք իմ Աստուածութիւնը և իշխանութիւնս տաճարի մէջ:

§ 15. Տիրոջ խօսքը Նիկոզիմոսի հետ: (ՅՈՎ. Գ. ՄԵՐԿ. Զ. 17—20. ՄԵՅԹ. ԺԴ. 3—5. ՂՈՒԿ. Գ. 19—20.)

Օտակի տօնին շատերը ատենելով Յիսուսի հրաշագործութիւնքը, հաւատացին Նորան: Նոյն հաւատացողներն կարգումն էր և Նիկոզիմոս Փարիսեցին, որ Հրէից իշխանն էր: Սա կամեցաւ առանձին խօսիլ Յիսուսի հետ և լսել Նորա վարդապետութիւնը. բայց, զգուշանալով միւս Փարիսեցիներէից, միանգամ գիշերով եկաւ Յիսուսի մօտ և խօսեց այսպէս. «Ուրբի՛ դիտենք, որ Աստուծոց առաքուած վարդապետ ես, որովհետեւ ոչ ոք կարող է այդ նշանները առնել, որ դու առնումես, եթէ Աստուած չլինի նորա հետ»: Յիսուս, նախատես լինելով թէ Նիկոզիմոսը կամէր ծանօթանալ այն պայմաններին, որ հարկաւոր էին Մեսիայի թագաւորութիւնը մտանելու համար, ասաց նորան. «Ղշմարիտն ասեմ քեզ, եթէ մի մարդ նորից չճնանի, կարող չէ Աստուծոյ արքայութիւնը ատենել»: Նիկոզիմոսը, Յիսուսի պատասխանի վերայ տարակուսուած, հարցրեց թէ «Ի՞նչպէս կարող է մարդ երկու անգամ ծնանիլ»: Պատասխանեց Յիսուս. «Եթէ մի մարդ չէ ծնանում ջրից և Հոգուց (մկրտութեամբ և Հոգւոյն սրբոյ շնորհք), կարող չէ Աստուծոյ արքայութիւնը մտանել. վասն զի մարմնից ծնածը՝ մարմին է, և հոգուց ծնածը՝ հոգի է»: Նիկոզիմոսը չէր կարող ըմբռնել որ Յիսուսի խօսքը հոգւոյ ծննդեան վերայ էր և ոչ մարմնաւոր, ուստի, երբ տարակուսանքով և զարմացմամբ ասաց

թէ՛ «Այդ Ի՞նչպէս կարող է լինել», այն ժամանակ Յիսուս յանդիմանեց նորա թանձրամտութիւնն որ, ամէն բան նիւթական կողմից քննելով, Հոգւոյն սրբոյ գործքը, որով մարդն նորից հոգւոյ կեանքով ծնանումէ, չէր կարող հասկանալ:

Նիկոզիմոսը, որպէս և միւս Փարիսեցիքը, կարծումէին թէ Մեսիան այս աշխարհի թագաւոր պէտք է լինի, փառքով և մեծութեամբ զարդարուած. այս թիւր և մոլոր կարծիքը հերքելու համար, Յիսուս պարզապէս տեղեկութիւն տուաւ Նիկոզիմոսին, թէ ով է Մեսիան և ինչպէս լինելու էր Նորա վիճակը. «Որպէս Մովսէս բարձրացրեց օձն անապատի մէջ, ասաց Նա, այնպէս պիտի բարձրանայ (խաչի վերայ) և Որդին մարդոյ. որպէս զի ամենայն մարդ հաւատաւով Նորան չկորնչի, այլ ընդունի յաւիտենական կեանք: Վասն զի Աստուած այնպէս սիրեց աշխարհը որ չինայեց տալ նորան իւր Միածին Որդին. որ ամենայն ոք, որ կը հաւատայ Նորան, չկորնչի, այլ ընդունի յաւիտենական կեանք»: Յիսուսի խօսուածքը խորին տպաւորութիւն գործեցին Նիկոզիմոսի սրտում. նա ծածուկ աշակերտ դարձաւ Յիսուսին և վերջին ժամանակներում յայտնապէս պաշտպան էր Նորան Հրէից ծերակուտի առաջը:

Երուսաղեմից Յիսուս իւր աշակերանների հետ գնաց Յորդանանու կողմերը, այն տեղ ուսուցանումէր և մկրտումէր ժողովուրդը: Այդ բանի համար Յովհաննէս Մկրտչի աշակերտքը տեղեկութիւն տուին իւրեանց վարդապետին: Յովհաննէսը ասաց նոցա, թէ «Յիսուսը ճշմարիտ Մեսիան է և ես Նորա կարապետը, որպէս միշտ քարոզել էի ձեզ. այժմ պարտ է Նորան աճել և զօրանալ և ինձ մեղմիլ (Նորան փառաւորուիլ և ինձ նուազել): Ապա շատ միջոց չանցաւ որ Յովհաննէս Մկրտչը բանա զրուեցաւ, որովհետեւ Հերովդէսին յանդիմանութիւն էր արել նորա սպօրէն ընթացքի համար:

§ 16. Սա մարացի կինը:

(ՅՈՒՆ. Դ. 1—43.)

Փարիսեցիք, լսելով թէ Յիսուս իւր վարդապետութեամբ աւելի մեծ բազմութիւն գրաւումէ զէպի Կնքն քան թէ Յովհաննէս Մկրտիչը, վառուեցան նախանձով և կամենումէին հարածել Նորան. այս պատճառով Յիսուս թողեց շրէստանը և միւսանգամ գնաց Վալիլիա: Ղանապարհին, անցանելով Սամարիայից, դադարեցաւ Նա Մուքար (Մուքեմ) քաղաքի շրջակայքում մի ջրհորի մօտ, որ Յակոբ նահապետի փորել տուածն էր. ուր և խորհրդաւոր խօսակցութիւն ունեցաւ մի Սամարացի կնոջ հետ:

Արք ճանապարհից վաստակած հանգստանումէր Յիսուս ջրհորի մօտ և աշակերտքը քաղաք էին գնացել կերակուր գնելու, եկաւ այն տեղ մի Սամարացի կին ջուր տանելու: Յիսուս Վրիստոս, դառնալով զէպի այդ կինը, ասաց, «տուր ինձ ջուր ընկել»: Սամարացի կինը, միտ բերելով թէ ինչ անհաշտ ատելութիւն կար Սամարացւոց և շրէից մէջ՝ զարմացած մնաց, «այդ որպիսի բան է, ասաց նա, որ դու լինելով շրէայ, խնդրումես ջուր Սամարացի կնոջից»: «Այլ զուգիտէիր Աստուծոյ պարգևքը և խնամայիր թէ ո՞վ էր քեզանից ջուր խնդրողը, պատասխանեց Յիսուս, արդարև դու կը խնդրէիր նորանից և Նա կը տար քեզ կենդանի ջուր (այսինքն՝ շողոցն սրբոց շնորհքը)»: Սամարացի կինը, չհասկանալով Յիսուսի խօսքի խորհուրդը, ասաց նորան, «Տէր, Վու, որ դոյլ անգամ չունիս, և այս ջրհորս խոր է, ապա ի՞նչպէս կարող ես հանել կենդանի (աղբիւրի) ջուր. միթէ Վու աւելի մեծ ես, քան մեր հայր Յակոբը, որ թողել է մեզ այս ջրհորը. Նա ինքն այս տեղից է ջուր ընկել և նորա որդիքը և խաշինքը»: «Ո՞վ որ այս ջրից ընկումէ, պատասխանեց Յիսուս, Նա միւսանգամ կը ծարաւի, բայց իմ տուած ջրից խնդը երբէք ծարաւելու չէ. իսկ այն ջուրը, որ ես կը ասամ

նորան, կը լինի նորա համար մի այնպիսի ջրի աղբիւր, որ բոլոր խումէ զէպ ի յաւիտենական կեանքը»: Սամարացի կինը, չհասկանալով թէ այն կենդանի ջրի աղբիւրը Կնքն էր Յիսուս Վրիստոս և Նորա վարդապետութիւնը, «Տէր, ասաց, տուր ինձ այն ջրից որ ես միւսանգամ չծարաւիմ և չգամ այս տեղից ջուր հանելու»: «Գնա՛ կողեր. քո այլը (աղամարդը) և եկ այս տեղ, ասաց նորան Յիսուս»: «Նա այր չունիմ», պատասխանեց կինը: «Ղշմարիտ է ասածդ թէ չունիս, կրկնեց Յիսուս, որովհետեւ հինգ այր փոխել ես արդէն, և որ այժմ ունիս, քո այլը չէ»: շիացաւ կինը, լսելով Յիսուսից իւր կեանքի գաղանիքը, «Տէր, ասաց, տեսնում եմ որ Վու նարգարէ ես», ապա յանկարծ խօսքը փոխեց և մատնացոյց անելով զէպի Վարիզին սարը, ուր երևումէին Սամարացւոց տաճարի աւերակները, ասաց, «Մեր հայրերը այս սարի վերայ Աստուած պաշտեցին, բայց դուք շրէայքդ ասումէք թէ Արլուսաղեմի մէջ միայն արժան էր շօր Աստուծոյ երկրպագել»: «Աին դու, հաւատա՛ ինձ, պատասխանեց Յիսուս, որ գարոց է մի ժամանակ, երբ ոչ այս լեւան վերայ և ոչ Արլուսաղեմի մէջ կ'երկրպագեն Աստուծոյ<sup>1)</sup>. այլ մօտ է այն ժամանակը, երբ ճշմարիտ երկրպագութեամբ հողով և ճշմարտութեամբ կ'երկրպագեն Աստուծոյ. որովհետեւ Արիսաւոր շօրը հաճոյ են միայն այսպիսի երկրպագութեամբ. շողի է Աստուած, և Նորան երկրպագողները ևս պէտք է հողով և ճշմարտութեամբ երկիր պագանեն»: Սամարացի կինը, ուշադրութեամբ լսելով Յիսուսի խօսքը, միտք բերեց Մեսիան, որ պիտի գար և ճշմարիտ աստուածպաշտութեան լոյսը տարածէր ամենայն տեղ, ուստի և ասաց, «Վիտեմ որ պիտի գայ Մեսիան՝ Վրիստոս

1) Այս խօսքով Յիսուս հասկացրեց որ Սամարացւոց աստուածային պաշտամունքը ուղիղ չէ. իսկ շրէից պաշտաման տեղ մի ներքին հողերու պաշտամունք պէտք է հաստատուի, որ տեղի հետ կապուած լինելու չէ, այլ աշխարհիս ամեն կողմը պիտի տարածուի:

անուանեալ, և Նա ամենայն բանը կը պատմէ մեզ: Պատասխանեց Յիսուս. «Ն'ս եմ'այն Մեսիան, որ այժմ' խօսումեմ' քեզ հետ»: Եյս լսելով, Սամարացի կինը ջրհորի մօտ թողեց իւր սավորը և շտապով գնաց քաղաք, այսպէս խօսելով իւր քաղաքացիներին հետ. «Նկէք և տեսէք այն մարդը, որ իմ կեանքի գաղանի բաները ասաց ինձ, մի՞գուցէ Նա է Վրիստոն»: Եյս միջոցին աշակերտքը, յետ դառնալով քաղաքից և բերած կերակուրը մատուցանելով Յիսուսին, ասումէին. «Վարդապետ, հաց կեր»: ասաց նոցա Յիսուս. «Նա կերակուր ունիմ' ուտելու, որ դուք չգիտէք. իմ կերակուրս այն է, որ կատարեմ' Նորա կամքը, ով որ ուզարկել է ինձ»:

Սամարացիք այն կողմ հետ միասին եկան Յիսուսի մօտ և խնդրեցին Նորան մի քանի օր մնալ իւրեանց քաղաքում. և Յիսուս մնաց այն սեղ երկու օր: Եւ ասելը, լսելով Նորա քարոզութիւնքը, հաւատացին Նորան և յայտնապէս խոստովանումէին թէ Նա է Վրիստոս—Փրկիչը աշխարհի:

§ 17. Թաղաւորազնի որդւոյ բժշկութիւնը: (Յուդ. Գ. 43—54.)

Սամարիայից գնաց Յիսուս Վալիլիա: Վալիլիայիք ուրախութեամբ ընդունեցին Նորան, որովհետեւ ականատես էին եղած այն հրաշքներին, որ գործել էր Յիսուս զասկի սօնին Նյուսաղեմի մէջ:

Երբ որ Յիսուս կանա քաղաքումն էր, ուր մի ժամանակ ջուրը գինի էր փոխել, Նորա մօտ եկաւ մի թագաւորազն, որ աղաչումէր Նորան գալ Սափառնաում և բժշկել իւր որդին, որ մերձ ի մահ հիւանդ էր: «Մինչև որ հրաշք չտեսնէք, չէք հաւատում», ասաց նորան Յիսուս: Բայց թագաւորազնը շտապեցնումէր Նորան, ասելով. «Տէր՝ հասիր, քանի որդիս չէ մեռած»: «Գնա՛, որդիդ կենդանի է», ասաց նորան Փրկիչը: Թաղաւորազնը ի սրտէ հաւատալով Յիսուսի խօսքին, մեծ յուսով դարձաւ Սափառնաում: Տակաւին տուն

չէր հասած նա, երբ նորա ծառայքը, հանդէպ գալով նորան, աւետիք տուին, ասելով թէ «Որդիդ կենդանի է»: Թագաւորազնը հարցրեց, թէ ե՞րբ առողջացաւ. պատասխանեցին, «Նրէկ եօթներորդ ժամին»: Իմացաւ հայրը թէ նոյն ժամին է, առողջացել, երբ Յիսուսը ասած էր թէ որդիդ կենդանի է. ուստի և հաւատաց Յիսուսին իւր բոլոր զերդաստանով:

§ 18. Յիսուսի քարոզութիւնքը, Նազարէթ քաղաքում: (Ղուկ. Գ. 15—30. ՄԱՏԹ. Գ. 13—17. ՄԱՐԿ. Ե. 14—15.)

Յիսուս Վրիստոս, շրջելով Վալիլիայի զանազան քաղաքներում և գիւղերում, ուսուցանումէր ժողովուրդը: Երբ եկաւ Նա Նազարէթ, ուր մնած ու դաստիարակուած էր, ըստ իւր սովորութեան, շաբաթ օրին գնաց ժողովուրդանոց (չրէից աղօթարանը, Սինագոգա): Եյն սեղ Նորա ձեռքը Նսայի մարգարէի գիրքը առին կարգալու. Նա բացեց գիրքը և գրտաւ այս խօսքերս. «Տիրոջ շողին իմ վերայ է, այս իսկ պատճառով և օծեց Նա ինձ, առաքեց ինձ աղքատներին աւետարանելու, սրտով վշտացածները բժշկելու, գերիններին ազատութիւն քարոզելու և կոյրերի աչքը լուսաւորելու» (Նա. կա. 1—2). յետոյ խփեց գիրքը, սուտաւ ծառային և նստաւ: Բոլոր ժողովուրդը նայումէին Նորան. «Եյսօր ահա կատարուեցաւ Սուրբ գրքի մէջ պարունակուած այս խօսքը», ասաց նոցա Յիսուս: Եւ մենքեան զարմանումէին այն շնորհալի խօսքերի վերայ, որ լսումէին Նորա բերանից, բայց ծանր էր նոցա Մեսիայ խոստովանել այն մարդը, որ երկար ժամանակ կացած էր նոցա մէջ իբրև մի հասարակ մարդ. այս պատճառով տարակուսուած հարցանումէին միմեանցից. «Միթէ սա Յովսեփի որդին չէ՞». և կարծումէին թէ Յիսուսը, իւր հայրենի քաղաքը նախապատիւ համարելով քան թէ միւս քաղաքները, աւելի մեծամեծ հրաշքներ կը գործէ նոցա հաճոյքի և զօսանքի համար: Բայց այս անմտութիւնը նոցա յանդիմանեց

Յիսուս, ասելով. «Ոչ մի մարգարէ իւր գաւառում պատիւ գտած չէ: Ճշմարիտան ասեմ ձեզ, որ շատ այրիներ կային Իսրայելացւոց մէջ Ադիա մարգարէի օրերում, երբ փակուեցաւ երկինքը երեք տարի և վեց ամիս, և բոլոր երկիրը մեծ սով եղաւ. բայց մարգարէն միայն Միգճնացւոց Վարեփթաքաղաքը ուղարկուեցաւ մի այրի կնոջ մօտ: Եւ աս բորոտներ կային Իսրայելացւոց մէջ Ադիսէ մարգարէի ժամանակին, և ոչ ոք չարբուեցաւ նոցանից բայց միայն «Աէեման Ետրին»: Եյս խօսքերով Յիսուս հասկացրեց նոցա որ ոչ թէ մարդերի, այլ Եստուծոյ ազատ կամքով լինումեն հրաշագործութիւնքը: Եյս յանդիմանութեան վերայ սաստկապէս զայրացան շրէպք և քաղաքից դուրս հանելով «Նորան, տարան այն սարի գլուխը, որոյ վերայ Նաղարէթ քաղաքը շինուած էր և կամէին այն տեղից վայր ձգել Նորան. բայց Յիսուս անվնաս անց կացաւ նոցա միջից, գնաց Վափառնաում, որ Գեննեսարէթ (Տիբերական կամ Գալիլեայի) ծովակի մօտ էր, և այն տեղ հաստատեց իւր բնակութիւնը:

§ 19. Հրաշալի ձկնորսութիւն:

(ՂՈՒԿ. Ե. 1—11. ՄԱՏՔ. Դ. 18—22. ՄԱՐԿ. Ա. 16—20.)

Միանգամ, երբ Յիսուս Վրիստոս կանգնած էր Գալիլեայի Գեննեսարէթ ծովակի մօտ, մեծ բազմութիւն ժողովրդի եկած էր Եստուծոյ բանը լսելու: Յիսուս, տեսանելով ծովակի ափում երկու նաւ, մնաւ նաւերից մինի մէջ, որ պատկանումէր Միմնիլ Պետրոսին և ասաց նորան որ նաւը փոքր ինչ հեռացնէ ցամաքից. և նաւի միջից սկսաւ ուսուցանել ժողովուրդը: Արբ աւարտեց քարոզը, հրամայեց Միմնիլին յառաջ վարել նաւը դէպ ի խորը և ձգել գործիքը ձուկ որսալու: Միմնիլը պատասխանեց Նորան. «Վարդապետ, մեք այս բոլոր դիշերս աշխատեցանք և ոչինչ չկարողացանք ձեռք բերել. բայց որ կատարենք քո խօսքը, ահա կ'ձգենք մեր գործիքը»: Եյս ասելով ձգեցին ուռկանը և այնչափ բազմութիւն ձկների ներս

փակեցին, որ ուռկանը պատառվումէր: Նոքա ստիպուած էին ձայն տալ իւրեանց որսակիցներին՝ Յակոբոսին և Յովհաննէսին, որք Օւերեդեայ որդիքնէին, որ իւրեանց նաւով օգնութեան հասնեն. ձկները այնչափ շատ էին որ երկու նաւն ևս ընկղմելու մօտ էին: Միմնիլ Պետրոսը, տեսանելով այս հրաշքը, զարհուրեցաւ, և ընկնելով Յիսուսի ոտքը, ասումէր. «Տէր, հեռի կաց ինձանից, որովհետեւ ես մի մեղաւոր մարդ եմ», նոյնպէս երկիւղի մէջ էին և նորա որսակիցքը: Բայց Յիսուս քաջալերեց նորանց, ասելով. «Մի՛ վախենաք, այսուհետեւ մարդիկ պիտի որսաք դէպի կեանք»: Յետոյ քարշեցին նոքա նաւը դէպի ցամաք. թողին իւրեանց ձկնորսական գործիքը և հետեցին Յիսուսին <sup>1)</sup>:

§ 20. Յիսուս բժշկումէ գիււհարը, Միմնիլի զոքանչը, բորոտը և այլ հիւանդներ:

(ՄԱՏՔ. Դ. 23—25. Ը. 2—4. 14—17. ՄԱՐԿ. Ա. 21—45. ՂՈՒԿ. Դ. 31—44. ՂՈՒԿ. Ե. 12—16.)

Գեննեսարէթ ծովակի մօտից Յիսուս Վրիստոս աշակերտների հետ եկաւ Վափառնաում. և, որպէս սովոր էր, շաբաթ օրին գնաց շրէից ժողովարանը և սկսաւ ուսուցանել: Ժողովուրդը զարմանումէր Նորա վարդապետութեան վերայ, որ իշխանութեամբ էր ուսուցանում և ոչ՝ որպէս դպիրքը: Եյս միջոցին ժողովարանում բազմութեան մէջ մի գիււհար մարդ կար, որ յանկարծ բարձրաձայն աղաղակեց. «Յիսուս Նազովրեցի, թո՛ղ մեզ ինչ բան ունիս մեզ հետ. եկել ես կորուսանելու մեզ»: Սաստեց նորան Յիսուս, և ասաց. «Պաճանձուիր, դուրս եկ դորանից»: Պիղծ ոգին գետին զարկեց հիււանդը և, մեծաձայն աղաղակելով, դուրս եկաւ նորանից:

<sup>1)</sup> Մինչև այս ժամանակ Յիսուսի աշակերտքը երբեմն բաժանվումէին նորանից և պարագումէին ձկնորսութեամբ. բայց այս հրաշագործութենից յետոյ, նոքա խպառ թողին իւրեանց գործը և միշտ շրջումէին Յիսուսի հետ:

Սարապի եկաւ ամենեցուն վերայ և զարմացած հարցանումէին միմեանց. «Այս ի՞նչ նոր վարդապետութիւն է, որ իշխանութեամբ սաստումէ չար ոգիներին և հնազանդումեն սորան»:

Ժողովարանից դուրս գալով, Յիսուս գնաց Սիմոնի տունը. սորա զգրանչը ջերմամբ ախտացած մահճի մէջ էր: Տէրը մօտենալով բռնեց նորա ձեռքից և իսկոյն փարատուեցաւ տենդը: Այս հրաշագործութեան համբաւը շուտով տարածուեցաւ քաղաքի մէջ. և երեկոյեան արևամտին քաղաքացիք բոլոր հիւանդները և դիւահայրները բերին Յիսուսի մօտ: Փըրկիչը, որ միշտ պատրաստ էր օգնել տառապեալներին, ձեռքը դնելով հիւանդներին վերայ, բժշկումէր նորանց պէսպէս անտերից:

Միւս օրին ալօթքից յետոյ, Յիսուս Վրիստոս սկսաւ ձանապարհորդել Վալիլիայի քաղաքները և դիւղերը: Այս ժամանակ հանդիպեցաւ Նորան բորոտ մի<sup>1)</sup>, որ, ծուներ դնելով Յիսուսի առաջը, աղաչումէր ասելով. «Տէր, եթէ կամիս՝ կուրող ես զիս սրբել»: Տէրը մօտենալով նորան ձգեց ձեռքը և ասաց. «Կամիս՝ սրբուիր»: և այն ինչ այս խօսքը ասաց, իսկոյն բորոտութիւնը գնաց սրբուեցաւ: Ապա զգուշացրեց նորան Յիսուս որ ոչ որի չպատմէ թէ ինչպէս էր բժշկուել. «Բայց գնա՛, ասաց, ցոյց տուր քեզ քահանային և սրբուելուդ համար պատարագ մատուցիր Աստուծոյ, որպէս հրամայել է Մովսէս»: Բայց բորոտը ուրախութեամբ գնաց և ամենայն տեղ հռչակեց իւր հրաշալի բժշկութիւնը:

1) Բորոտաճնների մարմինը ծածկուած է լինում վերքով. աչքերը ճարտման, երեսը և լեզուն ուսած են լինում, բերանից ու բոլոր մարմնից անտանելի գարշահոտութիւն է գալիս: Եթէ բորոտութիւնը առտկանումէ մինչև վերջին աստիճանը, այն ժամանակ հիւանդի բոլոր մազերը թափվումեն, խոցերը փտումեն մինչև ոսկերքը և անգամները բաժանվումեն մարմնից: Արովհետև այդ հիւանդութիւնը վարակիչ էր, ուստի և Մովսէսական օրէնքով բորոտաճնները հալածվումին քաղաքից և դիւղերից. նորա բնակումին անտառների մէջ և կերակրվումին մուրացկանութեամբ: Բորոտութենից բժշկուածը պարտական էր գնալ քահանայի մօտ և իւր առողջութեան համար վկայական ինդրել նորանից. և ապա Աստուծոյ շնորհակալութեան պատարագ բերելուց յետ, կարող էր բնակիլ առողջներ հետ:

§ 21. Անդամալուծի բժշկութիւնը Կափառնաում քաղաքում:

(ՄԱՏԹ. Թ. 1-8. ՄԱՐԿ. Բ. 1-12. ԴՈՒԿ. Ե. 17-26.)

Երբ որ Յիսուս Վրիստոս դարձաւ Կափառնաում և քարոզումէր մի տան մէջ, մեծ բաղնութիւն ժողովուած էր Նորա չորս կողմը, մինչև դրան մօտ ևս կանգնելու տեղ չկար: Այս միջոցին չորս մարդ, ուսերի վերայ բարձած, բերումէին Նորա մօտ մի անդամալոյծ, բայց որովհետև ամբոխի պատճառով չկարողացան մօտենալ Նորան, հիւանդը հանեցին ցանկի վերայ և, բանալով առաստաղը, իջուցին նորան Յիսուսի առաջը: Յիսուսի սիրտը շարժեցաւ, երբ տեսաւ նոցա հաւատքը և դառնալով դէպի անդամալոյծը, ասաց. «Ո՛րդեակ, թողեալ լիցին քեզ մեղքք»: Փարիսեցիք և դպիրք, որ եկած էին շրէստանից, Արուսաղեմից և Վալիլիայից և նստած էին այն տեղ, լսելով այս խօսքը, մտածումէին իւրեանց մէջ. «Այս ի՞նչ հայցոյութիւն է, որ խօսումէ սա. ո՞վ կարող է մեղք թողուլ եթէ ոչ՝ Աստուած միայն»: Յիսուս իմացաւ նոցա խորհուրդը. «Ի՞նչ էք մտածում, ասաց. ո՞րը աւելի հեշտ է ասել՝ անդամալուծին. թողեալ լիցին քեզ մեղքք, թէ ասել՝ առ զմահիւնքս և երթ ի տունքո: Բայց որպէս զի գիտենաք դուք, թէ մարդոյ Արդին իշխանութիւն ունի մեզաց թողութիւն տալու. Ահա քեզ ասեմ, դառնալով անդամալուծին շարունակեց Նա, վեր կաց, առ մահիւնք և գնա՛: Իւրանդը իսկոյն ոտքի վերայ կանգնեցաւ, վերկալաւ մահիւնք և, Աստուծոյ փառք տալով, գնաց տուն: Ամենեքեան զարմացան և փառաւորումէին Աստուած, ասելով. «Այդպիսի մի բան երբէք տեսած չէինք»:

§ 22. Մատթէոս Առաքելոյ կոչումը:

(ՄԱՏԹ. Թ. 9-17. ՄԱՐԿ. Բ. 13-22. ԴՈՒԿ. Ե. 27-36.)

Անդամալոյծը բժշկելուց յետոյ, Յիսուս Վրիստոս դուրս եկաւ տանից և գնաց դէպի Վալիլիայի ծովեզրը: Ղանապար-

հին տեսաւ Վա մի մաքսաւոր Վ և ի (Մատթէոս) անուն, որ նստած էր մաքսատան մօտ. «Եկ Խմ հետեւից», ասաց նորան: Իսկոյն վեր կացաւ Վ և ին և հետեւեց Յիսուսին: Բայց նախ քան հրաժարուիլ իւր սովորական գործից, նա իւր ամբ սեղան պատրաստեց Յիսուսի համար, ուր և հրաւիրեց իւր ազգականքը և մաքսաւոր բարեկամքը: Վապիք և Փարիսեցիք, որ Յիսուսը դատապարտելու առիթ էին խնդրում, տեսնելով որ Վա ուտումէ մաքսաւորների ու մեղաւորների հետ միասին, ասացին Վորա աշակերաններին. «Բնդէր ձեր վարդապետը, ուտումէ մաքսաւորների ու մեղաւորների հետ:» Տէրը լսեց այդ և պատասխանեց. «Առողջներին բժշկ պէտք է՛, այլ հիւանդներին. և Նա եկած եմ, ոչ թէ արդարները, այլ մեղաւորները կոչելու դէպի ապաշխարութիւն»: «Ապա վանդաւորները կոչելու դէպի ապաշխարութիւն»: «Ապա վան էր քո աշակերտքը պահք չեն պահում, հարցրին Փարիսեցիք, բայց Յովհաննու աշակերտքը և Փարիսեցիքը պահում են»: Պատասխանեց Յիսուս. «Միթէ կարելի է հարսանիք հրաւիրուածներին պահք պահել, քանի որ փեսայն նոցա հետ է, ոչ. այլ կը գան օրեր, երբ կը վերանայ նոցանից փեսայն, այնուհետև կը պահեն»:

**ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՐՈՒԹՅԱՆ ԵՐԱՐՈՒՄԻ ՏԱՐԻՆ:**

§ 23. Երեսունըութ ամեայ անդամաւոր ծր  
Իւթ հեզգդա աւազանի մօտ:  
 (ՅՈՒՎ. Ե.)

Յիսուս Քրիստոս, իւր քարոզութեան երկրորդ տարումը, Օտտիկի անի պատճառով, միւսանդամ գնաց Ալուսադէմ: Քաղաքի Պրորատիկէ <sup>1)</sup> ասուած դրան մօտ կար առողջութեան աղբիւր մի, որոյ ջուրը հաւաքվումէր մի աւազանի մէջ, և Աբրայեցեւորէն Իւթ հեզգդա, այսինքն՝ աուն ողորմութեան էր կոչվում: Այս աւազանի չորս կողմում, հինգ սրահով մի մեծ

<sup>1)</sup> «Պրորատիկէ» յունական բառ է և նշանակումէ խաշնային, ոչխարների պատկանեալ, ուր լուացվումէին զոհելի ոչխարքը:

շէնք էր շինած, ուր անպակաս զտանվումէին մեծ բազմութիւն ամէն տեսակ հիւանդների, կոյրերի, կաղերի և գօսացածների, որ սպասումէին աւազանի ջրերի շարժողութեանը: Արովհետև Աստուծոյ հրեշտակը, սահմանեալ միջոցներում, իջանումէր աւազանը և խառնում էր նորա ջրերը, տալով նոցա մի առանձին բժշկական զօրութիւն. և ով որ ամենից յառաջ իջանումէր այդ աւազանի մէջ, բոլորովին բժշկվումէր, ոչինչ նշան հիւանդութեան կրելով իւր վերայ: Այդ տեղ ցաւազարների բազմութեան մէջ զտանվումէր նոյնպէս մի անդամաւոր, որ երեսուն և ութ տարի անդամաւոր հիւանդութեամբ, երբ տեսաւ տրան Յիսուս, հարցրեց. «Ամիս ողջ լինել»: Պատասխանեց անդամաւորը. «Տէր, մի մարդ չունիմ, որ ջրերի շարժողութեան միջոցին ձգէ ինձ աւազանը. մինչև ես կամաց կամաց տեղից շարժումէմ, մի այլ ոք ինձանից յառաջ իջանումէ աւազանը և բժշկվումէ»: «Վեր կաց, առ մահի՞՞դ և դնա», ասաց նորան Քրիկիչը: Նոյն ժամայն առողջացաւ անդամաւորը, ուրախութեամբ վեր կացաւ, առաւ մահի՞՞դ և դնաց: Այդ օրը շաբաթ էր և շրէպը ազատ էին ծառայական գործերից. ուստի տեսնելով առողջացած անդամաւորը՝ մահի՞՞դ ձեռին, ասացին նորան. «Օրը շաբաթ է՝ և արժան չէր քեզ առնուլ քո մահի՞՞դ»: Իժշկուածը պատասխանեց. «Այն մարդը, որ բժշկեց ինձ, ասաց, «առ քո մահի՞՞դ և դնա»: շարցանումէին նորան թէ ով բժշկեց քեզ. բայց նա չգիտէր թէ ով էր իւր Բարերարը, որովհետև Յիսուսը, ամբոխի պատճառով, հեռացած էր այն տեղից: Այս անցրեց յետոյ, Յիսուս հանդիպեցաւ նորան տաճարի մէջ, և ասաց. «Ահա ողջացար, այլ ևս չմեղանչես, որ աւելի վատ չլինի քեզ»: Պնաց այդ մարդը և պատմեց շրէպից թէ Յիսուսն էր որ բժշկել էր նորան: Աւ ծիսաանը, ոչ կրօնի իսկութեանը, այլ նորա արտաքին ձևերին ու շարժիլ և ծառայող շրէպըը հալածումէին Յիսուսը. որովհետև այդ բարեգործութիւնքը լցուցանումէր շաբաթ օրում: Տէրը, կամե-

նայով հերքել նոցա սխալ հասկացողութիւնը շաբաթ օրի նշանակութեան մասին, հասկացրեց նոցա որ եթէ եօթներորդ օրը հանգստացաւ Աստուած ստեղծագործութեանից, այդ չէ նշանակում թէ ոչինչ չգործեց «Նա այն օրում: Նա միշտ գործում է իբրև նախանշանը շաբաթ, կառավարում է պահպանում է աշխարհը»: «Իմ շաբաթ մինչև այժմ գործում է, ասաց, և Նս գործում եմ»: Այս բանի վերայ շրեայք, և սուսաւել զայրանալով, հնար էին որոնում սպանել Յիսուսը, պատճառ բերելով, որ «Նա ոչ թէ միայն լուծանում էր շաբաթ օրերը, այլև զԱստուած իւրեան շաբաթ էր կոչում, հաւասարելով իւր անձը Աստուծոյ»:

§ 24. Այլ օրինակք Յիսուսի բարեգործութեան շաբաթ օրերի մէջ:  
(ՄԱՏԹ. ԺԲ. 1-14. ՄԱՐԿ. Բ. 23-28. Գ. 1-7. ՂԱՒԿ. Զ. 1-11.)

Օտանի տօնից յետոյ, Յիսուս Քրիստոս ճանապարհ ընկաւ դէպի Պալէլեա: Փարիսեցիք միշտ շրջում էին Յիսուսի ետեւից և առիթ էին խնդրում պարտաւորելու Նորան ժողովրդի առաջ: Պատահեցաւ այնպէս, որ Յիսուս մի շաբաթ օր գնաց դէպի արտոյայքը և աշակերտքը, անօթի լինելով սկսան հասկ. քարել և ուտել: Այդ բանը օրէնքին հակառակ տեսնելով, Փարիսեցիք իսկոյն ասացին Նորան. «Տես՝ աշակերտքդ գործում են այն, ինչ որ արժան չէ գործել շաբաթ օրին»: Յիսուս պատասխանեց նոցա. «Եթէ իմանայիք դուք Աստուծոյ պատգամը թէ՛ Ողորմութիւն կամի՞մ և ո՛չ գո՛հ, (Ովս. գ. 6.) ապա դուք դատապարտելու չէիք անպարանորդ. շաբաթն է սահմանուած մարդոյ համար և ո՛չ մարդը՝ շաբաթի համար»:

Միւս շաբաթ օրը Յիսուս գնաց նոցա ժողովարանը և ուսուցանում էր ժողովուրդը: Այս տեղ կար մի մարդ, որոյ ձեռք գօսացած էր: Վախիք և Փարիսեցիք սպասում էին որ Յիսուս բժշկէ այդ մարդը շաբաթ օրում, որպէս զի կարողանան չարա-

խօսել նորա մասին ժողովրդի առաջ: Տէրը, իմանալով նոցա վատթար խորհուրդը, հրամայեց ցաւագարին յառաջ գալ և ապա երեսը դարձուցանելով դէպի Փարիսեցիքը, հարցրեց նոցա. «Ի՞նչ արժան էր շաբաթ օրին՝ բարի՞ գործել թէ չար. մի մարդ փրկել թէ կորուսանել. և եթէ ձեր ոչխարը շաբաթ օրին ընկած լինէր փոսի մէջ, միթէ շտապելու չէիք հանել նորան. բայց մարդ որքան առաւել է ոչխարից»: Փարիսեցիք լռեցին. յետոյ լին՝ բարկութեամբ, ցաւելով նոցա սրտերի կուրութեան վերայ, ասաց ցաւագարին. «Չգիր ձեռք», և նա ձգեց. որ և ողջացաւ և հաստատուեցաւ իբրև միւսը: Նախանձաբեկ Փարիսեցիք, յայտնապէս տեսնելով այդ սքանչելիքը, փոխանակ Մեսիա խոստովանելու Նորան, և սուսաւել բորբոքուեցան բարկութեամբ և դուրս գալով, խորհուրդ էին անում թէ որպէս կորուսանեն Յիսուսը:

§ 25. Երկոտասան Առաքեալներ ընտրութիւնը:  
(ՄԱՏԹ. Ե-Է. ՂԱՒԿ. Զ.)

Նախ քան առաքեալների ընտրութիւնը, Յիսուս Քրիստոս Պալէլեայի մի լերան գլուխը բարձրացաւ և այն տեղ անցուց բոլոր զիշերը, աղօթելով առ շաբաթ Աստուած: Վաղ առաւօտուն բոլոր աշակերտքը իւր մօտ կանչեց, և նոցա միջեց երկոտասան անձինք ընտրեց այն խորհրդով որ նոքա միշտ իւր մօտ լինելով, լսեն իւր վարդապետութիւնքը, ականատես լինին իւր տուած բարի օրինակներին, և յետոյ ուղարկէ նորանց Աստուծոյ բանը քարոզելու, իշխանութիւն տալով նոցա ցաւեր բժշկելու և դևեր հանելու: Այդ քրիստոսընախոր անձինքը, որ ասուեցան «Առաքեալք», կոչուեցին այսպէս. Միմնիս (որ և Պետրոս) և Նիզրէաս եղբայր նորա, Յակոբոս և Յովհաննէս, Փիլիպպոս և Բարթողիմէոս (կամ Նաթանայէլ), Թովմաս և Մատթէոս, Յակոբոս Աբիւսայ, Ղերէոս (որ և Թագէոս) Միմն Վանանացի և Յուզա Իսկարիոտացի:

Այս ընտրութիւնը աւարտած, առաքեալների հետ միա-

սին սարից ցած եկաւ Յիսուս և մի տափարակ տեղ նստաւ։  
 Այն տեղ մնացեալ աշակերաների ժողովն ու մեծ բազմութիւն ժողովուրդի, որ եկած էին զանազան հեռաւոր կողմերից, պատեցին Նորա չորս կողմը։ Ամենքեան փափագումէին լսել Նորա աստուածային վարդապետութիւնը, որպէս և շատերը՝ բժշկուիլ իւրեանց հիւանդութիւններից։ Տեսաւ Յիսուս այդ բազմութիւնը և, աչքը դէպի աշակերտքը դարձցնելով, սկսաւ խօսիլ այսպէս.

»Նրանի՛ն աղքատաց հոգւով, վասն զի նոցա համար է երկնքի արքայութիւնը։— Նրանի՛ն սգաւորաց, վասն զի նոքա կը մխիթարուին։— Նրանի՛ն հեղոց, վասն զի նոքա պիտի ժառանգեն երկիրը։— Նրանի՛ն նոցա, որ քաղցած և ծարաւի են արդարութեան, վասն զի նոքա պիտի կշտանան։— Նրանի՛ն ողորմածաց, վասն զի նոքա պիտի ողորմութիւն գտանեն։— Նրանի՛ն նոցա որ սուրբ են սրտիւք, վասն զի նոքա զԱստուած կը տեսանեն։— Նրանի՛ն խաղաղարարաց, վասն զի նոքա որդիք Աստուծոյ պիտի կոչուին։— Նրանի՛ն նոցա որ արդարութեան համար կը հալածուին, վասն զի նոցա է երկնքի արքայութիւնը։— Նրանի՛ն ձեզ որ պիտի նախատուիք և հալածուիք Իմ համար, խնդացէք և ուրախացէք, վասն զի ձեր վարձքը շատ կը լինի երկնքում“։

Առաքեալք աղ են երկրի և լոյս աշխարհի։—  
 »Դուք երկրի աղն էք, ասաց, թէ որ աղն անհամի, ինչով պիտի աղուի, այնուհետև անգործածելի է, պիտի դուրս ձգուի և ոսնակոխ լինի։

»Դուք աշխարհի լոյսն էք, այն քաղաքը որ սարի վերայ է կարող չէ թաքնուիլ։ Աչ որ փառած ձրագը գրուանի ասկ զնեղու չէ, բայց աշանակի վերայ կը դնէ որ լոյս տայ ամենեցուն, ասն մէջ զանուղներին. այնպէս և ձեր լոյսը պիտի լուսաւորէ մարդիկը, որպէս զի տեսնեն նոքա ձեր բարի գործերը և փառաւորեն ձեր շայրը որ երկնքումն է“։

Պէտք է պահել ամենայն օր էնքն երբ։— »Մի՛ կարծէք որ ես եկած եմ օրէնքը և մարդարէները (գրուածքը)

լուծանել. լուծելու եկած չեմ, այլ կատարելու։ Ղշմարիան ասեմ ձեզ, մինչև որ երկնքն ու երկիրս անցանեն, օրէնքից և մարդարէներից մի կէտ անցանելու չէ որ չկատարուի։ Այլ որ այս պատուիրաններից նաև փոքրը լուծէ և այնպէս ուսուցանէ մարդիկը, փոքր կը կոչուի արքայութեան մէջ. իսկ նա որ կը կատարէ և կ'ուսուցանէ, մեծ կը կոչուի երկնքի արքայութեան մէջ“։

Պէտք է բարկանալ բնկերի վերայ։— »Ասեցէք՝ առաջին մարդկանց ասուեցաւ թէ «Մի՛ սպանաներ“։ Բայց ես ասեմ ձեզ, թէ ով որ զուր տեղ բարկանայ եղբոր վերայ, պարտական կը լինի դատաստանին. և ով որ իւր եղբորը յիմար ասէ՝ պարտական կը լինի ատենին. և ով որ իւր եղբորը մորոս (μωρός) ասէ՝ պարտական կը լինի գեհենի (դժժոխքի) կրակին։

»Սեղանի վերայ պատարագ մատուցած ժամանակը, եթէ յիշումես որ եղբայրդ վերադ խէթ ունի. թող պատարագը սեղանի առաջև և զնա նախ հաշտուիր եղբորդ հետ և ապա դարձիր որ պատարագը մատուցանես“։

Պէտք է ողջ ախոհ լինել։— »Ասեցէք՝ որ առաջին մարդկանց ասուեցաւ թէ «Մի՛ շնար“։ Բայց ես ասեմ ձեզ, թէ ով որ կնոջ վերայ աչք ձգէ ցանկանալու մտքով, անդէն շնացաւ նա իւր սրտի մէջ“։

Նրբէք պէտք է երդնուլ։— »Ասեցէք՝ առաջին մարդկանց ասուեցաւ թէ «Սուտ մի՛ երդուիր, այլ Տիրոջ առաջ երդուածդ կատարիր“։ (Թիւք. Լ. 20)։ Բայց ես ասեմ ձեզ, ամենեւին չերդնուք. ոչ երկնքով, վասն զի Աստուծոյ աթոռն է. և ոչ երկրովս, վասն զի Նորա ոտքի պատուանդանն է. և ոչ Նրուսողեմով, վասն զի մեծ թագաւորի քաղաքն է. և ոչ գլխովդ, վասն զի չես կարող մի մազը սպիտակ առնել կամ թուխ, այլ ձեր խօսքը այնն՝ այո լինի, և ոչն՝ ոչ“։

Չարին բարի հասուցանել։— »Ասեցէք որ ասուեցաւ. «Աչքը աչքի տեղ և առամբ առամի տեղ“։ (Ղ. Լու. իդ. 20. Բ. Օր. ժթ. 24. Եւք. իա. 24)։ Բայց ես ասեմ ձեզ, չարին հակառակ չգնաք. ապա թէ որ մինը ապտակ զարկէ աջ ծնօտիդ՝ դարձրու՛ նորան և միւսը։ Թէ որ մինը դատաստան բանայ և կամենայ շապիկդ առնուլ՝ թող նորան և վերարկուդ։ Եթէ մինը բռնութեամբ մի մըն ձանապարհ տանէ քեզ, դու

նորա հետ երկու մղոն գնա: Այլ որ քեզանից մի բան ուզէ տուր: և ուր քեզանից փոխ (պարսաք) ուզէ՝ երեսդ յետ մի՛ դարձներ:՝

Թ՛ւ շնամիքը սիրել: — « 1 սեցէք՝ առաջին մարդկանց ա- սուեցաւ. » Սիրիս ընկերդ և թշնամիդ ատիր:՝ (1) և տ. ժթ. 17, 18. Եւք. 17. 12.): Բայց ես ասեմ՝ ձեզ սիրեցէք ձեր թշնամիները, որ հնեցէք ձեզ անիծողները. բարի արէք ձեզ ատուներին. և աղօթք արէք նոցա համար, որ ձեզ չարչարու- մեն և հալածուան: Արպէս զի արժանի որդիք լինիք ձեր օ- րին, որ երկնքումն է, որ Եւր արեգակը անխափր ծագումէ չա- րերի և բարիների վերայ. և ածումէ անձրև արդարների և մե- ղաւորների վերայ: Բայց եթէ դուք կը սիրէք նորանց որ ձեզ սիրումեն, ի՞նչ վարձք կ'ունենաք. միթէ և մաքսաւորք նոյնը չե՞ն դործում: Թէ որ միայն ձեր բարեկամներին ողջոյն տաք, ի՞նչ օգուտ ձեզ. միթէ և մաքսաւորք նոյնը չե՞ն դործում: Աւ- րեմն կատարեալ եղէք դուք, ինչպէս ձեր երկնաւոր օայրն կա- տարեալ է:՝

Աղորմո՛ւ թիւն տալ աղօթել և պահք պա- հել բայց ոչ մարդկանց ցոյց տալու համար: — « Օգոյշ կացէք որ ձեր ողորմութիւնը մարդկանց ցոյց տալու համար չլինի, ապա թէ ոչ ձեր երկնաւոր օրից վարձք չէք ընդունիր: Աղորմութիւն տալու ժամանակ փող մի փչեր ա- ռաջևդ, ինչպէս սուրբ են առնել կեղծաւորները ժողովարան- ների ու հրապարակների մէջ, որպէս զի փառաւորուին մար- դերից. ճշմարիտն ասեմ՝ ձեզ, այն է միայն նոցա վարձքը: Իսկ դու երբ ողորմութիւն տաս, թող չխմանայ ձախ ձեռք թէ ինչ է դործում աջդ՝ 1). որպէս զի քո ողորմութիւնը ծածուկ լինի, և քո օայրը, որ ծածուկ տեսնումէ, քեզ յայտնապէս կը հատուցանէ:՝

» Երբ որ կանգնես աղօթքի, մի լինիր կեղծաւորների նման, որք սիրումեն ժողովարանների մէջ և հրապարակների անխիւն- ներում աղօթել որ մարդկանց երևին: Երաւ ասեմ՝ ձեզ, այն է նոցա վարձքը: Բայց դու՝ երբ կանգնես աղօթքի, մտիր սե-

1) Այսինքն՝ ուր որ կամի ողորմութիւն տալ, Աստուծոյ փառ- քը և ընկերի օգուտը պէտք է ունենայ իւր՝ մտքում, և ոչ իւր անձին փառաւորութիւնը մարդկան առաջև, կամ որ և իցէ մար- մնաւոր շահ և ակնկալութիւն:

նեակդ, փակիր դուռը և ծածուկ աղօթիր դէպի քո օայրը և օայրն քո որ ծածուկ տեսնումէ՝ յայտնապէս կը հատու- ցանէ քեզ: Աղօթելու ժամանակ շատախօս մի լինիք հեթա- նոսների նման, որ կարծումեն թէ իւրեանց շատ խօսելու հա- մար Աստուած կը լսէ նոցա: Աւրեմն նոցա նման մի լինիք. ո- րովհետև դեռ Երրանից բան չինդրած՝ ձեր օայրը զիտէ, ինչ պիտոյ է ձեզ: Եւ արդ այսպէս աղօթեցէք:

» օայր մեր որ յերկինս, սուրբ եղեցի անուն քո: Եկեացէ արքայութիւն քո. եղեցին կամք քո որպէս յերկինս և յերկրի: Օհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր: Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողուք մերոց պարտապանաց: Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չա- րէ. զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւի- տեանս. ամէն:

» Եթէ դուք ներէք միմեանց յանցանքին, և ձեր երկնաւոր օայրը ձեզ կը ներէ. բայց եթէ դուք չներէք, ձեր օայրը ևս ներելու չէ ձեզ:

» Ինչ ժամանակ ծով կամ պահք պահէք՝ կեղծաւորների պէս արտում մի լինիք, որ իւրեանց երեսը ակրեցնումեն, որ- պէս զի իմանան մարդիկ թէ ծով են պահում: Ճշմարիտն ա- սեմ՝ ձեզ, այն է միայն նոցա վարձքը: Բայց դու, երբ ծով կամ պահք պահես, գլուխդ իւղով օծիր, երեսդ լուս որ մարդ- կանց առաջև պահք պահեցող չերեխ, և քո օայրը, որ ծա- ծուկ տեսնումէ, յայտնապէս կը վարձատրէ քեզ:՝

Երջանկութիւնը անցաւ որ հարստութեան մէջ չէ: — « Երկրիս վերայ ձեր համար գանձ մի ժողովէք, ուր ցեց և ուտիճ՝ ապականումեն, և գողերը հանում են և գողա- նում: Ձեր համար գանձ ժողովեցէք երկնքում. ուր չեն ապա- կանում ոչ ցեց և ոչ ուտիճ, և ոչ գողերը հանում են ու դո- ղանում: Ա՛սան զի ուր ձեր գանձն է՝ այն տեղ է և ձեր սիր- տը: Ոչ որ կարող չէ երկու տիրոջ ծառայել. կամ մինը կ'ա- տէ և միւսն կը սիրէ, կամ մինը կը մեծարէ և միւսն կ'արհա- մարհէ: Չէք կարող Աստուծոյ և միանգամայն մամոնային (հարստութեանը) ծառայել:՝

Աւրի շը չդատել: — « Ս'ի դատէք (մի բարբառէք) որ դուք ևս չդատուիք, վասն զի ինչ դատաստանաւ որ դատէք՝ դուք ևս կը դատուիք, և ինչ չափով կը չափէք՝ ձեզ ևս կը

չափեն: Ինչո՞ւ եղբորդ աչքի միջի շիւղը տեսնումես, և քո աչքիդ գերանը չես տեսնում: Ամբի՞նչպէս ասումես եղբորդ, թո՞ղ աչքիդ շիւղը հանեմ, մինչդեռ քո աչքի մէջ գերան կայ: Անդճաւոր, առաջ քո աչքիդ գերանը հանիր և յետոյ նայիր որ եղբորդ աչքի շիւղը հանես:

» Ինչ որ կամենում էք որ մարդիկ ձեզ անեն, նոյնը արեք և դուք նոցա՞: »

Չ երմեռանդ աղօթքով խնդրել զՄատուած: » Խնդրեցէք և կը ստանաք, որոնեցէք և կը գտանէք, դուռը զարկէք և կը բացուի ձեզ: Ա՛նան զե ո՞վ որ կը որոնէ՝ կը գտանէ, և ո՞վ որ դուռը կը զարկէ՝ կը բացուի նորան: Ո՞վ արդեօք ձեզանից իւր որդւոյն քար կը տայ՝ երբ նա հաց խնդրէ նորանից, կամ եթէ ձուկ խնդրէ, օձ կը տայ նորան: Աւրեմն եթէ դուք, որ չար էք, գիտէք լաւ պարգևներ տալ ձեր որդիներին, հրչափ ևս առաւել ձեր երկնաւոր Հայրը բարի պարգևներ կը տայ նոցա, որ խնդրումեն Վորանից՞:

Պէտք է ընտրել փրկութեան նեղ ճանապարհը: — » Ստէքնեղ դռնից, վասն զի ընդարձակ է դուռն (չար ցանկութիւնների) և լայն ու համարձակ ճանապարհն, որ տանումէ դէպի կորուստ, և շատերը այն տեղից են մտանում: Բայց դէպի կեանք տանող դուռը անձուկ է և ճանապարհը նեղ, և սակաւ մարդիկ գտանումեն նորան՞: »

Պէտք է զգուշանալ սուտ վարդապետներից: — » Չգուշացէք սուտ մարգարէներից, որ ոչխարի շորերով ձեր մօտ են գալիս և նեցսից յափշտակող դայերն են: Իւրեանց պողից նոցա ճանաչեցէք: Միթէ կարելի՞ է փշերից խաղող քաղել, կամ տատասկից՝ թուզ: Այսպէս ամենայն բարի ծառ բարի պտուղ է բերում, և չար ծառը՝ չար պտուղ: Ամենայն ծառ, որ չէ բերում բարի պտուղ, կտրվումէ և կրակի մէջ է ձգվում՞: »

Ատարել Մատուծոյ կամքը և նորա սուրբ պատուիրանները: — » Աչ ամենայն մարդ որ կ'ատէ ինձ՝ Տէր Տէր՝ կը մտանէ երկնքի արքայութիւնը, այլ նա՞ որ կը կատարէ իմ երկնաւոր Հօր կամքը: Ո՞վ որ այս խօսքերս լսէ և կատարէ՝ նա նման է այն իմաստուն մարդուն, որ իւր տունը քարի վերայ շինեց: Անձրևներ եկան, գետերը վազեցին, քամիներ փչեցին և տունը զարկեցին, բայց չկործանուեցաւ. վասն

զե քարի վերայ հաստատած էր: Իսկ ո՞վ որ այս խօսքերս լսէ և չկատարէ՝ նա նման է այն յիմար մարդուն, որ իւր տունը աւազի վերայ շինեց: Անձրևներ եկան, գետերը վազեցին, քամիներ փչեցին, տունը զարկեցին և ընկաւ, և նորա կործանումը շատ սաստիկ էր՞: »

Այս սրտառուչ վարդապետութիւնը աւարտելուց յետոյ, Յիսուս Վրիստոս ցած եկաւ սարից: Ժողովուրդը որ սովոր էր լսել միշտ Փարիսեցւոց ու դպրաց կեղծուպատիր խօսքերը, հիացած մնացել էր Վորա վերայ, որ իշխանութեամբ ուսուցանում էր իբրև Տէր և Օրէնադիր:

§ 26. Հ ո ղ մ ա յ ե Յ ի հ ա Ր ի ւ ր ա պ ե տ ր :  
(ՄԱՏԹ. Ը. 5—13. ՂՈՒԿ. Է. 1—10.)

Ատիառնաւոր քաղաքի մէջ մի Հ ո ղ մ ա յ ե Յ ի հ ա Ր ի ւ ր ա պ ե տ ու ն էր մի պատուական և սիրելի ծառայ, որ մերձ ի մահ հիւանդ էր: Արբ լսեց նա թէ Յիսուս եկել է Ատիառնաւոր, ցանկացաւ Վորա հրաշագործ զօրութեամբ փրկել իւր ծառայի կեանքը: Սակայն ինքն, հեթանոս մարդ լինելով, անարժան համարեց իւրեան գնալ Յիսուսի մօտ, ուստի և խնդրեց Հրէից իշխաններից որ գնան նոքա և աղաչեն Յիսուսը գալ և բժշկել իւր ծառան: Վոքա եկան և թախանձանօք աղաչումէին Յիսուսը, ասելով. «Արժանի է որ այդ շնորհը առնես նորան, որովհետեւ սիրումէ նա մեր ազգը, և ժողովուրդանոց ևս շինել տուած է մեր համար»: Յիսուսը նոցա հետ միասին գնաց դէպի հարիւրապետի տունը: Բայց շատ հեռի չէր նորանից, երբ խոնարհամիտ հարիւրապետը իւր բարեկամքը ուղարկեց Յիսուսի առաջ, որ ասեն Վորան այսպէս. «Տէր, արժանի չեմ ես ընդունել Վեզ իմ տան մէջ. աստ խօսքով և իմ ծառաս բժշկուած կը լինի»: Չարմացաւ Տէրը հեթանոսի այդքան ամուր հաւատի վերայ, դարձաւ դէպի ժողովուրդը, որ գնումէին Վորա հետ, և ասաց. «Ճշմարիտն ասեմ՝ ձեզ, որ Իսրայելացւոց մէջ այդչափ հաւատ չգրտայ»: Յետոյ պատասխանեց հարիւրապետին. «Որպէս հաւատացել ես՝ այնպէս ևս կը լինի քեզ»: Տուն դարձան պատգամաւորքը և տեսան ծառան բոլորովն առողջացած:

§ 27. Այրի կնոջ միամօր որդին՝ Նային քաղաքում: Յիսուսի վկայութիւնը Յովհաննու վերայ:

(ՂՈՒԿ. Է. 11—29. ՄԱՏԹ. ԺԵ. 2. 12.)

Արիւրապետի ծառան բժշկելուց յետոյ, Յիսուս Քրիստոս աշակերտների և ժողովրդի բազմութեան հետ գնաց Նային քաղաք: Այր որ քաղաքի դրան մօտեցաւ, տեսաւ որ մի մեռեալ քաղաքից դուրս էին տանում, և մի այրի կին դազաղի հետեւից գընալով անմխիթար լալիս էր, որովհետեւ նորա մի հատիկ զաւակին ու մխիթարութիւնն էին գերեզման տանում: Այս խեղճ մօր անբաղդ վեճակի վերայ զթացաւ մարդասէր Փրկիչը, գընաց դազաղի մօտ և ասաց մօրը. « Լաց մի լինիր ». յետոյ գաւնալով դէպի մեռեալը, ձայն արձակեց. « Պատանի դու՝ քեզ ասեմ, վեր կաց »: Այն ամենակարող հրամանով նոյն ժամայն կենդանացաւ մեռեալը, նստաւ ու սկսաւ խօսիլ, և Յիսուս յանձնեց նորան իւր մօրը: Այս մեծ սքանչելիքը բոլոր ժողովրդի վերայ ահ ու սարսափ ձգեց. ամենեքեան փառաւորումէին Աստուած, որ այցելութիւն էր արել իւր ժողովրդին, յարուցանելով նոցա մէջ մի այսպիսի սքանչելագործ և մեծ Վարդարէ:

Այս հրաշագործութեան համբաւը շուտով տարածուեցաւ բոլոր Հրէաստանի մէջ: Յովհաննէս Մկրտչի աշակերտքը ևս, լսելով այս, գնացին և պատմեցին իւրեանց վարդապետին, երբ նա բանտի մէջ էր: Աւաստի կացուցանելու համար իւր աշակերտներին թէ Յիսուսն է խոստացեալ Մեսիան, Յովհաննէսը նոցանից երկուսը ուղարկեց Յիսուսի մօտ որ հարցանեն « Նորան »՝ « Դ՞նու ես Մեսիան, որ պիտի գայ, թէ ուրիշն սպասե՞ք »: Այր եկան տրաւ և հարցրին, Յիսուս, իսկոյն չպատասխանեց, այլ աւելի զօրաւոր կերպով նոցա համոզելու համար, նոցա առաջը շատ հիւանդներ բժշկեց՝ դեւեր հանեց, կոյրերի աչքը լուսաւորեց և սպա դարձաւ և ասաց նոցա. « Ի՞նչ որ տեսաք ու լսեցիք գնացէք պատմեցէք Յովհաննէսին. կոյրերը տեսնումեն, կաղերը գնումեն, բորոտ-

ները սրբվումեն, խուլերը լսումեն, մեռեալները յարութիւն են առնում և աղքատներին աւետարանն է քարոզվում. և երանի նորան ով որ գայթակղուելու չէ իմ մասին »:

Այր Յովհաննու երկու պատգամաւորքը գնացել էին, դարձաւ Յիսուս դէպի ժողովուրդը և Յովհաննու համար այսպէս վկայեց. « Ի՞նչ տեսնելու անապատ գնացիք. մի եղէ՞գն որ հողմից շարժվումէ: Ի՞նչ տեսնելու գնացիք, մի մարդ փափուկ շորերով զարդարուած. փառաւոր հանդերձներով և փափուկութեան մէջ ապրողները թագաւորների պալատումն են <sup>1)</sup>: Ուրեմն ի՞նչ տեսնելու գնացիք, մի մարդարէ՞, իրաւ ստուժեմ՝ ձեզ, առաւել ևս քան զմարդարէ: Ասն զի սա է որից համար գրուած է, թէ « Ահա ուղարկուեմ իմ հրեշտակը քո առաջ, որ քո առաջիկ ճանապարհդ պատրաստէ »: (Մաղ. գ. 1.): Ամէն ասեմ ձեզ, կանանց ծնունդների մէջ Յովհաննէսից մեծ մարդարէ չկայ՝ բայց Աստուծոյ արքայութեան մէջ փոքրիկը նորանից մեծ է »:

§ 28. Փրկիչը Սիմոն Փարիսեցւոյ տան մէջ:

(ՂՈՒԿ. Է. 36—50.)

Սիմոն անունով մի Փարիսեցի հրաւիրեց Յիսուսը իւր տունը ճաշ ուտելու: Ընդունեց Յիսուս նորա հրաւերը, գնաց և սեղան բազմեցաւ: Նոյն քաղաքում մի վատահամբաւ կին կար, սա երբ լսեց թէ Յիսուս Փարիսեցւոյ տանն է, մի շիշ ագնիւ և մեծագին իւղ ձեռքին եկաւ այն տեղ, ընկաւ Յիսուսի ոտքը, սկսաւ լալ իւր մեղքերի վերայ և արտասուքով թրջել Նորա ոտքը, սրբել իւր գլխի մազերով և մեծ յարգանքով համբուրել և իւղով օծել: Փարիսեցին երբ տեսաւ այս՝ խօսեց իւր մտքում. « Եթէ Սա մարդարէ լինէր՝ կ'իմանար թէ որպիսի մեղաւոր կին մօտենումէ իւրեան »: Ասկացաւ Յիսուս նորա միտքը և ասաց. « Սիմոն՝ մի բան հարցանեմ քեզ. Մի փոխատու մարդ երկու պարտագան ունէր, մինը պարտ-

1) Որպէս զի ժողովուրդը չկարծեր թէ Յովհաննէսը երկմտութիւն է ունեցել Մեսիայի վերայ որ ուղարկել էր հարցանելու, այս վկայութեամբ Յիսուս կամեցաւ յայտնել թէ Յովհաննէսը փոփոխամտո և անձնատէր մարդ չէ. և թէ նա իւր հաստատ բնաւորութեամբ և խոսակրօն աւարիտութեամբ չէր կարող անհաստատ լինել հաւատքի մէջ:

էր հինգ հարիւր դահեկան, իսկ միւսը յիսուն: Փոխատուն, տեսնելով որ նոքա կարողութիւն չունին հատուցանելու, երկուսի պարտքը ևս շնորհեց: Այժմ ասա ինձ այն երկուսից ի՞նչը աւելի սիրելու էր նորան: « Ինձ այնպէս է երևում, պատասխանեց Սիմոն, թէ նա՝ որ շատ էր պարտ: » « Ուղիղ դատեցիր, ասաց Յիսուս. և դառնալով այն կնոջը, տեսնումես, ասաց, այս կինը, ես քո տունդ եկայ և դու ոտքիս ջուր չտուիր, բայց սա իւր արտասուքով թրջեց ոտքս և իւր մազերով սրբեց. համբոյր մի չտուիր ինձ, բայց սա՝ քանի որ քո տանդ եմ՝ ոտքս համբուրելուց չդադարեց. գլուխս իւղով չօծեցիր, բայց սա անոյշ իւղով ոտքերս օծեց: Այս պատճառով ասումեմ. քեզ. թողած լինին սորա բազմատեսակ մեղքերը, վասն զի շատ սիրեց՝. և ապա դառնալով դէպի կինը, ասաց. « Թողեալ լիցին քեզ մեղք քո: Բազմականք զարմացած խօսում էին միմեանց հետ՝ « Ո՞վ է սա որ թողնում է մեղքերը: » Բայց Յիսուս, առանց միտ դնելու նոցա, դարձաւ դէպի ապաշխարող կինը, « Զաւատքդ քեզ վրիկեց, ասաց, գնա խաղաղութեամբ՝ »:

§ 29. Բժշկութիւն դիւահարի, որ միանգամայն կոյր էր և համր:

(ՄԵՏԹ. ԺԲ. 22—50. ՄԱՐԿ. Գ. 20—35. ԳՆԻԿ. ԺԵ. 14—29.)

Այսին քաղաքից ելանելով, Յիսուս Վրիստոս իւր աշակերտներին հետ գնաց Գալիլեայի քաղաքները և զիւղերը, քարոզելու և աւետարանելու Աստուծոյ արքայութիւնը: Նորա հետ շրջումէին մի քանի բարեպաշտ կանայք, որոց մէջ էր նոր դարձած աղաշխարողն—Մարիամ Մագդաղենացին, Յովհաննաս՝ որ շերտիդէսի հազարապետի կինն էր, Էռչան և այլք, որք սրտի յօժարութեամբ ծառայումէին Յիսուսին և նորա աշակերտներին և իւրեանց արծաթով հոգ էին տանում նոցա կեանքի պիտոյքի մասին:

Երբ դարձաւ Յիսուս Ղափառնաում, Նորա մօտ բերին մի

1) Զաւանական կարծիք է սուրբ հարց Եկեղեցւոյ թէ այս մեղաւոր կինը Մարիամ Մագդաղենացին էր:

դիւահար մարդ, որ միանգամայն կոյր էր և համր: Յիսուս Վրիստոս իսկոյն բժշկեց նորան, և նա սկսաւ խօսիլ և տեսնել: Այս հրաշարդոծութեան վերայ ժողովուրդը զարմացաւ և հարցանումէր. « Մի՞թէ սա է Մեսիան, Վաւթի որդին: » Ըմբարտաւան Փարիսեցիք չէին կարող ուրանալ Յիսուսի աստուածային զօրութիւնը, վասն զի ակներև ժողովրդի առաջ դործեց Նա այդ հրաշքը. ուստի նախանձով բորբոքուած սկսան ժողովրդի մէջ տարածել թէ Նա դեւերի իշխանի՝ Բեղղեբուղի զօրութեամբ հանում է դեւերը: Յիսուս Վրիստոս յայտ յանդիման խայտառակեց նոցա կամակորութիւնը և յետին ստութիւնը. « Ամենայն մեղք և հայհոյութիւնք, ասաց, ներել են մարդկան, բայց ո՞վ որ սուրբ և ոգւոյն դէմ հայհոյէ, նորան թողութիւն չիստ չէ, ոչ այս աշխարհում և ոչ այն: » Մինչդեռ այսպէս խօսումէր Յիսուս, մի կին, զմայլած Նորա սքանչելի վարդապետութեան վերայ, բազմութեան միջից սկսաւ բարձրաձայն երանի տալ նորա մօրը, ասելով. « Երանի որովայնին, որ զքեզ կրեց և ստեանց, որ զքեզ դիեցուցին: » Լսեց Յիսուս և ասաց. « Մանաւանդ երանի նոցա, որ Աստուծոյ բանը լսում են և կատարում են: » և ապա շարունակելով իւր առաջին խօսքը յանդիմանեց չարասիրտ դպիրքը և Փարիսեցիքը և ասաց. « Ծնունդք ի՞՞՞՞՞ ի՞՞՞՞՞ ի՞՞՞՞՞ կարող էք բարի խօսել, մինչդեռ ինքեանքդ չարութեամբ լի էք. բարի մարդը իւր սրտի բարութեան զանձից հանում է բարի խօսքեր. բայց չար մարդը իւր սրտի չարութեան զանձից հանում է չար խօսքեր: Բայց ասեմ ձեզ, որ վերջին դատաստանի օրը, իւրաքանչիւր դատարկ խօսքի համար, մարդիկ հաշիւ պէտք է տան Աստուծոյ. և դատապարտուին կամ վարձատրուին ո՞չ միայն դործերի՝ այլև խօսքերի համար: »

Երբ այսպէս խօսումէր Յիսուս, մայրն ու եղբարքը՝<sup>1)</sup> եկան, և ժողովրդի բազմութեան պատճառով չէին կարող մօտենալ Նորան, ուստի և ոմանք եկան և ասացին Յիսուսին, թէ « Մայրդ և եղբարքդ դուրսը կանգնած են և կամենում են քեզ տեսնել: » Ո՞վ է իմ մայրը կամ ո՞վ են իմ եղբարքը, պատասխանեց Յիսուս. և ձեռքը մեկնելով դէպի աշակերտքը, ասաց.

1) Սուրբ Վերքը ըստ Եբրայական սովորութեան՝ մերձաւոր ազգականքը կոչում է եղբարք:

„Ահա իմ մայրս և իմ եղբայրս, վասն զի ով որ կատարումէ իմ երկնաւոր Հօր կամքը, նա է իմ եղբայրս, քոյրս և մայրս<sup>1)</sup>“ :

§ 30. Մ ե ը մ ան ա ց ան ի ա ո ա կ ը :

(ՄԱՏԹ. ԺԳ. 1—23. ՄԱՄԳ. Դ. 1—21. ՂՈՒԿ. Ը. 4—15.)

Միանգամ, երբ Յիսուս Վրիստոս կանգնած էր Վեննեսարէթ ծովակի մօտ, մեծ բազմութիւն ժողովրդի եկան շըրջապատեցին Նորան և փափագումէին լսել Նորա աստուածային վարդապետութիւնը: Տէրը, մտանելով մի նաւի մէջ, փոքր ինչ հեռացաւ ցամաքից և սկսաւ ուսուցանել ժողովուրդը առաջնելով<sup>2)</sup>, և ասաց. «Մի սերմանացան դուրս եկաւ դաշտը սերմանելու: Սերմանելու ժամանակ քանի մի սերմեր ընկան ճանապարհի վերայ և թռչնոց կերակուր եղան. մի քանիսը ընկան ապառաժի վերայ, ուր ամենեկին հող չկար, և թէպէտ շուտ բուսան, բայց որովհետեւ երկրի հիւթը նուազ էր, արևի տաքութենից իսկոյն չորացան: Ոմանք ևս փշերի մէջ ընկան և բուսան, բայց փշերը մեծանալով խեղդեցին նորանց. մի քանիսը ևս լաւ երկրի վերայ ընկան և պտուղ տուին, ոմանք մէկին հարիւր, ոմանք վաթսուն և ոմանք երեսուն: Ո՛վ որ լսելու ականջ ունի՝ թող լսէ“ :

Երբ ժողովուրդը ցրուեցաւ, աշակերտքը՝ խնդրեցին Յիսուսից այս առակի մեկնութիւնը, և Յիսուս մեկնեց այսպէս. «Սերմն, ասաց, Աստուծոյ բանն (խօսքերն) է. ճանապարհի վերայ ընկած սերմերը նշանակում են՝ Աստուծոյ բանը քարտուրած փոփոխամիտ մարդերին, որ թէև լսումեն՝ բայց ոչ մտադրութեամբ, ուստի դալիս է չարը և նոցա սրտից յափշտակումէ այն: Ապառաժի վերայ սերմանածը նոքա են՝ որ

1) Այս խօսքով Յիսուս քրիստոս ոչ թէ կամենումը յայտնել թէ այլք նախապատիւ են քան թէ իւր Մայրը, այլ իբրև իրատ աւանդումք թէ՛ Աստուծոյ սերն առաւել բարձր պէտք է համարել քան թէ սերը արեան և աղգականութեան:

2) Քարոզութեանց մէջ Յիսուս քրիստոս յաճախ դորձ էր անում առակներ, որ շարունակ այլբանութիւնք էին կամ նմանութիւնք, և ունէին իւրեանց խորհրդաւոր միտքն ու իմաստը:

թէպէտ Աստուծոյ բանը լաւ ժամանակին ուրախութեամբ ընդունումեն, բայց, արմատ կամ հաստատուն հաւատք չունենալու պատճառով, նեղութիւն և հարձանք կրելու ժամանակին իսկոյն դայթակղվումեն և թողնումեն այն: Փշերի մէջ սերմանածը նոքա են՝ որ լսումեն Աստուծոյ բանը և ընդունումեն, բայց աշխարհիս հոգը, հարստութիւնն ու վայելչութիւնքը խեղդումեն նոցա մէջ այն և մնումէ անպտուղ: Իսկ լաւ երկրի վերայ սերմանածը նոքա են՝ որ լսումեն Աստուծոյ բանը, և ներքին պատրաստութեամբ ընդունումեն և կատարումեն, և համբերութեամբ պտուղ են տալիս, ոմանք՝ աւելի և ոմանք՝ նուազ“ :

§ 31. Որ ո մն ա ց ան ի ա ո ա կ ը :

(ՄԱՏԹ. ԺԳ. 24—30. 34—43.)

Սերմանացանի առակից յետոյ, Յիսուս ասաց ժողովրդին և այս առակը. «Երկնքի արքայութիւնը նման է այն մարդուն, որ իւր ազարակում լաւ սերմեր ցանեց. և երբ ծառայքը քնած էին, եկաւ նորա թշնամին և ցորենի մէջ որոմն ցանեց և դնաց: Երբ բուսաւ ցորենը և պտուղ տուաւ, ապա երևեցաւ և որոմն: Եկան ծառայքը և ասացին նորան. «Տէր՝ միթէ ազարակիդ մէջ բարի սերմն ցցանեցիր. ուստի՞ ուրեմն բուսաւ այն որոմն“ : «Թշնամի մարդու արած բան է“ , պատասխանեց նա: Եւ երբ ծառայքը հրաման խնդրեցին նորանից որ գնան քաղեն որոմն և դուրս ձգեն, «Ո՛չ, ասաց ազարակի տէրը, որովհետեւ կարելի է ցորենն ևս քաղէք: Թողէք որ երկուքն ևս աճին, մեծանան մինչև հունձքի ժամանակը. և այն ժամանակ կը հրամայեմ հնձողներին որ առաջ որոմն քաղեն՝ և խուրձ խուրձ կապեն այրելու, և ապա ցորենը իմ շտեմարաններին մէջ ժողովեն“ : Երբ Յիսուս ժողովուրդը թողեց և տուն եկաւ, աշակերտքը խնդրեցին մեկնել նոցա առակիս իմաստը: «Բարի սերմն սերմանողը, ասաց Յիսուս, Որդի մարդոյ (Վրիստոս) է. և ազարակն աշխարհս է. սերմն բարի՝ արքայութեան որդիքն

են, իսկ որոմն՝ չարի որդիքն են. որոմնացան թ շնամին՝ սատա-  
նան է. հունձի ժամանակը՝ աշխարհիս կատարածն է. և հըն-  
ձողքը հրեշտակներն են: Ինչպէս որ որոմն ժողովելով կրակի  
մէջ կը ձգուի, նոյնպէս պէտք է լինի և աշխարհիս վերջին:  
Այն ժամանակ հրեշտակները կը բաժանեն մեղաւորքը ար-  
դարներից, և կը ձգեն նորանց կրակի մէջ, ուր յաւիտեան պի-  
տի լան և ատամները կը ձտեն. իսկ արդարք արեգակի պէս կը  
փայլեն երկնքի արքայութեան մէջ՝:

§ 32. Ինքնաբոյս ցորենի, մանանեխի հատի,  
խմորի, ագարակի մէջ ծածկած գանձի, մար-  
գարիտի և ուռկանի առակները:  
(ՄԱՏԹ. ԺԳ. 31—35. 44—52. ՄԱՐԿ. Գ. 26—34.)

Սերմանացանի առակով յառաջագոյն ուսուցել էր Յիսուս  
թէ ինչպէս արժան էր լսել Աստուծոյ բանը. ապա, կամենա-  
լով ցուցանել թէ քարոզութիւնը երբէք անպտուղ մնալու չէ  
մարդերի սրտում, այլ կ'աճէ և հետզհետէ կը ապ իւր արժա-  
նաւոր պտուղը, ասաց այս առակը. «Երկնքի արքայութիւնը  
(Աստուծոյ բանը) նման է այն սերմին, որ եթէ մի մարդ ձգե-  
լով նորան հողի մէջ, ինքն այնուհետեւ չմտածէ նորա մասին և  
չխմանայ թէ սերմանիքը ինչպէս կը բուսանին և կ'աճին և  
երկիրը ինքն պտուղ կը ապ. յառաջուց խոտը և ապա հասկը  
և յետոյ լըուած ցորենը հասկի մէջ: Իսկ երբ պտուղը պատ-  
րասա կը լինի, իսկոյն մանգաղ կ'ուղարկէ, որովհետեւ հունձ-  
քի ժամանակն է՝:»

Մի այլ առակով յայտնեց Յիսուս թէ ինչպէս եկեղեցին  
փոքրիկ սկզբունքներից ընդարձակ ծաւալումն պիտի ստանայ.  
և նմանեցրեց նորան մանանեխի հատին, որ սերմերի մէջ փոք-  
րագոյնն է համարուած, բայց երբ աճումէ, բարձրանումէ բո-  
լոր բանջարներից և դառնումէ ծառ, մինչև երկնքի թռչուն-  
ները գալիս են և հանգստանում են նորա ոստերի վերայ: —

Արեւելոց ծաւալումն յայտնեց նաև խմորի նմանու-

թեամբ, որ մի կին խառնեց երեք չափ ալիւրի մէջ, մինչև որ  
բոլորը խմորեցաւ: —

Մարդ իւր հոգւոյ փրկութեան համար պէտք է ամենայն  
հնար գործ դնէ որ արժանի լինի երկնքի արքայութեան:  
Այս ճշմարտութիւնը յայտնի կացուց Յիսուս այն մարդոյ  
նմանութեամբ, որ, իմանալով թէ մի ագարակի մէջ մեծ գանձ  
է ծածկած, զնուձէ բոլոր իւր ունեցածը վաճառումէ և ձեռք է  
բերում այն ագարակը: «Նաև նմանեցրեց այն վաճառականին,  
որ, գտանելով մի պատուական մարգարիտ, բոլոր իւր ունեցա-  
ծը վաճառումէ և զնուձէ այն մարգարիտը: —

Աշխարհիս մէջ խառն են ապրում՝ բարիք և չարք, բայց  
այնպէս չէ երկնքում, ուր միայն արդարք պիտի թագաւորեն:  
Այս միտքը բացատրեց Յիսուս նմանութեամբ ուռկանի, որ,  
ձգած լինելով ծովի մէջ, ժողովեց իւր մէջ լաւ և վատ ձկներ.  
երբ լըուեցաւ՝ նորան ցամաքը հանեցին և նստան լաւերը ժո-  
ղովեցին ամանների մէջ, իսկ վատերը և անպիտանները դուրս  
ձգեցին: Այնպէս պէտք է լինի և աշխարհիս վերջին. կ'ելա-  
նեն հրեշտակները և կը բաժանեն չարերը արդարներից և կը  
ձգեն նորանց հնոցը, ուր կ'լինի լաց և ատամների կը ձտումն:»

Խօսքը աւարտելուց յետոյ, Յիսուս հարցրեց աշակերտնե-  
րին. «Հասկացո՞ք այս ամէն բաները»: Ասացին. «Այո՞ Տէր»:  
«Այս պատճառով, ասաց, ամենայն կարդացող, որ տեղեակ է  
երկնքի արքայութեան խորհուրդներին, նման է այն ասնտի-  
րօջը, որ իւր գանձից հանումէ նորը և հինը <sup>1)</sup>»:

§ 33. Յիսուս հանդարտեցնումէ լալէկոծութիւնը.  
Գերգեսացւոց երկրի դիւահարի բժշկութիւնը:  
(ՄԱՏԹ. Ը. 23—34. ՄԱՐԿ. Գ. 35—40. Ե. 1—20. ՂԱԿ. Ը. 22—39.)

Միանգամ Յիսուս իւր աշակերտների հետ միասին նաև

<sup>1)</sup> Այսինքն՝ ամենայն վարդապետ, իւր քարոզութեան ժամա-  
նակ, պիտի գործ դնէ մարգարեութիւնը և վարդապետութիւնը  
հին կտակարանից և միանգամայն մեկնէ և հաղորդէ նորերը, որը  
ինքն-Քրիստոս բերեց աշխարհ:

մտաւ և կամեցաւ անցանել Վեհնեսարէթ ծովակի միւս կողմին: Արբ ճանապարհ ընկան, Յիսուս գլուխը բարձին դրեց և քուն մտաւ: Ահա ճանապարհին յանկարծ սաստիկ մրրիկ բարձրացաւ, և ծովը սկսաւ ալէկոծուիլ. կատաղեւ ալքրները ծածկուեցին նաւը: Աշակերտքը, մեծ երկիւղի մէջ, շտապեցին արթնացնել Յիսուսը. «Տէր՝ փրկիր մեզ, սասցին, ահաւասիկ կորնչումենք»: Աւեր կացաւ Յիսուս, աչքը դարձուց փրկարդէզ ալքրների վերայ, և յանդիմանաբար սասց աշակերտներին. «Նսչե՛ւ այդպէս վատասիրտ էք, սակաւահաւատներ»: յետոյ սաստեց հողմին և խռովեալ ջրերին. «Ծովի ալքրները դադարեցան և եղաւ խաղաղութիւն: Չարմացան ամենքեան և ասումէին միմեանց. «Մի՛ է արդեօք սա, որ հողմերին ու ծովին հրամայումէ և հնազանդումեն իւրեան»:

Մըրիկը դադարելուց յետոյ, սոքա խաղաղութեամբ նաւեցին և եկան Վերդեսացուց երկիրը, ուր պատահեց Յիսուսին մի դիւահար մարդ, որ բնակումէր գերեզմանների մէջ, և արտաքոյ կարգի կատաղեւ լինելու պատճառով՝ մարդ չէր կարող մտնել նորան: Շատ անգամ շղթաներով կապած էին նորա ոտքը, բայց նա խորատակում ու մանրումէր այն և փախչումէր գերեզմանների մէջ: Արբեմն դուրս էր գալիս այն տեղից և, վայրենի ձայներ հանելով, սարսափ էր ձգում շրջակայ բնակիչների վերայ. անցաւորների վերայ յարձակումէր գազանաբար, ուստի և ոչ ոք չէր վտահանում անցանել այն ճանապարհով: Արբ անտաւ նա Յիսուսը, վազեց և ընկաւ՝ «Նորա առաջև, աղաղակելով. «Իմ հետ ի՞նչ բան ունիս Յիսուս՝ Որդի Աստուծոյ, աղաչումեմ քեզ մի ասնջեր ինձ»: «Ի՞նչ է քո անունը»: Հարցրեց նորան Յիսուս: «Աէգէան, պատասխանեց, վասն զի շատ եմք»: Վեւերը, որ խօսումէին ցաւագարի բերանով, աղաչեցին Յիսուսը որ եթէ նորանց կամենումէ հանել՝ դժոխք չուղարկէ, այլ հրաման սայ մտանել խողերի երամակը, որ այն տեղից փոքր ինչ հեռի արածում էին: Յիսուս թոյլ տուաւ նոցա, և նոքա թողնելով այն մարդը մտան

խողերի մէջ: Խողերը, որ երկու հազարի չափ էին, դիւահարութեամբ ընկան ծովը և խեղդուեցան: Խողարածները ահ ու դող ընկած շտապեցին քաղաք և պատմեցին այս անցքը: Վաղաքացիք մեծ բազմութեամբ դուրս եկան Յիսուսի առաջ, և, տեսնելով որ կատաղեւ ու մերկ դիւահարը զգեցած և զգաստացած համեստութեամբ նստած էր իւր Աղատարարի մօտ, սաստիկ վախեցան և աղաչեցին Յիսուսը հեռանալ նոցա սահմաններից: Յիսուս նաև մտաւ և դարձաւ Ապիստոնաում: Թէպէտ առողջացած դիւահարը խնդրեց Յիսուսից որ առնու նորան իւր հետ, բայց Յիսուս չթողեց. այլ, «Վնաս տուն, սասց, և պատմիր թէ ինչպէս ողորմեց քեզ Աստուած»: Վնաց նա և սկսաւ քարոզել Յիսուսի մասին Վեհապօլի մէջ, այսինքն՝ բոլոր տան քաղաքներում, որ գտանվումէին Յորդանանի արևելեան կողմում:

§ 34. Յիսուս բժշկումէ մի հիւանդ կին. յարուցանումէ Յայրոսի դուստրը. լուսաւորումէ երկու կոյրերի աչքերը և բժշկումէ մի համր դիւահար:  
(ՄԱՐԿ. Ե. 21—43. ԼՈՒԿ. Ը. 40—56. ՄԱՏԹ. Թ. 18—34.)

Վերդեսացուց երկրից Յիսուս Վրիստոս նաև մտանելով կրկին անց կացաւ Ապիստոնաումի ծովեզերքը, ուր ժողովուրդի բազմութիւնը ուրախութեամբ ընդունեց Նորան: Այն միջոցին, ժողովուրդանոցի իշխաններից մինը, Յայրոս անուն, մօտեցաւ Յիսուսին, ընկաւ Նորա ոտքը և աղաչումէր գալ իւր տունը և բժշկել իւր տաններկու տարեկան մի հատիկ դուստրը, որ մերձ ի մահ հիւանդ էր: Նորա թախանձազին աղաչանքը լսելով մարդասէր Տէրը յօժարութեամբ վեր կացաւ, զնաց նորա հետ, և բազմութիւնը հետեւեց Նորան: Այս բազմութեան մէջ գտանվումէր մի խեղճ կին, որ տաններկու տարի անուատեսութեամբ չարչարուած, բոլոր ունեցածը տուած էր բժիշկների և ոչ միայն օգուտ չէր ստացել այլ հիւանդութիւնն ևս առաւել զայրացել էր: Սա, լսելով Յիսուսի հրա-

չազործութեան համբաւը, սրտով հաւատաց 'Նորա աստուածային զօրութեանը և մեծ հաւատքով մտածեց որ թէ 'Նորա հանդերձի ծայրը շոշափէ՝ կը բժշկուի, անցաւ ամբոխի միջեց, մտեցաւ Յիսուսին և շոշափելով 'Նորա հանդերձի ծայրը, խիղջն առողջացաւ: Սակայն ծածուկ չմնաց այդ ամենագէտ Տիրոջեց. դարձաւ 'Նա դէպի ամբոխը և ասաց. «Մի մարդ մերձեցաւ ինձ», և չորս կողմը նայումէր որ գտանէ նորան: Իեղձ՝ կինը, տեսնելով որ իւր արարքը չթագնուեցաւ, դողալով եկաւ ընկաւ Յիսուսի ոտքը և հրապարակաւ պատմեց ինչ որ եղած էր: Յիսուս քաջալերեց նորան և ասաց. «Դուստր, հաւատքդ քեզ փրկեց, գնա՛ խաղաղութեամբ»:

Մինչդեռ այսպէս խօսումէր Յիսուս, եկան ոմանք Յայրոսի տանից և ասացին. «Դուստրդ մեռաւ, ուրեմն աւելորդ է աշխատութիւն տալ Արդապետին»: «Մի երկնչեր, ասաց Յայրոսին Յիսուս, բայց միայն հաւատա՛»: Ապա առնելով իւր հետ աշակերտաց միջեց Պետրոսը, Յակոբոսը և Յովհաննէսը գնաց նորա տունը և տեսաւ մեծ ամբոխ, լալականներ, լաց ու սուգ: «Ի՞նդէ՛ր շփոթուած էք և լաց էք լինում, ասաց, աղջկըր մեռած չէ, այլ քնած է»: 'Նորա ծիծաղումէին այդ խօսքի վերայ, ըստ որում հաստատ գիտէին թէ մեռած էր: Ապա հրամայեց Յիսուս զուրս հանել տանից բազմութիւնը, և Ինքն, առնելով իւր հետ երեք աշակերտքը և աղջկան ծնողքը, մտաւ այն սենեակը, ուր դրած էր մեռեալը: Մտեցաւ նորան, բռնեց ձեռքից և ձայն արձակեց. «Տակիթ ա կու մի», այսինքն՝ աղջկ կ դու, քեզ ասեմ, վեր կաց»: 'Նոյն րոպէին վեր կացաւ մեռեալը և սկսաւ գնալ: Յիսուս պատուիրեց ծնողներին ուտելու բան տալ նորան և ոչ որի չպատմել այդ անցքը:

Երբ Յիսուս դառնումէր Յայրոսի տանից դէպի Ափառնաում, պատահեցան 'Նորան երկու կոյր, որ գնալով 'Նորա ետեից անդադար աղաղակումէին. «Աղորմի՛ր մեզ, Արդէ՛ 'Վաւթի»: Յիսուս գնաց տուն մտաւ, նոքա ևս 'Նորա հետ ներս մտան և աղաչումէին 'Նորան: «Նաւատումէք որ կարող եմ բանալ ձեր աչքը»,

հարցրեց Յիսուս. ասացին, «Այո՛ Տէր»: Ապա մերձեցաւ նոցա աչքերին և ասաց. «Ըստ հաւատոց ձերոց եղեցի ձեզ». նոյն ժամայն բացուեցան նոցա աչքերը և տեսան: Սաստեց նոցա Յիսուս որ ոչ որի չպատմեն այդ հրաշքը. բայց նոքա շնորհակալութեան մտքով բոլոր այն կողմերը հռչակեցին այդ սքանչելիքը:

Այն ինչ հեռացել էին կոյրերը, բերին Յիսուսի մօտ մի համր դիւահար մարդ: Փրկիչը հանեց նորանից դէր և համրը սկսաւ խօսիլ. Ժողովուրդը, հիացած այս հրաշքների վերայ, ասումէին թէ՛ «Երբէք այդպէս բան եղած չէ 'Խորայէլի մէջ»: Բայց նախանձոտ և չարամիտ Փարիսեցիքը այդ սքանչելիքը վերագրումէին դևերի գործակցութեանը:

§ 35. Յիսուս հրաշագործութեան և քարոզուելութեան ի շխանութիւն է տալիս առաքեալներին: (ՄԵՏԹ. Թ. 35—38. Ժ. ՄԵՐԿ. 2. 7—13. ՂՈՒԿ. Թ. 1—6.)

Մինչդեռ Յիսուս քարոզումէր արքայութեան Աւետարանը զանազան քաղաքների և զիւղերի մէջ և բժշկումէր ցաւագարները, տեսաւ ժողովուրդը որ, վաստակած ու ցրուած իբրև ոչխարք առանց հովուի, փափագումէր լսել Աստուծոյ բանը, ցաւեցաւ նոցա վերայ և ասաց առաքեալներին. «Նունձը շատ է, բայց մշակները սակաւ. ուրեմն աղաչեցէք հունձի Տիրոջը՝ որ իւր հունձի համար մշակներ ուղարկէ»: Ապա կանչեց իւր մօտ տասներկու առաքեալները, սկսաւ զանազան հարկաւոր խրատներ և պատուէրներ տալ նոցա, թէ ինչպէս պիտոյ էր նոցա վարուիլ իւրեանց առաքելական պաշտօնի մէջ: Նրանցեց նոցա որ երթան քարոզեն, միայն թէ հեթանոսաց ու Սամարացւոց քաղաքները չերթան, այլ «Դնացէք, ասաց, աւելի առ կորուսեալ ոչխարքը ամեն 'Խորայէլի. քարոզեցէք և ասացէք, թէ մտեցած է երկնքի արքայութիւնը. բժշկեցէք հիւանդները, սրբեցէք բորոտները, հանեք դևերը. ձրի առած էք (այդ շնորհը), ձրի սուէք: Ոսկի, արծաթ և պղինձ մի կրէք ձեր վերայ. մի՛ պարկ ճանապարհի համար, մի՛ երկու հանդերձ, մի՛ կօշիկներ, մի՛ գաւազան. փան զև արժանի է մշակը իւր կերակրին: Ինչ քաղաք որ մտանէք, հարցրէք թէ

նվ այնտեղ արժանի է. նորա մօտ կացէք, մինչև դուրս կը գաք այն քաղաքից: Ինչ տուն կը մտանէք, ասացէք. Ողջոյն տանս այսմիկ: Ինչ քաղաք չընդունի ձեզ և չըսէ ձեր վարդապետութեանը, այն տանից կամ քաղաքից դուրս գալու ժամանակ թօթափեցէք ձեր ուղի փոշին: Իրաւ ասուեմ ձեզ որ դատաստանի օրը Սողոմ և Գոմեր քաղաքներից աւելի թշուառ լինելու էր այն քաղաքի վիճակը: Ահա ուղարկուեմ ձեզ իբրև ոչխարք գայլերի մէջ. եղևք այսուհետև խորագէտք որպէս օձերը և միամիտ իբրև աղաւնիքը: Չգոյշ եղևք մարդերից. դոքա կը մասնեն ձեզ դատաստանի, կը տանջեն ձեզ, դատաւորների և թագաւորների առաջև կը տանեն ձեզ, որ դուք վկայէք վասն իմ: Բայց դուք մի հոգաք, թէ ի՞նչ պիտոյ էր ձեզ խօսիլ ատենի առաջև, որովհետև երկնաւոր Հօր Հոգին կը խօսի ձեր մէջ: Գուք ամենեցուն ասելի կը լինիք վասն իմ անուան, բայց նա որ կը համբերէ մինչև վերջը, կը ստանայ կեանք: Աշակերտք առաւել չէ քան զվարդապետք, ծառայն՝ քան զուղիք. եթէ տանուաւոր Բէեղզբուրդ կոչեցին, որչափ ևս առաւել նորա ընտանիքը: Մի վախենաք նոցանից, որ սպանուեան մարմինը, բայց կարող չեն սպանել հոգին, այլ վախեցէք առաւել նորանից որ կարող է հոգին ու մարմինը ձգել զԵհենի մէջ: Մի երկմոխր ձեր կեանքի վերայ. Աստուած, որ թուել է ձեր գլխի ամեն մի մազը, կը պահպանէ ձեզ: Ով ինձ կը խոստովանէ մարդերի առաջև, նորա մասին կը խոստովանեմ և Աս առաջի իմ Հօր, որ երկնքումն է, ով ինձ կ'ուրանայ մարդկան առաջև, և Աս նորան կ'ուրանամ երկնաւոր Հօրս առաջև: Ով որ իւր հայրն ու մայրը Ինձանից աւելի սիրէ, նա Ինձ արժանի չէ. և ով իւր որդիքը Ինձանից աւելի սիրէ, նա Ինձ արժանի չէ. ով որ իւր խաչը չառնու և չգայ իմ հետեւից, Ինձ արժանի չէ: Ով որ Ինձ կ'ընդունի, կ'ընդունի իմ Առաքիչս: Եւ ով որ ձեզանից մէկին մի բաժակ ցուրտ ջուր տայ ընկելու, իմ աշակերտի անունով, ձգմարիտն ասեմ ձեզ, այնպիսին կորուսանելու չէ իւր վարձքը<sup>1</sup>:

§. 36. Գլխատուն Յովհաննու Մկրտչի:  
(ՄԱՏԹ. ԺԳ. 3—12. ՄԱՐԿ. Զ. 17—29.)

Գալիլեայի չորրորդապետ՝ Հերովդէս Անթիպատը անիրաւութեամբ խլել էր իւր եղբոր՝ Փիլիպպոսի Հերովդիադա կինը և ամուսնացել էր նորա հետ: Որովհետև Յովհաննէս Մկրտիչը անաչառ կշտամբումէր նորան ասելով, թէ «Արժան չէ եղբորդ կինը քեզ կին առնուլ», այդ մասին, Հերովդիադա, ռի պահելով նորա վերայ, ամէն հնար գործ էր դընուամի կերպով սպանելու նորան. և մտուէր մի յարմար միջոցի: Հերովդէսը, որ ճանաչումէր Յովհաննէսը իբրև արդար և սուրբ մարդ, և շատ անգամ յօժարամիտ լսումէր նորա խորատական խօսքը, չէր վստահանում կատարել Հերովդիայի ապօրինի պահանջը. մանաւանդ երկիւղ էր կրում ժողովրդից, որ Յովհաննէսը իբրև մարգարէ յարգումէին: Բայց որպէս զև չտիրեցնէր և իւր կինը, միջին ճանապարհ ընտրեց նա՝ ուղարկեց բռնել տուաւ Յովհաննէսը և բանա դրեց<sup>1</sup>): Հերովդիայի սիրտը չհանգստացաւ սորանով, նա կամենումէր Յովհաննու մահը. և ահա պատահեցաւ մի քաջադէպ միջոց, որով հասաւ նա իւր չար դիտաւորութեանը: Հերովդէս իւր ծննդեան օրին հացկերոյթ պատրաստեց. ուր հրաւիրեց նախարարները, հազարապետները և Գալիլեայի մեծամեծքը: Ուրախութեան ժամանակին ներս մտաւ Հերովդիայի դուստրը՝ Սողոմ, և իւր կաքաւելով այնպէս գրաւեց բազմականների և Հերովդէսի սիրտը որ սա իսկոյն խոստացաւ տալ նորան ինչ որ խնդրէր, մինչև իւր թագաւորութեան կէսը. և այս խոստմունքը երգմամբ հաստատեց: Իսկոյն գնաց աղջկը և հարցրեց մօրը. «Ի՞նչ խնդրեմ»: «Յովհաննու Մկրտչի գլուխը» ասաց նորան մայրը: Աերս մտաւ Սողոմ և ասաց թագաւորին. «Աամիմ որ այս սկուտեղի վերայ պարգևես ինձ Յով-

1) Անմեղ նահատակը տանեկեց ամիս արգելած մնաց Մաքերոնի ամրոցի մէջ, որ Մեռեալ ծովի հիւսիսային ափերէն կողմն էր:

հաննու Մկրտչի գլուխը՝ Այդ բանի վերայ շատ արամեցաւ Հերովդէս, բայց, չկամենալով հրապարակաւ ժխտել իւր երդումը բազմակամներէի առաջը, հրամայեց դահճին գնալ և բերել Յովհաննու գլուխը: Հրամանը կատարուեցաւ: Յովհաննու գլուխը սկուտեղն վերայ բերեց դահճը տուաւ աղջկան և նա սարաւ մօրը պարգևեց: Յովհաննու աշակերտքը, լսելով իւրեանց վարդապետի գլխատումը, դնացին նորա մարմինը թաղեցին և եկան պատմեցին Յիսուսին <sup>1)</sup>:

§ 37. Յիսուս հինգ հացով կերակրու մէ հինգ հազար մարդ:  
(ՅՈՒՀ. Զ. 1—15. ՄԱՏԹ. ԺԴ. 13—22. ՄԱՐԿ. Զ. 30—44. ՂՈՒԿ. Թ. 10—17.)

Յովհաննու Մկրտչի մահուց յետոյ, առաքելաբ դարձան քարոզութենից և պատմեցին Յիսուսին ինչ որ գործել էին և ուսուցել էին: Յիսուս Քրիստոս, կամենալով առ ժամանակ մի հեռանալ ժողովուրդից, որ փոքր ինչ հանգստանան աշակերտքը, նոցա հետ միասին նաւ մտաւ և անցաւ Բեթսայիդա անապատը: Բայց այս ևս ծածուկ չմնաց ժողովուրդի աչքից. խմանալով թէ ուր դիմումէր նաւը, նոքա ևս ցամաքով ճանապարհ ընկան այն կողմը և Յիսուսից յառաջ հասան անապատ: Արբ տեսաւ Յիսուս բազմութիւնը գթացաւ նոցա վերայ և սկսաւ խօսիլ նոցա հետ երկնքի արքայութեան մասին և բժշկել նոցա հիւանդները: Արբ երեկոյ եղաւ աշակերտքը մօտեցան Նորան և ասացին. «Տեղս անապատ է և օրը մթնումէ, արձակիր ժողովուրդը որ երթան շրջակայ գիւղերում կերակուր գնեն իւրեանց համար»: «Վուճ տուէր նոցա ուտելը», պատասխանեց Յիսուս: «Այդ մեծ բազմութիւնը կերակրելու համար հազիւ թէ բաւական էր երկու հարիւր դահեկանի հաց, թէև իւրաքանչիւրը սակաւ

1) Յովհաննու Մկրտչի գլխատման յիշատակը Հայաստանեայց Ս. Ազնեղեցին կատարումէ անփոփոխ Օ. Զատիկի եօթներորդ օրը, այսինքն՝ առաջիկայ շաբաթ օրը:

ինչ ուտեր», ասաց Փիլիպոսը: Յիսուս հրամայեց նոցա գնալ տեղեկանալ թէ ո՞րքան հաց կայ. Ննդրէսար տեղեկութիւն տուաւ թէ մի սղայ հինգ զարեղէն հաց և երկու ձուկ ունի: Տէրը հրամայեց որ բերեն այդ ուտելիքը և ժողովուրդը խումբ խումբ խոտի վերայ նստեցնեն: Յետոյ վերառաւ հացը և ձուկը, դէպի երկինքը նայեց, օրհնեց և մանրելով տուաւ աշակերտներին որ բաժանեն ժողովուրդին: Ամենեքեան կերան և կշտացան: Յետոյ հրամայեց աշակերտներին ժողովել մնացած կոտորները և նոքա տաներկու սակաւի (սեբեթ) լցուցին: Բազմութիւնը հինգ հազարի չափ էր բաց ի կանանց և սղայոց: Այդ սքանչելեաց վերայ հիացած մնաց ժողովուրդը. «Սա է ճշմարիտ մարգարէն, ասումէին, որ զարոյ էր յաշխարհ»: և խորհուրդ ի մէջ առնելով կամեցան թագաւոր կացուցանել Նորան իւրեանց վերայ: Բայց Յիսուս, խմանալով նոցա դիտաւորութիւնը, հեռացաւ նոցա աչքից և բարձրանալով մի լեւան վերայ սկսաւ աղօթել:

§ 38. Յիսուս գնումէ ջրերի վերայ և ազատումէ Պետրոսը վտանգից:  
(ՄԱՐԿ. Զ. 45—53. ՄԱՏԹ. ԺԴ. 23—34. ՅՈՒՀ. Զ. 16—21.)

Ժողովուրդը կերակրելուց յետոյ, Յիսուս Քրիստոս հրամայեց աշակերտներին շուտով նաւ մտանել և յառաջ քան զՆնքն անցանել ծովակի միւս կողմը—Բեթսայիդա. իսկ Ննքն առանձնացաւ լեւան գլուխը աղօթելու: Արբ գիշերը վերայ հասաւ, վեր կացաւ հակառակ հողմը, ծովը ալեկոծուեցաւ և աշակերտքը, թիերի օգնականութեամբ ալեքների հետ մրցելով, չէին կարող ցամաք դուրս գալ: Աւաստ յանկարծակի չորրորդ պահուն գիշերի <sup>1)</sup>, տեսան նոքա մի մարդ, որ ջրերի վե-

1) Ըստ սովորութեան Հռովմայեցոց, Հրեաստանի մէջ գիշերապահ զօրականները շորս անգամ փոխումէին, երկիցեան վեց ժամից սկսած, իւրաքանչիւր պահը համարելով երեք ժամ:

բայ քայլերով մօտենումէր նաւին. և, կարծելով թէ այդ մի երևոյթ էր, զարհուրեցան և սկսան աղաղակել: «Քաջալերուեցէք, ձայն տուաւ նոցա Յիսուս, Ե՛ս եմ, մի վախենաք»: Պետրոսը, որ առաւել ջերմ ու քաջասիրտ էր, լսելով Յիսուսի ձայնը, պատասխանեց նաւից. «Տէր, եթէ Ղու ես, հրամայիր ինձ ջրերի վերայով գալ Քո մօտ»: Եւ երբ Յիսուս ասաց. «Ե՛կ», թռաւ նաւից և սկսաւ գնալ ջրերի վերայ. բայց երբ յանկարծ մի նոր մրրիկ բարձրացաւ, վախեցաւ և ընկզմելու վերայ էր, աղաղակեց. «Տէր, փրկիր ինձ»: Չեռը ձգեց Յիսուս և, բռնելով նորան, ասաց. «Թերահաւատ, ինչո՞ւ երկմտեցիր». երբ նաւ մտան, նոյն ժամայն հանդարտեց հողմը: Եւ յ հրաշքի վերայ հիացած էին նաւի մէջ գտանուող մարդիկը, նոքա մօտեցան Յիսուսին և երկրպագութիւն տալով ասումէին. «Մարդարև Որդի Աստուծոյ ես Ղու»:

§ 39. **Յիսուսի վարդապետութիւնը շաղորդութեան խորհուրդի մասին:**  
(ՅՈՎ. Է. 22—71.)

Միւս օրը ժողովուրդը մեծ բազմութեամբ դիմեց դէպի անապատը, ուր օր մի յառաջ Յիսուս բազմացրել էր հացը և ձուկը: Երբ երկար որոնելուց յետոյ չգտան Յիսուսը, նաւ մտան և գնացին Պափառնաում: Եւ յն անդ տեսան նորան ժողովուրդի մէջ և զարմացած հարցրին. «Ուրբի, ե՞րբ եկար այս անդ»: «Ղշմարիտն ասեմ ձեզ, պատասխանեց նոցա Յիսուս, դուք որոնումէք ինձ ոչ թէ հրաշագործութեանս համար, որ տեսաք, այլ որովհետև կերպք և կշտացար: Գնացէք աշխատեցէք գտանել ոչ կորստական կերակուրը, այլ այն՝ որ մնայ ի կեանս յաւիտենականս». (հողի անուշանող աստուածային կերակուրը): «Բայց Ղու ի՞նչ նշան կը դործես, ասացին, որ տեսնենք և հաւատանք Քեզ. մեր հայրերը անապատի մէջ մանանայ կերան, որպէս և զրած է. Երկնից հաց տուաւ նոցա ուտելու»: Պատասխանեց Յի-

սուս. «Ո՛չ թէ Մովսէսը տուաւ ձեզ այն հացը երկնից, այլ իմ շայնն է որ ճշմարիտ հացը տալիս է ձեզ երկնից: Որովհետև Աստուծոյ հացն է, որ իջանումէ երկնից և կեանք է տալիս աշխարհին: Ե՛ս եմ կենաց հացը, ով որ Ինձ մօտ գայ՝ սոված մնալու չէ. և ով որ Ինձ հաւատայ՝ երբէք ծարաւելու չէ»: շրէայք արանջումէին Յիսուսի վերայ, որ ասաց թէ՛ Ես եմ երկնից իջած հացը, և ասումէին միմեանց. «Մի՞թէ Սա Յիսուսը չէ՞ Յովսէփի որդին, որոյ հայրն ու մայրը գիտենք. ապա ի՞նչպէս է ասում թէ երկնից է իջած»: «Մի՛ քրթմնջէք միմեանց հետ», ասաց Յիսուս. ճշմարիտ ասում եմ ձեզ, ով որ Ինձ հաւատայ կ'ընդունի յաւիտենական կեանքը. Ե՛ս եմ կենաց հացը. ձեր հայրերը մանանան կերան անապատում և մեռան, այս այն հացն է, որ երկնից է եկած. ով որ ուտէ սորանից՝ չմեռանիր. Ես եմ կենդանի հացը երկնից իջած. եթէ մինը այս հացից ուտէ՝ յաւիտեան կ'ապրի: Եւ յն հացը որ Ես պիտի տամ, Իմ մարմինս է, որ աշխարհի կենաց փրկութեան համար պէտք է տամ»: Ա իճումէին միմեանց հետ շրէայք և ասումէին. «Ի՞նչպէս կարող է Սա Խւր մարմինը տալ մեզ ուտելու»: Յիսուս ասաց նոցա. «Ղշմարիտ եմ ասում ձեզ. եթէ մարմինը Որդւոյ մարդոյ չուտէք և Ղորա արիւնը չըմպէք, չէք կարող ապրիլ: Իմ մարմինս ուտողը և արիւնս ըմպողը յաւիտենական կեանք կ'ունենայ և Ես, վերջին դատաստանի օրը, կը յարուցանեմ նորան: Ով կ'ուտէ Իմ մարմինը և կ'ըմպէ Իմ արիւնը, Ղա Իմ մէջ կը բնակի և Ես նորա մէջ»:

Աշակերաններից շատերը, չհասկանալով Յիսուսի խօսքը, ասացին. «Ղժուար է այդ խօսքը. ով կարող է լսել դորան»: Իմացաւ Յիսուս թէ աշակերտքը այս մասին արանջումէն, ասաց. «Ե՛յդ է դայթակղեցնում ձեզ. ապա ի՞նչ պիտի ասենք, երբ տեսնէք Մարդոյ Որդին Խւր առաջին տեղում: շորդին է կենդանացնողը. մարմինը միայն օգուտ չունի. այս խօսքերը որ ասացի ձեզ՝ հողի է և կեանք: Բայց կան ոմանք ձե-

զանից որ չեն հաւատում“ . որովհետեւ յառաջուց գիտէր Յիսուս թէ ոչք են Նորան չհաւատացողքը և ով պիտի մտնեն Նորան . ուստի և յաւերացրեց թէ «Այս պատճառով ասացի ձեզ՝ թէ ոչ որ կարող է ինձ մօտ գալ, մինչև որ չայրս կարողութիւն չտայ Նորան“ : Այդ բանից յետոյ աշակերտներին շատերը հեռացան Յիսուսից և այլ ևս չէին շրջում Նորա հետ : Վարձաւ Յիսուս դէպի երկոտասան առաքեալքը, և ասաց . «Մի՛թէ և դուք կամիք գնալ“ : «Տէր, ո՞ւմ մօտ գնանք, պատասխանեց Պետրոսը, Վո խօսքերը յաւիտենական կենաց վերայ է . և մեր հաւատացիքը և ճանաչեցիք թէ Վո՞ւ ես Վրիստոսը, Արդի՞ն Աստուծոյ“ :

**ՅԻՍՈՒՍԻ ՎՐԻՍՏՈՍԻ ՎԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԵՐՐՈՐԿՍԵՐԻՆ .**

§ 40. Յիսուս յանդիմանուէ փարիսեցւոց նախանձայնութիւնը :  
(ՄԱՏԹ. ԺԵ. 1—20. ՄԱՐԿ. Է. 1—23.)

Յիսուսի Վրիստոսի քարոզութեան երրորդ Օւտիկն էր . բայց այս անգամ ըստ սովորութեան չգնաց Նա Նրուսողէմ, որովհետեւ գիտէր որ չրէպք կամենումէին սպանանել Նորան : Չարամիտ դպիրք և Փարիսեցիք Նրուսողէմից Նորա մօտ Վալիլիա եկան և, տեսնելով որ Նորա աշակերտներին մի քանիսը անլուայ ձեռքով հաց էին ուտում, բամբասեցին նորանց : Չրէից մէջ աւանդութիւն կար, կերակուր ուտելուց յառաջ ձեռք լուանարու, այս պատճառով Փարիսեցիք ասացին Յիսուսին . «Ինչո՞ւ աշակերտքդ ձերերի աւանդութիւնը չեն պահում և հաց կերած ժամանակին ձեռք չեն լուանում“ : «Իայց դուք, պատասխանեց Յիսուս, ինչո՞ւ մարդկան աւանդութիւնների համար Աստուծոյ պատուիրանը չէք պահում : Աստուած ասաց . Պատուիր քո հայրդ և մայրդ, և նա որ բամբասէ իւր հայրը կամ մայրը, թող մահուամբ մեռանի . իսկ դուք ասումէք . Բաւական է որ մի մարդ իւր աղքատ ծնողներին ասէ թէ՛ Աստուծոյ տուած նուէրս ասե-

լի օգտակար է ձեզ քան թէ ինձանից սպասած որ և իցէ օգնութիւնը : Եւ այսպէս ձեր աւանդութեան համար անարգումէք Աստուծոյ պատուիրանը : Անդձաւորք, բարեոք մարդարեացաւ ձեր վերայ Նսայի, ասելով . Այս ժողովուրդը շրթուկներով պատվումէ ինձ, բայց նոցա սիրտը հեռացած է ինձանից“ : Յետոյ Յիսուս կանչեց ժողովուրդը և ասաց նոցա . «Լսեցէք ինձ և իմացէք որ մարդուս բերանից ներս մտածը չէ կարող պղծել մարդը . բայց ինչ որ դուրս է գալիս բերանից, այն է պղծում նորան : Արովհետեւ մարդկան սրտից դուրս են գալիս չար խորհուրդներ, շնութիւնք, պոռնկութիւնք, գողութիւնք, սպանութիւնք, աղահալութիւնք, սուտ վկայութիւնք, հայհոյութիւնք, ամբարտաւանութիւնք . ահա սոքա են որ պղծում են մարդը և ոչ անլուայ ձեռքով հաց ուտելը“ :

§ 41. Վրանանացի կիւնը :  
(ՄԱՏԹ. ԺԵ. 21—28. ՄԱՐԿ. Է. 24—30.)

Յիսուս Վրիստոս, կամենալով առ ժամանակ մի հեռանալ նախանձարեկ դպիրներից և Փարիսեցիներից, թողեց Վալիլիան և գնաց Տիւրոսի և Սիդոնի սահմանները : Այն տեղ մի քանանացի կին, որ լսած էր Յիսուսի հրաշագործութեան համբաւը, եկաւ և աղաչումէր Յիսուսը, ասելով . «Աղորմիր ինձ, Տէր, Արդի Վաւթի, իմ դուստրը չարաչար դիւահարվումէ“ : Իայց Յիսուս, կամենալով ցոյց տալ աշակերտներին այդ հեթանոս կնոջ ամուր հաւատը, պատասխան չտուաւ նորան, այլ յառաջ էր տանում իւր ճանապարհը : Աշակերտքը, լսելով խեղճ կնոջ աղաղակը, աղաչումէին Նորան որ կատարէ նորա խնդրուածքը : Պատասխանեց նոցա Յիսուս . «Ես ուղարկած եմ միայն Խարայէլի տան կորուսած ոչխարների համար“ : Վանանացի կինը կրկին մօտեցաւ և երկրպագութիւն տալով աղաչումէր Նորան . «Տէր, օգնիր ինձ“ : «Լաւ չէ, ասաց Յիսուս, երեխաների հացը խլել և շներին տալ“ : Ծանր էր խեղճ կնոջ համար լսել այդ, սակայն անյոյս չեղաւ նա, և հեզութեամբ պատասխանեց . «Այո՛ Տէր,

բայց շները ևս կերակրվումեն իւրեանց տիրոջ սեղանից ընկած փշանքներով: Վարձաւ Յիսուս և ասաց. «Ո՛վ կին դու, մե՞ծ էքո հաւատը, թո՛ղ լինի քեզ, ինչպէս կամենում ես», և նոյն ժամայն առողջացաւ նորա դիւահար դուստրը:

§ 42. Յիսուս բժշկուումէ մի խուլ և համր մարդ և եօթն հացով կերակրուումէ չորս հազար հոգի: (ՄԱՏԹ. ԺԵ. 29—39. ՄԱՐԿ. Է. 31—37. Ը. 1—10.)

Տիւրոսի և Սիդոնի կողմերից Յիսուս Վրիստոս զնաց Վեկապոլի սահմանները: Բնակիչքը, լսելով այդ, բերին Նորա մօտ մի խուլ և համր մարդ, և աղաչումէին որ ձեռքը դնէ նորա վերայ: Յիսուս փոքր ինչ հեռացրեց նորան ամբոխից, և ապա մատները տարաւ նորա ականջներին մէջ և թփելով բունեց նորա լեզուից, աչք ձգեց դէպի երկինքը, յողոց հանեց և ասաց. «Ե՛ փփաթա՛, այսինքն՝ բացու՛իր: Նոյն բուպէին բացուեցան նորա ականջները, արձակուեցան լեզուի կապերը և սկսաւ համարձակ խօսիլ:

Այն տեղից Յիսուս բարձրացաւ մի լեւան գլուխ և նըստաւ. ամէն կողմից բազմաթիւ ժողովուրդ եկան Նորա մօտ, իւրեանց հետ բերելով կաղեր, կոյրեր, համրներ, միակողմանիներ և այլ շատ հիւանդներ, դրին Յիսուսի ոտքը և Նա բժշկեց ամենքը: Մե՞ծ էր ժողովրդի զարմանքը, երբ տեսնում էր թէ ինչպէս համրները խօսումէին, կաղերը գնում էին, միակողմանիք բժշկվումէին, կոյրերը տեսնումէին և փռաւորումէին Խրայէլի Աստուածը: Տեսնելով ժողովրդի բազմաթիւնը, Յիսուս իւր մօտ կանչեց աշակերտքը և ասաց. «Խնայու՛մք այդ խեղճ ժողովուրդը, ահա երեք օր է որ սոքա իմ հետ են, բայց ուտելու բան չունին. անթի արձակել չկամիս, դուցէ սովածութենից թուլանան ճանապարհին»: «Այս անասպատիս մէջ, ասացին աշակերտքը, ուստի՞ կարելի է այնքան հաց դասնել որ կշաացնենք այդչափ բազմութիւնը»: «Քանի՞ հաց ունիք», հարցրեց Յիսուս: Ասացին, «Եօթն, և մի քանի ձուկ»: Ապա հրամայեց ժողովրդին որ զեանի վերայ նստեն, և Նիքն առաւ հացը և ձիւները, գոհացաւ, կտրեց, տուաւ աշակերաներին, և նոքա՝ ժողովրդին: Վերան ամենեքեան և կշաացան. և եօթն զամբիւղ լի հաւաքեցին

մնացած կտորները: Ուտողները չորս հազար հոգի էին, բայց ի կանանց և ի աղայոց: Յետոյ Յիսուս արձակեց ժողովուրդը, առաքեալների հետ նաւ մտաւ և զնաց Մաղդաղեայ կողմերը:

§ 43. Յիսուս յանդիմանուումէ Փարիսեցիքը և զգուշացնուումէ աշակերտքը նոցա ազանդից: (ՄԱՏԹ. ԺԶ. 1—12. ՄԱՐԿ. Ը. 11—21. ԳՈՒԿ. ԺԲ. 54—57.)

Մաղդաղեայ կողմերում եկան Յիսուսի մօտ Փարիսեցիքը և Սադուկեցիքը և սկսան վիճել Նորա հետ. և փորձելով Նորան, խնդրում էին որ մի նշան կամ հրաշք ցոյց տայ նոցա երկնքից: Պատասխանեց նոցա Յիսուս. «Վու՛ք երկնքի երեսը զիտէք քննել և բնական փորձով գուշակել եղանակը, բայց այս ժամանակին նշանը ինչո՞ւ չէք կարող հասկանալ, այս չար և շնացող ազգը նշան է խնդրում, բայց նշան տեսնելու չէ, բայց ի նշանից Յովնան մարդարէի՞»<sup>1)</sup>: Այս ասելով, թողեց նոցա և կրկին նաւ մտաւ աշակերանների հետ և զնաց ծովակի միւս կողմը: Հասանելով արևելեան ծովեզերքին, Յիսուս ասաց աշակերտներին. «Տեսէք և զգոյշ կացէք Փարիսեցւոց և Սադուկեցւոց խնորհց»: Նոքա մտածումէին իւրեանց մէջ և ասումէին, երևի թէ հացի համար է ակնարկում Տէրը, որ մտաացանք առնուլ մեր հետ: Իմացաւ Յիսուս նոցա միտքը և ասաց. «Թերահաւատներ, ինչո՞ւ էք անհանգիստ հացի համար. միթէ չէք յիշում որ սակաւ հացով քանի հազարներ կերակրուեցան, և չէք իմանում որ հացի համար չասացի ձեզ, այլ որ զգոյշ լինիք Փարիսեցւոց և Սադուկեցւոց խնորհց»: Այն ժամանակ հասկացան աշակերտքը թէ Յիսուս զգուշացնումէր նոցա ոչ թէ խնորհց, այլ Փարիսեցւոց և Սադուկեցւոց սուտ և մոլոր վարդապետութենից:

§ 44. Տիրոջ գուշակութիւնը իւր չարչարանաց և մահուան մասին: (ՄԱՏԹ. ԺԶ. 13—28. ՄԱՐԿ. Ը. 27—38. ԳՈՒԿ. Թ. 18—27.)

Սեսարիա — Փիլիպպեայ քաղաքի շրջակայ զիւղերը երթալու ժամանակ, ճանապարհին Յիսուս հարցրեց աշակերանե-

<sup>1)</sup> Այս խօսքով Յիսուս նախագուշակումէր Իւր երեքօրեայ թաղումն և փռաւոր յարութիւնը:

րին. Խոնչ կարծիք ունին մարդիկ իմ վերայ, ո՞վ եմ Ես, :  
 Երբա ասացին. «Ոմանք ասումեն Յովհաննէս Մկրտիչն է,  
 միւսները—Լւղիան է, այլք—Երեմիան կամ մարգարէներեց  
 մինը»: «Եպա դուք ի՞նչպէս էք կարծում, ո՞վ եմ Ես», կրկ-  
 նեց Յիսուս: Յառաջ քնաց Պետրոսը և, լի ջերմեռանդ հա-  
 ւատով, պատասխանեց բոլոր աշակերտների կողմից. «Գնու ես  
 Վրիստոսն, կենդանի Աստուծոյ Որդին»: «Երանի քեզ Մի-  
 մնն, Յովնանի որդի, ասաց Տէրը, որովհետև ոչ թէ մարմին  
 և արիւնը (մարդ) յայտնեց քեզ այդ, այլ Հայրս՝ որ երկնքումն  
 է. և Ես քեզ ասեմ, դու ես Պետրոս (վէմ), և այդ վնմի վե-  
 րայ, (այսինքն, այդ խոստովանութեանդ վերայ թէ՛ Ես եմ  
 Վրիստոսն, կենդանի Աստուծոյ Որդին), կը շինեմ իմ Եկե-  
 ղեցին, և դժոխքի դուռները (սասանայի իշխանութիւնը)  
 չեն կարող յաղթահարել նորան. և քեզ պիտի տամ երկնքի ար-  
 քայութեան փականքը. ինչ որ կապես երկրի վերայ, կապուած  
 կը լինի երկնքում. և ինչ որ արձակես երկրի վերայ, արձակ-  
 ուած կը լինի երկնքում<sup>1)</sup>»: Այդ բանից յետոյ, Յիսուս բա-  
 ցայայտ խօսեց աշակերտների հետ, Խւր չարչարանաց մասին,  
 որ պիտի կրէր Երուսաղէմի մէջ ծերերից, քահանայապետ-  
 ներից և դպիրներից, և թէ ինչպէս պէտք է մեռաներ և եր-  
 րորդ օրը յարութիւն առնէր: Չկարաց Պետրոսը համբերել  
 այդ սոսկալի բաներին. «Վա՛ւ լեցի Վեզ, Տէր, ասաց, այդպիսի  
 բան չէ կարող պատահել Վեզ»: Բայց Յիսուս ասաց նորան.  
 «Գնա՛ ինձանից սատանայ, իմ դայթակղութիւնն ես, վասն  
 զի դու չես մտածում ըստ Աստուծոյ, (այսինքն, ինչ որ համա-

<sup>1)</sup> Թէպէտ այս անգամ Յիսուս միայն Պետրոսին Խւր Եկե-  
 ղեցոյ հիմնաքար անուանեց և իշխանութիւն տուաւ նորան, սա-  
 կայն այդ խօսքերը վերաբերումէին և միւս առաքեալներին, ըստ  
 որում մի քանի ժամանակից յետոյ Յիսուս Վրիստոս մի և նոյն  
 իրաւունքը և իշխանութիւնը տուաւ և միւս առաքեալներին, և  
 նոքա նոյնպէս հիմունք եղան քրիստոնէական Եկեղեցւոյ, որոյ  
 անկեան գլուխն Ինքն է Յիսուս Վրիստոս: (Յայտ. իա. 10—14),

ձայն էր Աստուծոյ կամքին), այլ ըստ մարդկան՝: Յետոյ դար-  
 ձաւ դէպի Խւր աշակերտքը և ասաց. «Ո՛վ որ կամենում է իւր  
 անձը ապրեցուցանել (աշխարհի վայելչութեան համար), նա  
 կորուսանելու է նորան (յաւիտենական կենանքում). և ո՞վ  
 որ կորուսանէ իւր անձը (անցաւոր վայելչութենից զրկուի)  
 Խմսից համար, նա գտանելու է նորան (յաւիտենական ե-  
 րանութեան մէջ): Խոնչ շահ մարդուն, եթէ բոլոր աշխար-  
 հը ձեռք բերէ և իւր անձին վնաս տայ: Վասն զի գալոց է  
 Մարդոյ Որդին Խւր Հօր փառքով, Խւր հրեշտակների հետ  
 միասին, և այն ժամանակ կը վարձատրէ իւրաքանչիւրին իւր  
 գործերին համեմատ»:

§ 45. Պայծառակերպութիւն Վրիստոսի:  
 (ՄԵՏԹ. ԺԵ. 1—13. ՄԵՐԿ. Թ. 1—14. ԴՈՒԿ. Թ. 23—36.)

Թէ և շատ անգամ աշակերտքը ականատես էին եղած Յի-  
 սուսի հրաշագործութիւններին և սրտով հաւատացած էին  
 Երբա աստուածային զօրութեանը, սակայն կարող էին թու-  
 լանալ հաւատի մէջ և յուսահատիլ, երբ տեսնէին Տիրոջ  
 կրելու նախատինքը, չարչարանքն ու մահը: Որպէս զի հաս-  
 տատ մնային նոքա հաւատի մէջ, Փրկիչը չարչարանքից յա-  
 ռաջ կամեցաւ ցոյց տալ նոցա Խւր աստուածային փառքը:

Երբ Փրկիչպէս—Վեսարիայից Յիսուս եկաւ Պալիւեա,  
 առաւ Խւր հետ Պետրոսը, Յակոբոսը և Յովհաննէսը, և վեր  
 ելաւ Թաբոր լեռան գլուխը: Աղօթելու ժամանակ, յանկարծ  
 Երբա կերպարանքը փոխուեցաւ և երեսը արեգակի պէս լու-  
 սաւորուեցաւ, և հանդերձքը ձիւնի պէս սպիտակացան: Մի-  
 անգամայն Մովսէս և Լւղիա մարգարէքը երկնային փառքով  
 երևեցան և սկսան խօսիլ Յիսուսի հետ՝ Երբա փրկագործ  
 չարչարանաց և մահուան վերայ, որ պիտի կրէր Ես Երու-  
 սաղէմի մէջ: Այս փառաւորութեան վերայ հիացած մնացել  
 էին աշակերտքը. Պետրոսը, տեսնելով որ Մովսէս և Լւղիան  
 կամենումէին հեռանալ Յիսուսից, իւր սովորական ջերմու-

Թեամբ աշխատեց երկարել այդ սքանչելահարա հանդէսը, ուստի և ասաց. «Տէր, բարւոք է մեզ այստեղ մնալ. եթէ կամիս՝ երեք տաղաւար շինենք. մինը Վեդ, մինը Մովսէսին և միւսը Աղիային»: Այս խօսքի մէջ մի լուսաւոր ամոզ հովանի եղաւ նոցա վերայ և ամալից ձայն եկաւ. «Դա է Որդի իմ ընտրեալ, ընդ որ հաճեցայ, Գմնա լուսարուք»: Այդ երկնացին ձայնը սարսափ ձգեց աշակերաների սիրարը և նոքա երկիւղեց երեսի վերայ ընկան: Յիսուս քաջալերեց նորանց, ասելով. «յոսն կացեք, և մի երկնչեք». նոքա վեր կացան և տեսան ոչ ոք չկար բաց ի Յիսուսից: Սարից իջանելու ժամանակ, Տէրը հրամայեց նոցա որ այդ տեսիլքը մինչև իւր յարութիւնը ոչ ոքի չպատմեն:

§ 46. Դիւա հար լուսնոտի բժշկութիւնը:  
(ՄՄՏԹ. ԺԵ. 14—21. ՄՄՄ. Թ. 14—30. ԳՈՒԿ. Թ. 37—43.)

Պայծառակերպութենից յետոյ, երբ Յիսուս իջանումէր սարից, տեսաւ որ միւս աշակերտքը մեծ հակաձառութեան մէջ էին ժողովրդի և դպիրներին հետ: Արբ կամեցաւ իմանալ այդ հակառակութեան պատճառը, ժողովրդի միջեց մի մարդ յառաջ գնաց Նորան և ծունկ չոքած խօսեց այսպէս. «Վարդապետ, ողորմիր որդոցս, որ չարաչար տանջվումէ դիւահարութեամբ. ամենայն անգամ, երբ բռնվումէ այդ հիւանդութեամբ, փրփուր է արձակում բերանից, կրճտումէ ատամները, այլև շատ անգամ ձգումէ իւրեան կրակը կամ ջուրը. բերի նորան աշակերաներիդ մօտ, բայց նոքա չկարողացան բժշկել»: Տէրը հրամայեց որ հիւանդը իւր մօտ բերին: Այն ինչ դիւահարը աչք ձգեց Յիսուսի վերայ, սաստիկ կատաղեցաւ. ընկաւ գետնին և թաւարկումէր, փրփուր թափելով բերանից: Փրկիչը հարցրեց հիւանդի ծնողից թէ՛ «Գանի՞ ժամանակ է որ պատահել է դորան այդ հիւանդութիւնը»: «Մանկութենից, պատասխանեց վշտազին հայրը, և եթէ կարող ես Տէր, օգնիր մեզ, զթալով մեր վերայ»: «Հաւատացո-

ղին ամէն բան կարելի է», ասաց նորան Յիսուս: Տառապեալ հայրը, արտասուքը աչքերում, բոլորովին վստահացած Յիսուսի աստուածային զորութեան վերայ, աղաղակեց. «Հաւատումեմ, Տէր, օգնիր անհաւատութեանս»: Փրկիչը սաստեց պիղծ դէին և ասաց. «Ո՛վ համր և խուլ դե, դուրս եկ դորանից և այլևս չմտանես դորա մէջ»: Նայն բոպէին դեր այնպէս սաստիկ կատաղութեամբ թափ տուաւ հիւանդը և աղաղակելով դուրս եկաւ նորանից, որ նա բոլորովին թուլացած մեռելի նման տարածուեցաւ գետնին, մինչև շատերը կարծեցին թէ մեռաւ: Բայց Յիսուս բռնեց նորա ձեռքը բարձրացրեց և իսպառ առողջացած պատանին յանձնեց հօրը: Այդ բանից յետոյ, Յիսուս հեռացաւ ամբոխից և տուն գնաց. աշակերտքը առանձին հարցրին թէ ինչո՞ւ ինքեանք չկարողացան բժշկել դիւահարը: «Ձեր թերահաւատութեան համար, պատասխանեց Յիսուս, բայց այս ազգը (դիւաց) հալածվումէ միայն աղօթքով և պահքով»:

§ 47. Օրբանայի հարկատուութիւն յօգուտ տաճարի:  
(ՄՄՏԹ. ԺԵ. 24—27.)

Մովսիսական օրէնքով իւրաքանչիւր մարդ, երբ քսան տարին լրացած էր, պարտական էր երկու դրամ հարկ աւլ յօգուտ վկայութեան խորանի. այդ օրէնքը հաստատա պահվումէր և տաճարը շինելուց յետոյ, և նշանակած հարկահանները շքումէին ամենայն տեղ այդ հարկը ժողովելու:

Երբ Յիսուս պայծառակերպութենից յետոյ դարձել էր Վափառնաում, այդ հարկապահանքը մօտեցան Պետրոսին և ասացին. «Ձեր Վարդապետը կը տայ արդեօք երկդրամեանը»: «Այո՛ կը տայ», պատասխանեց Պետրոսը. և ինքն տուն մտաւ Յիսուսին ասելու: Սակայն Պետրոսի խօսելուց յառաջ, Տէրը հարցրեց նորան. «Ի՞նչպէս է թվում քեզ, Սիմոն, երկրի թափառողքը ումից են հարկ առնում, իւրեանց որդիներին թէ օտարներից»: «Օտարներից», պատասխանեց Պետրոս: «Ապա

ուրեմն ազատ են որդիքը <sup>1)</sup>, ասաց Տէրը. բայց որ գայթակ-  
ղութեան պատճառ չլինինք նոցա, դնա՛ ծով, կարթ ձգիր և  
առաջին ձուկը որ բռնես, վեր առ բացիր բերանը և այն տեղ  
կը գաանես մի սատեր (չորս դրամ<sup>2)</sup>), բեր այն և վճարիր հար-  
կը Խմ և քո տեղ<sup>3)</sup>:

§ 48. Խորատ և օրինակ խոնարհութեան և նե-  
րողամտութեան:  
(ՄԵՏԹ. ԺԲ. 1—10. 21—35. ՄԱՐԿ. Թ. 32—47. ՂՈՒԿ. Թ. 46—48. ԺԼ. 1—4.)

Թաքորից Ափառնառում գնալու ժամանակ, ճանապարհ-  
հին Յիսուսի աշակերտքը ծածուկ վեճումէին միմեանց հետ  
թէ ո՛վ նոցանից մեծ պէտք է լինի երկնքի արքայութեան մէջ:  
Ելք որ տուն եկան, Յիսուս հարցրեց նոցա. «Ի՞նչ վեճ ու-  
նէիք ճանապարհին»: Աշակերտքը, տեսնելով թէ իւրեանց  
խորհուրդը յայտնի էր ամենագէտ Տիրոջը, չէ շնեցին խօսիչ  
պատասխանել, բայց յետոյ հարցրին. «Մեզանից ո՛վ մեծ կը  
լինի երկնքի արքայութեան մէջ»: Յիսուս այսպէս պատաս-  
խանեց. «Ո՛վ որ կամենումէ առաջինը լինել, թող լինի նա  
ամենից վերջինը և ամենեցուն ծառայ»: Այս խօսքը առա-  
ւել բացայայտ կացուցանելու համար Խոր մօտ կանչեց մի մա-  
նուկ, առաւ գիրկը և ասաց աշակերտներին. «Ճշմարտն ա-  
սեմ ձեզ, եթէ այդ մանուկի պէս խոնարհ ու անմեղ չլինիք,  
չէք կարող մտանել երկնքի արքայութիւնը. ո՛վ որ իւրեան այդ  
մանուկի պէս կը խոնարհեցնէ, նա մեծ կը լինի երկնքի ար-  
քայութեան մէջ. և ո՛վ մի այսպիսի մանուկ ընդունի Խմ անու-  
նով, նա Ինձ կ'ընդունի <sup>2)</sup>: Ապա այլևս կարևոր խրատներ ա-

1) Եթէ երկրի թագաւորքը հարկ չեն առնում իւրեանց որդիներէն, ապա ուրեմն  
ես ևս, որպէս Որդի Աստուծոյ, ազատ եմ այն հարկէն, որ Աստուծոյ անունով ժո-  
ղովումեն տաճարի համար:

2) Այս խօսքերը երկու հարկաւոր և ծանրակշիռ պարտականութիւն են դնում մեր վե-  
րայ: Առաջինը՝ հոգ տանել մեր մանուկների բարեք դաստիարակութեան մասին, նոյն  
խի նոցա մատաղ հասակից սկսած: Երկրորդը՝ մեծ զգուշութիւն ունենալ որ չլի-  
նի թէ գործով կամ խօսքով գայթակղութեան պատճառ լինէինք նոցա, որով և վնաս

ւանդեց նոցա զգուշանալ և հեռանալ գայթակղութեան որ  
և իցէ պատճառներէն: «Եթէ մի մարդ, ասաց, գայթակղեց-  
նէ Ինձ հաւատացողներէն մինը, լաւ է որ մի ջաղացի քար  
կախուի նորա վզից և ծովն խորքում խեղդուի: Վայ այն  
մարդուն, որոյ ձեռքով գայթակղութիւն կը գայ: Թէ որ ձեռք  
կամ ոտք քեզ գայթակղեցնումէ, կտրիր և ձգիր քեզանից. լաւ  
է քեզ միաձեռանի կամ կաղ մտանես կեանքը, քան թէ երկու  
ձեռք և երկու ոտք ունենաս և յաւիտենական կրակի մէջ ընկ-  
նիս. և թէ որ աչքը քեզ գայթակղեցնումէ, հանիր նորան և  
ձգիր քեզանից. լաւ է միականի մտանես կեանքը, քան թէ եր-  
կու աչք ունենաս և զեհենի կրակը ընկնիս <sup>1)</sup>: Չգուշացէք  
որ այդ փոքրներից մինը չանարգէք. ասումեմ ձեզ որ նոցա  
հրեշտակները երկնքում միշտ տեսնումեն Խմ երկնաւոր շօր  
երեսը»: \

Այն ժամանակ մօտեցաւ Նորան Պետրոսը և, կամենալով  
խմանալ թէ մինչև ո՞ր աստիճան երեխայական անմեղութիւն  
և խոնարհութիւն պէտք է ունենալ, ասաց. «Տէր, եթէ եղ-  
բայրս ընդդէմ իմ մեղանչէ, քանի՞ անգամ թողութիւն տամ  
նորան. կարելի՞ է մինչև եօթն անգամ»: «Ո՛չ թէ եօթն ան-  
գամ, պատասխանեց Յիսուս, այլ եօթանասուն անգամ եօթն  
(անթիւ)»: Բայց որպէս զի խոր տպաւորուէր նոցա մտքում  
այդ ճշմարտութիւնը, թէ պէտք է ողորմած <sup>2)</sup> և ներող լինել  
դէպի ընկերք, պատմեց Յիսուս հետեւեալ առակը. «Մի թա-  
գաւոր, ասաց, կամեցաւ հաշիւ առնուլ իւր ծառաներից:

սէինք նոցա մատաղ հասակին, որովհետեւ նոքա զիւրապատրաստ են ամենայն բան ըն-  
դունել և խոր տպաւորել իւրեանց մտքում: Կայսպէս սարտականութիւն են դնում մեր  
վերայ, դաստիարակել նորանց համբերութեամբ և քաղցրութեամբ: Վասն զի ո՛վ որ այս  
մեծ և աստուածահաս ճոյզ գործը բարեխղճութեամբ կատարէ, պէտք է իմանայ որ Քրիս-  
տոսի պատուէրն է կատարում:

1) Այդ խօսքերից հասկանալի է ոչ թէ մարմնի անդամները պէտք է կտրել այլ  
նոյն խի կրքերը, որ ձգումեն մեզ մեղքի մջ: Պէտք է հաստատ ու վճռական կամ-  
բով հեռանալ այն ամենայն պատճառներից, որք կարող էին արգելք լինել մեր հա-  
ւատին կամ մեր բարեպաշտութեանը. թէև դժբա լինէին սիրելի, հարկաւոր կամ օգ-  
տակար. ինչպէս գործրինակ մեր աչքը, ձեռքը կամ ոտքը:

Վոցանից մինը պարտական էր նորան տանն հազար քանքար. և որովհետև սա կարողութիւն չունէր պարտքը վճարելու, տէրը հրամայեց վաճառել նորան անով տեղով, որպէս զև կարող լինի պարտքը հատուցանել: Բայց ծառան ընկաւ թագաւորի ոտքը և աղաչումէր որ փոքր ինչ համբերէ, մինչև որ կարողանայ պարտքը վճարել: Թագաւորի դուժը շարժեցաւ, ներեց նորա պարտքը և արձակեց: Այս պարտապանը, դուրս գալով թագաւորի մօտից, հանդիպեցաւ իւր ծառայակիցնեցից մինին, որ պարտ էր նորան հարկուր դահեկան. բռնեց նորան և խեղդելով պահանջումէր պարտքը: Պարտապանը ընկաւ նորա ոտքը և աղաչումէր, ասելով. Սակաւ ինչ համբերիր, բոլորը կը հատուցանեմ: Բայց սա անգթութեամբ չկամեցաւ սպասել, տարաւ նորան բանտ դնել տուաւ: Այս որ տեսան նորա ծառայակիցքը շատ ցաւեցան և գնացին մի առ մի իւրեանց տիրոջը պատմեցին: Բարկացաւ թագաւորը. հրամայեց բերել նորան իւր առաջ և խօսեց այսպէս. Ծառայ չար, ես լսեցի աղաչանքդ և ներեցի քո բոլոր պարտքը. միթէ չէ՞ իր կարող օրինակ առնուլ ինձանից և ողորմել քո ընկերին: Ապա տուաւ նորան դահիճների ձեռքը և հրամայեց որ չթողուն, մինչև որ բոլոր պարտքը վճարէ: Յետոյ յաւելացրեց Յիսուս. «Վոյնպէս պիտի առնէ ձեզ խեղճ և անհոգութեամբ թողութիւն չապք»:

§ 49. Տօն տաղաւարաճարաց. Եօթանասուն և երկու աշակերաների ընտրութիւնը:

(Գ.Ու.Կ. Թ. 51—56. ՅՈՎ. Է. Է.)

Տաղաւարաճարաց տօնը, որ շրէից մէջ կատարվումէր եօթն օր, արդէն մօտեցած էր: Ոմանք Յիսուսի ազգականներից, որ չէին հաւատացած նորա Աստուծութեանը, յորդորումէին Վորան երթալ Երուսաղէմ և այնտեղ յայտնել իւր անձը աշխարհին: «Ժամանակս դեռ հասած չէ, պատասխանեց նոցա Յիսուս, բայց ձեր ժամանակը միշտ պատրաստ է:

Աշխարհը չէ կարող ձեզ առել, բայց ինձ առումէ. որովհետև ես վկայումեմ նորա համար թէ նորա գործերը չար են. դուք գնացէք այն տօնը, բայց ես գնալու չեմ»: Սակայն նոցա գնալուց յետոյ, Խնքն ևս աշակերտներէ հետ ճանապարհ բռնեց Սամարիայի միջով դէպի շրէաստան. և յառաջագոյն իւր աշակերտներից երկուսը՝ Յակոբոսը և Յովհաննէսը մի քաղաք ուղարկեց որ իջևանելու տեղ պատրաստեն: Իսկ Սամարացիք չընդունեցին Վորան, վասն զի զիտէին որ զիմում էր Վա գէպի Երուսաղէմ<sup>1)</sup>: Այս մերժումը ծանր թուեցաւ Չեբեդիայի որդիներին. նոքա բորբոքուած բարկութեամբ հրաման խնդրեցին Յիսուսից որ երկնքից կրակ իջեցնեն և այրեն նորանց: Բայց Յիսուս արդար յանդիմանութեամբ պատասխանեց նոցա. «Չգիտէք դուք թէ ինչ ոգւոյ էք. (քրիստոնէութեան հոգին՝ է հոգի հեղութեան և ներողամտութեան). մարդոյ Որդին եկած չէ կրուսանել մարդկան հոգիքը, այլ՝ կեցուցանել». և գնացին մի այլ զիւր:

Այս ճանապարհորդութեան ժամանակ Յիսուս հաւատացեալներէ միջից ընտրեց այլևս եօթանասուն և երկու աշակերտ. և երկու երկու ուղարկեց նորանց ամենայն քաղաքներ և գիւղեր աւետարանելու երկնքի արքայութիւնը, հրահանգելով նոցա նոյն իսկ խրատները, որ մի ժամանակ տուած էր երկոտասան առաքեալներին:

Տաղաւարաճարաց տօնի չորրորդ օրը գնաց Յիսուս Երուսաղէմի տաճարը, սկսաւ հրատարակաւ քարոզել և ուսուցանել ժողովուրդը: Ամենեքեան մեծ զարմանքով լսումէին Վորան և ասումէին. «Աւստի՞ գիտէ Սա Սուրբ Գիրքը որ բնաւ ուսած չէ»: «Իմ վարդապետութիւնը իմն չէ, պատասխանեց նոցա Յիսուս, այլ Վորանն է՝ որ ուղարկեց ինձ: Ո՞վ որ կամի կատարել Վորա կամքը, նա կ'իմանայ թէ իմ վարդապետութիւնս արդեօք Աստուծոց է թէ ես ինձանից եմ լսօտում: Ո՞վ որ իւր անձնից է լսօտում, իւր անձին համար փառք է որոնում. բայց նա, որ իւր Առաքողի փառքն է որոնում՝ ճշմա-

1) Թեպետև Հրէայք պիճութիւն էին համարում Սամարացոց հետ խառնուիլը, սակայն Գալիլեայից Երուսաղէմ գնալու ժամանակին, նոցա երկրի միջով էին անցնում, այն մտքով թէ կարող էին տաճարում սրբուիլ: Բայց շատ սակաւ էր պատահում նոցա նոյն ճանապարհով յետ դառնալ, որպէս զի կրկին չպիճուէին. նորա անցանումէին Յորդանանի արեւելեան կողմով: Եւ այս շատ վշտացնումէր Սամարացիքը:

րիտ է և անիրաւութիւն չկայ նորա մէջ<sup>1)</sup> : Տօնի վերջին օրը, որ աւելի մեծահանգէս տօնախմբումէին Հրէայք, Յիսուս կրկին գնաց տաճարը և, որպէս զի բազմութեանը լսելն լինէր իւր խօսքը, բարձրաձայն աղաղակեց. «Եթէ որ ծարաւի է, ասաց, թող գայ իմ մօտ և ըմպէ. և Նորանից կենդանի ջրերի գետեր կը բղխեն<sup>1)</sup>» : Ժողովուրդի միջից շատերը, լսելով Նորա երկնաւոր վարդապետութիւնը, հաւատացին Նորան, և ասումէին. «Սա է ճշմարիտ մարգարէն» . ոմանք ասումէին. «Սա է Վրիստոսն» . իսկ այլք ասումէին. «Միթէ Գալիլիացից պիտի գայ Վրիստոս. միթէ չէ՞ վկայում Ս. Գիւրքը որ Գաւթի զաւակից և Բեթղէմիցի, ուր ծնած էր Գաւթիթ, պէտք է գայ Վրիստոս» : Եւս պատճառով տարածայնութիւն ծագեցաւ ժողովուրդի մէջ. և այս առաւել գրգռեց նախանձամիտ Փարիսեցիների և քահանայապետների բարկութիւնը : Նորա իսկոյն սպասաւորներ ուղարկեցին որ բռնեն Յիսուսը և բերեն ծերակուտի առաջը : Եւսն այդ սպասաւորքը, բայց չհամարձակեցան ձեռք բարձրացնել Յիսուսի վերայ. յետ դարձան, և ասացին քահանայապետներին և Փարիսեցիներին. «Ոչ երբէք այնպէս խօսած է մի մարդ, որպէս այն մարդը» : Բարկացան Փարիսեցիք. «Միթէ և դո՞ւք մոլորութեցաք, ասացին, միթէ իշխաններից կամ Փարիսեցիներից մինը հաւատանց նորան. բայց միայն այն ուսմիկ ժողովուրդը, որ օրէնքին տեղեակ չէ և նշոված են» : Նիկողիմոսը, որ արդէն յտաջազոյն եկած էր ծածուկ Յիսուսի մօտ և Նորա ասաւորածային վարդապետութիւնքը լսած ու հաւատացած էր, պաշտպան հանդիսացաւ իւր Վարդապետին, և ասաց նոցա. «Մեր օրէնքով անկարելի է դատաւարտել մի մարդ առանց լսելու նորան և քննելու նորա գործերը» : «Միթէ և դու Գալիլիացի՞ ես, ծաղրելով պատասխանեցին նորան, քննիր և տես որ Գալիլիայից երբէք մարգարէ եղած չէ» : Եւս խօսքի վերայ ժողովը արձակուեցաւ : Իսկ Յիսուս հեռացաւ զնայ գէպի Ձիթենեաց սարը :

1) Եւս խօսքերով Յիսուս այլարանօրէն հասկացնումը Հոգւոյն սրբոյ յորդաւատ շնորհների մասին, որ յետ իւր համարանաւոյն ընդունելոց էին հաւատացեալքը :

§ 50. Աինն մեղաւոր :  
(ՅՈՒՃ. Ը.)

Տաղաւարահարաց տօնի միւս օրը առաւօտուն Յիսուս գնաց տաճարը և սկսաւ իշխանաբար ուսուցանել ժողովուրդը : Գալիլք և Փարիսեցիք, կամենալով փորձել Նորան, բերին և յանդիման կացուցին Նորան մի կին, ծանր մեղքի մէջ բռնուած, և ասացին. «Վարդապետ, Մովսէսը օրէնքի մէջ պատուիրեց մեզ այսպիսի մեղաւորքը քարկոծել. դու ի՞նչ կ'ասես այս մասին» : Նորա մտածումէին որ եթէ Յիսուս, որ միշտ ողորմած էր դէպի թշուառացեալքը, ազատէ այդ մեղաւոր կինը, այն ժամանակ իբրև օրէնքի հակառակող՝ մահուան դատաւարտեն Նորան : Իսկ Յիսուս նենգամիտ Փարիսեցիներին չպատասխանեց. այլ ցած նայելով գրումէր գետնի վերայ : Իսկ երբ շատ ստիպեցին Նորան, գլուխը բարձրացրեց և ասաց. «Չեզանից ո՞վ որ անմեղ է՝ թող առաջին քարը նա ձգէ դորա վերայ» . և դարձեալ ցած նայելով գրումէր գետնի վերայ<sup>1)</sup> : Եւս պատասխանի վերայ շփոթուեցան ամենեքեան, ծերերից սկսած մինչև վերջինը, և ամօթապարտ եղած մի ըստ միջէ հեռացան այն տեղից. և մնաց Յիսուս միայնակ և մեղաւոր կինը նորա առաջև կանգնած : Գարձաւ Յիսուս և ասաց. «Աին դու, ո՞ւր են նոքա. միթէ ոչ ոք քեզ չդատաւարտեց» : «Ո՛չ որ Տէր», զողալով պատասխանեց թշուառ կինը : «Եւ Ես չեմ դատաւարտում քեզ, ասաց Փրկիչը, զնա՛ և այսուհետեւ մի մեղանչեր» :

Մի այլ անգամ Փրկիչը, կանգնած լինելով տաճարի գանձատանը, ասաց. «Ն՛ս եմ լոյս աշխարհի» : Եւս բանի վերայ Փարիսեցիք ասացին նորան. «Ի՞նչ ես քո անձիդ համար վկայում. քո վկայութիւնդ ճշմարիտ չէ» : Յիսուս պատասխան տուաւ և ասաց. «Ն՛ս եմ որ վկայում եմ իմ համար և վկայումէ չայրը, որ ուղարկեց ինձ» : «Ո՛ւր է քո չայրը», հարց-

1) չաւանական կարծիք է Սուրբ չարց թէ Յիսուս գրումէր ամբաստանող Փարիսեցիների գաղտնի մեղքերը :

րին նորան: «Գու՛ք ոչ ինձ գիտէք և ոչ իմ շայրը, պատասխանեց Յիսուս: Ես գնումեմ և դուք կը որոնէք ինձ. և ձեր մեղքի մէջ կը մեռանիք: Երբ որ կը բարձրացնէք մարդոյ Որդին (խաչի վերայ), այն ժամանակ կ'իմանաք թէ Ես եմ (Սեսիան) և թէ Ինքս ինձանից ոչինչ չեմ գործում, այլ խօսումեմ այն՝ ինչպէս սովորեցրեց ինձ շայրս»: Եւ յի խօսեցրից յետոյ շատերը հաւատացին Նորան. և Յիսուս ասաց այս նոր հաւատացողներին. «Եթէ դուք հաստատ կը մնաք իմ խօսքիս մէջ, իմ ճշմարիտ աշակերտներս էք. կը ճանաչէք ճշմարտութիւնը և ճշմարտութիւնը կ'աղատէ ձեզ»: Փարիսեցիք դարձեալ մէջ մտան և յանդգնաբար ասացին. «Մէք Լբրահամի զաւակներն ենք և երբէք մի մարդու ծառայ եղած չենք, ապա ինչպէս ես ասում թէ աղատ կը լինիք»: Ղ'Ղմարիտն ասեմ ձեզ, ասաց Յիսուս, ամէն մարդ որ մեղք է գործում՝ ծառայ է մեղքի: Եթէ դուք Լբրահամի զաւակները լինէիք՝ Լբրահամի գործերը կը գործէիք. բայց այժմ կամիք սպանանել ինձ, որովհետև յայտնեցի ձեզ այն ճշմարտութիւնը որ լսեցի իմ շօրից, բայց Լբրահամը այդ բանը չարեց. Գու՛ք (ձեր) հայր սատանայից էք և ձեր հօր ցանկութիւնը կամիք կատարել. նա սկզբից մարդասպան էր և չմնաց ճշմարտութեան մէջ, որովհետև ճշմարտութիւն չկայ նորա մէջ. նա սուտ է և ստույգութեան հայր: Իսկ Ես որ ճշմարտութիւն եմ խօսում՝ չէք հաւատում ինձ: Ղ'Ղմարիտն ասեմ ձեզ, թէ որ մինը պահէ իմ խօսքը՝ յաւիտեան մեռանելու չէ»: շրէայք ասացին նորան. «Եւ յիմ իմացանք որ Վո մէջ դե կայ: Լբրահամը որպէս և մարգարէքը մեռան, բայց դու ասումես թէ ով իմ խօսքը պահէ՝ յաւիտեան մեռանելու չէ. մի՞թէ դու աւելի մե՞ծ ես քան թէ մեր հայր Լբրահամը, որ մեռաւ և մարգարէքը նոյնպէս մեռան, ապա Գու՛ք եղ ի՞նչ ես կարծում»: Եթէ Ես փառաւորումեմ իմ անձը, պատասխանեց Յիսուս, իմ փառքը ոչինչ է. ապա շայրն է, որ ինձ փառաւորումէ, որը, ասումէք, թէ մեր Եստուածն է: Չեր Լբրահամ հայրը ցանկացաւ տեսնել իմ օրը, տեսաւ և ուրախացաւ»: Եւ յի բանի վերայ շրէայք ասացին նորան. «Գե՛տ ևս յիտուն տարեկան չկաս, և Լբրահամը տեսել ես»: Ղ'Ղմարիտն ասեմ ձեզ, պատասխանեց Յիսուս, յառաջ քան զլինել Լբրահամու եմ Վոս». (յաւիտենական գոյութեամբ իբրև Որդի Եստուծոյ): Եւ յի խօսքի վերայ կատաղեցան Փարիսեցիք՝ և կամեցան քարկոծել Նորան. բայց Յիսուս ամենակարող զօրութեամբ անցաւ նոցա միջով և դուրս գնաց տաճարից:

§ 51. Սամարացւոյ առակը:  
(Ղ.ՈՒԿ. Ժ. 25—37)

Մի օրինական, կամենալով փորձել Յիսուսը, մօտեցաւ Նորան և ասաց. «Վարդապետ՝ ի՞նչ պիտի գործեմ որ յաւիտենական կեանքը ժառանգեմ»: Յիսուս ասաց. «Օրէքի մէջ ի՞նչ է գրած»: Օրինականը պատասխանեց. «Սիրեցես զՏէր Եստուած քո յամենայն սրտէքումէ, և սիրեցես զընկերքո իբրև զանձնք»: «Ուղիղ պատասխանեցիր, ասաց Տէրը, կատարիր այդ, կը ստանաս յաւիտենական կեանքը»: Օրինականը հարցրեց. «Ո՞վ է իմ ընկերը»: Յիսուս, իմանալով կարծիքը օրինականի, որ իւրեան ընկեր ճանաչումէր միայն իւր հաւատակիցքը, հետևեալ սրտաշարժ առակով յայտնեց նորան որ անխտիր ամենայն մարդ պէտք է ճանաչենք մեզ ընկեր: «Մի մարդ, ասաց, Երուսաղեմից գնումէր Երիզով. ճանապարհին նորա վերայ աւազակներ յարձակուեցան, մերկացուցին նորան, վերադրեցին և կիսամահ թողին ու գնացին: Նոյն ճանապարհով անցանումէր մի քահանայ, որ տեսաւ այդ ողորմելին և, առանց մի հոգ տանելու, թողեց ու գնաց: Յետոյ անցաւ մի Վետացի, և սա նոյնպէս անհոգութեամբ զանց արեց ու գնաց: Վերջապէս մի Սամարացի, անցանելու ժամանակ, տեսաւ նորան, գութը շարժեցաւ. մօտեցաւ, վէրքերի վերայ ձէթ և զինի ածեց ու կապեց և, զնելով իւր գրաստի վերայ, տարաւ նորան պանդոկ և դարմանեց: Երկրորդ օրը պանդոկից երթալու ժամանակ պանդոկապետին երկու դահեկան սուաւ և ասաց. «Գարման տար սորան, և եթէ աւելի ծախք ունենաս սորա վերայ, միւսանդամ դալստեանս կը հատուցանեմ քեզ»: Եւարտելով այս առակը Յիսուս հարցրեց օրինականին. «Ուրեմն այս երէքից ո՞վ մերձաւոր ընկեր եղաւ վերաւորուածին»: «Ո՞վ որ ողորմեց նորան», պատասխանեց օրինականը: «Ուրեմն գնա, ասաց Յիսուս, և դու արա՛ այնպէս <sup>1)</sup>»:

<sup>1)</sup> Եւս բարերար Սամարացւոյն առակը, ըստ մեկնութեան

§ 52. Մարթա և Մարիամ:

(ԼՈՒԿ. Ժ. 38—42.)

Տաղաւարահարաց տօնից յետոյ, Յիսուս Քրիստոս գնաց Բեթանիա գիւղը, ուր մի բարեպաշտ կին, Մարթա անուն, մեծ յարգանքով ընդունեց Նորան իւր տունը. և սկսաւ մեծ պատրանտութիւն տեսնել որ արժանապէս պատուախիբ իւր գերագոյն Տէրը: Իսկ նորա քոյր Մարիամը անշարժ նստած էր Յիսուսի ոտքերի մօտ և ականջ էր գնում Նորա աստուածային վարդապետութեանը: Մարթան, տհաճութիւն ցոյց

Սուրբ շարք Եկեղեցւոյ, յայտնապէս ցուցանումէ մարդկային ազգի փրկութիւնը ի ձեռն միածնի Որդւոյն Աստուծոյ՝ Յիսուսի Քրիստոսի: Եւ յն մարդը, որ Երուսաղեմից գնումէր Երիւքով և աւազակների ձեռքն ընկաւ, նշանակումէ մարդկութիւնը, որ նախահօր մեղքով հեռացաւ զրախտի երանական կեանքից և մերկացաւ աստուածային շնորհից. ինքնօրէն յօժարութեամբ մատնուեցաւ աւազակներին, այսինքն՝ իւր կիրքերին, որ մեղաց վէրքերով վերաւորեցին նորա հոգին և թողին կիսամահ: Ոչ քահանայապետութիւնն և ոչ Ղևտական կամ այլապէս ասել Մովսիսական օրէնքը և մարգարէից գրուածքը ձեռնհաս գտանուեցան մարդկութեան հոգեկան վէրքերը բժշկելը մինչև եկաւ Միածին Որդին Աստուծոյ և կատարեց նորա փրկութիւնը: Սամարացի կոչեց Նա իւր անձը, որով նախատում էին Նորան շրէպք. գթացաւ թշուառացելոյն վերայ. պատեց նորա վէրքերը, ձէթ և գինի անելով վերան, որ նշանակումէր թէ հոգին պիտի օծուէր շնորհօք որդեգրութեան և առողջանար Նորա կենարար արիւնով. և ապա խաչի վերայ տարաւ նորան իւր սուրբ Եկեղեցին: Յետոյ ինքն համբառնալով առ շայր յանձնեց նորան եկեղեցւոյ առաջնորդներին, վերակացու, տեսուչ և խնամակալ լինել նորան, որպէս զի միւսանգամ աւազակները չտիրեն և իսպառ չպանեն նորան: Իբրև հրահանգ տուաւ նոցա ձեռքը ին և Նոր կտակարանը և խոստացաւ որ եթէ նոքա, բաց ի այդ տիրահաստատ միջոցներից, իւրեանց յատուկ խոհականութեամբ և ջերմեռանդութեամբ կ'աշխատին այլևս առանձին միտթարութիւն պատրաստել մեղաւորին և կ'իւրացնեն նորա փրկութեան ճանապարհը, Նա, միւսանգամ գալստեանը, վերջին դատաստանի օրը, փոխարէնը առատօրէն կը հատուցանէ նոցա:

տարով այդ մասին որ Մարիամը հիւրի սպասաւորութիւնը թողել էր միայն իւր վերայ, եկաւ և ընտանեբար զանգատեց Յիսուսին, ասելով. «Տէր՝ ոչինչ փոյթ չէ՞ Վեղ որ իմ քոյրը տնտեսութեան գործը թողել է ինձ միայն. ասս որ դայ օգնէ ինձ»: «Մարթա, Մարթա, պատասխանեց Յիսուս, դու մեծ հոգացողութիւն ունիս և շատ բաներով զբաղած ես. մինչդեռ միայն մի բան է հարկաւոր (հոգ փրկութեան): Մարիամը ընտրել է իւր համար աւելի օգտակար և հարկաւոր մասն, որ միշտ իւր հետ կը մնայ»:

§ 53. Ի ծնէ կուրի բժշկութիւնը:

(ՅՈՒՆ. Թ. 1—38.)

Փրկիչը, Երուսաղեմի փողոցների միջով անցանելու ժամանակին, հանդիպեցաւ մի մարդու, որ ի ծնէ կոյր էր: Աշակերտքը հարցրին նորան. «Ուրբի, ի՞նչ, թէ հօր ու մօր մեղքն է, որ այդ մարդը կոյր է ծնած»: «Ոչ իւր և ոչ հօր ու մօր մեղքն է, պատասխանեց Յիսուս, այլ կոյր ծնաւ՝ որպէս զի Աստուծոյ գործքը յայտնի լինին գորա վերայ»: Այս ասելով, թքեց գետնին, կաւ շինեց, ծեփեց կուրի աչքերը: «Գնա, ասաց, Սելովամի աւազանի մէջ լուացուիր»: Գնաց կոյրը լուացուեցաւ և յետ դարձաւ լուսաւոր աչքերով: Նորա զրացիները և ծանօթները, զարմանալով այդ բանի վերայ, չէին կարող հաւատալ թէ նա մի և նոյն մարդն է, որ յառաջուց ասել էին իբրև կոյր մուրացիան: Ոմանք հաստատումէին, թէ «Նա է», իսկ այլք՝ «Ոչ, նա չէ, այլ նման է նորան». բայց ինքն կոյրը ասումէր թէ «Նա եմ»: «Ուրեմն ի՞նչպէս բացուեցան աչքերդ», հարցրին նորան: Պատասխանեց կոյրը. «Մի մարդ, որ Յիսուս են ասում, կաւ շինեց, ծեփեց աչքերս և ասաց ինձ. գնա Սելովամի լուացուիր. գնացի, լուացուեցայ և ահա տեսնումեմ»: Արովհետև այս հրաշագործութիւնը պատահած էր շաբաթ օրի մէջ, շրէպք առան աչքը բացած կոյրը և տարան Փարիսեցւոց մօտ: Փարիսեցիք հարցրին նո-

րան թէ ինչպէս սկսաւ տեսնել: „Ասա զրեց աչքերիս վերայ, պատասխանեց, լուսոցուեցայ և տեսնուեմ“: Փարիսեցիք սկսան վիճել իւրեանց մէջ Յիսուսի մասին. ոմանք ասումէին. „Այն մարդը Աստուծոց չէ, ըստ որում շաբաթ օրերը չէ պահում“. այլք ասումէին. „Ի՞նչպէս կարող է մեղաւոր մարդը հրաշքներ գործել“. և այս մասին հերձուած կար նոցա մէջ: Արևին հարցրին բժշկուած կուրին. „Իսկ դու ի՞նչ կ'ասես նորա մասին, որովհետեւ նա լուսաւորեց քո աչքերդ“. և նա ասաց թէ „Մարդարէ է“: Իսկ շաբաթ չէին հաւատում որ նա երբեմն կոյր էր և այժմ տեսնուեմ. մինչև որ կոչեցին ծնողքը և հարցրին. „Սա ձեր որդին է, ճշմարիտ է որ կոյր էր ծնած, ապա ի՞նչպէս է տեսնում: Ծնողքը, երկիւղ կրելով շրէաներից, որ թշնամի էին Յիսուսին, պատասխանեցին. „Ղիտենք որ սա մեր որդին է և թէ կոյր ծնաւ. բայց թէ այժմ ինչպէս է տեսնում— կամ թէ ո՞վ է նորա աչքը բաց արել, չգիտենք. իւրեան հարցրէք, նա ինքն չափահաս մարդ է, թող ինքն խօսի իւր տեղ“: Վարձեալ կոչեցին խեղճ մարդը և ասացին. „Աստուծոյ փառք տուր (քո բժշկութեանդ համար), մէք գիտենք որ այն մարդը մեղաւոր է“: „Մեղաւոր լինելն ես չգիտեմ, պատասխանեց նա, այս միայն գիտեմ որ կոյր էի և այժմ տեսնուեմ“: Արևին հարցրին նորան. „Ի՞նչ արեց քեզ, ի՞նչպէս բացաւ աչքերդ“: „Արդէն ասացի ձեզ, պատասխանեց նա, ինչո՞ւ էք միւսանդամ հարցանում. մի թէ և դո՞ւք կամիք աշակերտ լինել նորան“: Այս պատասխանի վերայ զայրացան Փարիսեցիք, սկսան հայցոյել նորան և ասել. „Ղու եղեր նորան աշակերտ, մէք Մովսեսի աշակերտ ենք: Ղիտենք որ Աստուած Մովսեսի հետ խօսեց, բայց սորան չգիտենք թէ ուստի՞ է“: „Ղիշդ այդ է զարմանալին, պատասխանեց նա, որ դուք չգիտէք թէ ուստի է նա, բայց իմ աչքերը լուսաւորեց: Ղիտենք որ Աստուած մեղաւորներին չէ լուծւում, բայց լուծւէ նորան, որ աստուածապաշտ է և կատարում է Ղորա կամքը: Յաւիտեան լուծած չէ որ մի մարդ,

ի ծնէ կուրի աչքը բացած լինի: Եթէ այն մարդը չլինէր Աստուծոյ առաքեալ, չէր կարող այդ գործը գործել“: Փարիսեցիք, ամաչելով յանձն առնուլ իւրեանց ակն յանդիման տկարութիւնը, զայրացած պատասխանեցին. „Ղու, որ բոլորովն մեղքի մէջ ծնած ես, կամիս վարդապետ լինել մեզ“. և դուրս վարեցին նորան: Արք այդ անցքը լսեց Յիսուս, զտաւ նորան և ասաց. „Ղու հաւատումես Աստուծոյ Որդւոյն“: „Տէր, ո՞վ է, որ հաւատամ Ղորան“, պատասխանեց նա: „Ղու տեսած ես Ղորան, ասաց Յիսուս, և Ղա է քեզ հետ խօսողը“: „Հաւատումեմ, Տէր“, ասաց նա, խոնարհեց և երկրպագութիւն տուաւ Ղորան:

§ 54. Հոգիւն քաջ:  
(ՅՈՒՆ. Ժ. 1—21.)

Ի ծնէ կոյրը բժշկելուց յետոյ, Յիսուս, յանդիմանելով Փարիսեցիքը, կոյր առաջնորդներ կոչեց նոցա և առակով հասկացրեց թէ նա է ճշմարիտ և քաջ հովիւը, որ պատրաստ է իւր անձը զոհել հօտի փրկութեան համար: „Ղշմարիտն ասեմ ձեզ, ասաց, նա գող է և աւազակ, որ մտանում է ոչխարների գաւիթը այլ ճանապարհով և ոչ դռնով. բայց նա, որ ազատաբար մտանում է դռնով, հովիւ է ոչխարների. դռնապանը նորա համար բացում է դուռն և ոչխարքը լուծեն նորա ձայնին. նա անուշով կոչում է իւր ոչխարքը և դուրս է հանում նոցա. և երբ բոլորը դուրս էին եկած, ինքն գնում է նոցա առաջից և ոչխարքը հետեւում են նորան, ըստ որում ճանաչում են նորա ձայնը: Օտարին չեն հետեւում, այլ փախչում են նորանից, որովհետեւ չեն ճանաչում նորա ձայնը“: Այս առակի նշանակութիւնը ոչ որ չհասկացաւ, և այս պատճառով Յիսուս ինքն մեկնեց, ասելով. „Ե՛ս եմ ոչխարների դուռն. ամենքեան՝ որ Ինձանից յառաջ եկան՝ գողեր ու աւազակներ էին. և ոչխարքը չսեցին նոցա: Այս եմ դուռն. ով որ Ինձանով ներս մտանէ, կ'ապրի, կ'մտանէ և կ'ելանէ և արօտ կ'գտա-

նէ: Գողը գալիս է որ գողանայ և սպանէ և կորուսանէ. իսկ Նս եկայ որ նորա առաւելութեամբ կեանք ստանան: Նս եմք քաջ հովիւը, որ իւր անձը դնում է ոչխարներէ վերայ: Իսկ վարձկանը՝ որ հովիւ և տէր չէ ոչխարներէ՝ երբ անսնում է թէ գայլը գալիս է, թողնում է ոչխարքը և փախչում է և դոյլը յափշտակում ու ցրվում է նորանց: Նս եմք քաջ հովիւը. ճանաչում է իմ ոչխարքս և նորա ինձ են ճանաչում. և իմ անձս դնում է ոչխարներէ վերայ: Վաւ ունիմ այլևս ոչխարներ (հեթանոսք), որ այս գաւթից չեն (Նբբայեցւոց), և նորանց նոյնպէս պէտք է այս տեղ բերեմ, որ իմ ձայնիս լսեն և լինին մի հօս և մի հովիւ <sup>1)</sup>“:

Յիսուսի այս վարդապետութեան վերայ, Փարիսեցւոց գրգռութեամբ, դարձեալ հերձուած ծագեցաւ ժողովուրդի մէջ, նոյնանից շատերը ասում էին Յիսուսի համար թէ դիւահար է և խենդուխելաւ է խօսում, և յորդորում էին չափել Նորան: Ոմանք ևս ասում էին թէ այս խօսքերը դիւահարի խօսքեր չեն. միթէ դէր կարող է կուրի աչքերը բանալ:

§ 55. Յիսուս յանդիմանում է Փարիսեցիքը և օրինականքը:  
(ՂԱԻԿ. ԺԵ. 37-51.)

Մի Փարիսեցի հրաւիրեց Յիսուսը իւր մօտ ճաշ ուտելու և զարմացաւ երբ Նս ընդդէմ հրէական աւանդութեան, ա-

1) Նս առակով ուսուցանում է Յիսուս որ մէք սիրայօժար կամբով պէտք է հնազանդ լինին Նորա փրկարար վարդապետութեանը. և մի և նոյն ժամանակ պարտական ճանաչենք մեզ լսել այն բարի հովիւներին և վարդապետներին, որ Եկեղեցւոյ ընտրութեամբ սրբանի են լինում ընդունել այս սրբազան կոչումը: Եւ ընդհակառակն պատուիրում մեզ գգուշանալ ոյն վարձկաններից, որ թէպէտ հովիւ են կոչում, բայց չունին սէր և խնամք իւրեանց հաւատացած հօտի վերջ. այլ միայն իւրեանց անձնական օգուտներով են զբաղած: Իսկ ճշմարիտ հովիւքը, որպէս զի իւրեանց անհոգութեամբ նման չլինին այդ վարձկաններին և յափշտակող քայլերին, հետեւելով գերագոյն Հովուապետի օրինակին, պարտական են առաջնորդել ժողովուրդը դէպի ճշմարտութիւն և արդարութիւն. և ստուգածոյին բանի բոլոր զօրութեամբ զնուորուել բրիտանական հօտի թշնամիների դէմ. և եթէ հաւատացեալներէ փրկութեան համար հարկը պահանջէ, պատրաստ լինին անգամ իւրեանց կեանքը զոհելու:

ուանց յառաջագոյն լուացուելու, եկաւ բազմեցաւ: Նս պատճառով և Յիսուս խառութեամբ յանդիմանեց Փարիսեցւոց կեղծաւորութիւնը, ասելով նոցա. «Ղուք աւելի մտածում էք արտաքին սրբութեան վերայ և արհամարհում էք ներքինը — հոգեւոր սրբութիւնը. ամենայն մանր բաներից տասանորդ էք տալիս, բայց ինքեանքդ անհոգ էք Նստուծոյ արդստութեան և սիրոյ մասին. ժողովարանների մէջ սիրում էք բարձր տեղեր բռնել և հրապարակներում առաջին ողջոյնները ընդունել“:

Նս բանի վերայ օրինականներից մինը ասաց նորան. «Ղ արդապետ՝ այսպէս խօսելով և մեզ վերաւորում էս“: Նս ձեզ վայ օրինականներից, ասաց, որ ծանր ծանր բեռներ էք բարձում մարդերի վերայ, բայց ինքեանքդ և մատով չէք մօտենում նոցա. դուք ձեր հայրերի նման հակուած էք մարդարեւներ սպանելու. դուք թաքուցանում էք զիստութեան բանալին, ինքեանքդ չէք մտանում և ցանկացողներին արգելում էք մտանել“: (ի զիստութիւն ճշմարտութեան):

§ 56. Նր ջանկութիւնը անցաւ որ հարստութեան մէջ չէ:  
(ՂԱԻԿ. ԺԲ. 13-21.)

Միանգամ, երբ Յիսուս ուսուցանում էր, ժողովուրդի միջեց դուրս եկաւ մի մարդ և ասաց Նորան. «Ղ արդապետ, ասսի եղբօրս որ բաժանէ իմ հետ ժառանգութիւնը“: Պատասխանեց Յիսուս. «Ղ մարդ, ինձ ո՞վ կարգեց ձեր վերայ դատաւոր կամ բաժանարար“: Նս խօսքով յայտնեց Յիսուս թէ ինքն եկած չէր աշխարհային գործերի մէջ դատաւոր լինելու. բայց և պատճառ գտաւ սորանով զգուշացնել աշակերտքը ազահոլութենից, վասն զի մարդուս կեանքը, ասաց, կախուած չէ նորա հարստութենից: Նս այս մասին հետեւեալ առակը ասաց. «Մի մեծատուն մարդու արտերը առատ պտուղ տուին, և նա մտածում էր այսպէս. ի՞նչ անեմ, բերքս ժողովելու տեղ չունիմ. և երկար խորհելուց յետոյ ասաց, զիտեմ ինչ պէտք է արած. կ'ըմանեմ շտեմարաններս և աւելի ընդարձակ կ'ընեմ, և նոցա մէջ կ'ժողովեմ ցորենս և մնացեալ

բարութիւնս և իմ անձիս կ'ասեմ: Ա՛նձն, շատ տարիների համար ժողոված պաշար ունիս. հանգստացիր, կե՛ր, խմիր և ուրախացիր: Բայց Աստուած ասաց նորան. Ա՛նձիս, այս դիշեր հողիդ քեզանից պիտի պահանջեն, իսկ պատրաստած բարութիւնդ ո՛ւմ կ'մնայ: Այնպէս պէտք է լինի և այն մարդու հետ, յաւելացրեց Յիսուս, որ գանձ ժողովելով միայն իւր անձին համար՝ չէ հարստանում Աստուծով՝. (այսինքն մարմնաւորի վերայ խորհելով կորուսանումէ հողին):

§ 57. Անպտուղ թղենու առակը. Արկամեալ կնոջ բժշկութիւնը:  
(ՂՈՒԿ. ԺԳ. 1—34.)

Մինչդեռ Յիսուս քարոզումէր ժողովողին, յորդորելով մեղաւորքը ապաշխարութեամբ հաշտուիլ Աստուծոյ հետ, եկան ոմանք և պատմեցին Վորան թէ ինչպէս Հռովմայեցւոյ դատաւոր՝ Պիղատոսը, Արուսաղեմի տաճարի մէջ, սպանել էր մի քանի Պալելիացիք և նոցա արիւնը խառնել էր նոցա բերած զոհերի արիւնի հետ: Այդ բանի վերայ Յիսուս ասաց ժողովողին. «Միթէ կարծումէք թէ այն Պալելիացիքը, որ այնպէս սպանուեցան, աւելի մեղաւոր էին, քան թէ բոլոր Պալելիացիքը. չէ, ասումեմ ձեզ, եթէ դուք ևս չապաշխարէք, ամէնքդ նոյնպէս կ'կորչէք»: Մի և նոյն ժամանակ Մելովամ աւագանի մօտ, աշտարակը ընկել էր և իւր փրատակների տակ տանութը մարդ էր մեռուցել. ուստի և յաւելացրեց Յիսուս. «Միթէ կարծումէք թէ այն մարդիկը, որ սպանուեցան Մելովամի աշտարակի տակ, աւելի մեղապարտ էին քան բոլոր Արուսաղեմի բնակիչքը. չէ, ասումեմ ձեզ, եթէ չապաշխարէք, ամէնքդ նոյնպէս կ'կորչէք»: Յետոյ ասաց հետեւեալ առակը. «Մի մարդ իւր այգիում թղենի անկեց. ապա եկաւ պտուղ քաղելու նորանից, բայց ոչինչ չգտաւ, և ասաց այգեպանին. Ահա՛ երեք տարի է որ ես գալիս եմ պտուղ քաղելու դորանից և չեմ գտանում. ուրեմն կտրիր դորան, ինչո՛ւ

զուր տեղ խախնումէ երկիրը: Այգեպանը պատասխանեց. Տէ՛ր, թող մնայ մի տարի ևս, մինչև որ լաւ մշակեմ դորան, դուքէ պտուղ բերէ, ապա թէ ոչ՝ մի տարուց յետոյ կտրիր դորան»: Այս առակով յամնումէր Յիսուս թէ Աստուած երկայնամիտ է դէպի մեղաւորքը և ամենայն հնարներով ուղղումէ նորանց դէպի ապաշխարութիւն. բայց եթէ նոցա յամառուած մնան իւրեանց մեղքերի մէջ և չտան պտուղ արժանի ապաշխարութեան, այն ժամանակ չորացած ու անպտուղ թղենու նման կտրումէ նորանց (մահուամբ) և ձգումէ յաւիտենական կրակի մէջ:

Այդ բանից յետոյ Յիսուս, ըստ սովորութեան շաբաթօրը, մտաւ ժողովողանոցը ուսուցանելու. այն տեղ կար մի կին, որ տանութը տարի կարկամեալ էր (կծկուած), և չէր կարող գլուխը բարձրացնել դէպի վեր նայիլ: Յիսուս իւր մօտ կանչեց նորան և ասաց. «Ո՛վ կին՝ արձակուած ես հիւանդութենիցդ». ձեռքը դրեց նորա վերայ և հիւանդը իսկոյն ուղղեցաւ և սկսաւ փառք տալ Աստուծոյ: Ժողովողապետը սաստիկ բարկացաւ որ Յիսուս շաբաթօրը բժշկեց, դարձաւ առ ժողովուրդը և ասաց. «Վեց օր կայ գործելու համար, այն օրերը եկէք բժշկուեցէք և ո՛չ թէ շաբաթօրը»: Յիսուս, չկամենալով թողուլ ժողովուրդը մոլորութեան մէջ, պատասխանեց ժողովողապետին. «Աեղծաւորք, միթէ իւրաքանչիւրը ձեզանից շաբաթօրը իւր եղը կամ էջը չէ՞ արձակում մտուրից և տանում ջուր տալու. իսկ այդ Աքրահամի դուստրը, որը ահա տանութը տարի է որ կապել էր սատանան, միթէ արժան է՞ր շաբաթօրին կապանքից արձակել»: Հակառակորդքը ամօթով մնացին. իսկ ժողովուրդը ուրախանումէր Յիսուսի փառաւոր հրաշքների վերայ:

Վաթկատեաց տօնին Արուսաղեմ գնալու ժամանակ, մի մարդ հարցրեց Յիսուսին. «Տէ՛ր, մի թէ սակաւ մարդիկ պիտի փրկուին»: Այս բանին պատասխանելով, Յիսուս հասկացրեց թէ փրկութիւնը դժուարութեամբ է ձեռք բերվում և թէ փոխանակ չրէից հեթանոսները կ'մտանեն Աստուծոյ արքայութիւն

նը: «Չանք արէք, ասաց, նեղ դռնով ներս մտանել (երկնքի արքայութիւնը), վասն զի շատերը կ'ինդրեն մտանել բայց չեն կարող: Երբ տանուտէրը ներս կ'մտանէ և կ'փակէ դուռն, այժմ ժամանակ և դուք դուրսը կանգնած կ'զարկէք դուռն, ասելով. Տէր Տէր՝ բաց մեզ: բայց Նա կ'պատասխանէ՝ Ոչ գիտեմ զձեզ ուստի էք: Այն տեղ կ'լինի լաց և ատամների կրճտումն. երբ կ'տեսանէք Աբրահամը, Իսահակը և Յակոբը և բոլոր մարգարէքը երկնքի արքայութեան մէջ և ձեզ դուրս հանած: Եւ կ'գան արեւելքից և արեւմուտքից, հիւսիսից և հարաւից և կ'բաղմեն Աստուծոյ արքայութեան մէջ»:

Այս խօսքերը անհաճոյ թուեցան Փարիսեցւոց. նոքա, կամենալով որ և է հնարքով հեռացնել Յիսուսը Գալիլիայից, մօտեցան և ասացին Նորան. «Գնա՛ այս տեղից, որովհետեւ շերտովդէսը կամենումէ սպանելքեզ»: Պատասխանեց նոցա Յիսուս. «Գնացէ՛ք ասացէ՛ք այն աղուէսին, թէ Ահա հանում եմ դեկը և կատարումեմ բժշկութիւններ. այսօր և վաղը և երրորդ օրը կ'վերջացնեմ: Բայց և պէտք է գնալ, ըստ որում անկարելի բան է որ մարգարէն Արուսաղեմից դուրս սպանուի»:

§ 58. Յիսուս Քրիստոս համագոյակից է շօր Աստուծոյ:  
(ՅՈՒՆ. Ժ. 22. 42.)

Նաւակատեաց տօնին <sup>1)</sup> երբ Յիսուս շրջումէր Սողոմոնի սրահի մէջ <sup>2)</sup>, շրէպք եկան շրջապատեցին Նորան և ասացին. «Մինչև երբ մեր սիրաբ մաշես. եթէ դու ես Քրիստոսն՝ ասա՛ մեզ համարձակ»: Պատասխանեց նոցա Յիսուս. «Ասացի ձեզ և չէք հաւատում ինձ. բայց այն գործքերը որ ես գործումեմ իմ շօր անուհով կ'վկայեն իմ համար: Գուք չէք հաւատում, որովհետեւ իմ ոչխարներից չէք. իմ ոչխարքս ձայնիս լսումեն, և ես ճանաչումեմ նորանց և յաւիտենական կեանք եմ տալիս նոցա. և ոչ ոք կարող է յափշտակել նորանց իմ ձեռից: Իմ շայրս, որ նորանց տուաւ ինձ, ամենից մեծ է: Այս և շայրս մի ենք»: Այս խօսքի վերայ քարեր առին շրէ-

1) Այս տօնը սահմանուած էր ի յիշատակ նորոգութեան տաճարի, որ կատարուեցաւ Յուդա Մակաբէի ձեռքով: Անտիոքոս Եպիփանիս յաղթեց յետոյ  
2) Տաճարի վերջին շրջապատը, որ կոչուած էր «Սրահ Սողոմոնի»:

այք որ քարկոծեն Նորան: Փրկիչը, առանց շփոթուելու, հանդարտութեամբ ասաց նոցա. «Շօր անուհով շատ բարեգործութիւն եմ արել ձեզ. նոցանից որ գործի համար էք քարկոծում ինձ»: «Բարի գործքերիդ համար չենք քարկոծում քեզ, պատասխանեցին շրէպք, այլ հայհոյութեանդ համար. որովհետեւ դու մարդ ես, բայց քո անձդ Աստուած ես անուանում»: Պատասխանեց Յիսուս. «Եթէ շօր գործը չեմ գործում մի հաւատաք ինձ, ապա եթէ գործումեմ, թէ և ինձ չէք հաւատում՝ սակայն գործքերիս հաւատացէք, որպէս զի իմանաք թէ շայրը իմ մէջ է և Աստուծոյ մէջ»: Գարձեալ կատաղեցան շրէպք և կամեցան բռնել Նորան և քարկոծել. բայց Յիսուս անցաւ նոցա միջից և գնաց Յորդանանու միւս կողմը, ուր մի ժամանակ Յովհաննէսը մկրտումէր. և այն տեղ շատերը հաւատացին Նորան: ✕

§ 59. Չորգողեալ մարդու բժշկութիւնը.  
շրաւիրեալների առակը:  
(ՂՈՒԿ. ԺԴ. 1-28.)

Փարիսեցի իշխաններից մինը մի շաբաթ օր Յիսուսը իւր տունը ճաշի հրաւիրեց: Նորա կոչնականքը, որ նոյնպէս Փարիսեցիք էին, առիթ էին որոնում մի կերպով մեղադրելու Նորան: Աւսահա այնտեղ դուրս եկաւ Նորա յառաջ մի ջրղղեալ մարդ. և Յիսուս, տեսնելով նորան, հարցրեց օրինականներին և Փարիսեցիներին թէ՛. «Երժամ է շաբաթ օրը մարդ բժշկել». նոքա լուռ կացան: Յիսուս մօտեցաւ հիւանդին, բժշկեց նորան և արձակեց. և ապա, դառնալով դէպի սնապաշտ Փարիսեցիքը, ասաց. «Եթէ ձեզանից մինի էլ չեմ կամեղը շաբաթ օրը բնկնի ջրհորի մէջ, միթէ իսկոյն հանելու չէր նորան». այդ բանին նոքա չկարողացան պատասխանել: Անդան բաղմելու ժամանակ, Փրկիչը, տեսնելով կոչնականների փառասիրութիւնը, որ իւրեանց նստելու համար բարձր տեղեր էին ընտրում, ասաց. «Երբ որ մինը քեզ հար-

ասնիք կամ հացկերոյթ հրաւիրէ, առաջին տեղում մի նստիր. գուցէ քեզանից աւելի պատուաւոր մարդ հրաւիրուած լինի, և տանուտէրը գայ և ասէ քեզ. Տեղ տուր սորան. և դու ստիպուած լինիս ամօթով յետին տեղում նստիր: Բայց երբ հրաւիրուած լինիս, գնա յետին տեղում նստիր, որ քեզ հրաւիրողը գայ և ասէ քեզ. Բարեկամ՝ բարձր տեղ նստիր. և այն ժամանակ փառք կ'լինի քեզ բոլոր նստողների առաջև. վասն զի՝ Որ բարձրացուցանէ զանձն, խոնարհեցի. և որ խոնարհեցուցանէ զանձն, բարձրացի: Յետոյ դառնալով դէպի տանուտէր Փարիսեցին, ասաց. «Երբ որ ճաշ կամ ընթրիք պատրաստես, մի հրաւիրեր քո բարեկամքը և ոչ եղբարքդ և ազգականքդ, և ոչ մեծատուն դրացիքդ. որ չլինի թէ նոքա ևս հրաւիրեն քեզ և այդ լինի քեզ հատուցումն: Ելլ կոչելը ազքատ, խեղ (մարմնով պակասաւոր), կաղ և կոյր մարդիկ որովհետև նոքա չեն կարող հատուցանել քեզ. և դու փոխարէնը կ'ստանաս արդարների յարութեան ժամանակին»: Սեղանակիցներից մինը, ինչպէս լսեց այդ, բարձրաձայն ասաց. «Երանի՛ նորան, որ ճաշ կ'ուտէ Աստուծոյ արքայութեան մէջ». և Յիսուս պատասխանեց նորան հետևեալ առակով. «Մի մարդ մեծահաց ընթրիք պատրաստեց, ասաց, և հրաւիրեց շատերը. և երբ հասաւ ընթրելու ժամը, ուղարկեց իւր ծառայն կոչել հրաւիրեալքը, ասելով. Եկէք, ամենայն ինչ պատրաստ է. բայց նոքա մի ըստ միոջէ սկսան հրաժարուիլ: Առաջինն ասաց. Ագարակ գնեցի, պէտք է գնամ տեսնեմ. աղաչումեմ ներես ինձ: Միւսն ասաց. Հինգ զոյգ եզ գնեցի, պիտի գնամ փորձելու. աղաչումեմ ներես ինձ: Իսկ երրորդը, Սին առի, ասաց, և այս պատճառով չեմ կարող գալ: Արջ նստէրը, լսելով այս հրաժարական պատասխանիքը, բարկացաւ և ասաց ծառային. Իսկոյն գնա քաղաքի հրապարակներն ու փողոցները և որչափ ազքատ, խեղ, կաղ և կոյր գտանես, առ և բեր այստեղ: Ծառայն կատարեց հրամանը և յայտնեց տիրոջը թէ այլ ևս տեղ կայ: Չմաս, ասաց կոչնատէրը, ճա-

նապարհների վերայ և ցանգերի մօտ եղած մարդիկը ներս կանչիր որ տունս լցուի: Իմացած լինիք որ ոչ ոք հրաւիրեանիւրից ճաշակելու չէ իմ սեղանից <sup>1)</sup>»:

Երբ առակից յետոյ երբ Յիսուս սկսաւ գնալ, Նորան հետևեց մեծ բազմութիւն ժողովրդի: Տէրը յայտնեց նոցա թէ աշակերտ լինելու համար հարկ է հրաժարուիլ աշխարհային զբաղմունքներից և տանել իւր խաչը: «Ով որ կամենում է ինձ մօտ գալ, ասաց, և պատրաստ չէ ատել իւր հայրն ու մայրը, կկնը և որդիքը և եղբարքը և քոյրերը, և նոյն իսկ իւր անձը, նա չէ կարող իմ աշակերտ լինել <sup>2)</sup>»: Աւելի որ իւր խաչը չառնու և իմ հետևից չգայ՝ նա չէ կարող իմ աշակերտ լինել <sup>3)</sup>»:

§ 60. Մոլորեալ ոչխարի, կորուսեալ գրամի և անառակ որդւոյ առակները:  
(ՂԱԻՎ. ԺԵ.)

Ամբարտաւան Փարիսեցիքը ու դպիրքը միշտ բամբաստամէին Փրկիչը, թէ ինչո՞ւ Նա ընտանեբար վարվումէր մաքսաւորների ու մեղաւորների հետ և սեղանակից էր լինում նոցա: Եյս մասին Յիսուս խօսեց նոցա հետ հետևեալ առակներով: «Չգնանից ո՞ր մարդը, ասաց, որ հարիւր ոչխար ունենայ և նոցանից մինը կորուսանէ, չէ թողնելու իննսուն և իննը անապատի մէջ և գնալու կորածի հետևից: Աւելի որ գտանէ՝ ուրախութեամբ զնումէ ուսերի վերայ և բերումէ տուն. կանչումէ իւր բարեկամքը և դրացիքը որ խնդակից լինին իւրեան, կորուսած ոչխարը գտա-

1) Առակի իմաստը այս է. Տէր Աստուած արքայութեան մէջ պատրաստեց ընթրիքը յաւիտենական ուրախութեան. և ուղարկեց իւր միածին Որդին յառաջագոյն հրաւիրել չբեպքը այդ ուրախութիւնը վայելելու. բայց նոքա, զաղած լինելով աշխարհային հոգսերով, մերժեցին այդ հրուէրը: Ուստի և Աստուած փոխանակ նոցա կոչեց մաքսաւորները ու թմանտները:

2) Ոչ թէ թշնամութեամբ ատել պէտք է ազգականքը, այլ հետանալ նոցանից, եթէ նոքա արգելք էին լինում հաւատքին և քրիստոնէական բարեպաշտութեանը:

3) Ամենայն մարդ համբերութեամբ, և հնազանդելով աստուածային կամբին, պիտի տանէ այն խաչը (կեանքի վիշտերը և նեղութիւնները), որ սեպհական էր իւր վեճակին:

նելու համար: Ասեմ ձեզ, թէ այսպիսի ուրախութիւն կ'ըլ-  
նի և երկնքում մի մեղաւորի համար, որ կ'ապաշխարէ. քան  
թէ իննսուն և ինն արգարներ ի համար որ ապաշխարութեան  
պէտք չունին“: „Ասմ ո՞ր կինը, որ տանն դրամ ունենայ և նո-  
ցանից մինը կորուսանէ, ճրագ վառած չէ որոնելու մինչև որ  
գտանէ: Աւ երբ գտանէ՝ կանչումէ բարեկամքը և դրացիքը.  
ուրախացէք իմ հետ, ասումէ, վասն զի գտայ իմ կորուսած  
դրամը: Ասեմ ձեզ, այնպէս ևս Աստուծոյ հրեշտակներն են  
ուրախանում մի մեղաւորի վերայ, որ ապաշխարումէ“:

Յետոյ աւելի բացայայտ օրինակով խօսեց Փրկիչը այս մա-  
սին. „Մի մարդ, ասաց, երկու որդի ունէր. կրտսերը ասաց  
հօրը. Հայր, ինձ բաժին տուր կայքիցդ՝ ինչքան որ կ'ընկնի:  
Հայրը կատարեց նորա խնդիրը և ստացուածքը բաժանեց նո-  
ցա մէջ: Հաստ օր չանցաւ, այս կրտսեր որդին ժողովեց իւր բո-  
լոր ունեցածը և գնաց հեռաւոր աշխարհ, և այն տեղ բոլոր  
վասնեց անառակութեամբ: Արբ այն աշխարհում սաստիկ  
սով էր, նա, յետին չբաւորութեան մէջ լինելով, գնաց մտաւ  
քաղաքացիներից մինի մօտ և սա ուղարկեց նորան իւր ագա-  
րակը խոզեր արածելու: Այն տեղ փափագումէր նա փորը  
կշտացնել խոզերի կերած եղջերով, բայց այն ևս տուող չկար  
նորան: Այս թշուառութեան մէջ հասկացաւ նա իւր յան-  
ցաւորութիւնը և խօսեց իւր մտքում այսպէս. Վասնի՞ քանի  
վարձկաններ իմ հօր տանը լիանումեն հացով, իսկ ես այս տեղ  
սովից մեռանումեմ: Վեր կենամ գնամ հօրս մօտ և ասեմ  
նորան. Հայր, մեղայ յերկինս և առաջի քո, արժանի չեմ որդի  
կոչուելու քեզ. ընդունիր ինձ որպէս քո վարձկաններից մինը:  
Աւ ճանապարհ ընկաւ դէպի հօր տունը: Վեռ ևս տուն չէր  
հասած՝ երբ հայրը հեռուից տեսաւ իւր որդին, զթացաւ,  
վազեց նորա առաջ, ընկաւ նորա վզովը և համբուրեց նորան:  
Հայր, մեղայ յերկինս և առաջի քո, գոչեց զգջացած որդին,  
արժանի չեմ որդի կոչուելու քեզ: Վթասիրտ հայրը իսկոյն  
հրամայեց ծառաներին բերել առաջին պատմուձանը և հագ-

ցնել նորան, մատանի անցուցանել ձեռքը և կօշիկներ՝ ոտքը:  
Իերէք, ասաց, մորթեցէք պարարակ եզը, ուտենք և ուրախա-  
նանք. վասն զի այս որդիս մեռած էր և կենդանացաւ, կորած  
էր և գտանուեցաւ: Աւ սկսան ուրախանալ: Արէց որդին, որ  
այն միջոցին ագարակից տուն էր դառնում, երգերի և պարի  
ձայներ լսելով, կոչեց ծառաներից մինը և հարցրեց ուրախու-  
թեան պատճառը: Պատասխանեց ծառայն. եղբայրդ եկել է,  
և հայրդ նորան ողջ առողջ ընդունելու համար հրամայեց  
պարարակ եզը մորթել և խնջոյք պատրաստել: Բարկացաւ  
երէց որդին և չէր կամենում ներս մտնել. մինչև որ հայրը  
դուրս եկաւ և աղաչումէր նորան. բայց նա նեղացած պա-  
տասխանեց հօրը. Այս քանի՞ տարի է որ ծառայումեմ քեզ  
և երբէք քո պատուիրանից անցած չեմ, բայց մի ուլ ևս տուած  
չես ինձ, որ ես բարեկամներիս հետ վայելի: Իսկ երբ այդ ու-  
ղիդ եկաւ, որ բոլոր ստացուածքդ վասնել է, դու պարարակ  
եզը մորթեցիր նորա համար: Որդեակ իմ, ասաց նորան հայրը,  
դու միշտ իմ հետ ես. ամէն ունեցածս քեզ է պատկանում:  
Բայց ուրախ լինել և խնդալ պէտք էր, որովհետեւ եղբայրդ  
մեռած էր և կենդանացաւ, կորած էր և գտանուեցաւ“:

§ 61. Անիրաւ տնտեսի առակը:

(ՂՈՒԿ. ԺԶ. 1—14).

Անառակ որդւոյ առակից յետոյ, Յիսուս հետևեալ առա-  
կով կամեցաւ հասկացնել թէ աշխարհիս մարդիկը որքան  
ճարտար և հնարագէտ են իւրեանց ժամանակաւոր շահախն-  
դութիւնների մէջ, այնքան ևս պէտք է արիւթեամբ ջանա-  
դիր լինին ձեռք բերել հոգևորը և յաւիտենական բարիքը եր-  
կնքի արքայութեան: Աւ ասաց. „Մի մեծատուն մարդ մի  
տնտես ունէր, լսելով սորա մասին թէ շոտայութեամբ վասնու-  
մէ իւր ստացուածքը, կոչեց այդ տնտեսը և ասաց. Այս ի՞նչ  
եմ լուում քո վերայ. տուր տնտեսութեանդ համարը, որովհե-  
տեւ այլևս չես կարող լինել ինձ տնտես: Տնտեսը մտածումէր

որ պաշտօնից ընկնելով պիտի զրկուէր հացից, վասն զի աշխատել չէր կարող, իսկ մեւրանալ կ'ամաչէր: Այս տարակուսանաց մէջ ասաց նա իւր մտքում. գիտեմ ինչ պէտք է արած, որպէս զի երբ անտեսութենիցս զրկուիմ՝ մարդիկ ընդունեն ինձ իւրեանց տունը: Տիրոջ պարտապանները մի մի կոչեց իւր մօտ, և ասաց առաջինին, Վու հրչափ պարսք ունիս տիրոջս. և նա պատասխանեց, Հարիւր մար ձէթ: Վիրդ ան, ասաց, նստիր իսկոյն գրիր՝ յի ս ու ն մ ար: Ապա հարցրեց միւսին. Վու հրչափ պարսք ունիս, Հարիւր քոռ ցորեն, պատասխանեց նա: Վիրդ ան, ասաց, նստիր ութ ս ու ն գրիր: Արբ այդ իմացաւ տէրը, գովեց անիրաւ անտեսը, որ իմաստութեամբ հոգացել էր իւր գործը: Վասն զի այս աշխարհի որդիքը, յաւելացրեց Յիսուս, իւրեանց ցեղի մէջ աւելի իմաստուն են լուսոյ որդիներից: Աւ Աս ասումեմ ձեզ. Անիրաւ մամոնայից ձեզ բարեկամներ պատրաստեցէք, որպէս զի երբ այն պակասի (ձեր մահուց յետոյ), յաւիտենական օթեւանների մէջ ընդունեն ձեզ: Ով որ փոքր բանի մէջ հաւատարիմ է՝ շատի մէջ ևս հաւատարիմ է, և ով որ փոքր բանի մէջ անիրաւ է՝ նա և շատի մէջ անիրաւ է: Ոչ մի ծառայ չէ կարող երկու տիրոջ ծառայել. ինչպէս և դուք չէք կարող Աստուծոյ ծառայել և միանգամայն մամոնային (հարստութեանը)՝:

§ 62. Ենողորմ մեծատան և աղքատ Վազարոսի առակը:  
(Լուկ. ԺԶ. 14—31.)

Արծաթաձէք Փարիսեցիքը, լսելով Յիսուսի Վրիստոսի փրկարար վարդապետութիւնը, արհամարհումէին և ծաղր էին անում՝ Նորան: Այն ժամանակ ասաց նոցա Յիսուս. «Վուք ձեր անձը արդարացնումէք մարդկան առաջև. սակայն Աստուած գիտէ ձեր սրտերը. որովհետև ով որ առաջև մարդկան բարձր է՝ նա պիղծ է (կեղծաւոր է) առաջև Աստուծոյ: Յետոյ մեծատան և Վազարոսի առակով յայտնեց Վաթէ հանդերձեալ կեանքում ինչ հատուցումն պիտի ստանան այն

անողորմ մեծատունները, որ իւրեանց բոլոր վստահութիւնը դրած են անցաւոր հարստութեան վերայ: «Մի մեծատուն մարդ կար, ասաց, որ ազնիւ բեհեղ ու ծիրանիներ էր հագնում, և ամենայն օր փառաւոր ինչոյքներով ուրախանումէր: Նորա դրան մօտ խոցերով պատած ընկած էր մի աղքատ մարդ՝ Վազարոս անուն, որ փափագումէր մեծատան սեղանից ընկած փշանքով կերակրուիլ, բայց այն ևս տուող չկար նորան, շները գալիս էին և լիզումէին այս թշուառականի վերքերը: Մեռաւ աղքատը, և հրեշտակները տարան նորան Աբրահամի գոգը. մեռաւ և մեծատունը և թաղուեցաւ: Վժռիքի չարաչար տանջանաց մէջ աչքը բարձրացրեց մեծատունը և հեռուից տեսաւ Աբրահամը, և Վազարոսը նորա մօտ նստած: «Հայր Աբրահամ, աղաղակեց նա, ողորմիր ինձ, և ուղարկիր Վազարոսը որ գոնէ մասի ծայրը թաթախէ ջրի մէջ և զովացնէ լեզուս ըստ որում այստեղ կրակի մէջ սաստիկ պապակումեմ: Աբրահամը պատասխանեց նորան. «Ո՞րդեակ, միտքդ բեր որ դու կենդանութեանդ ժամանակ վայելցիր աշխարհի բարիքը, բայց Վազարոսը չարչարվումէր. ուրեմն սա այստեղ կ'մխիթարուի, և դու այնտեղ կ'պապակիս: Բաց յայսմանէ, մեր և ձեր մէջ մեծ վեհ կայ. ոչ այս տեղից կարելի է ձեր մօտ անցանել, և ոչ ձեզանից՝ մեր մօտ»: «Ապա աղաչումեմ քեզ, ով հայր, ձայն տուաւ մեծատունը, արձակիր Վազարոսը իմ հօր տունը, որ այն տեղ վկայութիւն տայ իմ հինգ եղբայրների, որպէս զի մի գուցէ նոքա ևս գան այս տանջանաց տեղը»: Պատասխանեց Աբրահամ. «Նոքա ունին Մովսէսը և մարգարէքը, թող նոցա լսեն»: «Ոչ, հայր Աբրահամ, ասաց մեծատունը, եթէ մեռածներից մինը գնայ նոցա մօտ՝ այն ժամանակ կ'ապաշխարեն»: «Եթէ Մովսէսին և մարգարէներին լսող չեն, կրկնեց Աբրահամը, ուրեմն և չեն հաւատալու՝ եթէ մեռածներից մինը յարութիւն առնէր»: «

§ 63. Տասն բորոտների բժշկութիւնը:

(ՂՈՒԿ. ԺԷ. 11—19.)

Երուսաղէմ գնալու ժամանակ, երբ Յիսուս անցանումէր Սամարիայի և Գալիլէայի միջով, մի գիւղի մտակայքում պատահեցան Կորան տասն բորոտ մարդ, որք իւրեանց տարափոխիկ ցաւի պատճառով հեռուից բարձրաձայն աղաղակումէին. «Յիսուս վարդապետ, ողորմիր մեզ»: «Գնացէք ցոյց տուէք ձեր անձը քահանաներին», ասաց Յիսուս. գնացին և ճանապարհին իսկոյն սրբուեցան: Սոցանից մինը, որ Սամարացի էր, տեսնելով իւր անձը հրաշքով սրբուած, երախտագէտ սրտով յետ դարձաւ իւր Բարերարի մօտ. սկսաւ մեծաձայն փառք տալ Մատուծոյ, ընկաւ Յիսուսի ոտքը և շնորհակալ եղաւ: Փրկիչը, տեսնելով այս Սամարացու երախտագիտութիւնը, և նորա (հրէայ) ընկերների ապերախտութիւնը, ասաց. «Սոքա տասն հոգի չսրբուեցան», ասա միւսները ուր են, որ չդարձան փառք տալ Մատուծոյ. բայց եկաւ միայն այս այլազգին»: Յետոյ դարձաւ և ասաց նորան. «Վեր կաց դնա՛. հաւատքդ քեզ փրկեց»:

§ 64. Ընիրաւ դատաւորի և Փարիսեցւոյ ու մաքսաւորի առակները:

(ՂՈՒԿ. ԺԸ. 1—14.)

Ընիրաւ դատաւորի առակով Յիսուս Քրիստոս յայտնեց թէ պէտք է միշտ աներկմիտ յուսով աղօթք անել և չձանձրանալ: «Մի դատաւոր կար, ասաց, մի քաղաքի մէջ, որ Մատուծուց չէր երկնչում և մարդկանցից չէր ամաչում: Այն քաղաքում մի այրի կին ևս կար, որ անդադար գալիս էր այդ դատաւորի մօտ և աղաչումէր՝ ասելով. Աղատիր ինձ իմ ոտխի ձեռքից: Գատաւորը երկար ժամանակ չէր կամենում լսել նորա աղաչանքին վերջապէս ասաց իւր մտքի մէջ, թէ և Մատուծուց չեմ երկնչում և մարդկանցից չեմ ամաչում, բայց որովհետեւ այս այրի կինը այսքան անհանգիստ է առնում ինձ,

կ'տեսնեմ սորա դատաստանը, որպէս զի միւսանգամ չկայ և իւր աղաչանքով չձանձրացնէ ինձ: Յետոյ ասաց Յիսուս. լսումէք ինչ էր ասում անիրաւ դատաւորը: Իսկ Մատուած միթէ վրէժխնդիր լինելու չէ՞ իւր ծառաների համար, որ գիշեր ու ցերեկ աղաղակումեն առ նա: Այո՛, ասումեմ ձեզ, շուտով վրէժխնդիր կ'լինի նոցա համար»:

Փարիսեցւոյ և մաքսաւորի առակը ասաց Յիսուս այն կեղծաւորների համար, որք առանց հասու լինելու օրէնքի էական խորհրդին, միայն բառացի իմաստը կատարելով, իւրեանց անձը արդար էին ճանաչում, պարծենումէին և արհամարհումէին շատերը: Յիսուս Քրիստոս այս առակով հասկացրեց թէ պէտք է առանց հպարտանալու ջերմեռանդութեամբ, հեղ և խոնարհ սրտով աղօթել, որպէս զի լսելի լինին խնդրուածքը: «Երկու մարդ, ասաց, տաճար գնացին աղօթելու. մինը Փարիսեցի և միւսը մաքսաւոր: Փարիսեցին առանձին կանգնած աղօթք էր մատուցանում այսպէս. Մատուած իմ, շնորհակալ եմ Քեզանից որ ուրիշ մարդերի պէս յափշտակող, անիրաւ և շնացող չեմ, կամ թէ այս մաքսաւորի պէս: Այլ շարաթը երկու անգամ պահք եմ պահում և իմ բոլոր ստացուածքի տասանորդը տալիս եմ: Իսկ մաքսաւորը առանձին հեռու կանգնած չէր համարձակում և աչքը անգամ դէպի երկինքը բարձրացնել, այլ իւր կուրծքը կոծելով ասումէր. Մատուած՝ քաւեան զիս զմեղաւորս: Ասեմ ձեզ թէ այս մաքսաւորը աւելի արդարացեալ գնաց իւր տունը, քան թէ Փարիսեցին. վասն զի՝ Որ բարձրացուցանէ զանձն իւր, խոնարհեցի. և որ խոնարհեցուցանէ զանձն, բարձրացի»:

§ 65. Յիսուս Քրիստոս օրհնումէ մանր տղայքը:

(ՄԱՐԿ. Ժ. 13—16. ՂՈՒԿ. ԺԸ. 15—17. ՄԱՏԹ. ԺԹ. 13—15.)

Հրէաստանի սահմաններում երբ Յիսուս Քրիստոս ըստ սովորութեան ուսուցանումէր ժողովուրդը և բժշկումէր ցաւազարները, Կորա յառաջ բերին մանր տղայք, և աղաչում

էին որ Լուր աստուածային ձեռքը դնէ նոցա վերայ և օրհնէ: Բայց աշակերտքը, չկամենալով մանուկների պատճառով նեղութիւն տալ Վարդապետին, սաստեցին նոցա մայրերին որ չբերեն: Այս բանը տեսնելով, բարկացաւ Յիսուս, սաստեց աշակերտներին և ասաց. «Թոյլ տուէք այդ մանուկներին դալ իմ մօտ, և մի արգելուք, վասն զի այդպիսեաց է արքայութիւնն Աստուծոյ: Քշմարիտն ասեմ ձեզ. Ով որ Աստուծոյ արքայութիւնը չընդունի որպէս մանուկ (պարզմտութեամբ, խոնարհութեամբ և անմեղութեամբ), նա մտանելու չէ նորա մէջ»: Եւ առնելով տղայքը իւր զիրկը, ձեռքը դրեց նոցա վերայ և օրհնեց նորանց <sup>1)</sup>:

§ 66. Մեծատուն պատանին:

(ՄԱՐԿ. Ժ. 17—27. ՄԱՏԹ. ԺԹ. 16—26. ՂԱԻԿ. ԺԸ. 18—27.)

Մանուկները օրհնելուց յետոյ, մի մեծատուն պատանի յառաջ եկաւ Յիսուսին, և, յարգութեամբ ծունր դնելով, հարցրեց. «Վարդապետ բարի, ասաց, ի՞նչ գործեմ որ յաւիտենական կեանքը ժառանգեմ»: Յիսուս պատասխանեց նորան. ինչո՞ւ ես ինձ բարի կոչում ոչ որ բարի չէ՝ (կատարելութեամբ) բայց միայն Աստուած (որ աղբիւրն է ամենայն բարութեան). իսկ եթէ կամիս ընդունել յաւիտենական կեանքը՝ պահիր պատուիրանները»: «Ո՞ր պատուիրանները», հարցրեց մեծատուն պատանին: Պատասխանեց Յիսուս. «Մի սպանաներ, մի շնար, մի գողանար, մի սուտ վկայեր, պատուեա՛ զհայր քո և զմայր, և սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո»: «Այդ ամենայն պահել եմ իմ մանկութեան օրերից սկսած, ասաց պատանին, ուրեմն ի՞նչ է պակասում ինձ»: Այս պարզամիտ խոստովանութեան համար սիրեց նորան Փրկիչը, և ասաց. «Մի բան պակաս է քեզ. եթէ կամիս կատարեալ լինել, զնա՛ ինչ որ ունիս վաճառիր (եթէ միայն հարստու-

1) Աւանդութիւն կայ թէ այդ մանուկները թուռն էր և Մարկոս Աւետարանիչը, որ աւելի ընդարձակ նկարագրում է այդ անցքը, և իգնատիտ աստուածագրեացը:

թեան սէրը հանած ես սրտիցդ) և սուր աղքատներին, և եկ իմ հետեւից»: Այդ խօսքը ծանր թուեցաւ պատանուն, վասն զի շատ աստղուածք ունէր. գլուխը կախեց և տրամութեամբ հեռացաւ դեպ: Այն ժամանակ դարձաւ Յիսուս դէպի աշակերտքը և ասաց. «Որչափ դժուարին է մեծատանց Աստուծոյ արքայութիւնը մտանել: Աւելի դիւրին է որ մալուխը ասեղն ծակից անցանէ <sup>1)</sup>, քան թէ մեծատունը Աստուծոյ արքայութիւնը մտանէ»: Այդ բանի վերայ շատերը զարմացած հարցանումէին միմեանց. «Ապա ո՞վ կարող է ապրել». «Ինչ որ մարդերի համար անհնարին է երևում, պատասխանեց Յիսուս, Աստուծոյ օգնականութեամբ հնարաւոր է <sup>2)</sup>»: «

§ 67. Յիսուս Վրիստոս խոստանուէ առաքեալներին վարձատրութիւն:

Այդու մշակներ ի հաւասար վարձատրութեան առակը: (ՄԱՏԹ. ԺԹ. 27—30. Ի. 1—16. ՄԱՐԿ. 28—31. ՂԱԻԿ. ԺԸ. 28—30.)

Երբ որ մեծատուն պատանին հեռացել էր, այն ժամանակ Պետրոսը հարցրեց Տիրոջը. «Ահա մէք թողնք մեր ամենայն բաները և եկանք քո հետեւից. ուրեմն ի՞նչ վարձք պէտք է լինի մեզ»: «Վուք, որ իմ հետեւից եկիք, պատասխանեց Յիսուս, վերջին դատաստանի օրը, երբ Որդին մարդոյ իւր փառաց պիտո՞ր կը նստի, այն ժամանակ և դուք երկոտասան արթու նստած պիտի դատէք Խորայէլի երկոտասան ազգը: Ով որ իմ անուան կամ աւետարանի համար թողեց տունը, կամ եղբարքը, կամ քոյրերը, կամ հոյրը, կամ մայրը, կամ կինը, կամ որդիքը և կամ ազարակը, հարիւրապատիկ վարձատրութիւն պիտի ստանայ այս աշխարհիս մէջ, և հանդերձեալ կեանքում յաւիտենական կեանք պիտի ժառանգէ: Բազումք

1) Մալուխ նշանակում է հաստ շուան և ուղտ. իսկ ծակ ասղանս կոչվում էր բուսողեմի դռներից մինը, որ այնչափ նեղ ու փոքր էր, մինչ գրեթէ անհնարին էր բեռնաւորած ուղտին այդ դռնով անցանելը  
2) Ուրեմն և մեծատունները կարող է Աստուած արժանի առնել արքայութեան, միայն թէ և նորա կամենան:

եղեցին առաջինք՝ յետինք. և յետինք՝ առաջինք՝: Այս վարդապետութիւնը հաստատեց Յիսուս յետագայ առակով. «Երկնքի արքայութիւնը, ասաց, նման է այն տանտիրոջը, որ առաւօտուն կանուխ գնաց իւր այգու համար մշակներ վարձեց, իւրաքանչիւրին օրական մի դահեկան վարձ նշանակելով: Երեք ժամին (առաւօա. 9. Ժ.) դուրս եկաւ տեսաւ որ պարսպ մշակներ կային հրապարակում և ասաց նոցա. «Եւ դուք գնացէք այգիս, ինչ որ արժանն է, կ'ստանաք. գնացին և նոքա: Աւեցերորդ (12 Ժ.) իններորդ, (3 Ժ.) ժամին դարձեալ գնաց և վարձեց այլ մշակներ: Մետասաներորդ ժամին դուրս եկաւ և գտաւ ուրիշ մշակներ, որ պարսպ կանգնած էին, և ասաց նոցա. Ինչո՞ւ այստեղ օրը ցերեկ պարսպ կանգնած էք: Որովհետեւ ոչ ոք չվարձեց մեզ, պատասխանեցին: Չնացէք, ասաց, և դուք իմ այգին և ինչ որ արժանն է՝ կ'ստանաք: Երբ երեկոյ եղաւ, այգու տէրը ասաց իւր գաւառապետին (վերակացուին). «Մշակները կոչելը և վարձ սուր նոցա, յետիններկից սկսած մինչև առաջինները: Մետասաներորդ ժամին վարձած մշակները եկան և ստացան մի մի դահեկան: Յետոյ եկան առաջինները և կարծումէին թէ աւելի կ'ստանան. բայց երբ ինքեանք նոյնպէս մի մի դահեկան ստացան, սկսան տրանջել և ասել. «Այն վերջինները մի ժամ միայն գործեցին, և մեզ նոցա հետ հաւասար վարձատրեցիր, որ օրի ծանրութիւնը ու տաքութիւնը կրեցինք: Տանուտէրը պատասխանեց մշակներկից մինին և ասաց. «Ինչեր՝ ես չեմ զրկում քեզ. մի դահեկանով վարձած չեմ, առ ինչ որ կ'պատկանի քեզ և գնա: Միթէ իշխանութիւն չունիմ իմ ունեցածից տալ ում ինչքան կ'կամենայի. ինչո՞ւ նախանձու մեա նոցա արած բարերարութեանս վերայ»: Այսպէս, կրկնեց Յիսուս, Եղեցին յետինք՝ առաջինք և առաջինք՝ յետինք. զի բազումք են կոչեցեալք, և սակաւք են ընտրեալք <sup>1)</sup>»:

<sup>1)</sup> Առակի իմաստը այս է. նոքա, որ իւրեանց մանուկ հասա-

§ 68. Ղազարոսի հիւանդութիւնը և մահը:  
(ՅՈՎ. Ժ. 1-16.)

Բեթանիա զիւղե մէջ բնակող Մարթա և Մարիամ քոյրերը ունէին մի եղբայր՝ Ղազարոս անուն, որ սիրելին էր Յիսուսի. սա ծանր հիւանդացած էր, և քոյրերը պատգամաւոր ուղարկեցին Յիսուսին, ասելով. «Տէր՝ ահա ասիկ քո սիրելի Ղազարոսը հիւանդ է»: Պատասխանեց Յիսուս. «Այդ հիւանդութիւնը մահաբեր չէ, այլ Աստուծոյ փառքի համար է, որպէս զի նորանով փառաւորուի Որդին Աստուծոյ». և ապա Խնքն իսկոյն չգնաց Բեթանիա, այլ մնաց այն կողմերում երկու օր: Երրորդ օրը ասաց աշակերտներին. «Եկէք կրկին երթանք շրէստան»: Աշակերտքը զարմացած ասացին «Նորան». «Ուրբի, չէ՞ որ փոքր ինչ յառաջ շրէստեք կամենում էին քարկոծել Վիւզ և Ղուկ կրկին գնումես այնտեղ»: «Ո՞չ ապաքէն օրը տաներկու ժամ ունի, ասաց Յիսուս. ով որ գնումէ ցերեկով՝ չէ զայթակղվում, վասն զի տեսնումէ աշխարհի լոյսը. բայց ով որ գնումէ զիշերով՝ զայթակղվումէ, վասն զի լոյս չկայ նորա հետ»: (Այսինքն՝ Աստուծուց նշանակած չարչարանացս ժամանակը տակաւին լրացած չէ, ուրեմն աներկիւղ պէտք է յառաջ տանեմ Խմ գործը): Ապա յայտնեց նոցա Բեթանիա զնալու պատճառը, ասելով. «Մեր բարեկամ՝ Ղազարոսը ննջեց, զնամարթնացնեմ նորան»: Աշակերտքը, չհասկանալով այդ խօսքը, ասացին. «Տէր՝ եթէ հիւանդը ննջել է ուրեմն կ'ապրի»: Այն ժամանակ Յիսուս

կից ընդունած էին քրիստոնէութիւնը և ապրել էին բարեպաշտութեամբ, պէտք չէ պարծենան ու հպարտաբար արհամարհեն տանու մէկ ժամին եկողները, այսինքն ծերութեան հասակի մէջ հրաւիրուածները դէպի քրիստոնէութիւն. ըստ որում սոքա, թէ և կարճ ժամանակ հանգիստացան քրիստոնէական առաքինութեանց մէջ, սակայն Աստուած, Իւր անհուն ողորմութեամբ, տեսնելով նոցա ջերմեռանդ բարեպաշտութիւնը, երեկոյին, այսինքն վերջին դատաստանի օրը, կ'վարձատրէ նոցա ամբողջ օրի վարձատրութեամբ:

յայտնապէս խօսեց. «Վաղարոսը մեռաւ և Ես ուրախ եմ որ ներկայ չէի նորա մահունը, որովհետև այժմ կ'հաստատուիք դուք հաւատքի մէջ. եկէք դնանք նորա մօտ»: Եւ ճանապարհ ընկան դէպի Հրէաստան:

§ 69. Յիսուս յայտնապէս խօսումէ աշակերտաց հետ Իւր չարչարանաց, մահուն և յարութեան վերայ. Սաղոմէ խնդրումէ իւր որդւոց համար առաջին տեղը:

(ՄԱՏԹ. Ի. 17—28. ՄԱՐԿ. Ժ. 32—45. ՂՈՒԿ. ԺԸ. 31—34.)

Յառաջ տանելով իւր ճանապարհը դէպի Հրէաստան, Յիսուս իւր մօտ կանչեց տասներկու առաքեալքը և յայտնապէս խօսեց նոցա հետ իւր մօտալուս չարչարանաց մասին: «Ահա աստիկ գնումները Երուսաղէմ, ասաց, և Որդւոց մարդոց համար բոլոր մարդարէների դրուածքը պիտի կատարուին: Որովհետև Նա կ'մատնուի քահանայապետների և դպիրների ձեռքը և կ'դատապարտեն Նորան ի մահ, կ'մատնեն հեթանոսներին և սոքա կ'ծաղրեն, կ'ծեծեն և խաչ կ'հանեն Նորան և երրորդ օրը Նա յարութիւն կ'առնու»: Բայց առաքեալք ոչինչ չհասկացան այդ խօսքերից:

Այդ միջոցին Յակոբոս և Յովհաննէս առաքեալների մայրին՝ Սաղոմէ մօտեցաւ Յիսուսին, երկրպագութիւն տուաւ և կամենումէր մի բան խնդրել Նորանից: «Խնչ կամիս», հարցրեց նորան Յիսուս: Այն ժամանակ ասաց Սաղոմէ. «Վարդապետ՝ ասա որ իմ երկու որդիքս մինը աջ կողմը և միւսը ձախ կողմը նստեն Քո արքայութեան մէջ»: «Չգիտեք թէ ինչ էք խնդրում, քաղցրութեամբ պատասխանեց Յիսուս, կարող էք արդեօք ընկել այն բաժակը, որ Ես պիտի ընկեմ, կամ մկրտուիլ այն մկրտութիւնը որ Ես պիտի մկրտուիմ»: Սաղոմէ կ'ըմպէր, պատասխանեցին Օրբեղիայի որդիքը: «Իմ բաժակը կ'ըմպէք, ասաց Յիսուս, և իմ մկրտութիւնը կ'մկրտուիք. բայց Իմ աջ ու ձախ կողմը նստեցնել ձեզ—իմ իրաւունքը չէ, այլ ում որ պատրաստած է Իմ Հօրից»: Միւս առաքեալքը

լսելով այդ, բարկացան Յակոբոսի և Յովհաննէսի վերայ. բայց Յիսուս կանչեց նոցա Իւր մօտ և ասաց. «Չեզանից ով որ կամենումէ մեծ լինել, թող ձեզ պաշտօնեայ լինի. և ով որ կամենումէ առաջինը լինել, թող ձեզ ծառայ լինի: Արպէս և Որդին մարդոց եկաւ ոչ թէ այն մասին որ Իւրեան ծառայեն, այլ որ Ինքն ծառայէ և շատերի փրկութեան համար Իւր անձը զոհ բերէ»:

§ 70. Սոյն Երիբովի Չաքէոս:

(ՂՈՒԿ. ԺԸ. 35—43. ԺԹ. 1—10.)

Երբ որ Յիսուսը առաքեալների հետ մօտենումէր Երիբով քաղաքին, ճանապարհի վերայ նստած մի կոյր մուրացկան, լսելով բազմութեան ձայնը, հարցրեց. «Ո՞վ է անցանում». և երբ ասացին նորան թէ Յիսուս Նաղովրեցին է, սկսաւ աղաղակել. «Ողորմեա ինձ Յիսուս Որդի Վաւթի»: Ամբօխը սաստումէր նորան որ լռէ, բայց նա ևս առաւել աղաղակումէր, ասելով. «Որդի Վաւթի ողորմեա ինձ»: Աննգնեց Յիսուս, հրամայեց որ Իւր մօտ բերեն նորան, և ասաց. «Խնչ կամիս»: «Տէր, պատասխանեց կոյրը, բաց աչքս որ տեսնեմ»: Գլթացաւ Փրկիչը նորա վերայ, «Աչքդ բաց, ասաց, հաւատքդ քեզ փրկեց». և խիղճն աչքը բացուեցաւ տեսաւ, գնումէր Նորա հետեից, փառաւոր առնելով զԱստուած: Եւ ժողովուրդը ևս, տեսնելով այդ հրաշքը, օրհնումէր զԱստուած:

Երբ Յիսուս Քրիստոս անցանումէր Երիբովի միջով, մի հարուստ մաքսապետ՝ Չաքէոս անուն, ցանկանումէր տեսնել Նորան, բայց որովհետև բազմութիւնը չորս կողմից պատել էր Յիսուսը, և ինքն կարճահասակ մարդ էր, յառաջ վազեց և բարձրացաւ մի ժանտաթղենու վերայ, որ այն տեղից տեսնէ Նորան: Երբ ծառին մօտեցաւ Փրկիչը, դէպի վեր նայեց և ասաց. «Չաքէ, շտապիր իջիր այդ տեղից, վասն զի այսօր պիտի քո տանդ իջնանեմ»: Նոյն ժամայն վայր իջաւ Չաքէոսը և ուրախութեամբ ընդունեց Նորան: Բայց ժո-

ղովուրդը տրանջուձէր թէ ինչո՞ւ Յիսուս զնաց այդ մեղաւորի տունը. (որովհետեւ Հրէից մէջ մաքսաւորը մեղաւոր էր համարուած): Այն մեծ շնորհի համար որ հասարակաց Բարեւրարը եկած էր իւր տունը, Չաքէսը, անպատմելի ուրախութեամբ լցուած, մտեցաւ Տիրոջը և ասաց. «Տէր. ահա կայքիս կէսը կ'տամ աղքատներին և եթէ մի մարդ զըլիւ եմ չորեքսպատիկ կ'հատուցանեմ»: Պատասխանեց Յիսուս. «Այսօր եղև փրկութիւն տանս այսմիկ. քանզի և սա Աբրահամի որդին է. որդին մարդոյ եկած է որ գտանէ և ապրեցնէ կորուսեալը»:

§ 71. Ղազարոսի յարութիւնը:  
(ՅՈՎ. Ժ. 17—46.)

Ղազարոսը արդէն չորս օր էր որ մեռած էր և գերեզմանի մէջ ամփոփած, երբ Յիսուս մտեցելէր Բեթանիա գիւղին: Մարթա, ինչպէս լսեց թէ գալիս է Տէրը, իսկոյն յառաջ զնաց Նորան և գանդատելով, ասաց. «Տէր՝ եթէ այստեղ հանդիպած լինէիր, իմ եղբայրը մեռանելու չէր. բայց և այժմ գիտեմ թէ ինչ որ ինչդրես Աստուծոց՝ կ'տայ Քեզ Աստուած»: Յիսուս Քրիստոս, մտիթարելով վշտացած քոյրը, ասաց. «Քո եղբայրդ յարութիւն կ'առնու»: «Գիտեմ, որ յարութիւն կ'առնու վերջին օրում»: պատասխանեց Մարթա: «Աս իսկ եմ յարութիւն և կենսք<sup>1)</sup>, ասաց Յիսուս, ով որ հաւատում է ինձ՝ թէ և մեռանի, կ'ապրի. հաւատումես սորան»: «Այո՛ Տէր, ես հաւատացի թէ Դու ես Քրիստոսն՝ Որդին Աստուծոյ, որ գալոյ էիր աշխարհ», պատասխանեց Մարթա. և ինքն իսկոյն տուն զնաց և ասաց իւր Մարիամ քրոջը. «Ղազարայեալը եկել է և կանչու՞մք քեզ»: Ասելով Յիսուսի անունը, Մարիամը իսկոյն վեր կացաւ և ջերմեռանդ սրտով զնաց Նորա մօտ: Ծանօթներէց շատերը, որ եկած էին մտիթարելու վշտացած քոյրերը, տեսնելով թէ Մարիամը շտապով

<sup>1)</sup> Աղբիւր կամ պատճառ յարութեան և կենաց:

ղուրս եկաւ տանից, զնացին նորա հետեւից: Մարիամը ընկաւ Յիսուսի ոտքը և արտասուալից դռչեց. «Տէր՝ եթէ այստեղ լինէիր, եղբայրս մեռանելու չէր»: Խռովեցաւ Տիրոջ սիրտը այս ցաւագին տեսարանի վերայ. «Ո՞ր տեղ էր դրել Ղազարոսի մարմինը», հարցրեց, ասացին «Տէր՝ եկ և տես». և արտասուեց Փրկիչը: Հրէայք խօսումէին միմիանց հետ. Տեսէք, ասումէին, որչափ սիրումէր նորան. ոմանք ևս ասումէին՝ Միթէ Մա՛ որ ի ծնէ կուրի աչքը լուսաւորեց, չէ՞ր կարող այնպէս առնել որ սա ևս չմեռանէր: Աւերջապէս եկաւ Յիսուս այն այրի մօտ, ուր դրած էր Ղազարոսի մարմինը, հրամայեց գերեզմանի քարը առնուլ վերացից: Բայց Մարթան ասաց. «Տէր՝ այժմ մարմինը հոռած կ'լինի, որովհետև արդէն չորեքօրեայ է»: Պատասխանեց Յիսուս. «Չասացի՞ քեզ որ եթէ հաւատաս, կ'տեսնես Աստուծոյ փառքը»: Արք վեր առան քարը, Յիսուս աչքը դէպի վեր բարձրացրեց և ասաց. «Հայր՝ շնորհակալ եմ Քեզանից որ լսեցիր ինձ. և ես գիտէի որ ամենայն ժամանակ լուսմես ինձ. բայց այդ ասումեմ այստեղ կանգնած ժողովուրդի համար որ հաւատան թէ Դու ուղարկեցիր ինձ»: Յետոյ, դառնալով դէպի գերեզմանը, բարձրաձայն գոչեց. «Ղազարէ՛ արի եկ արտաքս»: Մեռեալը իսկոյն դուրս եկաւ, ոտները և ձեռները երկրով փաթաթած և երեսը վարջամակով պատած: «Արձակեցէք դորան, ասաց Տէրը, և թողէք որ զնայ»:

Հրէաներից շատերը, տեսնելով այդ հրաշքը, հաւատացին Նորան, ոմանք ևս զնացին Նրուստղէմ և այդ անցքը պատմեցին Փարիսեցիներին:

§ 72. Հրէից ծերակոյտը վճռումէ մեռուցանել Յիսուսը:  
(ՅՈՎ. Ժ. 47—57.)

Ղազարոսի յարութեան հռչակաւոր համբաւը և շատերի հաւատաւը Յիսուսին բորբոքեց չարանախանձ քահանայապետների ու Փարիսեցիների սիրտը. նոքա իսկոյն ասեան հա-

ւարուեցան և սկսան մտածել ու ասել. «Ի՞նչ պիտի անենք: Այդ մարդը շատ հրաշքներ է գործում: Թէ որ Վորան այսպէս թողնենք, ամէնքը կ'հաւատան Վորան. և (թէ որ Վորան ազգը Մեսիա—թագաւոր ճանաչէ՝ այն ժամանակ) շուով մայեցիք կ'գան մեր ազգը և մեր երկիրը բնաջինջ կ'անեն»: Այդ այսպէս տարակուսած խօսումէին, Ապիափա անունով մէկը, որ այն տարու քահանայապետն էր, ասաց նոցա. «Վուք բնաւ բան չգիտէք և չէք հասկանում թէ՛ լաւ է որ մի մարդ մեռանի ժողովրդի վերայ, քան թէ բոլոր ազգը կորնչէ»: Թէպետե՛ս՝ Ապիափա քահանայապետը այս խօսքերը անգիտակցաբար ասաց, սակայն այս յայտնի մարգարէութիւն էր թէ Յիսուս Վրիստոս պիտի մեռանէր մարդերի փրկութեան համար: Եւ այսպէս քահանայապետի խորհրդով ժողովը վճռեց սպանել Յիսուսը: Բայց Յիսուս Վրիստոս հեռացաւ իւր ուսոյնների դարանագործութենից, ըստ որում դեռ լրացած չէր նորա ժամանակը աշխարհիս վերայ, և զնաց Ափրայիմ քաղաքը, որ անապատի մօտ էր, և աշակերտների հետ բնակուեցաւ այնտեղ: Այնուհետեւ քահանայապետը ու Փարիսեցիքը հրաման հանեցին որ եթէ մինը իմանայ թէ ինչ տեղ է Յիսուսը՝ զայ իմաց տայ նոցա որ բռնեն Վորան:

§ 73. Տասն մնասի առաւելը:  
(ՂԱԿ. ԺԹ. 11—28.)

Աշակերտքը կարծումէին թէ Տէրը մօտենալով Արուսագէմին իսկոյն պիտի յայտնէր Եւր փառաւոր թագաւորութիւնը, ուստի և Յիսուս Վրիստոս հետեւեալ առակով հասկացրեց նոցա թէ Եւր թագաւորութիւնը յայտնելուց յառաջ, Ինքն պիտի համբառնայ առ շայր և թագաւորէ. և ապա վերստին պիտի աշխարհ գայ և Եւր հաւատացեալներից հաշիւ պահանջէ և իմանայ թէ ինչպէս էին գործ դրել նորա Եւր պարգեւած երկնային շնորհը. և ջերմեռանդ աշխատաւորքը վարձատրէ, իսկ ծոյլերը և անհոգները դատապարտէ:

«Մի անուշական մարդ, ասաց, զնալու էր հեռու աշխարհ որ իւր թագաւորական իշխանութիւնը առնու և յետ դառնայ. կոչեց իւր ծառայքը և տուաւ նոցա տասն մնաս, և ասաց որ շահեցնեն այն՝ մինչև իւր դարձը: Բայց որովհետեւ քաղաքացիքը ատուակին այդ մարդը, պատգամաւորներ ուղարկեցին նորա հետեւից, ասելով. Չենք կամենում որ նա մեր վերայ թագաւորէ: Սակայն նա առաւ թագաւորութիւնը. և յետ դառնալով կանչեց այն ծառայքը, որ ստացել էին արծաթը, որպէս զի իմանայ թէ ով ինչքան շահ էր բերած: Ահաւ առաջինը և ասաց. Տէր՝ մնասդ տասն մնաս բերեց: Ասաց նորան տէրը. Ազնիւ և բարի ծառայ, որովհետեւ այդ փոքր բանի մէջ հաւատարիմ եղար, իշխանութիւն ունեցիր տասն քաղաքի վերայ: Ահաւ երկրորդը և ասաց. Մնասդ՝ հինգ մնաս բերեց. և դու հինգ քաղաքի վերայ իշխան եղիր, ասաց: Ահաւ և միւսը. Տէր՝ ասաց, ահա քո մնասը, որ շորի մէջ փաթաթած պահել էի. վախենումէի քեզանից, ըստ որում դու մի խիստ մարդ ես, առնումես այն՝ ինչ որ դրած չես. և հնձումես՝ ինչ որ սերմանած չես: Պատասխանեց նորան տէրը. Վո բերանով կ'դատեմ քեզ. անհաւատ ծառայ, եթէ գիտէիր որ ես խիստ մարդ եմ, առնումեմ այն՝ ինչ որ դրած չեմ, և հնձումեմ՝ ինչ որ սերմանած չեմ, ապա ընդէ՞ր իմ արծաթը չտուիր սեղանաւորներին, որպէս զի եկած ժամանակս տոկոսով ստանայի այն: Յետոյ, դառնալով զէպի սպասաւորքը, ասաց. Առէք դորանից մնասը և տուէք նորան ով որ տասն մնաս ունի: Բայց այն թշնամիքս, որ չէին կամենում իմ թագաւորելը, բերէք այստեղ և իմ առաջև սպանեցէք»:

§ 74. Փրկիչը Սիմոն բորոտի տան մէջ:  
(ՅՈՒԷ. ԺԲ. 1—11.)

Օտակի տօնից վեց օր յառաջ, Յիսուս Վրիստոս կրկին եկաւ Բեթանիա, ուր Սիմոն բորոտը հացկերոյթ պատրաստեց Վորա համար իւր տանը: Մարթան ծառայումէր սեղա-

նին, և նորա եղբայր Ղ ազարտար սեղանակիցներէց մինն էր: Բայց Մարիամ, առնելով մի լիտր նարդոսի ազնիւ իւղ, եկաւ և ջերմեռանդ սրտով օծումէր Յիսուսի ոտքերը և իւր երկայն մազերով սրբումէր. և տունը լցուեցաւ իւղի անուշահոտութեամբ: Այս գործողութիւնը անհաճոյ թուեցաւ Յուդա Իսկարիովտացուն. « Ինչո՞ւ այդ իւղը երեքհարիւր դենարի չվաճառուեցաւ, ասաց նա ցաւելով և չբաժանուեցաւ աղքատներին: Բայց այս ասելով ոչ թէ հոգ էր տանում աղքատների մասին, այլ որովհետեւ արծաթասէր էր և այն արկղը, ուր աղքատների անուշով դանձանակ էին ձգում, իւր մօտ էր պահում, և երբեմն գողանումէր: » Թոյլ տուր դորան, ասաց Յիսուս, դա մի բարի գործ գործեց որ թաղմանս նշանակն է: Աղքատներ ձեզ հետ ամէն ժամանակ կ'ունենաք, բայց ինձ ամէն ժամանակ չէք կարող ունենալ: »

Երբ որ Յիսուսի Բեթանիա լինելու ձայնը տարածուեցաւ, ժողովուրդը մեծ բազմութեամբ եկաւ տեսնելու ոչ միայն Յիսուսը այլև յարուցեալ Ղ ազարտար: Յիսուսի թշնամիքը կրկին բորբոքուեցան նախանձով և խորհուրդ առնելով որոշեցին որ և Ղ ազարը սպանեն. վասն զի նորա պատճառով արդէն շատերը հաւատացել էին Յիսուսին:

**ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՅԵՂԹՆԵԿՆԵՐԻ ԵՐՈՒՍԵՂԻՄ ՄՏԵՆԵԼՈՒՅ ՄԻՆՁԵՒ ԷՆՄԻՆԻՉՈՒՄՆ ԿՈՐԸ ՅԵՐԿԻՆՍ:**

§ 75. Հանդիսաւոր մուտ Յիսուսի յԱրուսաղէմ: (ՄԱՏՔ. ԻՇ. 1—17. ՄԱՐԿ. ԺԸ. 1—11. ՂՈՒԿ. ԺԹ. 29—44 ՅՈՎՀ. ԺԲ 12—36.)

Երկրորդ առաւօտը, Միսնն բորոտի տան մէջ ընթրիք անելուց յետոյ, Յիսուս Քրիստոս Բեթանիայից մեծաշուք հանդէսով ճանապարհ ընկաւ դէպի մայրաքաղաքը իւր հայրենիքի—Արուսաղէմ: Երբ աշակերտների հետ մօտեցած էր Ձիթենեաց սարին, կանչեց նոցանից երկուսը և ասաց. « Գնա-

յէք այդ դիւղը, որ ձեր առաջնն է. և այնտեղ կ'գտանէք կապած մի էշ իւր յաւանակի հետ միասին, արձակեցէք և բերէք Ինձ: Իսկ եթէ մինը ասէ ձեզ, թէ է՞ր էք արձակում տանում, ասացէք թէ իւր Տիրոջը հարկաւոր է, և նա թոյլ կ'տայ ձեզ: » Գնացին աշակերտքը և կատարեցին որպէս պատուիրել էր Յիսուս, բերին էջը իւր յաւանակի հետ, իւրեանց շորերը ձգեցին նոցա վերայ և հեծուցին Յիսուսը <sup>1)</sup>: Այսպէս ճանապարհ ընկաւ Փրկիչը դէպի Արուսաղէմ. այն մեծ բազմութիւնը, որ Արուսաղէմից եկած էին Բեթանիա Յիսուսը տեսնելու, անպատմելի ուրախութեամբ լցուած գնումէին Նորա հետ: « Կաւ. խուռն բազմութիւնը օտարականների, որ Չատկի պատճառով եկած էին Արուսաղէմ, լսելով թէ հասարակաց Բարերարը և Ազատիչը գալիս է, արմաւենու ձիւղեր առած եկան ընդառաջ Նորա: Եւ մինչդեռ գնումէր Յիսուս, ունէք սկսան իւրեանց հանդերձները տարածել Նորա անցանելու ճանապարհի վերայ. այլք՝ ծառերի ծաղկած ձիւղերը կտրատելով փռումէին Նորա առաջը. և ամենեքեան, միա բերելով այն մեծամեծ հրաշքները որ տեսած էին, ցնծութեամբ և ուրախութեամբ Նորա յառաջից և հետեից գնալով, սկսան բարձրաձայն օրհնել զԱստուած և աղաղակել. « Ովաննա՞ Բարձրելոյն. Օրհնութիւն Որդւոյ Վաւթի. օրհնեալ որ գայ թաղաւորդ յանուն Տեառն. խաղաղութիւն յերկինս և փառք ի բարձունս: » Այս ուրախութեան ձայները, որ փառաւորումէին Յիսուսը, խոցողումէին նախանձարէկ Փարիսեցիների սրտերը և ախանջները. նոքա, այլ ևս չկարողանալով համբերել մօտեցան Նորան և ասացին. « Ղ արդապե՛ս, սաստիք աշակերտներից որ լսեն: » Եթէ

1) Հաւանական կարծիք է մեկնաց թէ Յիսուս կէս ճանապարհը նստաւ էշի վերայ և միւսը կէտը՝ յաւանակի. և ասումն թէ այդ իրողութիւնը խորհրդաւոր էր. էջը որ թողեց Յիսուս, ցրինակ էր Եբրայական ժողովրդին, որ կամակար մտքով կուրացաւ և չկամեցաւ ճանաչել և ընդունել իւր Տէրը: Իսկ նոր յաւանակը օրհնակ էր հեթանոսների, որ քարոզութեամբ Աւետարանին պիտի հնազանդէին Քրիստոսաղիք նոր օրէնքին:

դոքա լունն՝ քարերը կ'աղաղակեն՝ . պատասխանեց նոցա Յիսուս: Յետոյ երբ որ մտտեցաւ Արուսաղէմին, ցաւակցաբար նայեց քաղաքի վերայ և, միտ բերելով նորա մտայուտ կործանումն, արտասուելից աչքերով խօսեց. «Ո՛հ, Արուսաղէմ՝ Արուսաղէմ, ասաց, զոնեա՛ս այսօր ճանաչէիր քեզ խաղաղութիւն պարգևողը. բայց այդ ծածկած է այժմ քո աչքերիցդ: Աւ այսպիսի ապաշնորհութեանդ համար կ'հասանեն քեզ օրեր որ թշնամիքդ կ'զան քո վերայ, կ'պաշարեն քեզ, ամէն կողմից կ'նեղեն քեզ, որդիքդ կ'սպանեն և հիմնայատակ կ'կործանեն քեզ և քո քարդ քարի վերայ մնալու չէ. որովհետև չճանաչեցիր այցելութեանդ ժամանակը <sup>1)</sup>»: Արբ որ Յիսուս մեծահանդէս յաղթանակաւ մտաւ Արուսաղէմ, բոլոր քաղաքը դրդեցաւ և զարմանալով հարցանումէր «Ո՞վ է Սա՛». և բազմ մեծութիւնը պատասխանումէր. «Սա է մարգարէն Յիսուս, Պաւլիսայի՝ Նազարէթ քաղաքից»: Յիսուս Քրիստոս գնաց տաճարը և դուրս հանեց այն տեղից վաճառողները և գնողները, լումայափոխները և աղաւնէվաճառները, և լի վայրացմամբ ասաց նոցա, «Պարծ է՝ թէ իմ տունը աղօթքի տուն պիտի ատուի, բայց դուք աւազակների այր (փոս) էք շինել դորան»: Տաճարի մէջ եկան Նորա մօտ կոյրեր, կաղեր և իսկոյն բժշկեց նորանց: Քահանայապետքը և դպիւրքը, աներև տեսնելով այս սքանչելիքը և լսելով տղայոց ցնծութեան աղաղակը, որ ձայնակից լինելով չափահասներին, աղաղակումէին՝ «Ով սաննա՛, օրհնութիւն Որդւոյ Պաւլի», բարկացան և ասացին Յիսուսին. «Լսումես ինչ են ասում դոքա»: «Այո՛ լսումես, պատասխանեց Յիսուս, միթէ չէ՞ք կարդայել որ Տրպոց և կաթնակեր մանուկների բերանով պիտի կատարուի օրհնութիւնը»: (Սաղ. Բ. Յ.) <sup>2)</sup>:

1) Այս մարգարէութիւնը կատարուեցաւ Քրիստոսի 70 թուականին, երբ Հռովմայեցիք Տիտոսի ձեռամբ հիմնայատակ կործանեցին Երուսաղէմը:  
 2) Յիսուսի հանդիսար յաղթանակաւ Երուսաղէմ մտանելու սօնը Հայաստանեայց Ս. Եկեղեցին կատարումէ Չատկից մի շարքի յառաջ, այսինքն՝ մեծի պահոց Երդ շարքի Վերակէ օրը, որ կոչուումէ «Ծաղկազարդ կամ ծառազարդ Վերակէ»:

Արբ Յիսուս դուրս եկաւ տաճարից, հեթանոսք ոմանք, որ եկած էին Արուսաղէմ երկիրպագանել ճշմարտին Աստուծոյ, մեծ փափագանօք կամեցան տեսնել Նորան. բայց չհամարձակեցան ուղղակի մօտենալ, այլ իւրեանց ջերմ փափագը յայտնեցին Փիլիպպոս առաքեալին <sup>1)</sup>. սա ևս ասաց Ներքէասին և այսպէս երկուքը ի միասին նոցա խնդիրը յայտնեցին Յիսուսին: Յիսուս քաղցր մարդասիրութեամբ ընդունեց նորանց, և տեսնելով հեթանոսների մէջ հաւատքի սկզբնաւորութիւնը, որով ինքն պիտի փառաւորուէր, յետ խըր մահուան և յարութեան, դարձաւ դէպի առաքեալքը և ասաց. «Հասաւ ժամանակը որ փառաւորուի Որդին մարդոյ: Ճշմարտին ասեմ ձեզ, թէ որ ցորենի հատը հողի մէջ չընկնի և չմեռանի, ինքն միայն կ'մնայ. բայց եթէ մեռանի՝ շատ պտուղ կ'բերէ: (Այսինքն՝ նախ քան իմ փառաւորութիւնը Նս պիտի չարչարուիմ և մեռանիմ): Բայց այժմ տրտում է իմ անձը. և ի՞նչ ասեմ. Հայր՝ փառաւորիր Քո Որդիդ»: Այն ինչ ասաց այդ խօսքը, յանկարծ երկնքից ձայն եկաւ. «Փառաւորեցի և դարձեալ պիտի փառաւորեմ»: Պարզ էր ձայնը և ամենեցուն լսելի. սակայն ոմանք ասումէին թէ՛ Որտումն է. այլք՝ թէ Հրեշտակ խօսեց Նորա հետ: «Ոչ թէ իմ համար եկաւ այս ձայնը, ասաց Յիսուս, այլ ձեր համար: Այժմ է այս աշխարհի դատաստանը. այժմ այս աշխարհի իշխանը դուրս կ'ձգուի»: Աւ թողեց նոցա, գնաց Բեթանիա և զիշերը այնտեղ անցուց:

1) Որպէս աւանդումէ մեր Խորենացի պատմագիրը, սոքա էին Հայոց Արգար թագաւորի գետնանները, որ եկած էին հրաւիրել Յիսուսը Երեսիա Ազգաբը, անբուժելի հիւանդութեամբ վարակուած լինելով, լսեց Քրիստոսի հրաշագործութեանց համբաւը և, իսկոյն հաւատարմով Նորա Աստուածութեանը, թուղթ գրեց Նորան և աղաչեց գալ իւր ամոռանիտ քաղաքը և բժշկել իւր հիւանդութիւնը: Յիսուս Քրիստոս պատասխան գրել տուաւ Թովմաս Առաքեալին, երանց Արգարը մեծհաւատ քաղ ձանքը, որ առանց տեսնելու հաւատացել էր, և խոստացաւ իւր համբաւեալուց յետոյ ուղարկել իւր աշակերտներից մինը, նորա հիւանդութիւնը բժշկելու և երկնաւոր միութարութեամբ միխթարելու Նորան. այլ և իւր աստուածային երեսաց կենդանագիրը դատաստակե վերայ դրոշմած ուղարկեց նորան (Նոր. Գիրք. Բ. ԳԼ և Լ՝ Լ՝):

§ 76. Անիծեալ թղենին:  
(ՄԱՐԿ. ԺԱ. 12—26. ՄԱՏԹ. ԻԱ. 18—22)

Պիշերը հանգստանալով Բեթանիայում, վաղ առաւօտուն Յիսուս Քրիստոս կրկին դարձաւ Արուսաղէմ: Ղանապարհին բաղնեցաւ. և հեռուից տեսնելով մի տերեւալից թղենի՝ մտտեցաւ որ մի քանի թուղ առնու, բայց ոչինչ չգտանելով, բայց ի տերեւներից, անիծեց նորան և ասաց. «Այսուհետեւ յաւիտեան պտուղ չտաս»: և իսկոյն չորացաւ թղենին<sup>1)</sup>: Արկորդ օրը, երբ նոյն ճանապարհով Յիսուս Քրիստոս կրկին գալիս էր Արուսաղէմ, աշակերտքը զարմացան որ անիծուած թղենին բոլորովին արմատից չորացել էր: Պետրոսը չկարողացաւ պահել իւր զարմանքը և ասաց Տերոջը. «Ո՛ւրբբի՛ ահաւասիկ թղենին, որ անիծեցիր, չորացել է»: Յիսուս, կամենալով նոցա հաւատքը հաստատել, ասաց. «Եթէ ունենաք կատարեալ հաւատք դէպի Աստուած, ճշմարիտ ասումեմ ձեզ, ոչ թէ միայն թղենին, այլ եթէ այս լերանը ևս հրամայէք, սրտի աներկմիտ վստահութեամբ, թէ Այլի՛ր ծովը ընկիր՝ կ'ընկնի. ասումեմ ձեզ. ինչ բան որ կատարեալ հաւատքով խնդրէք աղօթքի մէջ՝ կ'ստանաք»: Բայց որպէս զի առաքելաբք չլինի թէ հաւատքի զօրութեամբ չարին չար հատուցանէին, կամ թէ աղօթքի մէջ Աստուծոյ վրէժխնդրութիւնը խնդրէին իւրեանց թշնամիների վերայ, յաւելացրեց Տէրը. «Բայց և մի մոռանաք թողութիւն տալ ընկերին, որպէս զի և ձեր երկնաւոր Հայրը թողութիւն տայ ձեր յանցանքին. եթէ դուք չթողուք, և ձեր Հայրը թողնելու չէ ձեր յանցանքը»:

<sup>1)</sup> Այս տերեւազարդ բայց անպտուղ թղենին օրինակ էր Աբրայական ժողովուրդին, մանաւանդ քահանայապետներին, դպիրներին և Փարիսեցիներին, որք, արտաքուստ կեղծ բարեպաշտութեամբ հպարտացած, ապաշխարութեան արժանաւոր պտուղ չբերին Յիսուսի վարդապետութեամբ. ուստի և Տէրը, անիծանելով այդ թղենին, հասկացրեց նոցա թէ իւրեանց կատարութեան և անհնազանդութեան համար, Աստուծոյ արդար վրէժխնդրութեամբ, կ'ստանան իւրեանց արժանի հատուցումն:

§ 77. Յիսուսի խօսքը քահանայապետների և ժողովուրդեան ծերերի հետ. Մշակների և թագաւորի որդւոյ հարստեաց առակները:  
(ՄԱՏԹ. ԻԱ. 23—46. ԻԲ. 1—14. ՄԱՐԿ. ԺԱ. 27—33. ԺԲ. 1—12. ՂԱՌԿ. Ի. 1—19.)

Երբ Յիսուս Արուսաղէմում տաճարի մէջ ուսուցանումէր ժողովուրդը, վերայ հասան քահանայապետները, դպիրները և ժողովուրդեան ծերերը և ասացին Նորան. «Պու՛րհնչ իշխանութեամբ ես ուսուցանում ժողովուրդը. կամ թէ ով տուաքեզ այդ իշխանութիւնը»: «Եւ Աս մի բան հարցանեմ ձեզ պատասխանեց Յիսուս, եթէ կ'ասէք Ինձ, այն ժամանակ և Աս կ'ասեմ ձեզ թէ ինչ իշխանութեամբ եմ զործում այդ: Յովհաննու մկրտութիւնը ուստի՞ էր, երկնքից թէ մարդերից»: Նոքա չգիտէին թէ ինչ պատասխանեն. սկսան մտածել այսպէս. եթէ ասենք երկնքիցն էր, կ'ասէ մեզ, ապա ընդէ՞ր չհաւատացիր. (վասն զի Յովհաննէսը վկայումէր Յիսուսի մասին թէ նա է Մեսիան). իսկ եթէ ասենք մարդերից, վախենումէք ժողովուրդից, որովհետեւ ամէնքը ընդունումէին Յովհաննէսը իբրև ճշմարիտ մարգարէ: Ուստի պատասխանեցին. «Չգիտենք»: «Աւրեմն, ասաց Յիսուս, և Աս չկամիմ ասել ձեզ թէ ինչ իշխանութեամբ զործումեմ այդ»: Յետոյ քանի մի խորհրդաւոր առակներով սկսաւ կշտամբել դպրաց և Փարիսեցւոց կեղծաւորութիւնը, որ ցուցանումէին իւրեանց անձր իբրև օրինապահ, բայց իրօք այնպէս չէին. և հասկացրեց նոցա թէ իւրեանց անհաւատութեան համար կ'զրկուին Աստուծոյ արքայութեանց և փոխանակ նոցա Աստուած կ'կոչէ հեթանոսները: «Մի մարդ, ասաց, երկու որդի ուներ. մեծին ասաց. Ո՛րդեակ, զնա՛ այսօր այգին գործելու: Նա պատասխանեց՝ կ'երթամ, Տէր. բայց չգնաց: Արկորդին ասաց նոյնը, նա պատասխանեց՝ չկամիմ զնալ. բայց յետոյ զղջացաւ և զնաց: Այդ երկուսից ո՞րը կատարեց հօր հրամանը»: Ասացին՝ «Վերջինը»: Ապա ասաց Յիսուս. «Ճշմարիտ ասեմ ձեզ, որ մաքսաւորները և մեղաւորները աւելի շուտով

կ'մտանեն Աստուծոյ արքայութիւնը քան թէ դուք: Արովհետեւ եկաւ Յովհաննէսը արդարութեան ճանապարհով, և դուք չհաւատացիք նորան. մաքսաւորները և մեղաւորները հաւատացին. և դուք տեսաք այդ չղջացաք, չկամեցաք զո՛նէ յետոյ հաւատալ Նորան: Յետոյ մի այլ առակով ևս Յիսուս յանդիմանեց նոցա ամբարիշտ գնացքը, և ասաց. «Այլ առակ լսեցէք. Մի տանուտէր այգի անկեց, ցանգով պատեց, նորա մէջ հնձան (փոս, խաղող ճմլելու համար) փորեց, աշտարակ շինեց, տուաւ մշակներին և ինքն հեռու աշխարհ գնաց: Արբ որ պողպատի ժամանակը մօտեցաւ, իւր ծառայքը ուղարկեց մշակների մօտ որ պտուղը առնեն բերեն: Բայց մշակները նորա ծառայքը բռնեցին, մինը տանջեցին, միւսը սպանեցին և երրորդը քարկոծեցին: Յետոյ աւելի բազմութիւն ծառայք ուղարկեց և նոցա հեռ նոյնպէս վարուեցան: Աւերջապէս ուղարկեց իւր միակ որդին որ կարելի է կ'ամաչէին նորանից: Բայց մշակները երբ որ տեսան նորան, իւրեանց մէջ այսպէս խօսեցին. Ահա սա է ժառանգը, եկէք սպաննք սորան որ ժառանգութիւնը մեզ մնայ: Աւ բռնեցին նորան այգուց դուրս հանեցին և սպանեցին <sup>1)</sup>: Ուրեմն երբ որ այգետէրը գայ, ի՞նչ պիտի անէ նոցա»: «Չար մշակները չարաչար կ'սպանէ, պատասխանեցին Փարիսեցիք, և այգին այնպիսի մշակների կ'տայ որ իւր ժամանակին պտուղը տան նորան»:

<sup>1)</sup> Այս առակով նկարագրեց Յիսուս ճշգրիտ պատկերը Աբրայական ժողովրդի, որ անկեց Աստուած իբրև այգի վայելուչ և պատրաստեց սուրբ օրէնքներով և ամենայն հարկաւոր զգուշութեամբ, և ապա տուաւ քահանաների, դպիրների և օրինագէտների ձեռքը, որպէս զի մշակեն նորան: Աւ երբեմն երբեմն ուղարկեց նոցա մօտ իւր մարգարէքը, հաւատքի և բարեպաշտութեան պտուղներ ժողովելու. սակայն շէրէից գլխաւորները տանջեցին մարգարէքը, քարկոծեցին և սպանեցին: Ի վերջոյ ուղարկեց Աստուած իւր միածին Արդին, բայց քահանայքը, դպիրքը և Փարիսեցիքը և Նորան ևս մտածումէին սպանել, որ այգին ինքեանք ժառանգեն միայն:

Յետոյ ասաց Յիսուս. «Մի՞թէ չէ՞ք կարդացել Ս. Գրքի մէջ թէ այն քարը, որ շինողքը անարգեցին՝ եղաւ անկեան գլուխը. (Սաղմ. ձԺԷ. 22.): Այս պատճառով ասու մեմ ձեզ, որ Աստուծոյ արքայութիւնը (ճշմարիտ Ակեղեցին) կ'վերանայ ձեզանից և կ'յանձնուի այն ազգին (հեթանոսներին), որ ժամանակին կ'տայ իւր պտուղը»: Այդ բանի վերայ դպիրները և քահանայապետները բորբոքուեցան բարկութեամբ. մանուաւոր, երբոր խելամուտ եղան թէ առակը իւրեանց վերայ էր ասած, կամեցան խկոյն բռնել Նորան, բայց դարձեալ երկիւղ կրելով ժողովրդից, զայրացած հեռացան գնացին:

Յառաջ տանելով իւր վարդապետութիւնը, Փրկիչը ասաց և հեռեկալ առակը, որով բացայայտ կացուց թէ փոխանակ երբնցական ժողովրդի, որ հակառակ կացին հրաւիրողներին, տանջեցին նոցա և սպանեցին, յաւիտենական երանութեան հարսանիքը — Աստուծոյ արքայութիւնը կ'մտանեն հեթանոսները, և թէ հրաւիրեալների քաղաքը հրոյ ձարակ պիտի լինի, իւրեանց ապիրատութեան համար: Բայց և հեթանոսներից ոչ պմենեքեան արժանի կ'լինին այդ երջանիկ հարսանեաց, եթէ չզգենուն աստուածային սրբարար շնորհները և չպահեն անմեղութեան լուսաւոր հանդերձը, որ ստացել էին աւաղանի մկրտութեամբ, կամ եթէ չլուանան մեղաց վէթերը ասպաշխարութեան արտասուքով. նոքա ևս վերջին դատաստանի օրը դուրս կ'հանուին դէպի խաւարն արտաքին: «Արկնքի արքայութիւնը, ասաց, նման է այն թագաւորին, որ իւր որդւոյ հարսանիքն էր կատարում, և ուղարկեց իւր ծառայքը որ հրաւիրեալքը հարսանիք կանչեն. բայց նոքա չկամեցան գալ: Գարձեալ ուղարկեց այլ ծառաներ, ասելով նոցա. յայտնեցէք հրաւիրեանդներին թէ՛ Ահա ապիկ ձաշս պատրաստ է, պարարտ զուարակներս մոթած են և ամենայն ինչ պատրաստ է, հարսանիք եկէք: Բայց նոքա ծուլացան գալ. ոմանք ազարակ գնացին, ոմանք իւրեանց առուտուրին և այլք բռնեցին նորա ծառայքը նախատեցին և սպանեցին: Թագաւորը,

երբ լսեց այդ, բարկացաւ. զօրք ուղարկեց, կոտորեց այն սպանողները և նոցա քաղաքը այրեց, և ապա, դառնալով դէպի ծառայքը, ասաց. « Զարսանիքս պատրաստ են, բայց հրաւիրեալքը արժանի չէին. ուրեմն զնացէք ճանապարհների անցքերի վերայ ինչ մարդ որ գտանէք հարսանիք կանչեցէք: Վնացին ծառայքը փողոցների մէջ, ինչ լաւ ու վատ մարդ գտան ժողովեցին բերին և հարսանիքը լցուեցաւ բազմականներով: Ներս մտաւ թագաւորը և, նայելով բազմականների վերայ, տեսաւ որ մինը հարսանեաց հանդերձ չէր զգեցած (մնացեալքը կանխազոյն հոգացել էին ըստ կարողութեան հարսանեաց վաճելուչ հանդերձ). Վ՛նկեր, ասաց, ի՞նչպէս մտար այստեղ որ չունէիր հարսանեաց հանդերձ. և նա պապանձուած մնաց: Յայնժամ ասաց թագաւորը սպասաւորներին. « Ապացէք դուրս ոսները ու ձեռները և հանէք դէպի արտաքին խաւարը, ուր որ կայ լաց և ատամների կրճտումն: Վ՛սան զի բազումք են կոչեցեալք և սակաւք են ընտրեալք »:

§ 78. Օրէնք հարկատուութեան. Յարութիւն մեռելոց: (ՄԵՅԹ. ԻԲ. 15—46. ՄԵՐԿ. ԺԲ. 13—37. ՂՈՒԿ. Ի. 20—44.)

Յիսուսի ոսոխները, տեսնելով թէ բռնութեամբ չէին կարող ձեռք բերել Նորան, խորհուրդ արին խօսքով որսալ Նորա բերանից տէրութեան հակառակ մի բան, որով իբրև քրէական յանցաւոր ընդդէմ տէրութեան, հռովմայեցի դատաւորի ձեռքով դատէին Նորան: Ուստի որոշեցին իւրեանց աշակերտքը « Երովդիանոսների »<sup>1)</sup> հետ ուղարկել Յիսուսի մօտ, որ խորհուրդ հարցանեն Նորանից, արդեօք պէ՞տք է հարկ տալ կայսեր՝ թէ ոչ: Այս անդգամ դիտաւորութեամբ մօտեցան սոքա Յիսուսին և ասացին. « Վ՛արդապետ՝ զիտե՞ք որ Վու ճշմարիտ ես և Աստուծոյ ճանապարհը ճշմարտու-

թեամբ ես ուսուցանում, և ամենեւին երեսպաշտութիւն չես անում մարդկանց. ուրեմն ասա՛ մեզ, ի՞նչպէս ես կարծում, պէ՞տք է հարկ տալ կայսեր՝ թէ ոչ: Եւ մնացաւ Տէրը նոցա խորամանկութիւնը և ասաց. « Վեղձաւորք՝ ինչն էք փորձում ինձ. ցոյց առէք հարկի դահեկանը »: Աւ նոքա մի դահեկան հանեցին տուին Նորան: « Սորա վերայ պատկերը և գրուածքը ո՞ւմն է ». հարցրեց Յիսուս: Պատասխանեցին « կայսեր »: « Վնացէք, ասաց, ինչ որ կայսերն է՝ կայսեր տուէք. և ինչ որ Աստուծոյն է՝ Աստուծոյ »: Այս որ լսեցին, զարմացան և ամօթապարտ խայտառակութեամբ հեռացան Նորանից:

Մի և նոյն օրին մօտեցան Յիսուսին Սաղուկեցիքը, որ մեռելոց յարութեանը և հոգւոյ անմահութեանը չէին հաւատում, և ասացին Նորան. « Վ՛արդապետ՝ Մովսէսը օրէնքի մէջ պատուիրումէ որ եթէ մինը անզաւակ մեռանի, նորա եղբայրը առնու նորա կինը: Երբ մէջ եօթն եղբայր կային. առաջինն կին առաւ և անզաւակ մեռաւ, և թողեց կինը իւր եղբօրը. նոյնպէս և երկրորդն և երրորդն մինչև եօթներորդը առանց զաւակի մեռան. նոցանից յետոյ մեռաւ և կինը: Այժմ ասա՛ մեզ, յարութեան ժամանակին, այն եօթն եղբայրներից որո՞ց կինը պէտք է լինի նա »: Պատասխանեց նոցա Յիսուս. « Մո՛րթեալք, դուք ո՞չ Ս. Գիւղըր գիտէք և ո՞չ Աստուծոյ զօրութիւնը. յարութեան ժամանակին ո՞չ կին կ'առնուն և ո՞չ մարդու կ'զնան, այլ երկնքի հրեշտակների պէս կ'լինին մարդիկ: Ի՛այց և մեռելոց յարութեան համար չէ՞ք կարդացել դուք այն՝ որ Աստուած մօրենու մօտ ասաց Մովսէսին. Ե՛ս եմ Աստուած Աբրահամու, Աստուած Իսահակայ և Աստուած Յակոբայ. (Եղբ. գ. 6.) և Աստուած՝ մեռելոց Աստուած չէ, այլ կենդանեաց. ըստ որում Նորա մօտ ամէնքը կենդանի են (հոգւով) »: Փարիսեցիք, որ անհաշտ թշնամի էին Սաղուկեցիներին, լսելով թէ Յիսուս, համառօտ, բայց իմաստուն վարդապետութեամբ, պապանձեցրեց նոցա, ժողովեցան ի միասին և կամեցան կրկին փորձել Յի-

1) Սոքա Հերովդէս թագաւորի արբանակներն էին, որ իբրև Մեծիա պաշտումէն Նորան:

սուսը. ուստի դպիրներից մինը, որ աւելի ներհուն գրադէտ էր համարուած, հարցրեց Նորան. «Օրէնքների մէջ որ պատուիրանն է մեծ»: Պատասխանեց Յիսուս. «Սիրիւք՝ Տէր Աստուածը ամենայն սրտով, ամենայն հոգւով և ամենայն մտքով. այս է մեծ և առաջին պատուիրանը: Սորա նման է և երկրորդը. Սիրիւք ընկերը, ինչպէս քո անձդ ես սիրում. այս երկու պատուիրանների մէջ են պարունակուած ամենայն օրէնք և մարդարէք»: Յետոյ Յիսուս ինքն մի բան հարցրեց Փարիսեցիներին. «Ի՞նչ կարծիք ունիք Վրիտանի (Մեսիայի) մասին, ասաց, ում որդին է». պատասխանեցին. «Վաւթի»: «Լեթէ Վաւթի որդին է, ասաց Յիսուս, ապա ի՞նչպէս ինքն Վաւթիթը Հոգւոյն ազդեցութեամբ Տէր է կոչում Նորան, ասելով. «Ասաց Տէր ցՏէր իմ՝ նիսա ընդ աջմէ իմմէ... (Սաղմ. ճթ. 1.): Ուրեմն եթէ Վաւթիթը Նորան Տէր է կոչում, ի՞նչպէս նորա Արդին կ'ընեն»: Այդ բանին Փարիսեցիք չկարողացան պատասխանել. և այնուհետև ոչ ոք չէր համարձակում Նորանից մի բան հարցանել:

§ 79. Փրկիչը հրապարակաւ խայտառակումէ Փարիսեցւոց անձնասիրութիւնը. Այրի կնոջ լումայն: (ՄԱՏԹ. ԻԳ. ՄԱՐԿ. ԺԲ. 38—44. ԳՈՒԿ. Ի. 45—47. ԽԱ. 1—4.)

Երբ որ Յիսուս իւր պատասխաններով ամաչեցրել էր դպիրքը և Փարիսեցիքը, դարձաւ դէպի աշակերտքը և ժողովրդի բազմութիւնը, և ազդու խօսքերով յանդիմանեց Փարիսեցւոց կեղծաւոր և ունայնասէր բարքը, նոցա խարդախութիւնը և անիրաւութիւնը:

Մովսէսի աթոռը, ասաց, նստան դպիրք և Փարիսեցիք: Ամենայն բան, ինչ որ ասեն ձեզ ((Օրէնքից), արէք և պահեցէք, բայց նոցա գործերին մի հետեւիք. որովհետև ուսուցանում են բայց չեն կատարում: Ծանր և դժուարաչիւր բեռներ գնում են մարդկանց ուսերի վերայ և ինքեանք մատով անգամ չկամին շարժել: Եւրեանց բոլոր գործերը մարդկանց ցոյց տալու համար են գործում: Վրապանակները լայնացնում են և իւրեանց

հանդերձի քղանցքը (ծայրերը) երկայնացնում<sup>1)</sup>. Սիրում են ընթրիքների մէջ առաջնակարգ տեղը և ժողովարանների մէջ առաջին աթոռները և հրապարակների մէջ ողջոյններ ստանալ և ամէնքից կոչուիլ Ուարբի Ուարբի»: Ապա խօսքը դարձցնելով դէպի Փարիսեցիքը, ասաց. «Այ ձեզ դպրաց և Փարիսեցւոց կեղծաւորաց, որ երկնքի արքայութիւնը փակում էք մարդկանց առջև (Թիւր և քմահաճոյ մեկնութիւն տալով օրէնքին). դուք չէք մտնում, և ցանկացողներին թոյլ չէք տալիս մտնել: Այ ձեզ դպրաց և Փարիսեցւոց կեղծաւորաց, որ ուսումէք (աւատ տուրքեր ստանալով) այրիների տները, գիտութեամբ երկար աղօթելով նոցա համար: Այ ձեզ դպրաց և Փարիսեցւոց կեղծաւորաց, որ ծով ու ցամաք պտտում էք, մի հեթանոս հրէական օրէնքին դարձցնելու համար. և երբ այդ յաջողումէ ձեզ, պատրաստում էք նորանից որդի գեհնի, կրկին վաւթար քան թէ դուք: Այ ձեզ կոյր առաջնորդներ, որ ասում էք թէ՛ ով որ տաճարի անունով երգվումէ, ոչինչ բան է. բայց ով որ երգվումէ ոսկիով որ տաճարի մէջ է, պարտական է պահել երգումն: Յիմարք և կոյրք՝ որն է մեծ, ոսկին թէ տաճարը, որ սրբումէ ոսկին... Այ ձեզ դպրաց և Փարիսեցւոց կեղծաւորաց, որ անանուխի, սամիթի և չամանի (մանր, աննշան բաների) տասանորդը տալիս էք. բայց օրէնքի ծանր ծանր պատուիրանները թողնում էք անփոյթ, այսինքն՝ արդարութիւնը, ողորմութիւնը և հաւատքը... Կոյր առաջնորդներ, որ մտուկները քամում էք և ուղտերը կլանում: (այսինքն՝ փոքր բաների մէջ խղճմտանքով էք վարվում, իսկ մեծամեծների մէջ անխղճաբար մեղանշում էք): Այ ձեզ դպրաց և Փարիսեցւոց կեղծաւորաց, որ բաժակը և սկաւառակը արտաքուստ սրբում էք, բայց ի ներքոյ լի են յափշտակութեամբ և անկարգութեամբ: Այ ձեզ դպրաց և Փարիսեցւոց կեղծաւորաց, որ նման էք գեղեցիկ գերեզմանների, որ դուրսից փառաւոր են երևում. բայց

1) Մովսէս Աստուծոյ հրամանով պատուեր սուսա ժողովրդին, ասելով. «Օրէնքի խօսքերը իբրև նշան կապեցէք ձեր ձեռներին. և անպակաս լինին նորա ձեր աչքի առաջը». (Երկ. օր. գ. 8. Ժա. 18.): Այս օրէնքը կատարելու մտքով, հրէայք գրապանակներ (կաշեայ փաթեթներ) շինեցին, օրէնքի խօսքերը գրած վերան, որ աղօթքի ժամանակ կրումէին ճակատի և ձեռների վերայ: Իսկ Փարիսեցիք լայնացնումէին այդ գրապանակները, իբրև ապացոյց իւրեանց առանձին օրինապահութեան և սրբութեան: Եւ որպէս զի հրէայք չմտնային որ ինքեանք Աստուծոյ ընտրեալ ժողովուրդն են, Աստուած Մովսէսի բերանով յայտնեց. «Սաս նոցա որ իւրեանց հանդերձի ծայրերին կապտաղոյն թելով ծոպեր (փունջեր) շինեն». (Թիւք ԺԵ. 38—40.): Փարիսեցիք մեծացնումէին այդ ծոպերը, որով մտածումէին սուրբ երեւիլ ժողովրդի աչքին:

ներսից լի են մեռելոց ոսկրներով և ամենայն պղծութեամբ։  
 Վոյնպէս և զուր զուրսից արդար էք երևում մարդկանց, բայց  
 ներսից լի էք կեղծաւորութեամբ և անօրէնութեամբ։ Այն ձեզ  
 դպրաց և Փարիսեացոց կեղծաւորաց, որ շինումէք մարգարէների  
 տապանները և զարդարումէք արդարների գերեզմանները։ Աւ-  
 ասումէք, եթէ որ մեր հայրերի օրերով ապրէինք մէք, մաս-  
 նակից լինելու չէինք մարգարէների արիւնին։ Այա ուրեմն  
 վկայումէք ձեր մասին թէ նոցա որդիքն էք որ մարգարէքը  
 կոտորեցին։ (Ձք՝ ծնունդք իժից, ի՛նչպէս պիտի փախչիք գե-  
 հենի դատաստանից։) Ա երջացնելով իւր խօսքը, Փրկիչը երեսը  
 դարձուց դէպի Երուսաղէմը և բացագանչեց, «Երուսաղէմ՝ Ե-  
 րուսաղէմ, որ կոտորեցիր մարգարէքդ, քարկոծեցիր առա-  
 քեալքդ, քանի՛ քանի անգամ կամեցայ ժողովելքո մանուկները,  
 ինչպէս հաւը իւր ձագերը ժողովումէ թեւերի տակ, բայց դուք  
 չկամեցաք։ Այժմ ձեր տունը (տաճարը, քաղաքը և երկիրը)  
 աւերակ կ'դառնայ։ Իայց ասեմ ձեզ որ այսուհետեւ տեսնելու  
 չէք Ինձ, մինչև որ ասէք՝ (Օրհնեալ եկեալ յանուն Տեառն)»  
 (այսինքն մինչև որ հաւատաք թէ Ես եմ Վրիստոսն)։

Այս խօսքերը աւարտելուց յետոյ, Յիսուս դուրս եկաւ  
 տաճարից և կանգնեցաւ դէմ յանդիման գանձանակին, և նա-  
 յումէր թէ ինչպէս ժողովուրդը դրամ էր ձգում այնտեղ։ Աւ-  
 ահա շատ մեծատուններ իւրեանց հարստութենից առատ  
 առատ դրամներ ձգեցին, եկաւ և մի աղքատ այրի կին և ձգեց  
 երկու լումայ։ Յիսուս մօտ կանչեց աշակերտքը և ասաց.  
 «Ղշմարիտն ասեմ ձեզ, այս տառապեալ այրի կինը ամենից  
 աւելի ձգեց գանձանակը. պատճառ որ միւսները իւրեանց ա-  
 ւելորդ ունեցածից ձգեցին, բայց սա իւր չքաւորութեամբ  
 ինչ որ ունէր չունէր սուաւ»։ (Ուրեմն հասկանալի է որ Աս-  
 տուած չէ նայում սուողի ձեռքին, հասպա նորա բարեսրտու-  
 թեանը, և ջերմեռանդ սրտով սակաւ սուածն Աստուծոյ ա-  
 ուջ շատ կ'համարուի)։

§ 80. Յիսուս Վրիստոս գուշակումէ տաճարի կործանումը,  
 Երուսաղէմի աւերումը, և աշխարհիս կատարածը. Տան  
 կուսանաց առակը։

(ՄԱՏՔ. ԻԴ. ԻԵ. 1—13. ՄԱՐԿ. ԺԳ. ԴՈՒԿ. ԻԵ. 5—38.)

Երբ որ Յիսուս տաճարից դուրս էր գնում, աշակերտնե-  
 րից մինը, ցոյց տալով տաճարի գեղեցիկ և աշտարակազարդ  
 շինուածքի վերայ, ասաց Վորան. «Ա արդապետ՝ տես որպի-  
 սի մեծագին քարեր են և որպիսի շինուածք»։ Պատասխանեց  
 Յիսուս. «Ի՞նչոյ այդ շէքը պիտի կործանուի և քար քարի  
 վերայ պիտի չմնայ»։ Իսկ երբ բարձրացաւ Ձիթենեաց սարի  
 վերայ և նստաւ տաճարի հանդէպ, առանձին մօտեցան Վորան  
 Պետրոսը, Յակոբոսը, Յովհաննէսը և Անդրէասը, և ասա-  
 ցին. «Ա արդապետ՝ ասա՛ մեզ՝ երբ պիտի լինի այդ (կործա-  
 նումն տաճարի), և կամ ի՞նչ նշան պէտք է լինի Վո երկ-  
 րորդ գալստեանը և աշխարհիս վերջին»։ Պատասխանեց նո-  
 ցա Յիսուս. «Չգոյշ կացէք որ չխաբուիք, վասն զի շատերը  
 կ'գան Իմ անուանով և կ'ասեն՝ Ես եմ Վրիստոսն, մի գնաք  
 նոցա հետեից։ Երբ կ'լսէք պատերազմներ և պատերազմի  
 համբաւներ, մի շփոթուիք, ըստ որում այդ բոլորը պէտք է  
 լինի, բայց այն դեռ վերջը չէ։ Ազգ ազգի վերայ վեր կ'կենայ  
 և թագաւորութիւն թագաւորութեան վերայ, տեղ տեղ  
 գեանաշարժք կ'լինին, սովք և մահ տարածամք, եպկայն այդ ա-  
 մէնը դեռ ևս ներդրութեանց սկիզբն է։ Այն ժամանակ կ'մատ-  
 նեն ձեզ դատաստանի, ժողովարանների մէջ կ'տանջեն ձեզ,  
 կ'սպանեն, դատաւորների և թագաւորների առաջ կ'տանեն,  
 միայն այն պատճառով որ դուք իմ աշակերտքս էք։ Այնտեղ  
 դուք պիտի վկայէք իմ մասին, բայց յառաջագոյն մի հոգաք  
 թէ ինչ պիտի պատասխանէք, այլ որ ինչ նոյն միջոցին կ'թե-  
 րադուրուի ձեզ՝ այն խօսեցէք. վասն զի խօսողը դուք լինելու  
 չէք, այլ շողին սուրբ։ Արդարեւ ձեզ կ'մատնեն ձեր ծնողքը, եղ-  
 բարքը, ազգականքը և բարեկամքը և շատերը ձեզանից կ'սպա-

նեն: Իմ անուան համար ատելի կ'լինիք ամենքի աչքում: Բայց իմացած եղիք որ ձեր գլխից մի մազ անգամ կորչելու չէ. և ձեր տեղական համբերութեամբ կ'ստանաք յաւիտենական կեանք և փրկութիւն: Եւ շատ սուտ մարգարէք յառաջ կ'գան և շատերը կ'մոլորեցնեն. և անօրէնութիւնը բազմանալու պատճառով շատերի սէրը կ'ցամաքի: Արբ արքայութեան Աւետարանը կ'քարոզուի բոլոր տիեզերքի մէջ ի վկայութիւն հեթանոսաց, այն ժամանակ կ'լինի աշխարհիս կատարածը:

Իսկ երբ որ կ'տեսնէք Արուսաղէմը շուրջ պատած զօրքով յայնժամ իմացէք որ մօտ է նորա կործանումն. ըստ որում վրէժ-խնդրութեան օրեր պէտք է լինին նոքա, որպէս զև Ս. Գրոց խօսքերը կատարուին: Այն օրերը այնպիսի մեծ նեղութիւն և տագնապ կ'լինի, ինչպէս որ աշխարհի սկզբից եղած չէ մինչև այժմ և լինելու չէ. Արուսաղէմի բնակիչքը սրոյ ճարակ կ'լինին և գերի կ'ընկնին հեթանոսների ձեռքը, և Արուսաղէմը ոտնակոխ կ'լինի հեթանոս ազգերից, մինչև որ կատարուի հեթանոսների ժամանակը: Քշմարիտ ասոււմեմ ձեզ, այս ազգը դեռ չանցած, այդ բոլորը կ'լինի:

Ա երջացնելով Արուսաղէմի և տաճարի կործանման մասին դուշակութիւնքը, Յիսուս Քրիստոս յայտնեց թէ ինչ նշաններ պիտի լինին Եւր երկրորդ փառաւոր գալստեանը և աշխարհիս կատարածին: «Ինչպէս փայլակը, ասաց, որ փայլումէ արեւելքից և երևումէ մինչև արևմուտք, այնպէս պիտի լինի և գալուստը Որդւոյ մարդոյ: Յանկարծակի, այն օրերի նեղութիւններից յետոյ, արեգակը կ'խաւարի, լուսինը լոյս պիտի չտայ, աստղերը կ'թօթափին երկնքից և երկնային զօրութիւնքը (հաստատութիւնը) կ'շարժին: Արկրիս վերայ մարդկանց սրտերին ահ ու սարսափ կ'տիրէ, ինչպէս խռովեալ ծովի ահաւոր ձայներից. մարդիկ սաստիկ երկիւղեց անհարկն տագնապ կ'կրեն, սպասելով այն նեղութեանցը, որ պիտի հասանեն տիեզերքին: Եւ ապա երկնքի վերայ կ'երևի Որդւոյ մարդոյ նշանը (Ս. Իսաչն). երկրիս բոլոր ազգերն լաց ու կոծի մէջ

կ'լինին և կ'տեսնեն Որդին մարդոյ, որ բազմաձ լուսափայլ ամպերի վերայ կ'գայ զօրութեամբ և մեծ փառքով: Եւր հրեշտակները կ'ուղարկէ Աս, և նոքա սոսկալի փողերի ձայներով կ'ժողովեն Աորա ընտրեալքը աշխարհիս չորս կողմից՝ մի ծայրից մինչև միւսը: Թագնու օրինակով իմացէք ժամանակը. երբ նորա ճիւղերը կակողում են և տերևները ցցվում, իմանումէք որ ամառն մօտ է: Այնպէս և դուք երբ այս նշանները կ'տեսնէք, իմացէք որ Աստուծոյ արքայութիւնը մօտ է: Միայն թէ այն վերջին օրի և ժամի մասին ոչ որ չգիտէ, ոչ երկնքի հրեշտակները և ոչ Որդին, բայց միայն Հայրն: Որպէս Աոյի օրերով պատահեցաւ, այնպէս կ'լինի և Որդւոյ մարդոյ գալստեանը: Գրհեղեղից յառաջ մարդիկ ուտումէին, խմումէին, կին էին առնում, մարդու էին դնում: և այնքան անհոգ մնացին մինչև վերայ հասաւ ջրհեղեղը և ամենքը բնաջինջ արեց: Այնպէս կ'լինի և Որդւոյն մարդոյ գալստեանը: Ուրեմն զգուշացէք ձեր մասին որ ձեր սրտերը չճանրանան շուայտութեամբ և արեցութեամբ և աշխարհային հոգսերով, որ մի գուցէ այն օրը յանկարծակի հասանէ ձեր վերայ: Արթուն կացէք այսուհետև և աղօթք արէք, վասն զի չգիտէք երբ կ'գայ այն ժամանակը:

«Յայնժամ երկնքի արքայութիւնը կ'ամանի տանն կուսանաց, որ իւրեանց լապտերքը առած դուրս եկան ընդ առաջ փեսայի: Հինգը նոցանից յիմար էին և հինգը՝ իմաստուն: Յիմարքը մոռացել էին իւրեանց հետ ձէթ առնելու, բայց իմաստունք ամանով առել էին: Եւ որովհետև ուշացաւ փեսայի գալուստը, կուսանք թմրեցին և քուն մտան: Յանկարծ կէս գիշերին ձայն բարձրացաւ թէ՛ Ահա գալիս է փեսան, ելէք ընդ առաջ նորա: Այն ժամանակ բոլոր կուսանքը վեր կացան և լապտերքը պատրաստեցին: Յիմարքը ասացին իմաստուններին. Տուէք մեզ ձեր իւղից, մեր լապտերքը հանդուժուեն: Գուցէ և մեզ բաւական չլինի, պատասխանեցին իմաստունքը, գնացէք վաճառողներից գնեցէք: Արբ նոքա գնա-

ցին, և ահա յանկարծ եկաւ փեսան. հինգ պատրաստ կուսանքը ներս մտան նորա. հետ հարսանիք և դուռը փակուեցաւ<sup>1)</sup>: Յետոյ եկան և միւս կուսանքը և ասացին. Տէր Տէր, բաց մեզ: Եւ նա պատասխանեց նոցա. Ամէն ասեմ ձեզ, ոչ գիտեմ զձեզ: Ուրեմն արթուն կացէք, որովհետեւ չգիտէք ո՛չ օրն և ո՛չ ժամն, երբ գալոց է Արդին մարդոյ<sup>2)</sup>:

§ 81. Քանքարն երի առակը. Նկարագիր վերջին դատաստանի: (ՄԼՏԹ. ԻԵ. 14—46.)

Հետեւեալ առակով Յիսուս Վրիստոս ուսուցանումէ թէ Իւր երկրորդ դալտեանը նորա միայն կ'վարձատրուին, որ Աստուծոյ պարգեւած շնորհները արիաջան աշխատութեամբ գործ կ'ընեն, և օգտաւէտ կ'լինին թէ՛ իւրեանց և թէ՛ ընկերի փրկութեանը նպաստելով: «Մի մարդ, ասաց, գնալու էր օտար աշխարհ, կանչեց իւր ծառայքը և յանձնեց նոցա իւր կայքը. մինին տուաւ հինգ քանքար, միւսին՝ երկու և երրորդին՝ մի. իւրաքանչիւրին իւր կարողութեան համեմատ, և ինքը ծանապարհ ընկաւ: «Նա, որ հինգ քանքար էր ստացել, գործ դրեց այն և ձեռք բերեց այլ ևս հինգ. նոյնպէս և նա, որ երկու քանքար էր ստացել, յաւելացրեց նոցա վերայ այլևս երկու. իսկ մի քանքար ստացողը գնաց փորեց գետինը և աիրոջ տուած արծաթը թաղեց: Մի քանի ժամանակից յետոյ դարձաւ ծառաների տէրը և հաշիւ պահանջեց նոցանից: «Նա, որ հինգ քանքար էր ստացել, յառաջ եկաւ, և, միւս հինգ քանքարը յանձնելով տիրոջը, ասաց. Տէր՝ դու ինձ հինգ քանքար տուիր, ահա այլևս հինգ քանքար շահուեցայ նոցա վերայ: Այնիւ ծառայ, բարի և հաւատարիմ, ասաց նորան Տէրը, որովհետեւ սակաւ բանի մէջ հաւատարիմ գտանուե-

1) Խորայեւացոց մը սովորութիւն էր, որ փեսան հարսանեաց գիշերին գնումը հարսի մօտ և հանդէսով բերումը նորան իւր տունը. իսկ հարսի ընկեր կուսանքը այն միջոցին վառած լապտերներով սպասումէին փեսայի տան մօտ. դուրս էին գալիս նոցա առաջ և բերումէին փեսայի տունը, ուր և կատարվումը հարսանեաց հանդէսը:  
2) Այս առակով Յիսուս Վրիստոս պատուիրեց իւր հետևողներին սպասել իւր փառաւոր դալտեանը, ո՛չ միայն հաւաքի լապտերով, այլև առաքինութեան ու բարեգործութեան խղով:

ցար, շատ գործերի վերայ կառավարիչ կ'ընշանակեմ քեզ. եկ ուրախակից եղիւր տիրոջդ: Մօպեցաւ և երկու քանքար ստացողը և ասաց. Տէր՝ երկու քանքար ստացայ քեզանից, ահա միւս երկուսը վատտակեցի: Եւ ասաց նորան տէրը. Այնիւ ծառայ, բարի և հաւատարիմ, որովհետեւ այս սակաւ բանի մէջ հաւատարիմ մնացիր, շատ գործեր կ'յանձնեմ քեզ, եկ և ուրախացիր տիրոջդ հետ: Ա երջապէս յառաջ եկաւ և մի քանքար ստացողը և ասաց. Տէր՝ գիտեմ դու մի խտասիրտ մարդ ես, հնձումես այն՝ ինչ որ սերմանած չես, և ժողովումես այն անդից, ուր ոչինչ դրած չես. և երկիւղ կրելով գնացի և թաղեցի քանքարդ գետնի մէջ, ահա քեզ՝ ստացիր այն: Պատասխանեց նորան տէրը. «Ծառայ չար և վատ. եթէ գիտէիր որ ես հնձումեմ, ուր սերմանած չեմ և ժողովումեմ, ուր ոչինչ դրած չեմ, ուրեմն պարտական էիր իմ արծաթը սեղանաւորներին յանձնել, որ իմ վերադարձին տոկոսով ստանայի: Առէք դորանից քանքարը և տուէք տասն քանքար ունեցողին: Ա անս զի ով որ ունի (գիտէ գործ զնել ունեցածը) կրկին աւելորդով կ'ստանայ. իսկ ով որ չունի (չգիտէ գործ զնել ունեցածը) կ'զրկուի և նորանից, ինչ որ ունի: Բայց այս անպիտան ծառայն հանէք արտաքին խաւարը, ուր կ'լինի լաց և ատամների կրճատումն»:

Աշխարհիս կատարածը նկարագրելուց յետոյ, Յիսուս Վրիստոս յառաջ տարաւ Իւր խօսքը վերջին դատաստանի մասին, և այսպէս նկարագրեց այն: «Երբ Արդին մարդոյ կ'գայ Իւր փառքով և բոլոր հրեշտակները՝ Նորա հետ, յայնժամ կ'նստի Իւր փառաց ակօռի վերայ և ամենայն ազգերը կ'ժողովուին Նորա առաջև. և Նա կ'բաժանէ նոցա միմեանցից, որպէս հովիւր որոշումէ ոչխարքը այծերից. ոչխարքը (արդարքը) կը կանգնեցնէ աջակողմը, իսկ այծերը (մեղաւորքը), ձախակողմը: Յայնժամ իբրև տիեզերակալ թագաւոր լինու պիտի տայ, ասելով աջակողմն եղածներին. «Եկայք օրհնեալք շօր իմոյ, ժառանգեցէք աշխարհիս սկզբից ձեր համար պատրաստած արքայութիւնը: Ա անս զի քաղցեցայ և կերակրեցիք ինձ. ծարաւեցայ՝ և ջուր տուիք ինձ: Օտար էի՝ և ընդունեցիք ինձ. մերկ էի՝ և զգեցուցիք ինձ. հիւանդ էի՝ տեսութեան եկաք ինձ. բանտումն էի՝ և այցելութիւն արիք ինձ»: Այն ժամանակ ար-

դարբը պատասխան կ'տան նորան. Տէր՝ ե՞րբ տեսանք քեզ քաղցած և կերակոնցիկնք, կամ ծարաւի և արբուցիկնք: Ե՞րբ տեսանք քեզ օտար և ընդունեցիկնք, կամ մերկ և զբեցուցիկնք: Ե՞րբ տեսանք քեզ հիւանդ կամ բանտում և այցելութիւն արկնք քեզ: Պատասխան կ'տայ թագաւորը. « Եմէն ասեմ ձեզ, որովհետեւ այս փոքրիկ (կարօտեալ) եղբայրներից մինին արկնք ինձ արկնք: Յետոյ դառնալով դէպի մեղաւորքը, որ ձախակողմն են, կ'ասէ. « Երթայք յինէն անիծեալք ի հօւրն յաւիտենական, որ պատրաստած է սատանայի և նորա արքանեակների համար: Այն զե քաղցեցայ և չկերակրեցիք ինձ. ծարաւեցայ և չարբուցիք ինձ: Օտար էի և չընդունեցիք ինձ. հիւանդ էի և բանտի մէջ՝ այցելութիւն չարկնք ինձ: Եյն ժամանակ և նոքա կ'պատասխանեն նորան, ասելով. Տէր՝ ե՞րբ տեսանք քեզ քաղցած կամ ծարաւի կամ օտար կամ մերկ կամ հիւանդ կամ բանտի մէջ և չպատուեցիկնք և չճառայեցիկնք Վեդ: « Եմէն ասեմ ձեզ, կ'պատասխանէ թագաւորը, որովհետեւ այս փոքրիկ եղբայրներիցս մինին չարկնք, ուրեմն և ինձ չարկնք: Եւ կ'երթան նոքա ի տանջանան յաւիտենականս և արդարքն ի կեանն յաւիտենականս: »

§ 82. Յուդա մատնիչ:

(ՄԵՏԹ. ԻԶ. 2—6. 14—16. ՄԵՐԿ. ԺԴ. 1—2. 10—11. ԴՈՒԿ. ԻԲ. 1—6.)

Չասկից երկու օր յառաջ, քահանայապետքը և դպիրքը ծերերի հետ միասին ժողովեցան Վայիափա քահանայապետի տունը, և խորհուրդ ի մէջ առնելով որոշեցին նենգութեամբ բռնել Յիսուսը և սպանել. միայն թէ այս օծնի օրերին չլինի, ասումէին, որպէս զե խռովութիւն չպատահի ժողովրդի մէջ: Եյն ժամանակ երկոտասան առաքեալներից մինը՝ Յուդա Իսկարիովաացին յանկարծ եկաւ ներս մտաւ և ասաց ժողովին. « Ինձ ի՞նչ կ'տաք, եթէ ես մտանեմ՝ նորան ձեր ձեռքը: Եյս առաջարկութեան վերայ յանչափս ուրախացած, Յիսուսի թշնամիքը խոտացան նորան երեսուն արծաթ (որ մի հասարակ ստրուկի զին էր): Յանձն առաւ Յուդա. և այնուհետեւ յարմար ժամանակ էր որոնում, որ ամբոխից հեռու իւր Վարդապետը մտանէր նոցա ձեռքը:

§ 83. Պատրաստութիւն Չասկի. Ոսնալուայ. Ընթրիք Տեառն. Սահմանադրութիւն Հաղորդութեան Ս, Խորհուրդ: (ՅՈՒՀ ԺԳ. 1—30. ՄԵՏԹ. ԻԶ. 17—29. ՄԵՐԿ. ԺԴ. 12—25. ԴՈՒԿ. ԻԲ. 7—30.)

Բաղարջակերաց առաջին օրը, որ հինգշաբթի էր, Նիսան ամսոյ 13-ը, շրէպքը, հետեւելով Սովսիական օրէնքին, պիտի մօրթէին Չասկական գառն, և, արեւը մայր մտանելուց յետոյ, ուտէին այն բաղարջով և եղէգով ի յիշատակ ազատութեան եգիպտական գառն ծառայութեանց:

Յիսուս Վրիստոս, կամենալով այդ վերջին Պասեքը օծնել իւր աշակերտների հետ միասին, կոչեց Պետրոսը և Յովհաննէսը և պատուիրեց նոցա գնալ Երուսաղէմ և պատրաստել Չասկական գառն: Եւ երբ հարցրին նոքա թէ « Ո՞ւր », ասաց, « Գնացէք քաղաք և ներս մտանելու ժամանակ մի մարդ կ'գայ ձեզ հանդէպ, ջրի սափորը ուսին. հետեւեցէք նորան և ո՞ր տուն նա մտանէ, մտէք և դուք և ասացէք տանտիրոջը. « Վարդապետը ասումէ, ժամանակս մօտեցել է (մեռանելու), կամիմ քո տանը Չասկի առնել աշակերտներիս հետ. նա ցոյց կ'տայ ձեզ մի մեծ զարդարած վերնաստուն, այն տեղ սեղան պատրաստեցէք: Գնացին նոքա և, Վրիստոսի տուած նշանների համեմատ, գտանայն տունը, ուր ամենայն բան պատրաստեցին: Երեկոյեան, արեւը մայր մտանելու ժամանակ, Յիսուս Վրիստոս եկաւ պատրաստած վերնաստունը և երկոտասան առաքեալների հետ սեղան բազմեցաւ: Ընթրիքից յառաջ, « Սեծապէս կ'բաղձայի, ասաց, նախ քան իմ չարչարանքը այս Չասկական գառն ձեզ հետ ուտել: Եւ մինչդեռ ուտումէին, Յիսուս, կամենալով իւր անապաման սէլը վերջին անգամ ցոյց տալ աշակերտներին և խոնարհութեան օրինակ թողուլ ամենեցուն, վեր կացաւ ընթրիքից, հանեց հանդերձը, զենջակ կապեց մէջքին, կոնքի մէջ ջուր լցրեց և սկսաւ աշակերտների բաները լուանալ և զենջակով սրբել: Երբ կարգը Պետրոսին հասաւ, սոսկացաւ շիթոնեցաւ նա և, լի յարգանքով, ասաց. « Տէր՝ Գնի իմ ոտքս լուանաս. քաւ լի-

ցի, յաւիտեան չեմ թողնելու այդ: Պատասխանեց նորան Յիսուս. «Այժմ չգիտես իմ արածը, բայց յետոյ կ'իմանաս. և եթէ չլուանամ, ինձ հետ մասն և բաժին չունիս»: «Տէր՝ բացազանչեց Պետրոսը, եթէ այդպէս է, ո՛չ միայն ոտներս այլև ձեռներս ու գլուխս լուս»: «Ո՛չ, ասաց Յիսուս, լուացածին պէտք է միայն ոտները լուանալ, վասն զի ինքն ամենեւին սուրբ է. և դուք սուրբ էք, բայց ոչ ամենեքեան»: Այս ասելով ակնարկուակէր Տէրը այն աշակերտին, որ իւր մարմնաւոր սրբութեան հետ չունէր ներքին՝ հոգեւոր սրբութիւնը. սա Յուդան էր, որ մտածուակէր մասնել իւր Վարդապետը: Երբ ամենեցուն ոտքը լուաց Յիսուս, հանեց զենջակը, զգեցաւ հանդերձը և կրկին եկաւ սեղան բազմեցաւ: «Գիտէ՞ք, ասաց, ինչ արի ես ձեզ: Գուք կոչուակէր ինձ Վարդապետ և Տէր, և ճշմարիտ էք ասում. վասն զի այնպէս եմ իսկ: Ապա թէ որ Աս՝ Տէր և Վարդապետ գորով՝ ձեր ոտքը լուացի, դուք ևս պէտք է միմեանց խոնարհիք և պատրաստ լինիք միմեանց ոտքը լուանալու: Սորանով օրինակ տուի ձեզ, որ ինչպէս Աս ձեզ արի՝ այնպէս և դուք աւանդէք: Մտածեցէք որ ծառան մեծ չէ իւր տիրոջից և առաքեալը՝ առաքողից: Գուք այս գիտէք. բայց բաւական չէ իմանալը, եթէ գիտէք՝ ևս առաւել երանելի կ'լինիք՝ եթէ գործով ցոյց տաք: Բայց ոչ ամէնքդ երանելի էք, վասն զի գիտեմ ում որ ընտրած եմ. իսկ այժմ ժամանակն է որ կատարուի մարգարէութիւնը թէ՛՝ «ձեռս հաց ուտողը, խաբէութիւն արեց ինձ». (Մաղմ. խ. 10.): Այս խօսքերով Յիսուս կամենուակէր զգաստացնել Յուդան, ուստի կրկին աւելի յայտնի խօսեց. «Ճշմարիտն ասեմ ձեզ, ասաց, ձեզանից մինը պիտի մատնէ ինձ»: Առաքեալք այս լսելով զարհուրեցան. և ամեն մինը տարակուսած հարցանուակէր, «Արդեօք ե՞ս եմ, Տէր. բայց Յուդայի սրտին ազահութեան ակտը տիրել էր, նա լուռ էր: Այն ժամանակ Յիսուս, աւելի ազդեցութիւն տալու համար իւր խօսքին, յայտնապէս ասաց, «Տաներկուսիցդ մինն է, որ ձեռքը իմ

հետ սկաւառակը մտեց: Արթալը պէտք է երթայ Որդին մարդոյ, որպէս գրած է՝ Նորա մասին, բայց վնց այն մարդուն, ում ձեռքով Որդին մարդոյ կ'մատնուի. լաւ էր որ ծնած չլինէր այն մարդը»:

Այս խօսակցութիւններից յետոյ, ընթրիքի վերջին, Յիսուս առաւ (բաղարջ) հաց, օրհնեց, կոտորեց և տալով իւր աշակերտներին, ասաց. «Առէք կերէք, այս է մարմին իմ». յետոյ առաւ զինիով բաժակը, օրհնեց, գոհացաւ և տուաւ նոցա, ասելով. «Արբէք դորանից ամէնքդ. այս իմ արիւնս է նոր ուխտի, որ թափվումէ ձեր և շատերի մեղաց քառութեան համար.»: Եւ այս խօսքերով սահմանեց Տէրը շաղորդութեան սուրբ խորհուրդը. և պատուիրեց Եւր մահուան յիշատակի համար այդ խորհուրդը (Պատարագի) կատարել միշտ: շաղորդութեան խորհուրդը հաստատելուց յետոյ, Յիսուս, տեսնելով որ իւր մասնութեան և չարչարանաց ժամն մօտենումէր, խռովեցաւ հոգևով և հրապարակաւ յայտնեց իւր ներքին կսկիծը, բայց առանց յայտնելու տակաւին մատնիչի անունը: Որպէս փոքր մի յառաջ ասած էր, կրկնեց նոյնը, ասելով. «Ճշմարիտն ասեմ ձեզ, ձեր միջից մինը մատնելու է ինձ»: Այս խօսքը խոր խոցեց աշակերտաց սիրտը, բայց ոչ Յուդայի. ամէնքը տրամեցան և ապշած նայուակին միմեանց վերայ թէ ում համար էր ասում Տէրը: Պետրոսը, կամենալով իմանալ այդ գաղտնիքը, նշանով հասկացրեց Յիսուսի սիրելի աշակերտին (Յովհաննէսին), որ հարցանէ թէ ով պիտի մատնէ: Յովհաննէսը, որ աւելի մօտ նստած էր Եւր Վարդապետին, ընկաւ Նորա լանջքով և հարցրեց: «Նա է, մեզմ ձայնով պատասխանեց Յիսուս, ում որ ես պատառը կ'թաթախեմ և կ'տամ». և թաթախելով պատառը տուաւ Յուդա Իսկարիոտացուն: Այն ժամանակ սատանան բոլորովին տիրեց Յուդայի սրտին. որ, տեսնելով թէ Տէրը մատմբ ցոյց է տալիս իւր վերայ, ոչ միայն չամուսեցաւ, այլ յանդգնեցաւ անդամ հարցանել «Արդեօք ե՞ս եմ, Վարդա-

պետ“: „Պ՛ն էս“, պատասխանեց Յիսուս: Վերջապէս այս պարզ վկայութեամբ ևս չգրջաց և իւր խտտասրտութեան մէջ յամուռուած մնաց. ուստի և Յիսուս ասաց նորան. „Ինչ որ անելու ես, արա՛ շուտով“: Ոչ ոք առաքելներից չհասկացաւ այս խօսքը. նորա կարծումէին թէ որովհետև հասարակաց արկղը Յուդայի մօտ էր, Յիսուս պատուիրեց նորան գնել ինչ որ հարկաւոր էր տօնի համար, կամ թէ որորմութիւն տալ աղքատներին: Իսկ Յուդա առնելով պատասառ դուրս եկաւ իսկոյն և գիշերով գնաց Յիսուսի թշնամիների մօտ, իւր չար դիտաւորութիւնը գլուխ բերելու:

§ 84. Վան խաստացութիւն Պետրոսի ուրացութեան մասին. Յիսուսի վերջին պատուէրը սիրոյ:  
(ՄԱՏԹ. ԻԶ. 30—35. ՄԱՐԿ. ԺԴ. 26—31. ՂՈՒԿ. ԻԲ. 31—39. ՅՈՎ. ԺԳ. 31. ՅՈՎ. ԺԷ.)

Մտանիչ և ապերախտ աշակերտի հեռանալուց յետոյ, Յիսուս Վրիստոս, տեսնելով որ մօտ էր իւր չարչարանաց ժամն, դարձաւ դէպի մետասան առաքելալքը և ասաց. „Որդեակք իմ, փոքր ինչ ժամանակ ունիմ մնալ ձեզ հետ. կը որոնէք Ինձ, բայց որպէս շրէից ասացի՝ թէ ուր Ես պէտք է գնամ դուք չէք կարող գալ, նոյնը այժմ ձեզ եմ ասում: Երբ պատուիրան եմ տալիս ձեզ. սիրեցէք միմեանց, որպէս ես ձեզ սիրեցի՝ այնպէս և դուք սիրեցէք միմեանց. այս նշանով կ'ճանաչեն մարդիկ թէ դուք իմ աշակերտքս էք, երբ միմեանց կ'սիրէք“: Սիմօն Պետրոսը հարցրեց. „Տէր՝ ուր երթաս“: Պատասխանեց Յիսուս. „Ուր ես գնում եմ՝ դու այժմ չես կարող գալ իմ հետեից, բայց յետոյ կ'գաս“: Տէր, կրկնեց Պետրոս, ինչո՞ւ այժմ չեմ կարող գալ Վրի հետեից. Վրի համար կեանքս պատրաստ եմ քո հետեւելու“: „Սիմօն Սիմօն, պատասխանեց Յիսուս, Ես աղօթեցի քո համար որ հաւատքդ չպակասի. բայց դու, երբ կ'զոջաս և կ'դառնաս, հաստատիր եղբարքդ: Պուք ամէնքդ այս գիշեր գայթակորուելու էք Ինձանից. փասն զե գը-

րած է՝ շուտով կ'զարկեմ, ոչխարքը կ'ցրուին: Իսկ յետ յարութեանս կ'աննեմ ձեզ Վալիլիսցում“: Պատասխան տուաւ Պետրոս. „Թէպէտև ամենքեան գայթակղին Վրեզանից, սակայն ես՝ ոչ երբէք: Տէր՝ Վրեզ հետ բանտ երթալ և մեռանել անգամ պատրաստ եմ“: Երբ կրկնումէին և բոլոր աշակերտքը: „Ղշմարիան ասեմ քեզ, պատասխանեց Յիսուս Պետրոսին, այս գիշերիս, դեռ աքաղաղը չխօսած, դու երբէք անգամ կ'ուրանաս Ինձ“:

Ենհարին արամութիւն տիրեց առաքելոց սրտին, երբ լսեցին թէ իւրեանց բարեգութ Տէրը շուտով պիտի հեռանար նոցանից: Բայց Յիսուս քաջալերեց նորանց, ասելով. „Թող չչփոթուին ձեր սրտերը. այլ հաւատացէք Աստուծոյ և Ինձ: Իմ շօր տան (աքքայութեան) մէջ օթեւաններ շատ կան, կ'երթամ ձեր համար տեղ պատրաստելու, և երբ կ'պատրաստեմ, դարձեալ կ'գամ և ձեզ Իմ մօտ կ'առնում. որպէս զև ուր Ես եմ, այնտեղ և դուք լինիք: Ես եմ ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք: Ով որ Ինձ հաւատում է, այն գործերը, որ Ես գործում եմ և նա կ'գործէ, և առաւել ևս մեծամեծ բաներ կ'գործէ: Ամենայն բան՝ ինչ որ իմ անունով կ'խնդրէք՝ կ'ստանաք: Եթէ սիրէք Ինձ՝ իմ պատուիրանները կ'պահէք. և Ես կ'աղաչեմ շայրը, և այլ Մխիթարիչ կ'տայ ձեզ, որ ձեզ հետ կ'բնակի յաւիտեան: Ղշմարտութեան հողին, Մխիթարիչ շօզին սուրբը, որ շայրը կ'ուղարկէ Իմ անունով, նա ամենայն բան կ'ուսուցանէ ձեզ և կ'յիշեցնէ ձեզ ամենայն՝ ինչ որ ասացի ձեզ: Ով որ զիտէ և պահում է Իմ պատուիրաններս, նա է՝ որ սիրում է Ինձ. և Ինձ սիրողը՝ սիրելի կ'լինի իմ շօրիցը, և ես կ'սիրեմ Երան և Ինձ կ'երեւցնեմ նորան: Թէ որ մինէ սիրում է Ինձ, իմ խօսքերը կ'պահէ, և շայրս կ'սիրէ նորան. և նորա մօտ կ'գանք և բնակութիւն կ'հաստատենք նորան մէջ: Խաղաղութիւն եմ թողում ձեզ, իմ խաղաղութիւնն եմ տալիս ձեզ, ոչ այնպէս՝ որպէս աշխարհն է տալիս՝ Ես տալիս եմ ձեզ. թող չչփոթուին ձեր սրտերը և չփխեանան“:

Այս խօսքերով Յեսուս աւարտեց վերջին ընթրիքը և, աւաքեալների հետ միասին, դոհարանախան երգով դուրս գալով վերնատանից, գնաց դէպի Ձիթենեաց լեռան: Ճանապարհին, յառաջ ամենելով իւր վարդապետութիւնը, Յիսուս Քրիստոս կամեցաւ բացայայտել աշակերտներին որ թէ և ինքն շուտով պիտի հեռանար նոցանից, սակայն այն սերտ միութեան կայն, որով ինքն կապուած էր հաւատացեալներին հետ, քակուելու չէ երբէք. ըստ որում այդ կայն ներքին և հոգևոր էր: «Աս եմ որթն (խաղողի ծառն) ճշմարիտ, ասաց, և շայրս մշակն է: Ամենայն ուռ (ճիւղ) որ պտուղ չէ բերում, Մա կտրումէ, իսկ այն՝ որ բերումէ պտուղ, Մա մնալումէ, որպէս զի առաւել ևս պտղաբեր լինի: շաստատուն կացէք իմ մէջ և Աս ձեր մէջ. որպէս ուռն ինքն ըստ ինքեան կարող չէ պտուղ բերել, եթէ հաստատուած չէ որթի վերայ, այնպէս և դուք եթէ հաստատուած չլինիք իմ վերայ: Աս եմ որթ, իսկ դուք ուռ. ով որ իմ մէջ հաստատուած է և Աս նորա մէջ, նա շատ պտուղ կ'բերէ. վասն զի առանց Անձ ոչինչ կարող չէք առնել: Այս է իմ պատուէրս որ սիրէք միմեանց, որպէս և Աս ձեզ սիրեցի: Սորանից աւելի մեծ սէր չկայ՝ եթէ մի մարդ իւր անձը զոհէ բարեկամների վերայ: Գուք իմ բարեկամքս էք, եթէ կատարէք ինչ որ պատուիրուեմ ձեզ: Աթէ աշխարհը ձեզ ատէ, իմացէք որ յառաջ ինձ ատեց: Աթէ այս աշխարհից լինէիք՝ ապա աշխարհը կ'սիրէր իւր որդիքը. բայց որովհետև դուք աշխարհից չէք, այլ Աս ընտրեցի ձեզ աշխարհից, այս պատճառով և աշխարհը ատումէ ձեզ: Յիշեցէք իմ խօսքը որ ասացի թէ ծառան մեծ չէ իւր տիրոջից. եթէ ինձ հալածեցին՝ ուրեմն և ձեզ կ'հալածեն. եթէ իմ խօսքերը պահեցին՝ ապա և ձերը կ'պահեն: Այս բաները ասացի ձեզ, որպէս զի չգայթակղեք: Ժողովարաններից պիտի դուրս հանեն ձեզ. և կ'գայ ժամանակ, երբ ձեզ սպանողը կ'կարծէ թէ աստուածաձոյ գործ է կատարում: Այս այն պատճառով այսպէս կ'վարուին ձեզ հետ, ըստ որում չճանաչեցին ոչ շայ

րը և ոչ Անձ: Այլ ևս շատ բաներ ունիմ խօսելու ձեզ հետ, բայց այժմ չէք կարող տանել վասն զի ձեր սիրտը լի է տրամուլթեամբ: Իսկ երբ կ'գայ Մա, ճշմարտութեան շոգին, որ շօրից է ելանում, ամենայն ճշմարտութեամբ կ'առաջնորդէ ձեզ և գաղց բաները կ'պատմէ»:

Այս խօսակցութենից յետոյ Յիսուս Քրիստոս աչքը դէպի երկինք բարձրացնելով մի սրտառուչ աղօթք ասաց, բոլոր հաւատացեալների միութեան համար շօր Աստուծոյ հետ, և յանձնեց նորանց երկնաւոր շօր պաշտպանութեանը: «Շայր՝ հասել է ժամը, ասաց, փառաւորիք Քո Որդին, որպէս զի և Որդիդ Քեզ փառաւորէ: Գու Մորան՝ իշխանութիւն տուիր ամենայն մարմնոյ վերայ, որ Մա ևս յաւիտենական կեանք պարգևէ ամենեցուն: Այս է յաւիտենական կեանքը որ Քեզ միայն ճանաչեն ճշմարիտ/Աստուած և Քեզանից ուղարկուած Յիսուս Քրիստոսը: Աս Քեզ երկրիս վերայ փառաւորեցի, այն գործերը որ յանձնեցիր Անձ՝ կատարեցի: Այս այժմ փառաւորիք ինձ շայր այն փառքով, որ յառաջ քան զլինելն աշխարհի ունէի Քեզանից: Քո անունը յայտնեցի մարդկանց, որ տուիր ինձ աշխարհից: Քո խօսքերը տուի նոցա և նոքա ընդունեցին և հաւատացին թէ Գու առաքեցիր ինձ: Այժմ Աս նոցա համար եմ աղաչում. Շայր սուրբ՝ պահիր նորանց որպէս զի լինին մի, որպէս և մեք մի եմք: Մինչ Աս նոցա հետ աշխարհումն էի, պահեցի նորանց Քո անունով, և ոչ ոք չկորաւ նոցանից, բայց միայն որդին կորստեան (Յուդա) որ Գիրքը կատարուի: Քո խօսքերը յայտնեցի նոցա, բայց աշխարհը ատեց նորանց, ըստ որում նոքա աշխարհից չեն՝ որպէս և Աս: Աս այն չեմ աղաչում որ նորանց վերցնես աշխարհից, այլ որ պահես նորանց չարից: Սրբիք նորանց Քո ճշմարտութեամբ. վասն զի Քո բանդ ճշմարտութիւն է: Որպէս Գու Անձ առաքեցիր աշխարհ, այնպէս և Աս առաքեցի նորանց աշխարհ: Բայց ոչ թէ միայն դոցա համար եմ աղաչում, այլև դոցա խօսքով բոլոր Անձ հաւատացողների, որպէս զի ամենքը լինին մի: Ինչպէս Գու շայր իմ մէջ ես և Աս Քո մէջ, թող որ նոքա ևս մի լինին մեր մէջ, որ ճանաչէ աշխարհը թէ Գու առաքեցիր ինձ. և Աս սիրեցի նորանց որպէս և Գու սիրեցիր ինձ: Շայր՝ կամիմ որ Քեզանից ինձ տուածները լինին այնտեղ, ուր Աս եմ, որ յայտնապէս տեսնեն այն փառքը որ տուիր ինձ. վասն զի Գու սիրեցիր ինձ յառաջ քան զլինելն աշխարհի»:

§ 85. Յիսուսի աղօթքը Պեթսեմանի պարտեզի մէջ և Նորա ըմբռնու մն:

(ՄԵՏՔ. ԻԶ. 36—56. ՄԱՐԳ. ԺԳ. 32—52. ԳՈՒԿ. ԻԲ. 39—53. ՅՈՎՀ. ԺԸ. 1—11.)

Արջին պատուէրները աշակերաններին աւանդելուց յետոյ, Յիսուս Քրիստոս անց կացաւ Աեդրոնի ձորից և նոցա հետ միասին գնաց դէպի Պեթսեմանի զիւղը, որ Չեթենեաց լեւան ստորոտումն էր: Այնտեղ կար մի պարտեզ, ուր և յառաջուց շատ անգամ եղած էր Յիսուս իւր աշակերանների հետ: Այս պարտեզը մասնեւոր ժամանակ, Յիսուս ասաց աշակերաններին. «Նստէք այստեղ, մինչև որ Նս երթամ աղօթեմ». և, աննելով իւր հետ Պետրոսը, Յակոբոսը և Յովհաննէսը, մտաւ նոցա հետ պարտեզի մէջ: Նա զգաց իւր մտանցած չարչարանաց և մահուան տագնապը և սկսաւ տխրիլ և հոգալ. «Տրտում է հոգիս մինչև ի մահ, ասաց նոցա, կացէք այստեղ և արթուն մնացէք ինձ հետ»: Եւ Ինքն փոքր ինչ յառաջ գնաց հեռացաւ նոցանից, և ապա երեսի վերայ ընկած սկսաւ աղօթել. «Հայր իմ, ասաց, եթէ հնար է, թող այս բաժակը (չարչարանքով մեռանելս) անցանէ Ինձանից, բայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս Պառ»: Յետոյ եկաւ իւր երեք աշակերանների մօտ և, տեսնելով որ նոքա քնած են, «Ամեն, ասաց, քնած ես. մի ժամ չկարողացար արթուն մնալ: Արթուն կացէք և աղօթք արէք որ փորձութեան մէջ չընկնիք: Հոգիս յօժար է՝ բայց մարմինս տկար»: Միւսանգամ հեռացաւ նոցանից և երեսի վերայ ընկած սկսաւ աղաչել. «Հայր, ասաց, եթէ կամիս, թող այս բաժակը անցանէ Ինձանից, բայց ոչ թէ Իմ (մարդկային) կամքս, այլ Քրիստոս (աստուածային) կամքդ լինի»: Ապա յետ դալով անսաւ որ աշակերտքը քնած էին, վասն զի նոցա աչքերը ծանրացած էին արամութենից, թողեց նոցա և գնաց աւելի եռանդով աղօթք արեց: Այն ժամանակ հոգեկարութեան տագնապի մէջ էր Փրկիչը, քրտնաբեր արեան կաթիլների պէս թափվու-

մէին Նորա երեսից գետնին. և Ինքն նոյն աղօթքն էր կրկնում Հօր Աստուծոյ առաջև: Այդ միջոցին երկնից հրեշտակ եկաւ և սկսաւ զօրացնել Նորան: Աւարտելով աղօթքը Նա դարձեալ եկաւ աշակերանների մօտ և ասաց նոցա. «Վուրք դեռ քնած էք. այսուհետև ննջեցէք և հանգստացէք. որովհետև հասաւ մասնութեանս ժամը: Ահա ասիկ մասնիչը մօտենում է, վեր կացէք գնանք»: Վեռ խօսքը չէր վերջացրել Յիսուս, երբ պարտեզի մէջ երևեցաւ Յուդա Խակարիովտացին, և նորա հետ շատ զօրք, և քահանայապետներից, Փարիսեցիներից ու ծերերից ուղարկուած ծառայքը, որ լապտերներով, ջահերով, սրերով և բերրով մօտենումէին Յիսուսին: Յուդա արդէն յառաջագոյն նշան տուած էր նոցա թէ Ում որ ես համբուրեմ՝ Նա է, բռնեցէք զգուշութեամբ տարէք: Ուստի և ինքն ամէնից յառաջ մօտեցաւ Յիսուսին, «Ողջոյն Վեղ Աւրդապետ», ասաց, և համբուրեց Նորան: Յիսուս, սիրոյ հայեցուածով վերջին անգամ կամեցաւ նորան դարձի բերել. «Յուդա, ասաց, համբուրելով մասնուսկ Որդին մարդոյ». յետոյ, իսկոյն դառնալով դէպի ամբոխը, հարցրեց, «Ում կամիք»: «Օ, Յիսուս Նազովրեցին», պատասխանեցին նոքա: «Ե՛ս եմ», ասաց, այս լսելով զարհուրեցան ամենքեան և յետ յետ գնալով գետնի վերայ տարածուեցան: Միւսանգամ հարցրեց նոցա. «Ում կամիք», և երբ կրկնեցին նոքա՝ «Օ, Յիսուս Նազովրեցին», Յիսուս պատասխանեց. «Ասացի ձեզ թէ Նս եմ. թէ որ ինձ կամիք, թողէք դոցա (աշակերտաց) երթալ»: Օ, օրականք մօտեցան որ բռնեն Նորան: Այս միջոցին առաքեալք ինչդրեցին որ Յիսուս թող տայ նոցա սրով զարկել թշնամիքը. իսկ Պետրոսը չսպասելով պատասխանին, սուրբ քարէց և քահանայապետի Մաղքոս ծառայի աջ ականջը կտրեց: Յիսուս յանդիմանեց Պետրոսի անտեղի միջամտութիւնը. «Յուրդ պատեանը դէ՛ր, ասաց, սուր առնողը սրով կ'մեռանի: Մի՛ թէ չըմպեմ այն բաժակը, որ Հայրս տուաւ ինձ: Կարծուսկ թէ չեմ կարող աղաչել Իմ

Հայրս որ այժմ հասուցանէ Ինձ աւելի քան սասնելիւ գունդ  
հրեշտակներ՝, և այս ասելով, ամենագութ Տէրը մօտեցաւ  
Մարքոսին և բժշկեց նորա ականջը: Քահանայապետքը,  
տաճարի իշխանքը և ծերերը, իւրեանց չար դիտաւորութիւ-  
նը դիւրաւ իրագործելու համար ինքեանք եկած էին և շրջու-  
մէին ամբօխի մէջ: Տեսնելով նոցա, ասաց Յիսուս. «Խբրև  
աւազակի վերայ էք եկել սրերով և բրերով բռնել Ինձ, ամե-  
նայն օր ձեզ հետ էի և հրապարակաւ ուսուցանումէի տաճա-  
րի մէջ, այն ժամանակ չբռնեցիք Ինձ, բայց պէտք է մարգա-  
րէից գրուածքը կատարուին: Այժմ է ձեր ժամանակը և իշ-  
խանութիւնը լաւարի»: Յետոյ թոյլ տուաւ Յիսուս որ կա-  
պեն իւրեան, իսկ առաքեալք երկիւղեց թողին Նորան և փա-  
խան, միայն Պետրոս և Յովհաննէս հեռուից հետևումէին  
իւրեանց աստուածային Վարդապետին:

**§ 86. Յիսուս Քրիստոս Աննա և Այլիափա քահանայապետների ատենի առաջէ:**

(ՄԼՏԹ. ԻԶ. 57—68. ՄԼԲԳ. ԺԳ. 53—65. ՂԱԻԿ. ԻԲ. 63—71. ՅՈՎՀ. ԺԸ. 12—15. 19—24.)

Օրնուորներին առաջնորդող հազարապետը Հրէից սպա-  
սաւորների հետ միասին, դուրս հանելով կապեալ Յիսուսը  
Պեթսեմանի պարտէզից, տարան Աննա քահանայապետի տու-  
նը, որ նոյն տարու Այլիափա քահանայապետի աներն էր: Ան-  
նա սխաւ հարցուփորձ առնել Յիսուսը աշակերանների և Նո-  
րա վարդապետութեան վերայ: Յիսուս պատասխանեց նորան.  
«Ես յայտնապէս խօսել եմ աշխարհիս առաջը, և միշտ ու-  
սուցել եմ ժողովարանի և տաճարի մէջ, և ծածուկ բան եր-  
բէք ասած չեմ: Ինչո՞ւ Ինձ ես հարցանում, լողներին հարց-  
բու թէ ինչ եմ խօսել. Իմ խօսածները նորա գիտեն»: Այն  
տեղ կանգնած սպասաւորներից մինը, քահանայապետի պա-  
տուին անվայել համարելով այդ պատասխանը, յանկարծ ապ-  
տակ զարկեց Յիսուսին, ասելով. «Այդպէս ես պատասխան

տալիս քահանայապետին <sup>1)</sup>»: Յիսուս հանդարտութեամբ և  
հեղութեամբ ասաց նորան. «Թէ որ անիրաւ բան խօսեցայ,  
վկայիր, իսկ եթէ իրաւամբ խօսեցայ՝ ընդէ՞ր զարկումես Ինձ»: <sup>2)</sup>

Աննա կապեալ Յիսուսը ուղարկեց Այլիափայի տուն, ուր  
յառաջագոյն ժողոված էին քահանայապետք, զպիլք և ծերք:  
Սորա Յիսուսի մահուան դատակնիքը արդէն վաղուց իւր-  
եանց մտքում վճռել էին, բայց որովհետև չէին կարող հիմնա-  
ւոր առիթ գտանել Նորան մահապարտ առնելու, յառաջուց  
չատ սուտ վկայք կաշառած էին, և ինչպէս Յիսուս դուրս ե-  
կաւ ատենի առաջ, սուտ վկայքը մի առ մի մօտեցան և սկսան  
զրպարտութիւններ առնել Յիսուսի վերայ, բայց նոցա տուած  
վկայութիւնքը միմեանց հակառակ էին: Վերջապէս նոր եր-  
կու սուտ վկայք եկան և ասացին թէ՛ անձամբ լսած էին ին-  
քեանք, ինչպէս Յիսուս ասած էր թէ՛ Նոս կարող եմ քակել  
այս ձեռագործ տաճարը և երեք օրի մէջ մի այլ անձեռագործ  
տաճար շինել: Սակայն և այս վկայութեամբ չէր կարելի մա-  
հապարտ կացուցանել Յիսուսը: Յիսուս լուռ կանգնած հան-  
դարտութեամբ լսում էր և ոչինչ չէր պատասխանում նոցա:  
Այն ժամանակ քահանայապետը ոտքի կանգնեցաւ և ասաց  
Նորան. «Ձե՞ս լսում ինչ են վկայում դորա Քո մասին, պա-  
տասխան չունի՞ս տալու»: Յիսուս դարձեալ լուռ մնաց:  
Քահանայապետը նորից խօսեց. «Երդուեցնումեմ Քեզ կեն-  
դանի Աստուծով, որ ասես մեզ թէ Վճու ես Քրիստոսը, Որ-  
դին Աստուծոյ»: «Ես եմ, պատասխանեց Յիսուս. այսուհե-  
տև կ'տեսնէք Ինձ Աստուծոյ աջ կողմը նստած, և կ'գայ մի  
օր (վերջին դատաստանին), երբ կ'տեսնէք որ երկնքի ամպերի  
վերայ նստած պիտի դամ»: Վատաղեցաւ քահանայապետը  
այս համարձակ պատասխանի վերայ և հանդերձը պատա-  
ռելով ասաց. «Հայհոյեց, այսուհետև ի՞նչ պէտք է մեզ

1) Աւանդութիւն կայ թէ այդ արտակ զարկող սպաշնորհը՝ Պրորատիկէ աւագանի  
մտ գտանվող երեսուն և ութամեաց անդամուցըն էր, որը Յիսուս բժշկեց, ասելով.  
«Մի՛ ես մեղանչեր»:

վկայ. «Նորա բերանից մէք անձամբ լսեցինք հայհոյութիւնը: Ի՞նչպէս է երևում ձեզ»: Ամէնքը միաբերան վճռեցին թէ Մահապարտ է»: Այն ժամանակ դուրս հանեցին Յիսուսը քահանայապետի սրահը, և մինչև առաւօտ յանդուգն և վայրենի սպասաւորքը սկսան անհնարին չարչարանք և նախատինք հասուցանել Նորան: Ոմանք թաքումէին Նորա երեսին, կռիւմէին Նորան, ոմանք ևս ծածկումէին երեսը և աստակ զարկելով ասումէին ծաղրաբար. «Մարգարէացիք մեզ Վրիստոսդ, ո՞վ զարկեց Վեզ». և այլք շատ հայհոյական խօսքեր էին ասում Նորան: Փրկիչը ամենեւին լուռ էր և համբերութեամբ տանումէր այդ դառն նախատինքներին:

Միւս օրը, որ ուրբաթ էր, վաղ առաւօտուն վերին ատանը, ժողովուրդ Վայիափայի տանը, ներս կոչեցին Յիսուսը և կամեցան կրկնել առաջին քննութիւնը, որպէս զի օրինաւոր եղանակաւ մահապարտ կացուցանէին Նորան: Ուստի և հարցրին. «Վո՞ւ ես Վրիստոսն, ասա՛ մեզ»: Պատասխանեց Յիսուս. «Եթէ ասելու լինիմ, հաւատարու չէք. և եթէ մի բան հարցանեմ, ոչ կ'պատասխանեք և ոչ կ'արձակէք Ինձ: Բայց այսուհետև Որդին մարդոյ Աստուծոյ զօրութեան աջ կողմը պիտի նստի»: Ամենքեան սկսան աղաղակել. «Ուրեմն Վու Աստուծոյ Որդի՞ն ես»: «Այդպէս է, պատասխանեց Յիսուս, ճշմարիտ ասացիք»: Այսուհետև ծերակուտի բոլոր անդամքը ամէն կողմից սկսան աղաղակել. «Այլ ևս վկայութիւն ի՞նչ պէտք է մեզ. Նորա հայհոյութիւնը մէք անձամբ լսեցինք»: Ուստի և միաձայն հաւանութեամբ ի մահ դատապարտեցին Յիսուսը:

§ 87. Պետրոսի ուրացութիւնը և Յուդայի կորուստը:  
 (ՄԼՏԹ. ԻԶ. 69—75. ԻԷ. 3—10. ՄԼՐԳ. ԺԴ. 66—72. ՂԱՌԿ. ԻԲ. 54—62. ԹՈՎ. ԺԸ. 15—18. 25—27.)

Պեթսեմանի պարտէզի մէջ Յիսուսը ըմբռներուց յետոյ, մինչդեռ բոլոր աշակերտքը երկիւղեց ջրուեցան, նոցանից եր-

կուսը միայն՝ Պետրոսը և Յովհաննէսը զնացին Նորա հետեւից: Վայիափայի ատենի առաջ և Յիսուսը քննելու ժամանակ, Պետրոս դուրսը նստած էր սրահի մէջ: Յուրտ գիշեր էր. սպասաւորքը սրահի մէջ տեղում կրակ վառեցին և չորս կողմը նստած տաքանոււմէին. Պետրոսը ևս մտեցաւ կրակին և նրստաւ տաքանալու: Այն ժամանակ դռնապան աղախինը, տեսնելով նորան, բարձրաձայն ասաց. «Վու ևս Պալիլեացի Յիսուսի հետ էիր»: Պետրոսը, երկիւղ կրելով, ուրացաւ ամենքի առաջ և ասաց. «Ես Նորան չեմ ճանաչում. չգիտեմ ինչ ես խօսում»: Եւ այն ինչ դուրս եկաւ նա սրահից իսկոյն աքաղաղը խօսեցաւ: Պետրոսը կրկին ներս մտաւ սրահը, վստան զի հոգւով անհանգիստ էր և փախադումէր իմանալ թէ իւր սիրելի Վարդապետի վերջը ի՞նչ պիտի լինէր: Այնտեղ մի այլ աղախին տեսաւ նորան և ասաց մտ կանգնած մարդկանց. «Սա ևս Նազովըցի Յիսուսի հետ էր»: Վարձեալ ուրացաւ Պետրոս, ասելով. «Ես չգիտեմ այն մարդը»: Յետոյ փոքր ինչ անցած, երբ որ Յիսուսի ի մահ դատապարտուելու լուրը սրահի մէջ տարածուեցաւ, ներկայ գտանուող սպասաւորներին մինը եկաւ և ասաց նորան. «Անշուշտ դու ևս Յիսուսի աշակերտներից մինն ես. վստան զի լեզուդ ևս ցուցանում է Պալիլեացի լինելդ»: Նոյն միջոցին վերայ հասաւ Մաղքոսի աղգականներից մինը և ասաց Պետրոսին. «Մի՞թէ ես չտեսնեցիք Յիսուսի հետ միասին պարտէզի մէջ»: Մեծ երկիւղի մէջ էր Պետրոս. նա սկսաւ նզովել և երդնուլ թէ «Չեր ասած մարդը չեմ ճանաչում»: Եւ նոյն ժամայն աքաղաղը խօսեցաւ: Այդ միջոցին վերջացաւ քննութիւնը և Յիսուսը դուրս հանեցին սրահը. և մինչ Պետրոս երգմամբ ուրանումէր իւր Վարդապետը, Յիսուս, անցանելու ժամանակ, դարձաւ դէպ ի նա և նայեցաւ նորա երեսին: Տիրոջ հայեացքը թափանցեց Պետրոսի սրտի խորքը. նոյն ըրպէին յիշեց նա Յիսուսի կանխասացութիւնը իւր ուրացութեան մասին, զի ջացաւ և, քահանայապետի սրահից դուրս գալով, սկսաւ դառնապէս լայ:

Իսկ Յուդա, լսելով Յիսուսի մահուան դատապարտելու լուրը, սարսափեցաւ իւր արած յանցանքի վերայ. տարաւ եւ բեռուն արծաթը քահանայապետներին և ժողովրդի ծերերին և ասաց. «Մեղայ, զե արդար արիւն մահանցի»: «Մեղ փոյթ չէ, դու գիտես», պատասխանեցին նոքա ստանութեամբ: Յուդա արծաթը ձգեց տաճարի մէջ և ինքն դառնացած սրտով զնաց յուսահատութեամբ խեղդուեցաւ: Բայց քահանայապետքը, առնելով արծաթը, անվայել համարեցին տաճարի դանձանակի մէջ ձգել այն, որովհետև արեան զին էր. ուստի և միաբան հաւանութեամբ այն արծաթով, օտարների գերեզմանի համար, մի բրուտի ազարակ գնեցին, որ այն ժամանակից սկսած «Ակեղդամա» ասուեցաւ, այսինքն «Ազարակ արեան»:

§ 88. Յիսուս Պիղատոսի և շերովդեսի ատենի առաջ և:  
(ԻՄՏԹ. ԻԷ. 11—25. ԻՄԲԿ. ԺԵ. 1—15. ՂՈՒԿ. ԻԳ. 1—25. ՅՈՎ. Է. ԺԸ. 28—40.)

Նրէայք թէև ի մահ դատապարտեցին Յիսուսը, սակայն իշխանութիւն չունէին գործ զնել իւրեանց վճիռը առանց հաւանութեան շնորհմանցեաց դատաւորի. այս պատճառով քահանայապետք, դպիրք և ծերք դարձեալ կապեցին Նորան և տարան Պիղատոս դատաւորի պալատը: Որովհետև Օլատկի տօնին դատաստանարան մտանել արգելած էր նրէից և մտանողը անարժան էր համարվում զատկական տօնը կատարելու, ուստի և ներս չմտան, այլ պալատի առաջ, «Քարայատակ» կոչուած տեղը (եբրայեցերէն՝ Սապպաթա) կացուցին Յիսուսը և աղաչեցին որ դուրս գայ Պիղատոսը: Եւ իսկ Պիղատոս և հարցրեց նոցա. «Այս մարդու վերայ ի՞նչ ամբաստանութիւն ունիք»: «Եթէ չարագործ չլինէր, հպարտութեամբ պատասխանեցին նրէայք, Նորան մտանելու չէինք քեզ»: «Եթէ այդպէս է, ասաց Պիղատոս, առէք սարէք և ձեր օրինաց համաձայն դատեցէք»: Նրէայք, տեսնելով որ Պիղատոսը այնչափ յօժարութիւն ցոյց չէ տալիս նոցա կամքը կա-

տարելու, սկսան ամբաստանել Յիսուսը, ասելով թէ՛ «Նա մտրուեցնումէ ժողովուրդը, կայսեր հարկ տալ արգելումէ և Ինքն իւր անձը Վրիստոս, Խարայէլի Թագաւոր է անուանում»: «Վճե ես նրէից թագաւորը», հարցրեց Պիղատոս Յիսուսին: «Այո եմ», պատասխանեց Յիսուս: Այս լսելով քահանայք առաւել ևս սաստկացրին իւրեանց չարախօսութիւնքը, բայց Յիսուս համբերութեամբ նոցա զըպարտութեանցը և ոչինչ չէր պատասխանում: «Չե՞ս լսում թէ որչափ դուք քեզ հակառակ են վկայում», ասաց Պիղատոս. բայց Յիսուս ոչինչ չպատասխանեց: Այդ լուրերը շատ զարմացրեց Պիղատոսին, և նա հասկանալով թէ նրէայք նախանձից շարժուած չարախօսումէին Նորա վերայ, ներս տարաւ Յիսուսը և հարցրեց առանձին. «Վճե ես թագաւորն նրէից»: «Քեզանից ես ասում այդ, թէ ուրիշներից լսեցիր», պատասխանեց Յիսուս: «Մի՞թէ և ես նրէայք եմ, ասաց Պիղատոս, Վո ազգը և քահանայապետներդ մտանեցին Վեզ ինձ. ի՞նչ բան ես արե՞լ»: «Իմ թագաւորութիւնս այս աշխարհից չէ, պատասխանեց Յիսուս, եթէ այս աշխարհից լինէր, ապա իմ ծառայքս կ'պատերազմէին և չէին թողնելու որ նրէից ձեռքն ընկնիմ. ուրեմն իմացիր որ իմ թագաւորութիւնը այս աշխարհի թագաւորութիւն չէ»: «Ապա ուրեմն Վու թագաւոր ես», հարցրեց Պիղատոս: «Վու ես ասում թէ թագաւոր եմ, պատասխանեց Յիսուս, բայց Այս յատկապէս դորա համար ծնած եմ և եկած աշխարհ, որ ճշմարտութիւն քարոզեմ. և ճշմարտութիւն սիրողը լսումէ Ինձ» (այսինքն՝ իմ թագաւորութիւնը հոգևոր է և ճշմարտութեան թագաւորութիւն է. իմ հպատակներս նոքա են՝ որ բոլոր սրտով նուիրուած են ճշմարտութեանը): Պիղատոս, տեսնելով որ նուրմայեցեաց հզոր տէրութեանը, մի այդպիսի խեղճ մարդ, չէր կարող վտանգաւոր լինել, հարցրեց Յիսուսին թէ «Ի՞նչ է ճշմարտութիւնը», և չսպասելով պատասխանին դուրս եկաւ և ասաց նրէից. «Այս Նորա վերայ ոչ մի յանցանք չեմ գտա-

նում՝ : Եւ այս յայտնի վկայութիւնը նորա, Յիսուսի անմեղութեան մասին, սաստիկ զրգուեց չարամիտ ամբաստանողների սիրտը, նոքա սկսան աւելի սնդեղ և ասել թէ՝ „Նա խռովումէ ժողովուրդը և ուսուցանումէ բոլոր Հրէաստանի մէջ, Գալիլիայից սկսեալ մինչև Երուսաղէմ՝ : Եւ յնչ Պիղատոս լսեց Գալիլիայի անունը, իսկոյն հարցրեց թէ՝ „Ե՛յդ մարդը Գալիլեացի՞ է՞ : „Գալիլեացի է՞“, պատասխանեց ամբոխը : Ուրախացաւ Պիղատոս որ իւր անձը կարող էր սորանով ազատել այդ ծանր և անիրաւ դատաստանից, ուստի և զինուորաց ձեռքով ուղարկեց Նորան Գալիլիայի չորրորդապետ Հերովդեսին, որ Օւստի տօնի պատճառով եկած էր Երուսաղէմ : Հերովդէս, երբ որ տեսաւ Յիսուսը իւր առաջև, շատ ուրախացաւ, վասն զի շատ բաներ լրած էր Նորա մասին և վաղուց փափագումէր տեսնել Նորան, յուսալով որ իւր առաջ ևս մի հրաշք կ'գործէ : Միտաւ զանազան հարցումներ առնել Նորան, բայց Յիսուս ամենեւին պատասխան չտուաւ : Բահանայապետք և ծերք, որ եկած էին այնտեղ, Հերովդեսի առաջ նոյնպէս սկսան չարաչար ամբաստանել Նորան, բայց նոցա զրպարտութեանց դէմ սչինչ չխօսեց Յիսուս : Հերովդէս, զայրացած Յիսուսի լռութեան վերայ, պալատականներով արհամարհեց Նորան և ծաղրելու համար մի սպիտակ հանդերձ ձգեց վերան և առանց մի վճիռ տարու յետ ուղարկեց Պիղատոսին :

Պիղատոս, տեսնելով որ Յիսուսը դարձեալ իւր մօտ բերին, դուրս եկաւ քահանայապետների և իշխանների առաջ և ասաց. „Գուք այս մարդը բերիք իմ մօտ, իբրև խոտորեցուցիչ ժողովրդեան. ահաւասիկ ես ձեր առաջ հարցրի Նորան և ձեր չարախօսութեանց ոչ մինը չգտայ դորա վերայ : Ե՛յլ և Հերովդեսին ուղարկեցի, և նա նոյնպէս մահու արժանի յանցանք չգտաւ դորա վերայ. ուրեմն խրատեմ դորան ու արձակեմ“ :

Հրէայք սովորութիւն ունէին ամենայն տարի՝ Օւստի

տօնին, հասարակաց ընտրութեամբ, մի կալանաւոր արձակել բանտից, Եզիպտացուց լծից ազատելու յիշատակի համար : Եւ ահա այս սովորութիւնը մէջ բերելով Պիղատոս կամեցաւ ազատել Յիսուսը : Եւ յն միջոցին կալանաւորների մէջ Բարաբբա անունով մի նշանաւոր չարագործ և մարդասպան մարդ կար : Պիղատոս դարձաւ դէպի ժողովուրդը. „Գուք, ասաց, սովորութիւն ունիք Օւստի տօնին մի-կալանաւոր արձակել բանտից, ուրեմն ի՞նչ կալովք որ արձակեմ, խռովարար և մարդասպան Բարաբբան թէ Յիսուս Վաղովրեցին“ . և այստեղ ընդհատեց նա իւր խօսքը, վասն զի նորա կինը ծառայ ուղարկեց և ծածուկ իմաց տուաւ նորան, ասելով թէ՝ „Ե՛յդ արդար Մարդը մի՛ դատապարտեր, որովհետև այս գիշեր երազեմ մէջ շատ սոսկալի բաներ տեսայ Նորա վերայ :“ Եւ յոր լսեց Պիղատոս, աւելի զգուշացաւ, վճռեց իւր մտքում որ և իցէ հնարքով ազատել Յիսուսը. Նա հաստատ համոզուած էր, թէ հասարակ ժողովուրդը, որ շատ անգամ բարերարութիւն տեսած էր Յիսուսից, փոխանակ Բարաբբայի կ'ընտրէր ազատել Նորան, բայց սխալուեցաւ, ըստ որում նոքա, յառաջագոյն զրգուած լինելով քահանայապետներից և ծերերից, միաբերան աղաղակեցին. „Երձակիր մեզ Բարաբբան“ : „Նպա ի՞նչ անեմ Հրէից թագաւորը“, բարկութեամբ հարցրեց Պիղատոս : „Խաչ հանիր, խաչ հանիր դորան“, բարձրաձայն գոչեց ամբոխը : „Ի՞նչ չար բան գործեց Նա, ասաց Պիղատոս. ես Նորա վերայ մահու արժանի յանցանք չգտայ. խրատեմ Նորան և արձակեմ“ . բայց նոքա առաւել ևս աղաղակումէին՝ „Ի խաչ հան զգա, ի խաչ հան զգա“ : Եւ յն ժամանակ Պիղատոս հրամայեց արձակել Բարաբբան, իսկ Յիսուսը տուաւ զինուորաց ձեռքը որ ծեծեն :

§ 89. Պանահարութիւն և նախատինք Յիսուսի. և դատապարտութիւն Նորա ի մահ խաչի :

(ՄԱՏԹ. ԻԷ. 26—30. ՄԱՐԿ. ԺԵ. 16—19. ՅՈՒՀ. ԺԹ. 1—16.)

Պիղատոսի զինուորքը տարան Յիսուսը գաւթի հրապար-

րակը և այն տեղ իւրեանց բոլոր վայրենի կատաղութիւնը  
 թափեցին անմեղ Վահատակի վերայ: Փրկչի կրած սոսկալի  
 չարչարանաց մէջ ամէնից սաստիկն այն էր, որ կրեց այս հե-  
 թանոս զինուորաց ձեռքից: Վա Խնքն քանիցս անդամարդէն  
 նախագուշակած էր Խւր չարչարանաց մասին, բայց յատկա-  
 պէս յիշած էր այդ սարսափելի տանջանքները, ասելով. «Խւ  
 չարչարեսցի, և մասնեսցի հեթանոսաց ի չարչարանս»: Գա-  
 զանաբարոյ զինուորքը, հաւաքուելով Յիսուսի չորս կողմը,  
 հանեցին Վորա հանդերձքը և խարազանով (փշայլեց չուանով)  
 անողորմաբար այնքան գանասարեցին, մինչև բոլոր մարմինը  
 վերքերով ծածկուեցաւ: Խւ որովհետև Յիսուս իւր անձը  
 թագաւոր էր անուանած, նորա ծաղրելու մտքով թագաւոր  
 ձևացրին Վորան: Վորա վերապատ և արիւնաշաղախ մարմնոյ  
 վերայ կարմիր քղամիդ (վերարկու) ձգեցին, թագաւորական  
 թագի տեղ փշեայ պսակ անցուցին գլուխը և գաւազանի տեղ  
 մի եղէգ սայլով ձեռքը, ծաղրաբար ծունը էին դնում Վորա  
 առաջ և ասումէին. «Ո՛րջ լեր թագաւոր շրէից»: Ոմանք  
 թքումէին Վորա աստուածային երեսին, այլք չարաչար ապ-  
 տախներ էին տալիս և շատերը առնումէին նորա ձեռքից եղէգը  
 և զարկումէին գլխին. բայց Յիսուս արիական համբերու-  
 թեամբ տանումէր այս դառն տանջանքներին: Երբ դուրս ե-  
 կաւ Պիղատոս և տեսաւ զինուորաց չափազանց խատուութիւնը  
 և Յիսուսի խեղճ վեճակը, սիրտը շարժեցաւ և իսկոյն հրա-  
 մայեց վերջացնել: Յուսարով որ շրէից գութը ևս կ'շարժի,  
 թուլացած և արիւնաշաղախ Յիսուսը, ծիծաղական քղամի-  
 դով և փշեղէն պսակով դուրս հանեց բաղնութեան առաջ, և  
 ասաց. «Մհա՛ դարձեալ միանգամ բերումեմ ձեր առաջ և  
 կրկին յայտնումեմ որ Վորա վերայ ոչինչ դատապարտելու  
 բան չգտայ»: Երբ որ քահանայապետքը և սպասաւորքը տե-  
 սան Վորան, փոխանակ գլխու աւելի կանոնադրութեամբ ա-  
 դաղակեցին. «Խ խաչ հան, ի խաչ հան գրա»: «Վուք առէք  
 խաչեցէք, ասաց Պիղատոս, վասն՛ զի ես Վորա վերայ մահ-

ուան արժանի յանցանք չգտայ»: Վահանայապետք ասացին.  
 «Սեր օրէնքով Վա արժանի է մահուան. որովհետև իւր ան-  
 ձը Ուրդի Աստուծոյ անուանեց»: Այս նոր ամբաստանութեան  
 վերայ աւելի երկիւղ ընկաւ Պիղատոսի սիրտը, նա աւելի զգու-  
 շացաւ որ անիրաւ դատաստան չանէ Աստուածորդւոյն վե-  
 րայ. դարձեալ ներս տարաւ Յիսուսը և անհանգիստ սրտով  
 հարցրեց Վորան. «Ուստի՞ ես դու». (այսինքն՝ որ աշխար-  
 հիցն ես, երկրի՞ց թէ երկնքից): Խւ երբ Յիսուս պատասխան  
 չտուաւ, «Շետս չես խօսում, ասաց, չգիտեմ որ ես իշխա-  
 նութիւն ունիմ խաչելու քեզ և արձակելու»: «Վու ամե-  
 նեին իշխանութիւն ունենալու չէիր իմ վերայ, պատասխա-  
 նեց Յիսուս, եթէ Աստուած ի վերուստ տուած չլինէր քեզ.  
 բայց ամենից մեծ մեղքը նորա վերայ է, որ ինձ քո ձեռքը մատ-  
 նեց»: Այս բանի վերայ Պիղատոսի սիրտը աւելի շարժեցաւ,  
 նա կամենումէր արձակել Վորան, միւսանգամ դուրս եկաւ  
 և հրապարակաւ յայտնեց Յիսուսի անմեղութիւնը: Բայց  
 շրէայք նորից սկսան աղաղակել. «Եթէ դորան արձակես,  
 կայսեր բարեկամը չես, վասն զի ով որ իւր անձը թագաւոր է  
 անուանում, հակառակ է կայսեր»: Այս խօսքերով շրէայք  
 սպառնումէին Պիղատոսին՝ իբրև թէ պատրաստ են այդ գոր-  
 ծը կայսեր վերաքննութեանը յանձնել և Յիսուսի հետ նո-  
 րան ևս իբրև դաւաճան ամբաստանել կայսեր առաջ: Մհ ըն-  
 կաւ Պիղատոսի սիրտը, արդարութեան ձայնը լուեց նորա մէջ.  
 նա արդէն յօժար էր նոցա կամքը կատարել, ըստ որում կայ-  
 սեր հաճոյ լինելն ամեն բանից բարձր էր նորա համար: Սա-  
 կայն և Յիսուսը ազատելու յոյսը տակաւին կորուսած չէր. մի  
 այլ փորձ ևս փորձեց նա, դուրս եկաւ Վարայատակ կոչուած  
 տեղում բեմի վերայ նստաւ և յառաջ քան իւր վերջնական  
 վճիռ տալը, հրամայեց դուրս հանել Յիսուսը, և, մասնա-  
 ցոյց առնելով Վորան, ասաց շրէից. «Մհա՛ ձեր թագաւորը  
 ձեզ». (այսինքն՝ կարելի՞ է արդեօք կասկածել, որ մի այսպիսի  
 խեղճ և ողորմելի մարդ, երբ և իցէ արքայական դահ մտա-

ծէր ձեռք բերել)։ Իսկ շրէայք առաւել ևս կատարած աղաղակեցին. «Բարձ ի մէնջ, բարձ ի մէնջ և հան զգա ի խաչ»։ «Ես ձեր թագաւորը խանջ հանեմ», ասաց Պիղատոսը։ Պատասխանեցին քահանայապետքն. «Մեք բայ ի կայսերէ՝ այլ թագաւոր չունինք»։ Արջապէս Պիղատոս, տեսնելով որ իւր այնքան խօսելն անօգուտ եղաւ, և թէ խռովութիւնը, որ հետ զհետէ սաստկանումէր, անհնար էր դադարեցնել, ջուր բերել տուաւ, բազմութեան առաջ լուաց ձեռները և ասաց. «Ես այս արդար Մարդոյ արեան պարտական չեմ, դուք գիտէք»։ Խստասիրտ ժողովուրդը միաբերան աղաղակեց. «Թող Վորա արիւնը մեր և մեր որդւոց վերայ լինի»։ Ե. յնուհետև Պիղատոս տուաւ Յիսուսը նոցա ձեռքը որ խաչեն։

§ 90. Խաչելութիւն Յիսուսի։

(ՄԵՏԹ ԻԷ. 31—44. ՄԵՐԿ ԺԵ. 20—32. ԴՈՒԿ ԻԳ. 26—43. ՅՈՒՆՅԺԹ. 17—27.)

Երբ որ Պիղատոսի զննուորքը հրաման ստացան Յիսուսին խաչ հանելու, խնդն Նորա վերայից հանեցին նախատական կարմիր քղամիդը, զգեցուցին իւր հանդերձը, խաչափայտն ուսը տուին և սկսան Նրուսաղեմի փողոցների միջով տանել դէպի Վողգոթա սարը (Պառափելու տեղը), որ քաղաքի արևմտեան կողմն էր։ Ե. յնչափ դառն տանջանքներից և նախատինքներից յետոյ, Յիսուս, բոլոր մարմնով վերաւորուած և արիւնաշաղախ, ծանր խաչի բեռան տակ ճնշուած, հազիւ կարողանումէր ոտք փոխել։ Նորա անգութ թշնամիքը տեսան այդ, և երկիւղ կրելով որ մի՛ գուցէ մեռանի, առանց կրելու խաչի անարգական մահը, քաղաքի դրան մօտ խաչափայտն առին Նորանից և բռնի Սիմոն Սիւրենացւոյ շալակը տուին, որ նոյն միջոցին իւր ագարակից դառնումէր քաղաք։ Յիսուսի հետևից գնացող ժողովուրդի բազմութեան մէջ գտանվումէին և բարեպաշտ կանայք, որք տեսնելով Յիսուսի որորմելի վիճակը, դառն արտասուօք լալիս էին։ Վարձաւ Յիսուս և ասաց նոցա. «Վաստերք Նրուսաղեմի, իմ վերայ մի լաք,

այլ ձեր և ձեր որդւոց վերայ լացեք վասն զի կ'գայ մի օր, երբ զաւակ չունեցողին երանի կ'տան, և այն ժամանակ կ'ասեն սարերին թէ՛ ընկեք մեր վերայ, և բլուրներին թէ ծածկեցեք մեզ։ Եթէ դալար փայտին (Ինձ) այս են անում, ապա չորին (շրէից ազգին) ի՞նչ կ'լինի»։ Երբ որ Վողգոթա սարը հասան, Յիսուսին լեզիով խառն գինի տուին, որպէս սովորաբար ամեն չարագործի տալիս էին խաչ հանելուց յառաջ, որպէս զի ցաւի սաստկութիւնը չզգային. բայց Յիսուս, որովհետև կամուսանձն էր առած արդէն չարչարանաց և մահուան բաժակը ըմպել վասն փրկութեան մարդկան, չընդունեց մատուցած ըմպելիքը։ Օհնուորքը հանեցին Նորան Վողգոթայի վերայ և խաչեցին, ձեռները և ոտները բեռելով խաչափայտին։ Ժամն էր իբր վեցերորդ։ Յիսուսի աջ ու ձախ կողմն երկու չարագործ աւաղակներ բերին խաչեցին, որ սորանով աւելի անարգանք լինէր Նորան, որով և կատարուեցաւ մարգարէութիւնն Եսայեայ՝ «Եւ ընդ անօրէնս համարեցաւ». (Ես. ծգ. 12.)։ Խաչի վերայ այն կսկծազին ցաւոց մէջ, Փրկիչը աղօթումէր իւր խաչ հանողների համար, ասելով. «Հայր, թող դոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն»։ Պիղատոս, Յիսուսի վերայ դրած յանցանքը մի առանձին տախտակի վերայ գրել տուաւ, Եբրայեցերէն, Լատիներէն և Յունարէն, այսպէս. «Յիսուս Նազովըցի՝ Թագաւոր շրէից». և հրամայեց խաչի վերին կողմն դնել որ ամենեքեան կարդան։ Ե. յս գրուածքը անհաճոյ թուեցաւ քահանայապետներին, նոքա գնացին ասացին Պիղատոսին. «Ե. յսպէս մի գրել, այլ գրել որ ինքն իւր անձը շրէից թագաւոր անուանեց»։ Իսկ Պիղատոս մերժեց նոցա խնդիրը, ասելով. «Օ, որ ինչ գրեցի՛ գրեցի» — գրածս գրածս է։ Չորս զննուորքը Յիսուսի հանդերձքը բաժանեցին իւրեանց մէջ. բայց պատմուածանը, որովհետև առանց կարանի էր, վերուստ մինչ ի վայր հիւսուած, չպատասուցին, այլ նորա վերայ առանձին վիճակ ձգեցին, որով և կատարուեցաւ Ս. Վրոց խօսքն. «Բաժանեցին զհանդերձս իմ ի մէջ իւրեանց, և ի

վերայ պատմութեան իմոյ վիճակս արկանէին“ : (Մաղ. խա. 19) :

Թէպէտև Յիսուս չարչարանաց սաստիկ ցաւոց մէջ էր, սակայն Նորա թշնամիքը դարձեալ չէին դադարում Նորան նախատելոց : Մի կողմից անցանողքը ամենայն կերպ հայհոյումէին Նորան և դուրսները շարժելով ասումէին. « Ա՛հ, որ Աստուծոյ տաճարը պիտի կործանէիր և երեք օրի մէջ նորից շինէիր, փրկիր ինքդ քեզ. եթէ Որդի ես Աստուծոյ՝ ցած իջիր խաչից » : Միւս կողմից քահանայապետք, դպիրք և ծերք ծաղրելով ասումէին. « Ուրիշներն ազատեց, բայց իւր անձը չէ կարող ազատել : Թող այժմ Քրիստոսը՝ շրէից թագաւորը խաչից ցած գայ, որ տեսնենք և հաւատանք դորան » : Չինուորքն ևս, որ իբրև պահապան կանգնած էին խաչին մօտ, արհամարհաբար մօտենումէին և քացախ տալով Նորան ասումէին. « Եթէ շրէից թագաւորն ես, փրկիր քեզ » : Այս բոլոր նախատիքը ասես թէ բաւական չէին, նաև Նորա հետ խաչուած երկու աւագախներէից մինը նախատաբար ասումէր Նորան. « Միթէ դու չե՞ս Քրիստոսն, փրկիր քո անձը և մեզ » : Սակայն միւս ընկերը, որ աջ կողմն էր խաչուած, ոչ միայն ձայնակից չեղաւ նորա չարաբան լեզուին, այլ յանդիմանեց նորան անգամ, ասելով. « Երկիւղ չունի՞ս Աստուծոց, մեք մեր չարագործութեանց արժանի հատուցումն ենք կրում, բայց այս ողորմելին ոչ մի յանցանք արած չէ » : Եւ ապա ինքն, յանկարծ Աստուծոյ շնորհք լուսաւորուած, դարձաւ Յիսուսին և լի հաւատով և ջերմեռանդութեամբ ասաց. « Յիշէ՛ր ինձ Տէր, երբ որ կ'գաս քո արքայութեամբ » : Պատասխան տուաւ նորան Յիսուս. « Ամէն ասեմ քեզ, այսօր դու ինձ հետ դրախտում (երկնից Արքայութեան մէջ) կ'լինիս » :

Յիսուսի Մայրն, նորա քոյրն՝ Մարիամ Աղէովպայ<sup>1)</sup>, Մարիամ Մագդաղենացին և Յովհաննէս սերելի աշակերտն մորմորելով կանգնած էին խաչի մօտ : Մեծ էր Աստուածամօր

1) Սա Ս. Յովսէփայ եղբոր՝ Աղէովպասի կինն էր, մայր Յակոբայ կրտսերոյն :

սրտի կակիծը. իւր անպարտական միածին Որդին, այնչափ դառն տանջանքներից ու նախատիքներից յետոյ, տեսնել փուշ պսակը դուրսը, անարգ խաչին բեւեռած, և լսել թէ ինչպէս խառնիճաղանճ ամբօխը և քահանայապետքը հայհոյում էին Նորան : Միմէն ծերունու նախագուշակած սուրբ այժմ խոր խոցոտումէր Նորա մայրական սիրտը : Յիսուս, աչք ձգելով Մօր վերայ և ցոյց տալով Յովհաննէսը, ասաց. « Աին դու, ահա որդի քո » . (և այնու Իւր բոլոր հաւատացեալ որդիքը յանձնեց Աստուածամօր Աուսի մայրենի զթուրթեանը և պաշտպանութեանը) . և ապա Յովհաննէսին նայելով և Ս. Աղսր ցոյց տալով, ասաց. « Ահա ապի մայր քո » : Եւ այն ժամանակից Յովհաննէս առաւ Ս. Աստուածածինը իւր սունը և իբրև որդի պատուեց և խնամեց Նորան մինչև Նորա երկինք վերափոխուելը : (45 Թ. Ք.)

§ 91. Մահ և թաղումն Յիսուսի Քրիստոսի : (ՄԸՏԹ. ԻԲ. 45—66. ՄԸՐԿ. ԺԵ. 33—47. ՂՈՒԿ. ԻԳ. 44—56. ՅՈՎ. Է. ԺԹ. 28—42)

Յիսուս Քրիստոս երեք ժամ շարունակ (վեցերորդ ժամից մինչև իններորդը<sup>1)</sup>) խաչելութեան դառնակակիծ չարչարանաց մէջ էր : Իններորդ ժամին, մահուան զարհուրելի տաղանապի մէջ մեծաձայն աղաղակեց Նա. « Աստուած իմ, Աստուած իմ (Եբրայեցերէն Ա՛լի Ա՛լի), ընդէ՛ր թողեր զես » : Այս լսելով Նորա թշնամիքը ծաղրաբար ասումէին. « Նա Եղիան է կանչում » : Եւ երբ Պրոց խօսքը կատարելու համար ասաց Նա՝ « Ծարաւի եմ », զինուորներից մինը իսկոյն սպունդր քացախի և լեղիի մէջ թաթախեց և եղէզի ծայրն անցուցած մօտեցրեց Նորա բերանին<sup>2)</sup> : Անորէն շրէայք այստեղ ևս ցոյց տուին իւրեանց անդթութիւնը. նոքա թոյլ չէին տալիս զինուորին և նախատաբար ասումէին. « Թող անա-

1) Մեր հաշուով տասներկու ժամից մինչև երեք կէտրից յետոյ :  
2) Սորանով կատարուեցաւ Գաւթի մարգարէութիւնն. « Ետուն ի կերակուր ինձ լեղի և ի ծարաւ իմ արբուցին ինձ քացախ » (Մաղ. ԿԵ. 22.)

նենք թէ Եղեան կ'գայ արդեօք փրկելու Վորան: Եւ ինչ ճաշակեց Յիսուս ընդ խառն քացախը, «Ամենայն ինչ կատարեալ է <sup>1)</sup>», ասաց, և ապա բարձրաձայն գոչեց. «Նայր, ի ձեռքոս աւանդեմ զհոգի իմ», և այս ասելով գլուխը խոնարհեցրեց և աւանդեց հողին: Վեռևս Յիսուսի խաչելութեան սկզբից, ի նշան Վորա Աստուածութեան, արեգակն խաւարել էր <sup>2)</sup> և բոլոր երկիրը թանձր խաւար էր պատել. իսկ երբ աւանդեց հողին, նոյն ժամայն երկիրը շարժեցաւ, քարերը պատառեցան, գերեզմանք բացուեցան, և շատ սուրբ ննջեցելոց մարմիններ յարութիւն առին, և դուրս գալով գերեզմաններէն սուրբ քաղաքը (Նրուսաղէմ) մտան և երևեցան շատերին. նաև տաճարի մէջ Սրբութիւն սրբոցի առաջ կախած վարագոյրը վերուստ ի վայր պատառեցաւ <sup>3)</sup>: Եւ յս սքանչելիքը տեսնելով, ժողովուրդը, ահ ու սարսափի մէջ՝ կուրծքերին զարկելով լուռ և տրտում տուն էր դառնում. շարիւրապետը և նորա զինուորքը, որ անշարժ կանգնած էին խաչին մօտ, հիացած այս սքանչելեաց վերայ, խոստովանեցին Յիսուսի անմեղութիւնը, ասելով. «Արդարև Արդի Աստուծոյ էր Սա»:

Նրէայք չկամենալով որ խաչածների մարմինքը շաբաթամօին խաչի վերայ մտան, քստ որում Չառակի տօնախմբութեան օրն էր այն, զնացին հրաման խնդրեցին Պիղատոսից խաչածների ծուռները խորտակելու: Պիղատոս համաձայ-

1) Եւսիներն ինչ որ մարգարէներէն արած էր շարժարանացս համար, բոլորը կատարուեցաւ. այսուհետև ոչ այլ ինչ մտաւ ինձ, բայց միայն մեռանել:

2) Երեգական այս խաւարումն բնական խաւարումն էր, այլ սքանչելիք էր. որովհետև բնականապէս արեգակն խաւարում է լուսնի ծննդեան փոջոցին, բայց Յիսուսի խաչելութեան ժամանակ, Չառակի տօնին, լուսնի լուսն էր (14): Գրեմատիոս Արիստագացին, իւր երկու թղթոց մէջ (Պողիկարպոսին և Ապոլոփանէսին գրած), յիշում է թէ ականատես էր եղած այս խաւարմանը Եգիպտացւոց Հելիոպոլիս քաղաքում: Եւ յս խաւարման մասին վկայուածն և հիշմանս մատենագիրքը: (Փլեգոն, Տաղոս)

3) Վարագորի պատառելին, Քրիստոսի մահուամբ, նշանակ էր Մովսիսական օրենաց դադարելուն և նոր Քրիստոսագիր օրենաց սկսելուն. նաև ցուցանումէր թէ ինչ որ հին օրինաց մէջ մարգարէութիւնք կային Մեսիայի համար, բոլորը կատարուեցան և վարագորով ծածկած չեն:

նեցաւ և նոր զինուորներ ուղարկեց Պողոթթա: Մոքա եկան երկու խաչակից աւազակաց ծուռները Չարդեցին և մեռուցին. իսկ երբ մօտեցան Յիսուսին և տեսան թէ Վա արդէն մեռած էր, աւելորդ համարեցին Վորա բարձրը խորտակել <sup>1)</sup>: Միայն զինուորներից մինը, աւելի ապահով լինելու համար, տիգով խոցեց Վորա կողը, և ահա իսկոյն խոցուած տեղից արիւն և ջուր բղխեց <sup>2)</sup>:

Երբակուտի պատուաւոր անդամներից մինը՝ Յովսէփ Երիմաթացին, որ մի մեծատուն նախարար էր՝ նշանաւոր անձն իւր արդարութեամբ և բարեգործութեամբ, և շրէաններից երկիւղ կրելով ծածուկ աշակերտ էր Յիսուսին, համարձակութեամբ գնաց Պիղատոսին և հրաման խնդրեց նորանից Յիսուսի մարմինը գերեզման դնելու: Չարմացաւ Պիղատոս Յիսուսի այնչափ շուտով մեռնելու վերայ. կանչեց հարիւրապետը և հարցրեց. և երբ տեղեկացաւ նորանից թէ Յիսուս արդէն մեռել է, հրամայեց Վորա մարմինը տալ Յովսէփին: Նոյն օրը երեկոյեան պահուն Յովսէփ, ասնելով իւր հետ ազնիւ սպիտակ կտաւ, գնաց Պողոթթա, ուր եկաւ և Վիկոզիմոս իշխանը, բերելով իւր հետ մարմինը օծելու համար զմուսս (անուշահոտ խէժ) և հալուէ (ազնիւ խուսկ): Մոքա երկուքը Յիսուսի մարմինը խաչից իջուցին, և որպէս այն ժամանակի երևելի մարդկանց մարմինը թաղելու սովորութիւնն էր, մեծագին խնկերով մարմինը օծեցին և մաքուր կտաւով պատեցին: Պողոթթայի լեբան մօտ Յովսէփ մի պարտեզ ունէր, ուր քարի մէջ իւր համար փորել տուած պատրաստած էր մի նոր գերեզման: Յիսուսի մարմինը այդ գերեզմանի մէջ

1) Մովսիսական օրէնքը արգելումէր Չառակական գաւին ոսկրը փշեւել (Թիւք. թ. 12) և այս գառն օրինակ էր Յիսուսի Քրիստոսի. և ահա այսպէս կատարուեցաւ Ս. Գրոց խօսքը. «Ոսկր նորա մի՛ փշեցցի»:

2) Այսպէս կատարուեցաւ մարգարէութիւնն. «Հայեցին է նա յոր խոցեցին (Չար. ժր. 10): Զուրը նշանակումէր թէ Յիսուս Քրիստոս մեռած էր մարմնով, իսկ Արիւնը՝ թէ կենդանի էր Աստուածութեամբ: Ոմանք ևս ասում են թէ ջուրը աւազանի մկրտութեան խորհուրդն էր յայտնում և Արիւնը՝ կենարար Հաղորդութեան:

դրին և իբրև կախարիչ մի խոշոր քար թաւալեցին գերեզմանի վերայ և ինքեանք տխուր և տրտում տուն դարձան:

Ըբաթ օրը ամենեքեան ուրախութեամբ կատարուեցին Օստիկ տօնախմբութիւնը, միայն Յիսուսի արիւնածարաւ թշնամիքը հանգստութիւն չունէին: Այլ առաւօտուն գնացին նոքա Պիղատոսին և ասացին. «Տէր, այն մարտիրոսացիք իւր կենդանութեան ժամանակ ասուեք թէ՛ Նրեք օրից յետոյ պէտք է յարութիւն առնեմ, ուստի հրամայիր որ երեք օր գերեզմանի մօտ պահպանութիւն լինի, զուցէ աշակերտքը գիշերով մաքսինը դողման և համբաւ տարածեն թէ յարութիւն առաւ»: Պատասխանեց նոքա Պիղատոս. «Զեր հրամանին յանձնուած զինուորներ կան. գնացէք զգուշացէք որպէս և զիտէք»: Աւ նոքա գնացին գերեզմանի վերայի քարը կնքեցին և չորս կողմը պահպաններ կացուցին, խստութեամբ պատուիրելով նոցա արթուն մնալ և զգուշանալ գերեզմանին:

§ 92. Յարութիւն Քրիստոսի:

(ՄԱՏԹ. ԻԸ. 1—15. ՄԱՐԿ. ԺԶ. 1—11. ԴՈՒԿ. ԻԿ. 1—12. ՅՈՒԷ. Ի. 1—18.)

Երրորդ օրն յետ մահուան Յիսուս Քրիստոս, աստուածահրաշ սքանչելեօք, դարձեալ կենդանացած փառաւորապէս դուրս եկաւ գերեզմանից: Նորա յարութեան ժամանակ աստիկ գեանաշարժ եղաւ, և մի հրեշտակ իջաւ երկնքից, գերեզմանի վերայ դրած քարը մի կողմը թաւալեց և նստաւ նորա վերայ: Այս հրեշտակի տեսիլն ահաւոր էր և ցոլանումէր իբրև փայլակն, և հանդերձն էր օպիտակ իբրև ձիւն: Պերեզմանի պահպանքը ահաբեկուած այս սոսկալի նշաններից կիսամեռ գեանի վերայ տարածուեցան:

Մարիամ Մագդաղենացին, Մարիամ մայրն Յակոբայ, Յովհաննա, Սողոմէ և այլ բարեպաշա կանայք, որ ուրբաթ օրը Յիսուսի մարմինը գերեզման դնելու ժամանակին հեռուից դիտած էին, ազնիւ խնկեր և անուշահոտ իւղեր պատ-

րասեցին, և շաբաթ օրը ըստ օրինաց տեղից չչարժեցան, բայց կիրակի օրը վաղ առաւօտուն գնացին գերեզմանին որ օծեն Յիսուսի մարմինը: Նոքա չգիտէին որ գերեզմանի չորս կողմն պահպաններ էին դրած: Ղանապարհին անհանգստութեամբ խօսուեցին միմեանց հետ թէ՛ Պերեզմանի վերայ դրած այն ծանր քարը ո՞վ պիտի թաւալէ. իսկ երբ պարտեղ մտան և մօտեցան գերեզմանին, տեսան որ քարը արդէն մի կողմ էր դրած: Մարիամ Մագդաղենացին ամենից յառաջ եկած էր գերեզմանի մօտ, այն ինչ տեսաւ թէ Յիսուսի մարմինը այնտեղ չէ, իսկոյն շփոթուած յետ դարձաւ քաղաք, դաւա Պետրոսը և Յովհաննէսը և ցաւօք սրտի ասաց նոցա. «Տէրը գերեզմանից հանել են, ո՞վ գիտէ ուր են դրել»: Իսկ մնացեալ իւղաբեր կանայք ևս, տեսնելով որ Յիսուսի մարմինը գերեզմանի մէջ չէ, սաստիկ շփոթուեցան: Աւ ահա յանկարծ երկու լուսաւոր հրեշտակներ երևեցան նոցա, և մինչ նոքա երկիւղից երեսի վերայ ընկած էին, հրեշտակներից մինը ասաց նոցա. «Մի՛ վախենաք, գիտեմ որ Նազովրեցի խաչեցեալ Յիսուսն էք խնդրում. բայց ինչո՞ւ կենդանին մեռածների մէջ էք որոնում. Նա այստեղ չէ, յարութիւն առաւ. և որպէս յառաջագոյն ասած էր ինքն՝ Պաղիւիա պիտի երթայ: Փութացէք Նորա աշակերտներին և Պետրոսին աւետել այդ»: Այս լսելով, աստուածասէր կանայք ահիւ և խընդութեամբ դուրս եկան պարտեղից և դնացին պատմեցին աշակերտներին ինչ որ լսած էին: Բայց առաքեալք հաւատա չընծայեցին նոցա խօսքին. միայն Պետրոսը Յովհաննէսի հետ միասին չկարողացան համբերել, վազեցին դէպի գերեզմանը: Յովհաննէսը Պետրոսից յառաջ հասաւ, գերեզմանի մէջ նայեց և տեսաւ միայն կտաւքը, բայց ներս չմտաւ: Յետոյ եկաւ և Պետրոսը, մտաւ գերեզմանի մէջ և տեսաւ նոյն կտաւքը, այլև Յիսուսի գլխին դրած վարչամակը, որ կտաւների հետ չէր, այլ առանձին ծալած մի կողմ էր դրած. սպա ներս մտաւ և Յովհաննէսը, տեսաւ և հաւատաց Յիսուսի ճշմար-

տապէս յարութեանը, թէև տակաւին միւս առաքելոց պէս  
 հաստատ չգիտէր Վրոց խօսքը՝ թէ պարտ էր Յիսուսի մե-  
 ոելոց յառնելը: Եւ այսպէս անձամբ ստուգելուց յետոյ այդ  
 երկուքը դարձան միւս աշակերտների մօտ. մինը հաւատացած,  
 իսկ միւսը զարմացած ու տարակուսած: Այն ինչ հեռացան  
 նոքա, Մաղդաղենացին միւսանդամ եկաւ և գերեզմանի մօտ  
 նստած լալիս էր. և երբ արտասուելից աչքերով գերեզմանի  
 մէջ նայեց, սպիտակ զգեստով երկու հրեշտակ տեսաւ, որ Յի-  
 սուսի մարմինը դրած տեղում՝ գլխի և ոտքի կողմը նստած  
 էին: «Աին դու, ինչո՞ւ լալիս ես». հարցրին նոքա: «Արովհե-  
 տե՛ Տէրս գերեզմանից հանել են, և չգիտեմ ուր են դրած»,  
 պատասխանեց Մարիամ. և այս ասելով յետ նայեց, և ահա  
 Յիսուս կանգնած էր նորա առաջը<sup>1)</sup>, բայց նա չճանաչեց  
 Նորան, կարծեց թէ պարտիզպանն էր: Եւ երբ Յիսուս նո-  
 րա լալու պատճառն հարցրեց, արտոմութեամբ պատասխանեց  
 Մարիամ. «Տէր, եթէ դու ես հանել նորան այս գերեզմա-  
 նից, ասա ինձ, ո՞ւր ես դրած»: Այն ժամանակ Յիսուս իւր  
 սովորական ծանօթ ձայնով կոչեց նորան «Մարիամ», և նա  
 իսկոյն ճանաչեց իւր քաղցրագութ Տէրը, և ասելով «Բա-  
 բունի», անկաւ տարածուեցաւ գետնի վերայ որ համբուրէ  
 նորա ոտները: Բայց Յիսուս ասաց նորան. «Ինձ մի՛ մօտենար,  
 վասն զի դեռ ես չօրս մօտ գնացած չեմ<sup>2)</sup>, այլ գնա և ասա  
 եղբարցս (աշակերտացս) թէ ելանեմ (պիտի համբառնամ)  
 Ես առ չայրն իմ և առ չայր ձեր, և Աստուածն իմ և Աստ-

1) Հաւանական կարծիք է մեկնաց թէ Յիսուս Քրիստոս յետ յարութեան ամենից  
 յառաջ երեւեցած է իւր Որն՝ Մարիամ Ս. Կուսին: Մարկոս Աւետարանիչի ասելով  
 թէ ամենից առաջ Յիսուս երեւեցաւ Մարիամ Մաղդաղենացուն, պարտ է խմանալ իւ-  
 դարեր կանանցից յառաջ և ոչ թէ յառաջ բան երեկը Մարիամ Ս. Կուսին:

2) Մաղդաղենացին կարծուէր թէ իւր սիրելի Վարդապետը նոյն ժամայն պիտի  
 երկինք վերանայ, և թէ այս վերջին անգամն էր որ տեսնուէր Նորան. ուստի իւր  
 սրտի փափագը լցոցանելոյ համար տարածուեցաւ գետնի վերայ որ համբուրէ Նորա  
 ոտները: Բայց Յիսուս հասկացրեց նորան թէ Ինքն դեռ ես բաւական ժամանակ պի-  
 տի մնայ երկրիս վերայ, ուստի և ասաց. «Ինձ մի՛ մօտենար» և այլն:

III

ուած ձեր»: Երբ որ իւղաբեր կանայք քաղաք էին դառնում  
 աշակերտներին պատմելու ինչ որ լսած էին հրեշտակից, ճանա-  
 պարհին պատահեցաւ նոցա Յիսուս և ասաց. «Ողջոյն ձեզ».  
 նոքա ուրախութենից շփոթուեցան, անկան նորա ոտքը և եր-  
 կրպագութիւն տուին: Տէրը քաջալերեց նորանց, «Մի՛ վա-  
 խենայք, ասաց, գնացէք եղբարցս ասացէք որ Վալիլիա եր-  
 թան, և Ինձ այնտեղ տեսնեն»: Արպէս Մարիամ Մաղդա-  
 ղենացին այնպէս և այս իւղաբեր կանայքը և այլք եկան պատ-  
 մեցին առաքելոց, ինչ որ լսած ու տեսած էին. բայց առա-  
 քեալք, նոցա պատմածն երազական խօսքեր համարելով չհա-  
 ւատացին նոցա:

Յիսուսի յարութեան համբաւը աշակերտների մէջ տարա-  
 ծուելուց յետոյ, գերեզմանապահ զօրականներից ոմանք, որ  
 երկիւղից փախել էին, գնացին քաղաք և մի առ մի պատմե-  
 ցին քահանայապետներին, ինչ որ պատահած էր գերեզմանի  
 մօտ: Նոքա իսկոյն ծերերի հետ խորհուրդ արին, և շատ ար-  
 ծաթ տալով զօրականներին համոզեցին որ իւրեանց տեսած  
 հրաշքները զաղտնիք պահեն՝ մարդու չասեն, այլ ձայն հանեն  
 թէ՛ Վիշերը մեր քնած ժամանակին, աշակերտքը գողացան  
 Նորա մարմինը: Եւ եթէ բանը դատաւորի ականջին հասնի,  
 ասացին, մեք նորան կ'հանդարտեցնենք: Եւ նոքա, առնելով  
 արծաթը, ամենայն կողմ տարածեցին այս սուտ համբաւը:

§ 93. Յարուցեալը երևու մէ աշակերտներին:  
 (ՂՈՒԿ. Խ. 13—48. ՅՈՒՃ. Ի. 19—23.)

Յիսուսի Վրիստոսի յարութիւն առած օրը, աշակերտ-  
 ներից երկուքը (Ղեոփպաս և Ղուկաս) գնումէին Եմմաուս  
 գիւղը, որ Նյուսաղեմից երեք ու կէս ժամու ճանապարհ էր,  
 և խօսումէին միմեանց հետ վերջին օրերի ախուր անցքերի  
 վերայ: Եւ ահա ջանկարծ մօտեցաւ նոցա Յիսուս, անծա-  
 նօթ մարդու կերպարանքով, և սկսաւ նոցա հետ գնալ. «Ի՞նչ  
 բանի վերայ էք խօսում ձեր մէջ, ասաց, և ինչո՞ւ արտմա՞

էք“: ‘Նոցանից մինը՝ Սղէովպաս պատասխան տուաւ ‘Նորան  
 և ասաց. „ՂճԼ ես միայն որ չես իմացել այս օրերս Նշու-  
 սաղեմի մէջ պատահած բաները“: Նշու երբ Յիսուս հարցրեց  
 թէ “Ն՞նչ“, պատասխանեցին. „Յիսուս ‘Նազովրեցին, որ  
 խօսքով ու գործով Մատուծոյ և մարդկան առաջը մի հզօր  
 Մարգարէ էր, մեր քահանայապետքն ու իշխանքը մահուան  
 դատապարտեցին և խաչ հանեցին: Մեր յոյս ունէինք որ ‘Նա  
 պիտի փրկէ Խրայելի ազգը. ահա երրորդ օրն է որ այդ բանը  
 պատահեցաւ: Բայց այսօր քանի մի կանայք զարմացրին մեզ.  
 Նոքա վաղ առաւօտուն զնացին ‘Նորա գերեզմանի մօտ և չգտան  
 ‘Նորա մարմինը, դարձան և պատմեցին մեզ իբր թէ հրեշտակ-  
 ներ են տեսել, որք ասել են թէ ‘Նա կենդանի է: Մեզանից  
 ոմանք զնացին ստուգելու. ամենայն բան գտան այնպէս՝ ինչ-  
 պէս կանայք ասած էին, բայց ‘Նորան չտեսան“: Այս խօսքի  
 վերայ Յիսուս յանդիմանեց նոցա, ասելով. „Ո՛վ անմիտք և  
 մարգարէից գուշակութեանց հաւատալու թուլասիրտք. մի-  
 թէ պարտ չէ՞ր ‘Քրիստոսին այսպէս չարչարուիլ և ապա իւր  
 փառքի մէջ մտանել“: Նշու Մովսէսից սկսած ինչ որ գրած էին  
 մարգարէք ‘Քրիստոսի վերայ՝ մի առ մի մեկնեց նոցա: Այս  
 խօսակցութեան մէջ երեկոյեան ժամանակ նոքա մօտեցան Նմ՛  
 մառուս գիւղին. Յիսուս պատճառեց իբր թէ աւելի հեռա-  
 գոյն տեղ պիտի երթար, բայց աշակերտք չկամեցան բաժան-  
 ուիլ ‘Նորանից, աղաչեցին որ իւրեանց մօտ իջնանի. Յիսուս  
 յօժարեցաւ: Նշու երբ նոքա միասին սեղան բազմեցան, Յի-  
 սուս հացն առաւ և ըստ իւր սովորութեան օրհնեց, կտրեց և  
 տուաւ նոցա: Այն ժամանակ նոցա աչքերը բացուեցան և  
 ճանաչեցին որ Յիսուսն է. բայց ‘Նա իսկոյն աներևոյթ եղաւ:  
 Աշակերտքը ուրախութենից նոյն ժամայն թողին սեղանը և  
 ճանապարհ ընկան դէպի Նշուսաղէմ որ այս ուրախալի լուրը  
 յայտնեն առաքելներին: Այդ միջոցին Առաքելալք և այլ  
 շատերը աշակերտներից Նշուսաղէմում մի ամս մէջ ժողո-  
 վուած էին միասին. նոքա ևս մի նոր լուր առած էին Յիսուսի

յարութեան վերայ: Նշու ներս մտան Նմմառուսից դարձող-  
 ները, ամէնքը միասին աւետեցին նոցա. „Արդարև յարեալ  
 Տէր և երևեցաւ Սիմոնի“: Նոքա ևս պատմեցին Առաքելալ-  
 ներին ինչ որ պատահած էր ճանապարհին:

Մինչդեռ Նմմառուսից եկողները պատմումէին Առաքելալ-  
 ներին թէ ինչպէս ճանաչեցին Տէրը հացը կտրելու ժամանա-  
 կին, և ահա յանկարծ երևեցաւ նոցա մէջ Յիսուս, և ողջոյն  
 տալով նոցա, ասաց. „Խաղաղութիւն ընդ ձեզ, ես եմ, մի եր-  
 կնչեք“: Աշակերտքը զարհուրեցան և կարծումէին թէ ոգի է  
 իւրեանց աչքի առաջը (վասն զի ամս գե ամս գուները շրեաների  
 ահուց փակած էին պահում). բայց Յիսուս քաջալերեց նո-  
 րանց, ասելով. „Ինչո՞ւ շփոթուած էք, և այդպիսի տարադէպ  
 խորհուրդներ յղանումեն ձեր մտքի մէջ: Տեսէ՞ք ձեռքս ու  
 ոտքս, ես նոյնն եմ. շօշափեցէք ինձ և տեսէք վասն զի ոգին  
 մարմին ու ոսկր չունի, ինչպէս որ ես ունիմ“. և այս ասելով  
 ցոյց տուաւ նոցա ձեռները ու ոտները: Բայց որովհետև ու-  
 թախութենից տակաւին չէին հաւատում աշակերտքը և զար-  
 մացած կանգնած էին, Յիսուս առաւել ևս հաւատարի կա-  
 ցուցանելու նոցա թէ իսկապէս Ինքն է, ասաց նոցա. „Ուտե-  
 լու բան ունի՞ք“: Նոքա իսկոյն բերին ‘Նորա առաջ խորոված  
 ձուկն և մեղր. և Յիսուս, փոքր ինչ ճաշակելով, մնացորդը  
 տուաւ նոցա: Յետոյ սկսաւ մեկնել նոցա բոլոր մարգարէից  
 բանքը, ինչ որ գրուած էին ‘Քրիստոսի չարչարանաց և յարու-  
 թեան համար. լուսաւորեց նոցա միտքը, որպէս զի Ս. Գրոց  
 իմաստն կարողանան հասկանալ: Բաժանուելու միջոցին յա-  
 լելացրեց այս խօսքերը. „Ինչպէս որ շայրս ինձ ուղարկեց,  
 այնպէս և Նշու ձեզ եմ ուղարկում“. այս ասելով փչեց նոցա  
 վերայ և ասաց. „Առէ՛ք շողին սուրբ. ում մեղքը որ թողուք՝  
 թողուած կ’լինի, և ում որ չթողուք՝ թողուած չլինի“: Նշու  
 խօսքը աւարտելով Տէրը իսկոյն աներևութացաւ նոցա աչքից:

§ 94. Յիսուս Վրիստոս յանդիմանումէ թովմասի թերահաւատութիւնը, երևումէ աշակերտներին Տիբերական ծովի մօտ և Պալելիայի լերան վերայ:

(ՅՈՎ. Գ. Ի. 24—29. ԻՇ. 1—19. ՄԱՏԹ. ԻԸ. 16—20. ՄԱՐԿ. ԺԶ. 12—18. Ա. ԿՈՐՆԹ. ԺԵ. 5—6.)

Բոլոր Առաքեալքը հաւատացին Վրիստոսի յարութեանը. միայն թովմասը որ ներկայ չէր այն միջոցին, տարակոյս ունէր դեռ ևս: Արք որ եկաւ նա և ընկերքը ասացին նորան թէ «Տէրը տեսանք», պատասխանեց նա. «Մինչև 'Նորա ձեռների վերայ բեռնների տեղը և կողը չըջափեմ, հաւատարու չեմ»: Աթ օրից յետոյ <sup>1)</sup>, երբ դարձեալ տան դռները փակած միասին ժողովուած էին աշակերտքը և թովմասը նոցա հետ, Յիսուս միևսանգամ երևեցաւ նոցա մէջ, «Ողջոյն ձեզ» ասաց, և դառնալով դէպի թովմասը, «Ձեռքիս վէքքերը շոշափիր և տես, ասաց, բեր ձեռքդ կողս դիր և մի լինիր անհաւատ, այլ հաւատացեալ»: Այն ժամանակ թովմաս հաւատաց 'Նորա յարութեանը և սրտի խորքից բացազանչեց. «Տէր իմ' և Աստուած իմ»: Յիսուս Վրիստոս պատասխանեց նորան. «Վու տեսար ինձ և հաւատացիր. երանի նոցա՝ որք առանց տեսնելու կ'հաւատան»:

Չատկի տօնը անցանելուց յետոյ, Առաքեալք դնացին Պալելիա: Միանգամ Պետրոս, թովմաս, 'Նաթանայէլ, Չեբեդեայ որդիքն՝ Յակոբոս և Յովհաննէս և այլ երկու աշակերտք միասին գտանուելով, Պետրոսի առաջարկութեամբ դնացին Տիբերեայ ծովի մօտ ձուկ որսալու: Բոլոր դիշերը աշխատեցան, բայց բան չկարողացան բռնել: Արք առաւօտ եղաւ, Յիսուս Վրիստոս՝ անծանօթ կերպարանքով՝ ծովեզրում կանգնած ձայն տուաւ նոցա, «Մանկունք, ուտելու բան ունի՞ք». և երբ նոքա պատասխանեցին «Ոչ», «Առկանը նաւի աջ կողմ

1) Աթերորդ օրը կոչուած «Նոր կերակէ» կամ «Արկնազատիկ», որովհետև յետ յարութեան Յիսուս այս երկրորդ անգամն էր որ երևեցաւ Առաքեալներին:

ձգեցէք, ասաց, և կ'բռնէք»: Ձգեցին նոքա և այնչափ ձուկ լցուեցաւ որ ուռկանը չէին կարող հանել: Յովհաննէս իսկոյն հասկացաւ թէ ով էր ծովեզրում կանգնած այն անծանօթ մարդը և ուրախութեամբ ասաց Պետրոսին թէ «Տէրն է»: Այն ինչ լսեց Պետրոս թէ Տէրն է, իսկոյն փաթաթուեցաւ կտաւով ընկաւ ծովը և լող տալով ցամաք դուրս եկաւ Յիսուսի մօտ. իսկ միևս աշակերտքը նաւով գալիս էին նոքա հետևից, իւրեանց հետքարշելով ձկներով լցուած ուռկանը: Արք ցամաք դուրս եկան, տեսան այնտեղ պատրաստ հաց և վառած կրակի վերայ մի ձուկ: Յիսուս հրամայեց նոցա բռնած ձկներից բերել կերակուր պատրաստել. Պետրոս իսկոյն զնաց դուրս հանեց ուռկանը, որ լցուած էր հարիւր յիսուն և երեք հաւ խոշոր ձկներով: 'Նոցանից մի քանիսը խորովեցին և նստան ճաշելու: Ճաշելուց յետոյ Յիսուս երեք անգամ հարցրեց Պետրոսին. «Միմոն Յովնանու, սիրո՞ւմես ինձ», և երբ Պետրոս նոյնպէս երեք անգամ պատասխանեց՝ «Այո, Տէր, դու ևս դիտես որ սիրումեմ քեզ», Յիսուս ասաց նորան. «Արածիր իմ գառները և ոչխարները <sup>1)</sup>». և միանգամայն ակնարկեց թէ նա խաչի մահուամբ պիտի մեռանէր:

Միանգամ մետասան Առաքեալքը Յիսուսի հրամանով ժողովուած էին Պալելիայի մի լերան վերայ, և նոցա հետ էին գրեթէ բոլոր հաւատացեալքը՝ մօտ հինգ հարիւր հոգի: Արք երևեցաւ նոցա Տէրը, նոքա իսկոյն երկրպագութիւն տուին 'Նորան, ոմանք ևս, չկարողանալով ձանաչել 'Նորան, տարակուսեցան թէ արդեօք Խոնքն է՝ թէ չէ: Յիսուս Վրիստոս մօտենալով նոցա, ասաց. «Տուած է ինձ ամենայն իշխանութիւն երկնքի և երկրի վերայ. ինչպէս ուղարկեց ինձ Հայրս՝ այնպէս և ես ձեզ եմ ուղարկում: Վնացէք այսուհետև, բոլոր հեթանոսներին քարոզեցէք Աւետարանը, մկրտեցէք նորանց

1) Երեք անգամ հարցանելով Յիսուս ներք Պետրոսի երկու ուրացութիւնը և հոգեւոր Հովուութեան պաշտօնի մէջ վերստին հաստատեց նորան:

յանունն շօր և Որդւոյ և շողոյն սրբոյ: Ուսուցէք նոցա պահել բոլոր ձեզ աւանդած պատուիրաններս: Ով որ հաւատայ և մկրտուի՝ կ'փրկուի. իսկ ով որ չհաւատայ՝ կ'զատապարտուի: Եւ հաւատացողների նշանները այն կ'լինի որ Խմանումով դեեր կ'հանեն, նոր լեզուներ կ'խօսեն, ձեռներով օձեր կ'բարձրացնեն և եթէ մահացու դեղ խմեն, նոցա վնասելու չէ, հիւանդների վերայ ձեռք կ'դնեն և նոքա կ'բժշկուին: Եւ ահաւասիկ Ես ձեզ հետ եմ ամենայն օր մինչև աշխարհիս վերջը“:

§ 95. **Նամբար ձոռ մն Վրիստոսի:**

(ԱՄՐԿ. Ե. 19. ԳՈՒԿ. ԻՊ. 49—53. ԳՈՐԾ. Ա. 4—12.)

Յիսուս Վրիստոս, իւր յարութիւնից յետոյ քառասուն օր մնալով երկրիս վերայ, շատ անգամ երևեցաւ Առաքեալներին և խելամուտ արեց նորանց Աստուծոյ արքայութեան խորհուրդներին: Առաքեալք արդէն հաստատապէս հաւատացած էին Նորա ճշմարիտ մահուան և յարութեանը և աներկմիտ համոզուած էին թէ Նա իւր աստուածային զօրութեամբ յարութիւն էր առել մեռելութենից: Պենտեկոստէի տօնից տասն օր յառաջ Առաքեալք ժողովուած էին Նրուսաղէմում, ուր Տէրք վերջին անգամ երևեցաւ նոցա և ասաց. «Նհա ես պիտի ուղարկեմ շօրս խոստացած պարգևը. և դուք չհեռանաք Նրուսաղէմից մինչև որ երկնքից զօրութիւն ստանաք: Ղան զե Յովհաննէս ջրով մկրտեց, իսկ դուք մի քանի օրից յետոյ շողով սրբով պիտի մկրտուիք“: Առաքեալք լսելով որ մօտ էր այն ժամանակն՝ երբ ինքեանք շողով սրբով զօրացած պէտք է դուրս դնին քարոզութեան, սիրտ առին հարցանել Յիսուսից թէ երբ արդեօք յայտնելու էր Նա իւր արքայութեան փառքը: Պատասխանեց նոցա Յիսուս. «Ձեզ չէ տուած իմանալ այն ժամը և ժամանակը, որ շայրը իւր իշխանութեանը պահեց. բայց շողին սուրբ կ'գայ ձեր վերայ, և դուք Նորանով զօրացած իմ անուանս պիտի

վկայէք Նրուսաղէմի, շրէաստանի և Սամարիայի մէջ և մինչև երկրի ծայրերը“: Այս խօսակցութենից յետոյ Փրկիչը դուրս բերեց աշակերտքը դէպի Բեթանիա և հանեց Ձիթենեաց լեռան վերայ: Այնտեղ ձեռները բարձրացնելով օրհնեց նորանց և սկսաւ յանկարծ նոցա աչքի առաջ երկինք համբառնալ, և մի լուսաւոր ամպ ծածկեց Նորան նոցա աչքից: Մինչդեռ Առաքեալք զարմացած և հիացած անթարթ աչքով նայումէին դէպի երկինք, սպիտակ զգեստով՝ մարդկային կերպարանքով երկու հրեշտակ երևեցան նոցա և ասացին. «Ն'րք Գալիլիացիք, ինչո՞ւ այստեղ կանգնած դէպի վեր էք նայում: Այս Յիսուս, որ այժմ ձեզ թողեց՝ երկինք վերացաւ, նոյնպէս մի օր պիտի գայ՝ ինչպէս որ տեսաք նորա վերանալը“: Այս լսելով Առաքեալք մեծ երկիւղածութեամբ ընկան երեսների վերայ և երկրպագութիւն արին. և ապա ուրախ ու հանգիստ սրտով դարձան Նրուսաղէմ, ուր վերնատան մէջ ժողովուած շարունակ օրհնումէին զԱստուած և աղօթումէին մինչև որ ի վերուստ զօրութիւն ստանային. և յետոյ Աւետարանի փրկարար վարդապետութեամբ Վրիստոսն էութիւնը տարածէին աշխարհիս վերայ:

Եւ այսպէս Յիսուս Վրիստոս, որպէս Տէր և Թագաւոր, համբարձաւ յերկինս և նստաւ շօր Աստուծոյ աջ կողմը, — մտանելով Եւր աստուածային փառաց մէջ, որ ունէր յառաջ քան զլինելն աշխարհի:



### Յ Ե Ն Կ Գ Լ Խ Ո Յ

#### Պ Ե Տ Մ ՈՒԹ Ե Ե Ն Ն ՈՐ Կ Տ Ե Կ Ե Ր Ե Ն Ի

ՆԵՐԱՆՈՒԹԻՒՆ. — Հրէական ազգի քաղաքական և կրօնական վիճակը Յիսուսի Քրիստոսի ժամանակին. 1—3  
 Համառօտ տեղեկութիւն չորս Լւետարանիչների վերայ. 4  
 Ծնունդ և ընծայումն Ս. Լստուածածնի. . . . . 5

§§	Էջ.
1. Չաքարիա, Եղիսաբեթ և Գաբրիէլ հրեշտակը . . . . .	7
2. Լւետումն Սրբոյ Կուսին . . . . .	8
3. Ծնունդ Յովհաննու Մկրտչի. . . . .	10
4. Ծնունդ Յիսուսի Քրիստոսի. . . . .	—
5. Մոգերի գալուստը արևելքից և ընծայաբերութիւնքը նորածին աստուածեղէն մանուկին . . . . .	12
6. Տեառնընդառաջ. Միմէոն ծերունի . . . . .	14
7. Փախուստ յԵգիպտոս . . . . .	15
8. Երկոտասանամեայ Յիսուսը տաճարի մէջ . . . . .	16
9. Քարողութիւնք Յովհաննու Մկրտչի. Մկրտութիւն Յիսուսի. . . . .	17
10. Յիսուսի փորձութիւնը անապատում. . . . .	18
11. Յովհաննու Մկրտչի վկայութիւնը Յիսուսի Քրիստոսի մասին . . . . .	19
12. Յիսուսի առաջին աշակերտները . . . . .	20
13. Գալիլիայի Կանա քաղաքի հարսանիքը . . . . .	22

#### ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՔԵՐՈՉՈՒԹԵԱՆ ԼՈՒՆՁԻՆ ՏԵՐԻՆ

14. Յիսուս տաճարից արտաքսումէ վաճառականները . . . . .	23
15. Տիրոջ խօսքը Նիկոդիմոսի հետ . . . . .	24
16. Սամարացի կինը . . . . .	26
17. Թագաւորազնի որդւոյ բժշկութիւնը . . . . .	28

§§	Էջ.
18. Յիսուսի քարողութիւնքը Նազարէթ քաղաքում . . . . .	29
19. Հրաշալի ձկնորսութիւն . . . . .	30
20. Յիսուս բժշկումէ դիւահարը, Սիմոնի զոքանչը և այլ հիւանդներ . . . . .	31
21. Լնդամալուծի բժշկութիւնը Ասիաոնաում քաղաքում. . . . .	33
22. Մատթէոս Լուսաբերոյ կոչումը. . . . .	—

#### ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՔԵՐՈՉՈՒԹԵԱՆ ԵՐԿՐՈՐԿ ՏԵՐԻՆ

23. Երեսունըութամեայ անդամալոյծը Բեթհեզդա աւազանի մօտ . . . . .	34
24. ԼՂ օրինակք Յիսուսի բարեգործութեան շարժ օրերի մէջ . . . . .	36
25. Երկոտասան Լուսաբեալների ընտրութիւնը . . . . .	37
26. Հռովմայեցի հարիւրապետը . . . . .	43
27. ԼՂրի կնոջ միամօր որդին Նային քաղաքում . . . . .	44
28. Փրկիչը Սիմոն Փարիսեցւոյ տան մէջ . . . . .	45
29. Բժշկութիւն դիւահարի, որ միանգամայն կոյր էր և համր . . . . .	46
30. Սերմանացանի առակը . . . . .	48
31. Որոմնացանի առակը . . . . .	49
32. Խնքնաբոյս ցորենի, մանանեխի հատի, խմորի, ազարակի մէջ ծածկած դանձի, մարգարիտի և ուռկանի առակները . . . . .	50
33. Յիսուս հանդարտեցնումէ ալէկոծութիւնը, Գերգեսացւոց երկրի դիւահարի բժշկութիւնը . . . . .	51
34. Յիսուս բժշկումէ մի հիւանդ կին. յարուցանումէ Յայրոսի դուստրը, լուսաւորումէ երկու կոյրերի աչքերը և բժշկումէ մի համր դիւահար . . . . .	53
35. Յիսուս հրաշագործութեան և քարողութեան իշխանութիւն է տալիս Լուսաբեալներին . . . . .	55
36. Գլխատումն Յովհաննու Մկրտչի. . . . .	57
37. Յիսուս հինգ հացով կերակրումէ հինգ հազար մարդ . . . . .	58

§§	Էջ
38. Յիսուս գնումէ ջրերի վերայ և աղատումէ Պետրոսը վտանգից . . . . .	59
39. Յիսուսի վարդապետութիւնը Հաղորդութեան խորհուրդի մասին . . . . .	60
<b>ՅԻՍՈՒՍԻ ՎՐԻՍՏՈՍԻ ՎԱՐՈՋՈՒԹԵԱՆ ԵՐՐՈՐԿ ՏԱՐԻՆ</b>	
40. Յիսուս յանդիմանումէ Փարիսեցւոց նախանձայուզութիւնը . . . . .	62
41. Վանանացի կինը . . . . .	63
42. Յիսուս բժշկումէ մի խուլ և համր մարդ, և եօթն հասցով կերակրումէ չորս հազար հոգի . . . . .	64
43. Յիսուս յանդիմանումէ Փարիսեցիքը և զգուշացնումէ աշակերտքը նոցա աղանդից . . . . .	65
44. Տիրոջ գուշակութիւնը իւր շարձարանաց և մահուան մասին . . . . .	65
45. Պայծառակերպութիւն Վրիստոսի . . . . .	67
46. Դիւհաճար լուսնոտի բժշկութիւնը . . . . .	68
47. Չարմանալի հարկատուութիւն յօգուտ տաճարի . . . . .	69
48. Խորատ և օրինակ խոնարհութեան և ներողամտութեան . . . . .	70
49. Տօն տաղաւարահարաց, Եօթանասուն և երկու աշակերտների ընտրութիւնը . . . . .	72
50. Կինն մեղաւոր . . . . .	75
51. Սամարացւոյ առակը . . . . .	77
52. Մարթա և Մարիամ . . . . .	78
53. Ի ծնէ կուրի բժշկութիւնը . . . . .	79
54. Հովկն քաջ . . . . .	81
55. Յիսուս յանդիմանումէ Փարիսեցիքը և օրինականքը . . . . .	82
56. Երջանկութիւնը անցաւոր հարստութեան մէջ չէ . . . . .	83
57. Ընպտուղ թղենու առակը. Կարկամեալ կնոջ բժշկութիւնը . . . . .	84
58. Յիսուս Վրիստոս է համագոյակից Հօր Եստուծոյ . . . . .	86
59. Զրգողեալ մարդու բժշկութիւնը. Հրաւիրեալների առակը . . . . .	87

§§	Էջ
60. Մօլորեալ ոչխարի, կորուսեալ դրամի և անառակ որդւոյ առակները . . . . .	89
61. Լնիրաւ անտեսի առակը . . . . .	91
62. Լնողորմ մեծատան և աղքատ Ղազարոսի առակը . . . . .	92
63. Տասն բորոտների բժշկութիւնը . . . . .	94
64. Լնիրաւ դատաւորի և Փարիսեցւոյ ու մաքսաւորի առակները . . . . .	—
65. Յիսուս Վրիստոս օրհնումէ մանր տղայքը . . . . .	95
66. Մեծատուն պատանին . . . . .	96
67. Յիսուս Վրիստոս խոստանումէ առաքեալներին վարձատրութիւն. Եւթու մշակների հաւասար վարձատրութեան առակը . . . . .	97
68. Ղազարոսի հիւանդութիւնը և մահը . . . . .	99
69. Յիսուս յայնապէս խօսումէ աշակերտաց հետ իւր շարձարանաց, մահուան և յարութեան վերայ. Սաղմէ խնդրումէ իւր որդւոց համար առաջին տեղը . . . . .	100
70. Կոյրն Երեքովի. Չաքէոս . . . . .	101
71. Ղազարոսի յարութիւնը . . . . .	102
72. Հրէից ծերակոյտը վճռումէ մեռուցանել Յիսուսը . . . . .	103
73. Տասն մնասի առակը . . . . .	104
74. Փրկիչը Սիմոն բորոտի տան մէջ . . . . .	105

**ՅԻՍՈՒՍԻ ՎՐԻՍՏՈՍԻ ՅԱՂԹԱՆԵԿԱԵՒ ԵՐՈՒՍԵՎԵՍՄՈՒՄԻ ՄՏԵՆԵԼՈՒՅ ՄԻՆՉԵՒ ՀԱՄԻՆԸՄՈՒՄՆ ՆՈՐԸ ՅԵՐԿԻՆՍ**

75. Հանդիսաւոր մուտ Յիսուսի յԵրուսաղէմ . . . . .	106
76. Լնիծեալ թղենին . . . . .	110
77. Յիսուսի խօսքը քահանայապետների և ժողովրդեան ծերերի հետ. Մշակների և թագաւորի որդւոյ հարսանեաց առակները . . . . .	111
78. Օրէնք հարկատուութեան. Յարութիւն մեռելոց . . . . .	114
79. Փրկիչը հրապարակաւ խայտառակումէ Փարիսեցւոց անձնասիրութիւնը. Եւրի կնոջ լումայն . . . . .	116

§§		122.
80.	Յիսուս Քրիստոս գուշակումէ տաճարի կործանումը, Երուսաղեմի աւերումը, և աշխարհիս կատարածը. Տասն կուսանաց առակը. . . . .	119
81.	Քանքարների առակը. Նկարագիր վերջին դատաստանի . . . . .	122
82.	Յուզայ մատնիչ . . . . .	124
83.	Պատրաստութիւն Ջատկի. Ոտնալուայ. Ընթրիք Տեառն. Սահմանադրութիւն Հաղորդութեան Ս. Խորհրդոյ . . . . .	125
84.	Կանխասացութիւն Պետրոսի ուրացութեան մասին. Յիսուսի վերջին պատուէրը սիրոյ . . . . .	128
85.	Յիսուսի աղօթքը Գեթսեմանի պարտէզի մէջ և Նորա ըմբռնումն. . . . .	132
86.	Յիսուս Քրիստոս Լննա և Աայիափա քահանայապետների ատենի առաջև . . . . .	134
87.	Պետրոսի ուրացութիւնը և Յուզայի կորուստը . . . . .	136
88.	Յիսուս Պիղատոսի և Հերովդեսի ատենի առաջև. . . . .	138
89.	Գանահարութիւն և նախատինք Յիսուսի, և դատապարտութիւն Նորա ի մահ խաչի . . . . .	141
90.	Խաչելութիւն Յիսուսի. . . . .	144
91.	Մահ և թաղումն Յիսուսի Քրիստոսի . . . . .	147
92.	Յարութիւն Քրիստոսի . . . . .	150
93.	Յարուցեալը երևումէ աշակերտներին . . . . .	153
94.	Յիսուս Քրիստոս յանդիմանումէ Թովմասի թերահաւատութիւնը, երևումէ Լուսաբերոց և այլ աշակերտաց Տիրերական ծովի մօտ և Գալիլիայի լեռան վերայ . . . . .	156
95.	Համբարձումն Քրիստոսի . . . . .	158




Handwritten text in the left margin, possibly a library or collection number.


# ԱՐԻԱՆՈՅՑ ԳԱՂԵՍՏԻՆՈՒ

Հին և նոր կոտորանք  
ստուգանախիթիչ Համար.

Ա.Տեղ	Ա.Վայ	Գ.Տեղ	Վ.Վայ
Ե	Ն.Վայ	Բ	Ք.Վայ
Զ	Զ.Վայ	Յ	Յ.Վայ
Դ	Դ.Վայ	Ը	Ը.Վայ
Ն	Ն.Վայ	Թ	Թ.Վայ



- 1 Գրեհ Արշակունց
- 2 Բաղնաշատ
- 3 Քաղաք
- 4 Արարատի Արարատ
- 5 Գրեհուն
- 6 Քաղաքի Բաղն
- 7 Կաթնաշատ
- 8 Տեղ Կաթնաշատ
- 9 Տեղ Արարատի Կաթնաշատ
- 10 Արարատ Կաթն
- 11 Կաթնաշատի Կաթնաշատ
- 12 Կաթնաշատի Կաթնաշատ
- 13 Կաթնաշատի Կաթնաշատ
- 14 Կաթնաշատի Կաթնաշատ
- 15 Արարատի Կաթնաշատ



57

ՀՀ Ազգային գրադարան



NL0596902

